

**ԵՐԵՎԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՈՒՆՈՐ
ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԱՂԲԵՋԱՆԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

Գիտական հոդվածների ժողովածու

*Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության
կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A043
ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում*

Երևան
Մեկնարկ
2023

**THE HISTORY OF YEREVAN IN MEDIEVAL
AND MODERN TIMES AND THE AZERBAIJANI
FALSIFICATION**

Collection of Scientific Articles

*The work was supported by the Science Committee of RA,
in the frames of the research project
№ 21T-6A043.*

**СРЕДНЕВЕКОВАЯ И НОВАЯ ИСТОРИЯ
ЕРЕВАНА И АЗЕРБАЙДЖАНСКАЯ
ФАЛЬСИФИКАЦИЯ**

Сборник научных статей

*Исследование выполнено при финансовой поддержке
Комитета по науке РА в рамках научного проекта № 21Т-
6А043.*

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Ե 813

***Հրատարակվում է ԵՊՀ պատմության ֆակուլտետի
գիտական խորհրդի երաշխավորությամբ***

Խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Եղիազարյան
Գրախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր Է. Մինասյան
պ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյան

Երևանի միջնադարի ու նոր ժամանակների պատմու-
թյունը և ադրբեջանական կեղծարարությունը: Գիտա-
կան հոդվածների ժողովածու / կազմեց Ա. Եղիազար-
յան: Եր., Մեկնարկ, 2023, 278 էջ:

*Ժողովածուն ընդգրկում է Երևան քաղաքի պատմությանը,
պատմական աշխարհագրությանը և ժողովրդագրությանը նվիր-
ված գիտական հետազոտություններ, որոնք կատարվել են ՀՀ գի-
տության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A043
ծածկագրով «Երևանի միջնադարի ու նոր ժամանակների պատ-
մությունը և ադրբեջանական կեղծարարությունը» գիտական թե-
մայի շրջանակներում:*

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-962-47-4

© Մեկնարկ, 2023
© Եղիազարյան Ա., 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ 8

Բաժին առաջին

ԴՐՎԱԳՆԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐԻ ԵՎ ՆՈՐ
ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ..... 11

Արման Եղիազարյան

ԵՐԵՎԱՆԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ VII ԴԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ԿԵՄԻՆ 12

Արման Եղիազարյան

ԵՐԵՎԱՆԸ VII ԴԱՐԻ 50-ԱԿԱՆ ԹԹ. ԱՐԱԲԱԿԱՆ
ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ 27

Արման Եղիազարյան

ԵՐԵՎԱՆԸ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ.
ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔ ՀԱՆԴԵՍ ԳԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ..... 43

Արման Եղիազարյան

ԵՐԵՎԱՆԸ XIII-XVI ԴԱՐԵՐՈՒՄ. ԱՐԵՎԵԼՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ 63

Արման Եղիազարյան

ԵՐԵՎԱՆԻ 1724 ԹՎԱԿԱՆԻ
ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ..... 83

Բաժին երկրորդ

ԵՐԵՎԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐԻ ԵՎ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ
ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ 123

Արման Եղիազարյան ԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿՆ ՈՒ ԿԱԶՄԸ 1590-1724 ԹԹ.....	124
Արման Եղիազարյան ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ XVII- XVIII ԴԴ.....	142
Արման Եղիազարյան, Արա Հովհաննիսյան ԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ XIX Դ.	171
Arman Yeghiazaryan THE CITY OF YEREVAN AT THE EPICENTER OF THE TURCO—PERSIAN WARS FROM THE LATE SIXTEENTH TO THE EARLY EIGHTEENTH CENTURY: CHANGES IN THE STRUCTURE AND DISTRIBUTION OF THE POPULATION OF THE CITY	184
<i>Բաժին երրորդ</i> ԵՐԵՎԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐԻ ԵՎ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱԴՐԲԵԶԱՆԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ.....	212
Արման Եղիազարյան, Արա Հովհաննիսյան, Ալիկ Ղարիբյան, Արմինե Չիրոյան ԱԴՐԲԵԶԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇԱՐԱԴՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ (ԸՍՏ ԱԴՐԲԵԶԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ)	213
Ալիկ Ղարիբյան, Ռուզաննա Գասպարյան ԱԴՐԲԵԶԱՆԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ՇՈՒՐԶ.....	252

Arman Yeghiazaryan, Ara Hovhannisyan, Armine
Chiroyan

FALSIFICATION OF THE HISTORY OF YEREVAN AND
ARTSAKH IN AZERBAIJANI SCHOOL TEXTBOOKS
(GENERAL OBSERVATIONS)..... 264

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ
ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 277

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Հայոց հնագույն մայրաքաղաք Երևանն ունի ավելի քան 2800-ամյա պատմություն, և ողջ այդ պատմությունը հստակ հետազոծով առնչվում է հայ ժողովրդի կենսագործունեության հետ: Հատկապես հետաքրքրական զարգացումներով լի է քաղաքի միջնադարյան և նոր ժամանակների պատմությունը, երբ Երևանը, աստիճանաբար վերածվելով Հայաստանի միջնաշխարհի՝ Արարատյան երկրի կենտրոնի, սկսում է ձեռք բերել մեծ քաղաքին բնորոշ հատկանիշներ:

Բագրատունիների թագավորության վերացումից հետո Երևանը բազմիցս ենթարկվել է օտար նվաճողների հարձակումներին: 15-րդ դարից սկսած Հայաստանում հաստատվում է թուրքմենական քոչվոր ցեղերի տիրապետությունը, որի հիմքով էլ ադրբեջանցի հեղինակներն այժմ փորձում են ապացուցել, թե երկրամասը եղել է «ադրբեջանաբնակ», իսկ Երևանը «ադրբեջանական» քաղաք:

Երևանի պատմության ադրբեջանական կեղծարարների թիրախում է քաղաքի պատմության հատկապես այն շրջանը, երբ այն նվաճվեց Մեֆյան Իրանի կողմից, իսկ հետագայում դարձավ համանուն խանության կենտրոն:

Մեֆյան Իրանի տիրապետության շրջանում, չնայած այն իրողությանը, որ 1604 թ. պարսկական զորքերը Երևանի հայության զգալի հատվածին բռնագաղթեցրին, այնուամենայնիվ պատմական սկզբնաղբյուրները և տարբեր օտարերկրացի ճանապարհորդների տեղեկությունները հստակորեն ցույց են տալիս, որ քաղաքը մշտապես, նույնիսկ վերոհիշյալ արհավիրքից հետո, հանդիսացել է հայկական ու հայաբնակ քաղաք:

Ներկայումս Արևելյան Հայաստանի և, մասնավորապես, Երևան քաղաքի պատմության կեղծարարությունը դարձել է ադրբեջանական պատմագրության հիմնական ուղղություններից մեկը: Մեր հարևան երկրում վերջին տասնամյակներին պետական պատվերով գրվում և հրատարակվում են գրքեր, որոնց հիմնական ուղղվածություններից մեկը Երևանն «ադրբեջանա-

կան» քաղաք հռչակելն է: Նման «հիմնավորումներով» էլ Ադրբեյջանի նախագահն ու պետական պաշտոնյաները, ի թիվս Արևելյան Հայաստանի այլ շրջանների ու քաղաքների, հնչեցնում են նաև Երևանի՝ միջնադարում (V-XV դդ.) և նոր ժամանակներում (XV դ.-XX դ. սկիզբ) ադրբեյջանական քաղաք լինելու կեղծ ու շինծու տեսակետը:

Պետք է նշել, որ Երևանի միջնադարի և նոր ժամանակների պատմությունը հայագիտության կարևոր խնդիրներից է դարձել դեռևս տասնամյակներ առաջ: Հիշատակելի է հատկապես Երվանդ Շահագիզի «Հին Յերևանը» (Երևան, 1931 թ.) աշխատությունը: Գիտական գրականության մեջ դեռևս վիճելի է V-VII դարերում Երևանի հիշատակության հարցը, որին նվիրվել են մի շարք հոդվածներ: Երևանի ամբողջական պատմության ներկայացման անհրաժեշտությունից ելնելով 1959-1971 թթ. հրատարակվեց Թ. Հակոբյանի «Երևանի պատմություն» քառահատորյակը, որում ներկայացված էր քաղաքի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 1917 թվականը: Քառահատորյակը ունեցավ գիտաճանաչողական մեծ նշանակություն: Սակայն գիրքը կազմվել ու մշակվել է խորհրդային պատմագրությանը բնորոշ հայեցակարգային ու մեթոդական առանձնահատկություններին համապատասխան և շարադրվել 1950-1960-ականներին հայտնի ու հասանելի սահմանափակ աղբյուրների տեղեկությունների հիման վրա, ուստի, չնայած հարուստ բովանդակությանը, ունի թերի կողմեր: Հետևաբար, արդեն անկախության շրջանում կարևորություն ստացավ Երևանի պատմության նոր հրատարակության հարցը: Վերջինս էլ ավելի այժմեական դարձավ 1991 թվականից ի վեր սկիզբ առած՝ քաղաքի միջնադարյան և նոր ժամանակների պատմության ադրբեյջանական կեղծարարության պայմաններում: Այդ անհրաժեշտություններով պայմանավորված՝ 2018 թ. մի քանի գիտնականների համահեղինակությամբ լույս տեսավ «Երևանի պատմության» գիտահանրամատչելի

հրատարակությունը¹, որտեղ ներկայացված է Երևանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

Նման պայմաններում, մի կողմից Երևանի պատմության նորովի ուսումնասիրության շահեկանությունը, իսկ մյուս կողմից՝ աղբյուրների պատմաբանների կեղծիքները գիտականորեն հերքելու հրատարակությունը, մեծապես կարևորում են Երևանի միջնադարյան և նոր ժամանակների պատմության գիտական ուսումնասիրությունը՝ ներկայացնելով շրջանառվող կեղծիքները և դրանք քննության առնելով ու հերքելով աղբյուրային նյութի հիմքով:

¹ Միմոնյան Հ., Մովսիսյան Ա., Փիլիպոսյան Ա., Եղիազարյան Ա., Մելքոնյան Ա., Ամիրջանյան Լ., Հովհաննիսյան Է., Մելիք-Բախշյան Մ., Վիրաբյան Ա., Մինասյան Է., Ասատրյան Ա., Սարգսյան Ա., Բաղդասարյան Գ., Բաղայան Գ., Երևանի պատմություն, Երևան, 2018:

Բաժին առաջին

ԴՐՎԱԳՆԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐԻ ԵՎ ՆՈՐ
ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Արման Եղիազարյան

ԵՐԵՎԱՆԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ VII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Միջնադարում Երևանի առաջին հիշատակությունների խնդիրը

Հայագիտության մեջ կարևոր հիմնախնդիրներից մեկը մնում է Երևանի առաջին հիշատակությունների հարցը: Մասնավորապես Սեբեոսի պատմությունից հայտնի է, որ 650 թ. արաբական զորքը պաշարել էր «Հերևանի բերդ»-ը, որի համապատասխանությունը Երևանին շարունակում է մնալ բանավեճի առարկա: Այդ առումով անհրաժեշտ է մանրակրկիտ քննության առնել VII դ. սկզբի վարչաքաղաքական իրադրությունը Հայաստանում ու մասնավորապես Այրարատում, ինչպես նաև արաբական արշավանքի երթուղիները, ինչը հնարավորություն կտա հիմնավորելու կամ ժխտելու Հերևան-Երևան նույնության հավանականությունը: Ի դեպ, այդ իրադարձությունից չորս տասնամյակ առաջ՝ 607 թ. տեղի ունեցած եկեղեցական մի ժողովի հետ կապված Երևանն արդեն հիշատակված է հայ մատենագրության մեջ²:

Երևանը պարսկա-բյուզանդական սահմանագլխին

VI դարի վերջին և VII դարում տեղի ունեցած աշխարհաքաղաքական փոփոխությունները հանգեցրեցին Երևան բերդավանի դերի կտրուկ բարձրացմանը: Երկարամյա պատերազմների հետևանքով Պարսկաստանն ու Բյուզանդիան խիստ հյուծվել էին: Եվ երբ պարսից Խոսրով արքան (591-628) կարողացավ հայրենական գահին բազմել Բյուզանդիայի Մավրիկիոս (Մորիկ) կայսեր (582-602) օգնությամբ, վերջինիս զիջեց զգալի տարածք-

² Տե՛ս «Գիրք թղթոց. մատենագրութիւն նախնեաց», Թիֆլիս, 1901, էջ 150-151: Հմտ. Ուխտանէս Էպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, «Մատենագիրք Հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, «Պատմագրութիւն», գիրք Բ., Երևան, 2011, էջ 552-553:

ներ, այդ թվում՝ Հայաստանի մեծ մասը: Ըստ Սեբեոսի՝ այդ զիջումների հետևանքով ձևավորված պարսկա-բյուզանդական նոր սահմանագիծը մեզ հետաքրքրող հատվածում անցնում էր Հրազդան գետով և Գառնիի մոտակայքով. «...ետ [Խոսարովը] նոցա (բյուզանդացիներին) զԱրուաստան զամենայն մինչև ցՄծքին, և զերկիրն Հայոց. որ ընդ իւրով իշխանութեամբն էր, զտունն Տանուտերական մինչև ցգետն Հուրագդան, և զգաւառն Կոտէից մինչև ցաւանն Գառնի և ցեզր ծովուն Բզնունեաց, և ցԱռեստաւան և զԳոգովիտ գավառ մինչև ցՀացին և զՄակու: Եւ կողմն Վասպուրական գնդին էր ի ծառայութիւն Պարսից արքային»³: Հովհաննես Դրասխանակերտցուց հայտնի է, որ սահմանագիծը Դվինից դեպի հյուսիս անցնում էր Ազատ գետով: Ըստ պատմիչի՝ «...մեծ հայրապետն Աբրահամ⁴ ըստ նախասաց բանին ի Դվին քաղաքի բնակէր ի Պարսից բաժնի անդ, վասն զի գետն Ազատ զսահման բաժնիցն երկոցունց [Աբրահամ կաթողիկոսի և Բյուզանդիայի կողմից նրան հակաթոռ կաթողիկոս հռչակած Հովհաննես Բագարանցու (600-616) տիրույթների-Ա.Ե.] ընդ մէջ հատանէր»⁵: Ըստ մեկ այլ աղբյուրի՝ Խոսարով թագավորն «ամբողջ Հայաստանը մինչև Դվին տվեց Մավրիկիոս կայսեր»⁶:

Սեբեոսի նկարագրությունը բաղկացած է երկու մասից: Առաջինը կատարված է հյուսիսից հարավ հաջորդականությամբ՝ Հրազդան գետ, ապա Գառնի ավան, իսկ երկրորդը արևմուտքից արևելք հաջորդականությամբ՝ Բզնունյաց ծով և Առեստավան, ապա Հացյուն և Մակու: Նման պարագայում սահմանագծի հստակեցումը զգալիորեն դժվարանում է: Ն. Ադունցը գրում է, որ «Կոտայքում Գառնին հանդիսանում էր սահմանագծի վերին կե-

³ «Պատմութիւն Սեբեոսի» (այսուհետև Սեբեոս), քննական բնագիրը՝ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 2004., էջ 84:

⁴ Հայոց կաթողիկոս 607-616 թթ.:

⁵ «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցու Պատմութիւն Հայոց» (այսուհետև՝ Հովհաննես Դրասխանակերտցի), «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, «Պատմագրութիւն», Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 401:

⁶ Բարթիկյան Հ., «Narratio de rebus Armeniae». հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, «Բանբեր Մատենադարանի», 1962, N 6, էջ 466:

տը, Առեստը՝ ծովի ափին՝ ստորին կետը, իսկ Հացիւնը և Մակուն՝ Գոգովիտի կողմից՝ միջին կետը: Ուրեմն՝ սահմանագիծը Գառնիից անցնում էր Հացիւնի և Մակուի վրայով դեպի Առեստ»⁷: Է. Դանիելյանը սահմանագիծը հյուսիսից հարավ անցկացնում է Հրազդան գետի վերին հոսանք-Գեղամա լեռների լանջեր-Ազատ գետ գծով⁸: Գրեթե նույն սահմանագիծն է նշում նաև Բ. Հարությունյանը⁹: Այս ամենի հիմամբ Ազատ, այլ ոչ թե Հրազդան գետն է պարսկա-բյուզանդական սահմանագիծ համարել Վ. Իսկանյանը¹⁰:

Հետազոտողները փորձել են գտնել Հրազդան գետի այն հատվածը, որտեղ այն սահմանագատում էր երկու տերությունները, քանի որ գետի ստորին հոսանքից հարավ, ինչպես տեսանք, սահմանագիծն անցնում էր Ազատ գետով: Խնդիրն այն է, որ «գտունն Տանուտերական մինչև ցգետն Հուրազդան, և զգաւառն Կոտէից մինչև ցաւանն Գառնի» արտահայտությունը ցույց է տալիս, որ պարսկա-բյուզանդական սահմանագիծը Հրազդանի հունով պետք է անցներ վերջինիս վերին հոսանքի ավազանում՝ պարսկական տիրապետության ներքո թողնելով Գեղամա ծովակին սահմանակից Մազազ գավառը¹¹, իսկ գետի վերին հոսանքի ավազանի՝ Կոտայքին հարող ողջ հատվածը մինչև Գառնի անցել էր կայսրությանը: Գառնիից դեպի արևմուտք սահմանագիծն անցնում էր Ազատ գետով, փաստորեն, Երևանը թողնելով Բյուզանդիայի կազմում:

Ուստի Երևանը դառնում էր սահմանային ավան, որն էլ հանգեցրեց նրա դերի կարևորմանը. Բյուզանդիան այն պետք է

⁷ Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում. քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, 1987, էջ 262:

⁸ Տե՛ս Դանիելյան Է., Արևելյան Հայաստանի վարչատարածքային բաժանումը (591-629), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1986, N 8, էջ 56:

⁹ Տե՛ս «Հայաստանի պատմության ատլաս», Ա մաս, Երևան, 2005, էջ 54-55:

¹⁰ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», ՀՄՄՀ ԳԱ հրատ., հ. 2, Երևան, 1984, էջ 264-265:

¹¹ Տե՛ս և Դանիելյան Է., նշվ. աշխ., էջ 56:

ամրացնել սահմանների ամրապնդման հրամայականով, իսկ նրա հակառակորդներն էլ պետք է փորձեին տիրել՝ սահմանը ճեղքելու հնարավորություն ստանալու համար:

Երևանի և հարակից շրջանների սահմանային կացությունը երկու գերտերությունների միջև մոտ 600 թ. ի վերջո հանգեցրեց նաև Բյուզանդիայի հովանավորությունը վայելող հակաթոռ կաթողիկոսության հիմնադրմանը Ավան քաղաքացուղում՝ Երևանի մերձակայքում: Այս առումով հույժ կարևորվում է Մորիկ կայսեր կողմից հենց Ավան քաղաքացուղում Հայոց կաթողիկոսին հակաթոռ կաթողիկոսի նստավայրի ընտրությունը. «...ըստ հրամանի կայսերն Մարկայ զՅոհան ուն ի գաւառէ Կոզայ, ի Բագարան գեղջէ կացուցանեն կաթողիկոս յունական կողմանն՝ բնակեցուցանելով զնա ի քաղաքագիւղն Ավան, ուր եւ շինեացն իսկ ինքնին Յոհան զպայծառակերտ քաւարանն սուրբ եւ շուրջանակի նորա յարդարեաց կալուածս կայանի իւրոյ»¹²: Հաջորդ իսկ տողում պատմիչը խոսում է այն մասին, որ կաթողիկոս Աբրահամը (607-616) նստում էր Դվինում, «վասն զի գետն Ազատ զսահման բաժնիցն երկոցունց ընդ մէջ հատանէր»¹³: Ի դեպ, նշվածից պետք է բխեցնել, որ Ազատ գետը նաև երկու կաթողիկոսների տիրույթների սահմանագիծն էր: Այս առումով հույժ կարևորվում է Երևանի պարագան, որ գտնվում էր Բյուզանդիայի հովանավորությունը վայելող կաթողիկոսի տիրույթների մերձավոր հարևանությամբ:

Մավրիկիոսի մահից հետո պարսկա-բյուզանդական պատերազմները վերսկսվեցին փոփոխական հաջողություններով, սակայն ի վերջո 629 թ. կնքված հաշտության պայմանագրով նախկին սահմանները վերականգնվեցին¹⁴: Ուստի մինչև արաբական արշավանքները, այսինքն՝ 591 թվականից մինչև 640-ական թվականները, Երևանը սահմանային ավան էր, ինչը մեծացնում էր նրա կարևորությունը, ուստի այն պետք է ավելի ամրապնդվեր՝ վերածվելով անառիկ ամրության:

¹² Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 401:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Տե՛ս Սեբեոս, էջ 180-182:

Փաստորեն Երևանի բերդը Բյուզանդիայի համար մեծ կարևորության սահմանային ամրություն էր, որը չէր կարող վրիպել 630-ական թվականների վերջից դեպի Հայաստան արշավող արաբների ուշադրությունից: Մյուս կողմից, Դվինից հյուսիս տանող մայրուղու վրա գտնվելու պատճառով այն ստանում էր մեծ դերակատարություն, ուստի պատահական չէ, որ 650 թ. Հայաստան ներխուժած արաբական զորքն առաջին հարվածը փորձեց հասցնել Երևանի բերդին, բայց անհաջողության մատնվեց:

Երևանն արաբական 650 թ. արշավանքի թիրախում

Երևանի մասին կարևոր հիշատակություններից մեկը վերաբերում է արաբական առաջին արշավանքների շրջանին: Շուտ Սեբեոսի՝ 650 թ. «...եկն զաւրն Իսմայելի յԱտրպատական, և բաժանեցան յերիս: Առաջ մի յԱյրարատ, և առաջ մի ի Սեպհական գնդին կողմանսն, և առաջ մի յԱդուանս: Արդ՝ որք ի կողմանս Սեպհական գնդին՝ արշաւեալ սփռեցան և հարեալ զամենայն կողմանսն զայնոսիկ սրով սուսերի, առին զաւար և զգերութիւն: Եւ եկին ժողովեցան ի Հէրևան, և մարտեան ընդ բերդին, և ոչ կարացին առնուլ: Եկին ի յՈրդսպու, և ոչ նմա ինչ կարացին առնել: Գնացին անտի և բանակեցան յԱրծափս, հանդէպ բերդին առ ջրովն»¹⁵:

Ի սկզբանե «Հէրևան» անվանումը, որ տարբեր ձեռագրերում հանդիպում է «յԵրևան» ձևով¹⁶, հետազոտողների կողմից տարբեր մեկնաբանություններ է ստացել: Ոմանք այն նույնացրել են Երևանին, ոմանք էլ կասկածել նման նույնացման հավանականությանը՝ տալով այլ մեկնաբանություններ:

¹⁵ Նույն տեղում, էջ 220:

¹⁶ Տե՛ս «Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն», չորրորդ տպագրութիւն, բաղդատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանիւ եւ ծանօթութեամբք ի ձեռն Ստ. Սալխասեանց, Երևան, 1939, էջ 118:

Հ. Շահխաթունյանը կարծում էր, որ հավանաբար այդ անվամբ ամբողջ կար Կոզովիտում, քանի որ ըստ նրա հենց նման եզրահանգում է բխում Սեբեոսի հիշատակությունից¹⁷:

Թ. Ավդալբեգյանը զարմանալի է համարել Երևանի հիշատակությունն այս հատվածում, քանի որ «Մեպհական գնդի կողմերը» (ըստ հեղինակի Մարդաստան կամ Վասպուրական) արշաված արաբները մեկ էլ հանկարծ հայտնվել են Երևանի մոտակայքում, ինչն անհավանական է: Նա հավելում է նաև, որ ո՛չ Մարդաստանում և ո՛չ էլ Վասպուրականում նման անունով վայր չի եղել¹⁸, ուստի Սեբեոսի հիշատակած տեղանունը նույնացնում է Վասպուրականի Առեստ ավանի անվան հետ¹⁹:

Հ. Մանադյանը «Հերևան-յԵրևան»-ը սրբագրում է «Հերևան»-ի՝ այն նույնացնելով Հեր ավանի կամ քաղաքի հետ²⁰:

Թ. Հակոբյանը, որ «Հերևան-յԵրևան»-ը նույնացնում էր Երևանին, անընդունելի է համարում Հ. Մանանդյանի տեսակետը՝ նշելով, որ Հերը երբեք «Հերևան» չի կոչվել, իսկ Սեբեոսի տեքստում խոսքը հենց Երևանի բերդի մասին է²¹: Ինչ վերաբերում է Սեբեոսի տեղեկությունների աշխարհագրությանը, հեղինակը հավանական է համարում այնտեղ ներկայացվող տեղանունների հերթականության շփոթությունը պատմիչի կողմից²²:

Մ. Հովհաննիսյանը նշում է, որ ուսումնասիրողների կողմից սխալ է ընկալվել «Մեպհական գնդի կողմերը», քանի որ վերջին անվանումն իրականում այդ շրջանում պետք է ընդգրկեր

¹⁷ Տե՛ս Շահխաթունեանց Հ., Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, Էջմիածին, 1842, էջ 134-135:

¹⁸ Տե՛ս Ավդալբեգյան Թ., Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 146:

¹⁹ Տե՛ս նույն տեղում:

²⁰ Տե՛ս Մանանդյան Հ., Հին Հայաստանի գլխավոր ճանապարհներն ըստ Պևտինգերյան քարտեզի, Երևան, 1936, էջ 146:

²¹ Տե՛ս Հակոբյան Թ., Երևանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 1500 թ., Երևան, 1969, էջ 194-195:

²² Տե՛ս նույն տեղում, էջ 193:

Դվինը՝ շրջակայքով: Ուստի «Հերևան-Երևան»-ը պետք չէր սրբագրել, այն նույնական էր Երևանին²³:

Գ. Արգարյանը, որ հատուկ հողված է նվիրել Երևանի այս հնագույն հիշատակության քննությանը, չհամաձայնելով Թ. Հակոբյանի տեսակետին, գրում է, որ «Հերևան»-ի բերդը պաշարել է Մեպհական (Վասպուրական) գնդի կողմերը ներխուժած արաբական զորամասը և ոչ թե Այրարատ ներխուժած զորաբանակը, ու քանի որ Երևանը գտնվում է Այրարատում, պետք է դառնար հենց Այրարատ մտած զորախմբի թիրախը²⁴: Այս պնդումը հիմնավորելու համար նա փորձում է պատասխան գտնել այն հարցին, թե ինչու հենց Վասպուրականն ասպատակող զորագունդն է պաշարել Արծափաց ամրոցը, որ նույնպես գտնվում էր Այրարատում: Ի դեպ, սա այնպիսի մի կովան է, որ խաթարում է նրա՝ Երևանի պաշարումը բացառապես Այրարատն ասպատակող զորագնդի «մենաշնորհ» համարող տեսությունը: Ուստի նա համարում է, որ Արծափաց ամրոցը, գտնվելով Այրարատի հարավում, կարող էր ընդգրկվել հարևան երկրամասերում տեղի ունեցող իրադարձությունների մեջ, և այդ իրողությունը չպետք է նույնացնել Այրարատի կենտրոնում գտնվող Երևանի բերդը պաշարելու դեպքի հետ²⁵:

Գ. Արգարյանը, քննարկելով արաբների նախորդ արշավանքի վերաբերյալ Մեբեռուի տեղեկությունը («...ել գաւր ապականիչ յԱսորեստան կողմանէ ընդ ճանապարհս Ձորոյ յաշխարհն Տարանոյ. առին զնա և զԲզնունիս և զԱղիովիտ: Եւ ճանապարհ կալեալ ի Բերկրոյ ձորն ընդ Որդսպոյ և ընդ Գոգովիտ թափեցան յԱյրարատ»²⁶), եզրակացնում է, որ պատմիչին լավ հայտնի էր տեղանքի աշխարհագրությունը, ուստի նա հստակորեն պահպանել է տեղանունների աշխարհագրական հերթակա-

²³ Տե՛ս Թովհաննեսեան Մ., Հայաստանի բերդերը, Վենետիկ-Ս. Ղազար, 1970, էջ 900-901:

²⁴ Տե՛ս Արգարյան Գ., «Երևանի» բերդի հնագույն հիշատակությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1972, N 8, էջ 27-28:

²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 28-29:

²⁶ Տե՛ս Մեբեռու, էջ 204:

նությունը: Սրանով նա հակադրվում է Մեբեոսի «Հերևան-յԵրևան»-ը ներկայիս Երևանին նույնացնող Թ. Հակոբյանի տեսակետին, թե Մեբեոսի մոտ կարող էր տեղի ունենալ աշխարհագրական անունների հերթականության խախտում:

Ի վերջո, Գ. Աբգարյանը «Հերևան-յԵրևան»-ն առաջարկում է ընթերցել «Հեր և անդ»: Ըստ նրա կատարած սրբագրման՝ Մեբեոսի տեքստը նախապես եղել է հետևյալը. «Եւ եկին ժողովեցան ի Հեր և անդ մարտեան ընդ բերդին և ոչ կարացին առնուլ»²⁷: Ըստ նրա՝ Վասպուրականն ասպատակելուց հետո արաբները ավարով և գերիներով վերադարձել և հավաքվել են Հերում՝ պաշարելով բերդը²⁸:

Ա. Տեր-Ղևոնդյանը համարում է, որ Հերևանը բերդ էր Վասպուրականում²⁹:

Է. Դանիելյանը, որ «Սեպհական գնդի կողմերը» նույնացնում է Վասպուրականին, Մեբեոսի նկարագրած արշավանքը (ըստ նրա՝ տեղի է ունեցել 647 թ.) նույնացնում է Ղևոնդի հիշատակած հետևյալ ներխուժման հետ. «Հագարացիքն... զօր ժողովեալ դարձեալ յարձակեցան ի վերայ աշխարհիս Հայոց, որոց էին գլխաւորք Օթման և Օգբայ: Եւ իբրև հասին ի սահմանս Հայոց՝ յերիս բաժանեալ առաջս՝ սփռեցան յասպատակս իւրեանց: Առաջ մի հատեալ ընդ կողմն Վասպուրական աշխարհին՝ առին զաւանս և զամրոցս որ մինչև ի Նախջաւան քաղաք. և առաջ մի ընդ կողմն Տարօնոյ: Եւ միւս առաջ հասեալ ի Կոզովիտ՝ պաշարէին զամրոցն Արծափաց»³⁰: Մեբեոսի և Ղևոնդի վերոհիշյալ հաղորդումների նույնացումից հետագոտողը բխեցրել է, որ «Հերևան»-ը գտնվել է Տարոն-Տուրուբերանում, ավելի որոշակի՝ Հարք գավառում³¹, թեև այդ տեղանունը Ղևոնդը չի հիշատակում:

²⁷ Տե՛ս Աբգարյան Գ., նշվ. աշխ., էջ 30-31:

²⁸ Տե՛ս նույն տեղում:

²⁹ Տե՛ս Тер-Гевондян А., Армения и Арабский Халифат, Ереван, 1977, с. 34:

³⁰ «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 11:

³¹ Տե՛ս Դանիելյան Է., 647 թվականի արաբական արշավանքը Հայաստան, «Պատմաբանասիրական հանդես», 1982, N 2, էջ 112-114:

Ինչպես տեսնում ենք, հետազոտողներից յուրաքանչյուրը «հիմնավորել» է սեփական տեսակետը՝ այն կապելով Մեբեոսի տեքստում առկա իրողություններից որևէ մեկի հետ: Հենքային պնդումը եղել է «Մեպիական գնդի կողմեր»-ի այս կամ այն ընդգրկումը:

Ըստ Մեբեոսի՝ Ատրպատական եկած արաբական ուժերը բաժանվել են երեք մասի և արշավել Այրարատ, Մեպիական գնդի կողմերը և Աղվանք: Մեպիական գնդի կողմերն արշաված զորագունդը, ասպատակելով երկրամասը, եկել բանակել է Հերևան-Երևանում: Այն փորձել է գրավել բերդը, չի հաջողել, շարժվել է դեպի Որդսպու, անհաջողության մատնվել նաև այնտեղ, ուստի շարժվել է Արծափաց ամրոցի կողմը: Ակնհայտ է, որ արշավանքը սկսվել է Ատրպատականից, որտեղից երկրորդ զորախումբը մտել է Մեպիական գնդի կողմերը: Ի տարբերություն վերոհիշյալ հեղինակների՝ Բ. Հարությունյանը Մեպիական կամ Վասպուրական գնդին հատկացնում է ավելի ընդարձակ տարածքներ: Ըստ նրա, երբ Հայաստանի՝ 591 թ. պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Տանուտիրական գնդի երկիրը, որ ընդգրկում էր Այրարատը, Տուրուբերանը և Տայքը³², անցավ Բյուզանդիային, իսկ մինչ այդ Սյունիքն արդեն առանձնացել էր Հայոց մարզպանությունից, վերջինից պարսկական տիրապետության ներքո մնացել էին միայն Վասպուրականը, Սուկքը, Պարսկահայքի և Կորճայքի հյուսիսային հատվածներն ու նախկինում Տանուտիրական գնդի երկրի մաս կազմող՝ Այրարատի Մասյացոտն, Արածու կողմն և Ոստան Դվնա գավառները³³: Ըստ հետազոտողի՝ այդ իրադարձությունից հետո պարսից տիրապետության ներքո մնացած Հայոց մարզպանության հողերը սկսեցին կոչվել Վասպուրական (Մեպիական) գնդի երկիր կամ Վասպուրական երկիր և

³² Տե՛ս Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 260, 264:

³³ Տե՛ս Арутюнян Б., Административное деление закавказских владений Сасанидского Ирана согласно труду Елише, «Кавказ и Византия», вып. 1, Е., 1979, с. 19-35:

նունով, որը, փաստորեն, շատ ավելի ընդարձակ էր, քան Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը³⁴:

Ակնհայտ է, որ Սեպհական կամ Վասպուրական գնդի երկրի նման ընդգրկումն ի չիք է դարձնում հեղինակների այն պնդումը, թե Հերևանը պետք է փնտրել Վասպուրականում կամ Պարսկահայքում, քանի որ Երևանը հեռու էր Վասպուրականից: Խնդիրն այն է, որ Երևանը, փաստորեն, կա՛մ գտնվում էր Վասպուրական գնդի երկրի սահմանին և կա՛մ ոչ հեռու, ուստի կարող էր դառնալ այդ երկիրը ներխուժած արաբական զորքի թիրախներից մեկը: Մյուս կողմից, արշավանքը տեղի էր ունեցել Ատրպատականից, որտեղից Հայաստանի Միջնաշխարհը տանող ամենաբանուկ ու հարմարավետ ճանապարհն անցնում էր Նախճավան-Դվին ուղեգծով: Եթե մի պահ վերանանք վերոհիշյալ կարծիքներից և բացառենք արաբների՝ Ատրպատականից Հերով Վասպուրական ներխուժելու հնարավորությունը, որը խախտում է Սեբեոսի տեքստի՝ իրականում աշխարհագրական հերթականության խստիվ պահպանելու իրողությունը, ապա ակնհայտ կդառնա, որ Նախճավան-Դվին ճանապարհը, որ ամենայն հավանականությամբ Մյունիքն Ատրպատականի աշխարհագրին միացվելուց (572 թ.) հետո շարունակել էր մաս կազմել Հայոց մարզպանության, իսկ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում՝ Վասպուրական գնդի երկրի³⁵, արաբական զորագնդին ուղղակիորեն հասցնելու էր Երևանի մատույցները: Անհաջողության մատնված արաբներն այնտեղից շարժվել են դեպի բուն Վասպուրական՝ հայտնվելով Կոզովիտի հարավային սահմանի մոտ՝ Դառնիձորի լեռնանցքի հարևանությամբ գտնվող Որդս-

³⁴ Տե՛ս Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա (արևմտյան և հարավային աշխարհներ), Երևան, 2001, էջ 400-401: Այն մասին, որ Վասպուրական անունով էին կոչվում բաժանումից հետո պարսիկների տիրապետության ներքո մնացած հայկական հողերը, նշում է նաև Ն. Ադոնցը: Տե՛ս Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 262:

³⁵ Տե՛ս «Հայաստանի պատմության ստլա», Ա մաս, էջ 54-55:

պուլի³⁶ մոտակայքում: Այնուհետև նրանք ուղիղ ճանապարհով արշավել են Արծափաց ամրոցի ուղղությամբ և պաշարել այն: Ի դեպ, Սեբեոսի հաղորդումն այն մասին, որ Արծափաց ամրոցի պաշտպաններն օգնության համար դիմել են Դարյունից բերդի տիրոջը՝ Սմբատ Բագրատունուն³⁷, ցույց է տալիս, որ արաբները դեռևս այնտեղ չէին հասել, քանի որ Որդսպուլից ճանապարհն ուղիղ տանում էր դեպի Արծափաց ամրոցը³⁸: Հակառակ դեպքում՝ եթե արաբներն արշավանքը սկսեին Վասպուրականից, ապա Հերից այնտեղ անցնող ճանապարհի երթուղին նրանց դուրս էր բերելու սկզբում Դարյունից բերդի և հետո միայն Արծափաց ամրոցի շրջակայքը³⁹:

Ի դեպ, Գ. Աբգարյանի տեսակետը, թե Վասպուրականն ասպատակելուց հետո արաբները կայանել են Հերում և պաշարել տեղի բերդը, հերքելի է այն պատճառով, որ Ատրպատականից ուղղակի Վասպուրականի կենտրոն արաբները պետք է շարժվեին Հերով, քանի որ հենց այդ քաղաքի մերձակայքով էր անցնում հիմնական ճանապարհը: Ուստի ստացվում է, որ արաբական զորագունդը անցել է Հերի կողքով, բերդը թողել աննվաճ, արշավել Վասպուրականի խորքը, ապա վերադարձել ու նոր միայն պաշարել այն⁴⁰: Ուստի նա կարծում է, որ արշավանքը տեղի է ունեցել ոչ թե Հերի կողմից, այլ Հայաստանի հարավից⁴¹, թեև այդտեղից ներխուժելու պարագայում էլ Ուրմիո լճի արևմտյան ավերով անցնող հիմնական ճանապարհը նրանց հասցնելու էր Հեր: Մեկ այլ խնդիր է այն, որ հետազոտողը Սեպհական գնդին «հատկացնում» էր ավելի փոքր տարածք, քան այն զբաղեցնում էր իրականում:

³⁶ Տե՛ս Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 147-149, 246, Եղիազարյան Ա., Հայ Բագրատունիների տերությունը 885-908 թթ. (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Երևան, 2011, էջ 347:

³⁷ Տե՛ս Սեբեոս, էջ 220:

³⁸ Տե՛ս Եղիազարյան Ա., նշվ. աշխ., էջ 347 և 352 էջին կից քարտեզը:

³⁹ Տե՛ս նույն տեղում:

⁴⁰ Տե՛ս Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 145:

⁴¹ Տե՛ս Աբգարյան Գ., նշվ. աշխ., էջ 29:

Քննությունը ցույց է տալիս, որ Մեքեոսի հիշատակությունը վերաբերում է հենց Երևանին ու նրա բերդին, որը ոչ մի կերպ Վասպուրականում չի տեղադրվում (քանի որ այդ անունով բերդ Վասպուրականում հիշատակված չէ) և առավել ևս չի նույնանում Հերին: Այն չէր կարող գտնվել նաև Այրարատում, քանի որ այդ շրջաններն ասպատակել էր արաբական մյուս զորախումբը:

Այստեղ հարկ է անդրադառնալ նաև Է. Դանիելյանի այն կարծիքին, թե Հերևանը գտնվում էր Տուրուբերանում: Ինչպես տեսանք, այդ տեսակետը հիմնված էր Ղևոնդի հիշատակության վրա, որտեղ պատմիչը նշում է արաբների արշավանքի երեք ուղղությունները՝ Վասպուրական, Տարոն և Այրարատ: Վասպուրական ներխուժած զորագունդը նվաճել է տեղի ավաններն ու ամրոցները մինչև Նախճավան, մյուսն ասպատակել է Տարոնի կողմերը, իսկ երրորդը՝ հասել Կոզովիտ ու պաշարել Արծափաց ամրոցը: Ակնհայտ է, որ այդ արշավանքը նույնական է Մեքեոսի հիշատակածին, միայն թե պարունակում է էական տարբերություններ: Ըստ Մեքեոսի՝ արաբներն արշավել են Այրարատ, Վասպուրական գնդի երկիր և Աղվանք, իսկ ըստ Ղևոնդի՝ Վասպուրական, Տարոն և Այրարատ (Կոզովիտ): Կոզովիտում նրանք պաշարել են Արծափաց ամրոցը, ինչը ցույց է տալիս, որ Ղևոնդի հիշատակած՝ արաբական արշավանքի առաջին և երրորդ ուղղությունները համընկնում են Մեքեոսի հիշատակած առաջին՝ դեպի Վասպուրական գնդի երկիրն արշավանքի իրողություններին: Իսկ Տարոնի կողմերն արշավելու Ղևոնդի տեղեկությունը վստահաբար կապված է Մեքեոսի տեքստում Դարյունից բերդին տրված «Դարանից բերդ» (անունն ընթերցվում է «Դարոնից») անվան հետ: Այդ բերդից օգնություն էին խնդրել ու ստացել պաշարված Արծափաց ամրոցի պաշտպանները: Թեև պատմիչն այլ տեղերում այն կոչում է «Դարինից բերդ»⁴² (անունն ընթերցվում է «Դարյունից»), սակայն այս պարագայում «Դարոնից» ընթերցվող անվանումը պետք է ազդեր այլ հեղինակների վրա՝ ծնելով այն միտքը, թե արաբները ներխուժել են նաև Տարոն: Պատահական չէ, որ Ասողիկը նույնպես այս արշավանքի մասին գրում է.

⁴² Տե՛ս Մեքեոս, էջ 128, 220:

«...յարձակեցան զարն նոցա (արաբների-Ա.Ե.) յաշխարհս Հայոց. եւ յերիս յառաջս բաժանեցան՝ ի Վասպուրական եւ ի Տարան»⁴³:

Արդ, երբ կարելի է պնդել, որ արաբներն այդ արշավանքի ժամանակ Տարոն չեն հասել, կարող ենք հստակեցնել նրանց գորագնդերի շարժման ուղղությունները՝ Վասպուրական գնդի երկիր, Այրարատ և Աղվանք: Վասպուրական գնդի երկրի և Այրարատի ասպատակությունների մասին պահպանվել են հստակ տեղեկություններ, իսկ ինչ վերաբերում է արաբների ներխուժմանն Աղվանք, ապա այստեղ կարելի է տալ հետևյալ բացատրությունը: Բանն այն է, որ Վասպուրական գնդի երկիր ներխուժած զորագունդը, դատելով Սեբեոսի և Ղևոնդի տեղեկություններից, ասպատակել է Նախճավանից մինչև Երևան և Որդսպուից մինչև Արծափաց ամրոց ընկած տարածքները: Այրարատ ներխուժած զորագնդի վերաբերյալ Սեբեոսը խոսում է հաջորդ գլխում, պատմելով, որ այն ասպատակել է Տայքը, Վիրքը և Աղվանքը, ապա ավարով ու գերիներով եկել ու միացել Նախճավանի բերդը պաշարած մյուս զորագնդին⁴⁴: Այն, որ վերջինս Աղվանք ներխուժած զորագունդը չէ, ակնհայտ է, ուստի նույնանում է Վասպուրական գնդի երկիր ներխուժած զորագնդին, որ Արծափաց բերդում ջախջախվել էր Թեոդորոս Ռշտունու կողմից⁴⁵ և հեռացել դեպի Նախճավան, որն էլ փաստված է Ղևոնդի երկում: Այստեղ պետք է ընդգծել առաջին հայացքից ոչ այնքան կարևոր իրողության մասին: Խոսքն Այրարատ ներխուժած զորագնդի երթուղու մասին է, ըստ որում հենց այդ երթուղին է, որ Սեբեոսին հիմք է տվել խոսելու այն մասին, որ արաբական մի զորամաս արշավել է Աղվանք: Ամենայն հավանականությամբ, այդ զորագունդը դեպի Այրարատ շարժվել է Հայոց Արևելից կամ այսպես կոչված Աղվանից կողմերով, քանի որ առաջինը, ինչպես տեսանք, արշավել է Նախճավան-Դվին ուղղությամբ, իսկ արաբա-

⁴³ «Ստեփաննոսի Տարանեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», «Մատենագիրք Հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, «Պատմագրութիւն», գիրք Բ, Երևան, 2011, էջ 718:

⁴⁴ Տե՛ս Սեբեոս, էջ 224:

⁴⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 222:

կան բանակը մասերի էր բաժանվել դեռ Ատրպատականում: Այն փաստորեն Գեղամա ծովակի հյուսիսային ափերով մտել էր Այրարատ, այնուհետև ասպատակել Տայքն ու Վիրքը: Այսինքն՝ այդ գորագնդի ռազմական գործողությունները տեղի են ունեցել Երևանից բավականին հեռու: Իսկ Վասպուրական գնդի երկիրն ասպատակող գորագունդը արշավել է նաև նրա կազմում ընդգրկված Այրարատի հարավային շրջանները՝ պաշարելով նաև սահմանից ոչ հեռու գտնվող Երևանի բերդը:

Փաստորեն, չնայած պատմիչի այն տեղեկությանը, որ արաբները բաժանվել են երեք մասի, հետագա տեղեկությունները ցույց են տալիս, որ իրականում նրանք արշավել են երկու գորաբանակով, որոնցից Այրարատ ներխուժողը, ի թիվս այլ երկրամասերի, ասպատակել է նաև Աղվանքը: Պատահական չէ, որ Աղվանք արշավող արաբների մասին չեն հիշատակում Ղևոնդը և Ասողիկը: Բայց քանի որ նրանց հայտնի էր, թե իբր արաբները բաժանվել են երեք մասի, Ղևոնդը «Դարան»-ից բխեցրել է «Տարան»-ը, իսկ Ասողիկը նշել է միայն երկու ուղղությունը, թեև հիշատակել է արաբների՝ երեք գորագունդ կազմելու մասին:

Ուստի Վասպուրական կամ Մեպհական գնդի կողմերն արշաված արաբական գորագնդի կողմից Երևանի բերդը պաշարելու մասին պետք է նշել, որ դրա հավանականությունն անչափ մեծ է, քանի որ Այրարատի կողմը ներխուժած գորագունդը սրի էր մատնում Տայքը, Վիրքն ու Աղվանքը, այսինքն՝ Երևանից հյուսիս գտնվող երկրամասերը:

Ամփոփում

Փաստորեն, կարող ենք նշել, որ Սեբեոսի հիշատակած Հերևանը նույնական է Երևանին: Արաբական արշավանքների շրջանում Երևանը հանդես էր գալիս որպես ամրակուռ բերդ ունեցող ավան, որը, գտնվելով Բյուզանդիայի տիրույթների սահմանագծին, ամրապնդվել էր, և արաբները այդպես էլ չկարողացան կոտրել նրա պաշտպանների դիմադրությունը:

Arman Yeghiazaryan

**THE MENTION OF YEREVAN IN THE FIRST HALF OF VII
CENTURY**

One of the important problems of Armenology is the question of the mention of Yerevan in the text of the historian Sebeos during the invasion of the Arabs of 647.

The problem is that Sebeos mentions “hEerevan” instead of Yerevan, on the basis of which some researchers supposed that the talk is not about Yerevan but the city of hEr in the south of Armenia (today's city of Khoy in Iran). Others think that this is one of the first mentions of the city of Yerevan. A detailed study of the administrative and political situation in the region as well as the routes of the Arab troops shows that “hEerevan” in the text of Sebeos corresponds to Yerevan.

Արման Եղիազարյան

ԵՐԵՎԱՆԸ VII ԴԱՐԻ 50-ԱԿԱՆ ԹԹ. ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Երևանը արաբական նոր արշավանքների շրջանում

Հայտնի է, որ արաբների՝ Հայաստան կատարված արշավանքներից առավել ծավալուն են եղել 641 թ., 650 թ. և 654-655 թթ. տեղի ունեցածները: 650 թ. արշավանքի ժամանակ նրանք պաշարել են Երևանը, բայց գրավել չեն կարողացել⁴⁶:

Հայ պատմիչների տեղեկությունները ցույց են տալիս, որ Երևանն արաբական արշավանքների թիրախում հայտնվել է նաև 650-ական թթ.: Այդ ժամանակ Երևանը, որպես անառիկ բերդաքաղաք, կարևոր ռազմավարական դիրք ուներ Հայաստանում իրենց տիրապետությունը հաստատել կամեցող արաբների համար: 650 թ. արաբների անհաջողությունից հետո իրավիճակը փոխվեց՝ կապված բյուզանդացիների ծավալուն նահանջի և արաբների հարձակողական նոր գործողությունների հետ: Սկզբում բյուզանդացիները փորձեցին կասեցնել արաբների առաջխաղացումը. 652 թ. Բյուզանդիայի Կոստաս Բ կայսրը (641-668) մեծ բանակով ներխուժեց Հայաստան և գրավեց Դվինը, որից հետո արշավեց հյուսիս և ռազմակալեց Վիրքը⁴⁷: Կայսեր հեռանալուց հետո արաբները, ամենայն հավանականությամբ հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու (639-655) աջակցությամբ, 653 թ. ներխուժեցին Բյուզանդիայի տարածք և գրավեցին Տրապիզոնը՝ վերադառնալով մեծաքանակ զերիներով և ավարով: Այնուհետև Թեոդորոս Ռշտունին մեկնեց Դամասկոս ու արաբներից ստա-

⁴⁶ Այդ արշավանքի և մասնավորապես Երևանի հետ կապված իրադարձությունների մասին տե՛ս Եղիազարյան Ա., Երևանի հիշատակությունը VII դարի առաջին կեսին // «Բանբեր Երևանի համալսարանի», Հայագիտություն, 2018 № 1, էջ 3-13:

⁴⁷ Տե՛ս Սեբեոս, էջ 264-266:

ցավ իշխանությունն Հայաստանում, Վիրքում և Աղվանքում. նրա տիրապետության սահմանները հյուսիսում հասնում էին մինչև Կովկասյան լեռնաշղթա ու Դերբենդ⁴⁸: Սակայն 654 թ. Թեոդորոս Ռշտունու հիվանդանալու և քաղաքական թատերաբեմից հեռանալու հետևանքով երկրում ստեղծված դժվարին իրավիճակն իրենց հսկողության տակ պահելու նպատակով արաբները Հաբիբ իբն Մաալամայի գլխավորությամբ 654 թ. ռազմակալեցին ողջ Հայաստանը⁴⁹: 655 թ. երկու ուղղություններով սկսվեց արաբական զորքերի նոր արշավանքը՝ Հաբիբ իբն Մաալամայի գլխավորությամբ Հայաստանից դեպի Վիրք և Մալման իբն Ռաբիայի գլխավորությամբ՝ դեպի Աղվանք⁵⁰: Ի հետևանս դրա, իրավիճակը դարձյալ լարվեց Երևանի տարածաշրջանում:

Ահա՛, հենց այս պայմաններում է, որ պատմիչներ Հովհաննես Դրասխանակերտցին և Սամվել Անեցին հիշատակում են այսպես կոչված «Երևանու կռիվը»:

Սկզբնաղբյուրային տեղեկություններ «Երևանի կռիվ» մասին

«Երևանի կռիվ» վերաբերյալ պահպանվել են սկզբնաղբյուրային սահմանափակ տեղեկություններ:

Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ «Յայնմ ժամանակի ասեն լինել զկռին, որ ի քաղաքագլուխ Երեւանի, զոր էւ բաւական քեզ ուսուցանեն զայնր պատերազմի զհանգամանս՝ որ նախ

⁴⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 272-274:

⁴⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 284. «...ի նմին ամի (654-Ա.Ե.) զարն Իսմայելի որ ի Հայաստան աշխարհի կալան ի ծագաց ի ծագս զերկիրն ամենայն»:

⁵⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 286: Տե՛ս նաև Բալագուրի, Երկրների նվաճում (Ֆուտուհ ալ-բուլղան) // «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 16, «Արաբական աղբյուրներ», Գ, Արաբ մատենագիրներ (Թ-Ժ դարեր), ներածությունը և բնագրերից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005, էջ 270-274: Արաբների 654-655 թթ. արշավանքների մասին մանրամասնորեն տե՛ս Եղիազարյան Ա., Հաբիբ իբն Մաալամայի և Մալման իբն Ռաբիայի արշավանքները Հայաստան և այսրկովկասյան երկրներ // «Լրաբեր հասարակական գիտությունների», 2008, N 2, էջ 68-77:

քան զմեզ զնա պատմագրեցին»⁵¹: «Յայնմ ժամանակի»-ն, ինչպես ցույց է տալիս հեղինակի տեքստը, վերաբերում է հայոց Անաստաս կաթողիկոսի աթոռակալության (661-667) և Գրիգոր Մամիկոնյանի իշխանության (662-685) շրջանին⁵²: Ըստ որում նրա հաղորդումը Երևան գյուղաքաղաքի շուրջը տեղի ունեցող կռվի մասին ներկայացվում է Գրիգոր Մամիկոնյանի կողմից Արուճի եկեղեցու հիմնադրումից (661 կամ 662 թ.⁵³) հետո⁵⁴:

Մամվել Անեցին հաղորդում է, որ հայոց 107 թվականին (658) տեղի է ունեցել «Երեւանու կոիւն, յորում զգիարդն գտցէս, առ պատմագրութիւնս առաջնոցն: Շապուհ եւ Ասղնիկ յիշէն»⁵⁵: Աշխատասիրող Կ. Մաթևոսյանը գրում է, թե քանի որ Շապուհի երկը մեզ չի հասել, իսկ Ասողիկը Երևանի կռվի մասին չի հիշատակում, ստացվում է, որ Մամվել Անեցու տեղեկությունը այս կռվի վերաբերյալ միակ սկզբնաղբյուրային վկայությունն է⁵⁶: Ինչպես տեսանք, փաստորեն, Երևանի կռվի մասին հիշատակում է նաև Հովհաննես Դրասխանակերտցին: Ի դեպ, Թ. Ավդալբեկյանը ևս, հընթացս ժխտելով Երևանի հիշատակությունը Մեբեոսի աշխատության մեջ, նշում է, որ «եզակի հայ աղբյուրը, որ Է. դարից այն էլ դարի սկզբից պահել է Երեւանի մասին մի ու միակ լակոնական յիշատակութիւն, «Գիրք թղթոցն» է, որտեղ հոգևորականների շարքում հանդէս է գալիս ոմն «Դաւիթ Երեւա-

⁵¹ «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց» (այսուհետև՝ Հովհաննես Դրասխանակերտցի), «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, «Պատմագրութիւն», Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 414:

⁵² Տե՛ս նույն տեղում, էջ 413-414:

⁵³ Տե՛ս Մաթևոսյան Կ., Արուճի տաճարի 666 թ. որմնանկարը // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1981, N 3, էջ 90:

⁵⁴ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 413:

⁵⁵ Մամուլ Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրութիւն Ադամից մինչև 1776 թ. (այսուհետև՝ Մամվել Անեցի և շարունակողներ), աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի. Երևան, 2014, էջ 152:

⁵⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 372, ծանոթ. 125:

նայ»⁵⁷»⁵⁸: Փաստորեն, հեղինակը ծանոթ չի եղել «Երևանի կովի» մասին Հովհաննես Դրասխանակերտցու և Սամվել Անեցու տեղեկություններին:

«Երևանի կովի» հարցը պատմագիտության մեջ

«Երևանի կովին» անդրադարձած հեղինակների մի մասը, կրկնելով նախորդներին, այն նույնացնում է 650 թ. արշավանքի ընթացքում Երևանի պաշարմանը, իսկ մյուսներն այն համարում են առանձին դեպք:

Ղ. Ալիշանը կարծում է, որ 642-643 արշավանքի ժամանակ, ըստ Սեբեոսի՝ արաբները պաշարել են Երևանը, իսկ հետո, արդեն 658 թ.՝ մեկ այլ նշանավոր կռիվ է եղել Երևան քաղաքացուհում: Նա ցավ է հայտնում, որ հայ մատենագիրներից յուրաքանչյուրը նախորդին է հղել այս կովի մասին տեղեկությունը, իսկ քանի որ նախորդների երկերն այժմ չկան, մենք անտեղյակ ենք մնում դրա մանրամասներին⁵⁹:

Ե. Շահագիզը Երևանի այս կռիվը նույնացնում է 650 թ.՝ արաբական զորքի կողմից Երևանի պաշարման հետ, ուստի նշում է, որ Հովհաննես Դրասխանակերտցուց բացի, որը տեղեկությունը քաղել է Սեբեոսից, «նույն աղբյուրից մեկը մյուսից առնելով, հիշում են Յերեվանի անունը Ղեվոնդ Երեցը, Ասողիկը և Սամվել Անեցին»⁶⁰: Սակայն հեղինակն աչքաթող է անում իր իսկ բերած՝ Սամվել Անեցու հիշատակությունն այն մասին, որ խնդրո առարկա կռիվը «...Շապուհ եւ Ասղնիկ յիշեն», քանի որ, եթե իրոք խոսքը լիներ Սեբեոսի տեղեկության մասին, շատ ավելի ուշ ստեղծագործած Սամվել Անեցին, բացի Շապուհից և Ասողիկից, կնշեր

⁵⁷ «Գիրք թղթոց. մատենագրութիւն նախնեաց», Թիֆլիս, 1901, էջ 151:

⁵⁸ Աւրաբբեկեան Թ., Բանասերի օրագրից, Ե. Երևանը Սեբեոսի «Պատմութեան» մէջ // «Հանդես ամսօրեայ», 1926, թիւ 11-12 (նոյեմբեր-դեկտեմբեր), էջ 590:

⁵⁹ Տե՛ս «Այրարատ բնաշխարհի Հայաստանեայց», տեղագրեաց Հ. Ղեւոնդ Վ. Ս. Ալիշան, Վենետիկ – Ս. Ղազար, 1890, էջ 299-300:

⁶⁰ Շահագիզ Յե., Հին Յերևանը, Յերևան, 1931, էջ 69:

նաև Սեբեոսի և Ղևոնդի անունները: Վերջինս, ի դեպ, Երևանի պաշարման մասին հիշատակություն չունի: Իսկ այն, որ Մամվել Անեցին խոսում է Շապուհի և Ասողիկի հիշատակությունների մասին, հուշում է, որ խոսքը բոլորովին այլ իրադարձության մասին է: Ասողիկի աշխատությունում նման դրվագ հիշատակված չէ, իսկ Շապուհի երկասիրությունը կորած է: Ավելին, այն, որ Հովհաննես Դրասխանակերտցին մանրամասնում է, թե կոփվր տեղի է ունեցել Անաստաս կաթողիկոսի և Գրիգոր Մամիկոնյանի օրոք Երևան գյուղաքաղաքի շուրջ, տպավորություն է ստեղծում, թե պատմիչն իր տեղեկությունը քաղել է մեզ անհասանելի աղբյուրից և հստակորեն գիտի իրենից ավելի քան երկուսուկես հարյուրամյակ առաջ տեղի ունեցած դեպքերի ժամանակագրությունը և Երևանի՝ զարգացման այդ շրջափուլի մանրամասները:

Ս. Բարխուդարյանը համարում է, որ Հովհաննես Դրասխանակերտցին պարզապես կրկնել է Սեբեոսի տեղեկությունը Երևանի դեպքերի մասին, թեև նկատում է, որ միայն նա է հիշատակում Երևանը որպես գյուղաքաղաք⁶¹:

Ե. ավագ քահանա Սարգսյանն այն կարծիքին է, որ իր տեղեկությունը Հովհաննես Դրասխանակերտցին վերցրել է Սեբեոսից⁶²:

Նույն տեսակետն է արտահայտում կաթողիկոս-պատմիչի երկասիրության անզլերեն թարգմանությունն իրականացրած և ծանոթագրած Կ. Մակսուդյանը⁶³:

⁶¹ Տե՛ս Բարխուդարյան Ս., Մի քանի դիտողություններ Երևանի Կաթողիկե եկեղեցու արձանագրությունների վերաբերյալ // ՀՄՄՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների, 1947, N 5, էջ 70:

⁶² Տե՛ս Ե. Ավագ քահանա Սարգսյան, Հին Երևանի հիշատակությունը հայ մատենագիրների մոտ // «Էջմիածին» պաշտոնական ամսագիր հայրապետական աթոռոյ Ս. Էջմիածնի, Յունուար (1), 1983, էջ 38:

⁶³ Տե՛ս Yovhannēs Draxanakertci History of Armenia // Translation and Commentary by Rev. Fr. Krikor Vardapet Maksoudian, Atlanta, Georgia, 1987, p. 45.

Ա. Միմոնյանը, անդրադառնալով Երևանի կովին, այն ընդհանուր առմամբ թվագրում է 661-667 թթ.⁶⁴:

Թ. Հակոբյանը «Երևանի կովիլը» թվագրում է 660 թվականով⁶⁵՝ ելնելով այն բանից, որ Սամվել Անեցին այն դնում է ՈԿ (660) թվականին⁶⁶: Սակայն պատմիչի կողմից նշածը փրկչական թվականն է, որը երկու տարով գերազանցում է հայոց թվականը: Սամվել Անեցու ժամանակագրության նոր հրատարակության մեջ, ինչպես տեսանք, զետեղված է նաև հայոց թվականը՝ ՃԷ (107), որը համապատասխանում է 658/659 թվականին:

Մեկ այլ առիթով Թ. Հակոբյանն ավելի մանրամասնորեն է խոսում «Երևանի կովի» մասին՝ այն տարբերակելով Երևանի 650 թ. պաշարումից և նշելով, որ արաբները, փաստորեն, փորձել են գրավել Երևանը, այլապես պատմիչներն այդ իրադարձությունը «Երևանի կովի» չէին կոչի⁶⁷: Իսկ այն, որ մի քանի տարվա ընթացքում արաբները Երևանը գրավելու երկու փորձ են կատարել, հիմք է տալիս վստահաբար կարծելու, որ Երևանն այդ ժամանակ եղել է ամուր բերդ, ռազմավարական հենակետ և մեծ բնակավայր: Ուսումնասիրողը եզրակացնում է, որ արաբները Երևանը գրավել են երկրորդ փորձից միայն⁶⁸:

Ա. Միմոնյանն ու Թ. Հակոբյանը իրենց համատեղ՝ «Երևան 2750» աշխատության մեջ, անդրադառնալով «Երևանի կովին», ճշմարիտ կերպով առանձնացնում են Երևանին առնչվող երկու կարևոր իրադարձությունները VII դարում. «Հովհաննես Դրասխանակերտցու և Սամվել Անեցու հիշատակության համաձայն 658 կամ ավելի ճիշտ 660 թվականին տեղի է ունեցել «Երևանու կովին»: Եղած փաստերի համադրումն ու վերլուծությունը ցույց են տալիս, որ, իրոք, Սեբեոսի «Եւ եկին ժողովեցան (արաբական

⁶⁴ Տե՛ս Ա. Միմոնյան Ա., Երևան (1920-1967), Երևան, 1968, էջ 36:

⁶⁵ Տե՛ս Հակոբյան Թ., Երևանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 1500 թ., Երևան, 1969, էջ 197:

⁶⁶ Տե՛ս Սամվել Անեցի և շարունակողներ, էջ 152:

⁶⁷ Տե՛ս Հակոբյան Թ., Երևանը VII-IX դարերում // «Պատմաբանասիրական հանդես», 1968, N 3, էջ 19:

⁶⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 20:

գործը – Թ.Հ.) ի յերևան, և մարտեան ընդ բերդին, և ոչ կարացին առնուլ» արտահայտությունը⁶⁹ նույնը չէ Հովհաննես Դրասխանակերտցու և Սամվել Անեցու «Երևանա կոիւն»-ի հետ: Դրանք արաբական արշավանքների ժամանակ Երևանի բերդի գրավման համար մղված երկու տարբեր կռիվներ էին, որոնցից մեկը տեղի է ունեցել 643, իսկ մյուսը՝ 958 կամ 660 թվականին⁷⁰:

Հետաքրքրական է Հ. Ն. վարդապետ Ակիւնյանի տեսակետը: Նա կարծում է, թե Հովհաննես Դրասխանակերտցին, գրելով «որ նախ քան զմեզ զնա պատմագրեցին», նկատի ունի մեզ անհայտ մի աղբյուր, որը ո՛չ Շապուհն է, որի աշխատությունը չկա և ո՛չ էլ Ղևոնդը, որին Հովհաննես Դրասխանակերտցին ամենայն հավանականությամբ ծանոթ չէ և որտեղ խոսք չկա «Երևանի կովի» մասին: Ն. Ակիւնյանը, փաստորեն, բացառում է նաև Հովհաննես Դրասխանակերտցու՝ խնդրո առարկա դեպքի վերաբերյալ տեղեկությունը Սեբեոսից քաղած լինելու հնարավորությունը: Ըստ նրա՝ «Երևանի կովի» վերաբերյալ հիշատակությունը Հովհաննես Դրասխանակերտցին վերցրել է այլ աղբյուրից⁷¹:

Փաստորեն, «Երևանի կովի» ժամանակագրության վերաբերյալ հայագիտության մեջ հստակ և միասնական տեսակետ գոյություն չունի, իսկ ինչ վերաբերում է այդ կովի բովանդակային կողմին, ապա դրա լուսաբանմամբ որևէ հետազոտող չի զբաղվել:

«Երևանի կովի» ժամանակագրությունը

Անդրադառնալով «Երևանի կովի» թվագրմանը՝ անհրաժեշտ է շեշտել, որ դրա՝ ցանկացած թվագրման դեպքում պետք է հաշվի առնել Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկությունը,

⁶⁹ Մեջբերվածը Սեբեոսի այն տեղեկությունն է (Սեբեոս, էջ 220), ըստ որի՝ արաբները 650 թ. պաշարել են Երևանի բերդը, սակայն չեն կարողացել գրավել:

⁷⁰ Հակոբյան Թ., Սիմոնյան Ա., Երևան 2750, Երևան, 1968, էջ 31:

⁷¹ Տե՛ս «Մատենագրական հետազոտություններ, քննություն եւ բնագիր», հատոր Գ, գրեց Հ. Ներսէս Վ. Ակիւնեան, Վիեննա, 1930, էջ 76-77:

որով այն դրվում է հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի իշխանության (662-685) և Անաստաս կաթողիկոսի այթոռակալության (661-667) շրջանում: Այս պարագայում Երևանի կովի ժամանակը սահմանափակվում է 661-667 թվականներով: Թեև պետք է նշել նաև, որ Հովհաննես Դրասխանակերտցու աշխատության այս հատվածում ամեն ինչ չէ, որ հստակ է: Պատմիչը գրում է Գրիգոր Մամիկոնյանի հրամանով Արուճի տաճարի կառուցման, Անաստաս կաթողիկոսի գործունեության, Դավիթ Դվնեցու՝ Գրիգոր Մամիկոնյանի հրամանով կաթողիկոսից մկրտություն ստանալու, նրա՝ հետագայում՝ Դվինում նահատակվելու մասին, որից հետո անմիջապես հայտնում է, թե «Յայնմ ժամանակի ասեն լինել զկոթին, որ ի քաղաքագիւղն Երեւանի...»⁷²: Պատմիչի ներկայացրածից կարելի է ենթադրել նաև, որ կոթիվը կարող էր տեղի ունեցած լինել Դավիթ Դվնեցու նահատակության 701 թ.:

Ի սկզբանե պետք է նշել, որ Գրիգոր Մամիկոնյանի իշխանության և Անաստաս կաթողիկոսի այթոռակալության շրջանում աղբյուրներում որևէ կոթիվ կամ ռազմական գործողություն ներկայացված չէ: Ա. Տեր-Ղևոնդյանն անդրադարձել է այն իրողությանը, որ 656 թ. Օսման խալիֆայի սպանությունից հետո 5 տարի խալիֆայությունում ներքին կոթիվներ էին տեղի ունենում, և Հայաստանը ապահով էր արաբական հարձակման վտանգից⁷³: Իսկ 662 թ. արաբների կողմից Հայոց իշխան էր կարգվել Գրիգոր Մամիկոնյանը: Մինչ Գրիգոր Մամիկոնյանի նշանակումը 661 թ. խալիֆ դարձած Մուավիան (661-680) մի հրովարտակ էր ուղարկել Հայոց իշխաններին, որ «էթէ ոչ հարկեսջիք ինձ և ոչ անկջիք ընդ լծով ծառայութեան իմոյ՝ ի սուր սուսերի մաշեցից զամենեւեան»⁷⁴: Խնդիրն այն է, որ Թեոդորոս Ռշտունու մահից հետո Հա-

⁷² Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 413-414:

⁷³ Տե՛ս Տեր-Ղևոնդյան Ա., Հայաստանի քաղաքական ինքնուրույնությունը VII դարի 30-90-ական թթ. // Հայ ժողովրդի պատմություն, ՀՄՄՀ ԳԱ հրատ, հատոր II, Հայաստանը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, Երևան, 1984, էջ 315:

⁷⁴ «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց» (այսուհետև՝ Ղևոնդ), Ս. Պետերբուրգ, 1887, էջ 14:

յոց իշխան դարձած Համագասպ Մամիկոնյանը (655-661) հարել էր Բյուզանդիային⁷⁵: Մուավիայի պահանջով նրա մոտ պատանդ ուղարկվեցին Գրիգոր Մամիկոնյանը և Սմբատ Բագրատունին: Իր խալիֆության երկրորդ տարում՝ 662 թ., Մուավիան Գրիգոր Մամիկոնյանին նշանակեց Հայոց իշխան և ուղարկեց Հայաստան⁷⁶: Բայց այդ շրջանում Երևանում նման կոիվ հավանորեն տեղի չի ունեցել, քանի որ հայերը կատարել են Մուավիայի պահանջը՝ մինչև 682 թ. պահպանելով հավատարմությունը խալիֆայությանը⁷⁷:

Փաստորեն, բացառվում է «Երևանի կոիվ» տեղի ունենալը Հովհաննես Դրասխանակերտցու նշած ժամանակաշրջանում: Պետք է ենթադրել, որ նա տեղյակ էր, որ «Երևանի կոիվը» տեղի է ունեցել Անաստաս կաթողիկոսի աթոռակալության շրջանին շատ մոտ, ուստի իր պատմության մեջ տեղադրել է այդ իրողության հիշատակությունը: Ըստ որում՝ նա դա արել է Դավիթ Դվնեցու մկրտության և տարիներ անց Դվինում նրա նահատակության մասին հիշատակությունից անմիջապես հետո, որն առնվազն տարօրինակ է և հուշում է, որ կաթողիկոս-պատմիչի համար անորոշ է եղել այդ դեպքի հստակ ժամանակը, դրա մասին նա միայն մոտավոր գիտեր, ուստի զետեղել է այնպիսի տեղում, ուր այն չպետք է լիներ:

Երևանի կոիվ հատուկ հիշատակությունը պատմիչների աշխատություններում ցույց է տալիս, որ այն եղել է կարևոր իրադարձություն տվյալ ժամանակաշրջանի Հայաստանի կյանքում: Վերոհիշյալ թվագրումները հուշում են, որ այդ կարևորությունը առնչվում էր Հայաստանում արաբական տիրապետության վերջնական հաստատման հետ: Ուսումնասիրողները նկատել են այդ իրողությունը: Ինչպես նշում է Թ. Հակոբյանը, այդ կոիվ հետևանքով արաբները կարողացան տիրել Երևանին⁷⁸: Ըստ Ղ. Ալիշանի՝ արաբները, տիրելով Երևանին, այն ամրապնդեցին ու դարձրին

⁷⁵ Տե՛ս Սեբեոս, էջ 286-288:

⁷⁶ Տե՛ս Ղևոնդ, էջ 14:

⁷⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 15:

⁷⁸ Տե՛ս Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 198-199:

իրենց նստավայրերից մեկը⁷⁹, թեև նախորդ իրադարձությունները ցույց են տալիս, որ Երևանի բերդն առանց այն էլ անառիկ էր:

Հաշվի առնելով Հովհաննես Դրապխանակերտցու՝ «Երևանի կովի» հիշատակության մասին վերոասացյալը՝ առավել հավանական է թվում, որ իրականում Երևանի այդ կոնիվր տեղի ունեցած լինելը 655 թ. արաբական արշավանքի ժամանակ, երբ արաբական զորքը գլխավորում էր Հաբիբ իբն Մասլաման:

Այդ արշավանքը հիշատակում է Թեոփանես Խոստովանողը՝ նշելով, որ արաբները պարտության են մատնել բյուզանդական բանակն ու հասել Կովկասյան լեռներին⁸⁰: Ըստ Բալազուրիի՝ արաբական զորքը, արշավելով Վասպուրականից, անցել է Այրարատ, հասել Արտաշատ, այնտեղից շարժվել հյուսիս, հետո շրջվել հարավ ու անցել Մեծամոր (ալ-Աքրադ) գետը⁸¹ և ընթանալով դեպի հարավ՝ կանգ առել Դվինի դաշտում՝ հեծելազորն ուղարկելով քաղաքի դեմ: Դվինը գրավելուց հետո արաբները շարժվել են արևելք ու կանգ առել Գառնիի մերձակայքում, այնտեղից արշավել Աշոցքի կողմը, ապա վերադարձել ու նվաճել Ազատ գետի հովիտն ու Դվինի շրջակայքի գյուղերը: Այդ դեպքերից հետո նրանց հպատակություն է հայտնել Շիրակի, Տայքի ու Բագրևանդի տերը⁸²: Ի դեպ, Ս. Բարխուդարյանը, անդրադառնալով Բալազուրիի վերոբերյալ նկարագրությանը, գտնում է, որ արաբ հեղինակի տեքստում Երևանի անվան բացակայությունը հուշում է, որ այն նշանավոր կենտրոն և քաղաքատիպ վայր չի եղել⁸³: Սակայն դա հազիվ թե ընդունելի տեսակետ է, քանի որ Բալազուրին միայն Երևանը չէ, որ չի հիշատակում:

⁷⁹ Տե՛ս Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 300:

⁸⁰ Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 13, «Բյուզանդական աղբյուրներ», Դ, Թեոփանես Խոստովանող, թարգմանությունն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1983, էջ 56:

⁸¹ Նույնացումը Ս. Տեր Ղևոնդյանինն է: Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 16, «Արաբական աղբյուրներ», Գ, էջ 320, ծանոթ. 124:

⁸² Տե՛ս նույն տեղում, էջ 271:

⁸³ Տե՛ս Բարխուդարյան Ս., նշվ. հոդվ., էջ 70:

Բալագուրիի մանրամասն նկարագրությունից բխում է, որ արաբական բանակը Մեծամոր գետն անցնելուց հետո Դվին կարող էր շարժվել Երևանով կամ մերձակայքով: Ապա Գառնուց դեպի Աշոցք արշավանքից հետո Ազատ գետի հովիտ էլ պետք է վերադառնար դարձյալ Երևանով կամ մերձակայքով: Նույնիսկ, եթե հեղինակը խախտել է իրադարձությունների աշխարհագրական ու ժամանակագրական հերթականությունը, պարզ է մի բան. այն հատվածում, ուր, ինչպես կտեսնենք ստորև, ժամանակին անցնում էր պարսկա-բյուզանդական սահմանագիծը ըստ 591 թ. բաժանման, արաբական զորքը պարբերական ու ծավալուն նվաճումներ է կատարել, ուստի պատահական չէ, որ հիշատակված են թե Ազատ գետի հովիտը, որտեղով անցնում էր նշված սահմանագիծը և Գառնին, որ այդ հատվածի ամրակուռ ամրոցն էր:

Երևանի ռազմավարական դիրքը VII դ. առաջին կեսին և արաբական արշավանքների երթուղիները նրա շրջակա տարածաշրջանում

Հայտնի է, որ Հայաստանի և Վիրքի 591 թ. բաժանումով Պարսից տերությունը «...ետ նոցա (բյուզանդացիներին-Ա.Ե.) զԱրուաստան զամենայն մինչև ցՄծբին, և զերկիրն Հայոց. որ ընդ իւրով իշխանութեամբն էր, զտունն Տանուտերական մինչև ցգետն Հուրագղան, և զգաւառն Կոտէից մինչև ցաւանն Գառնի և ցեզր ծովուն Բզունեաց, և ցԱռեստաւան և զԳոգովիտ զավառ մինչև ցՀացին և զՄակու: Եւ կողմն Վասպուրական գնդին էր ի ծառայութիւն Պարսից արքային»⁸⁴: Ն. Ադոնցը գրում է, որ «Կոտայքում Գառնին հանդիսանում էր սահմանագծի վերին կետը, Առեստը՝ ծովի ափին՝ ստորին կետը, իսկ Հացինը և Մակուն՝ Գոգովիտի կողմից՝ միջին կետը: Ուրեմն՝ սահմանագիծը Գառնիից անցնում էր Հացինի և Մակուի վրայով դեպի Առեստ»⁸⁵: Է. Դա-

⁸⁴ Մեբեոս, էջ 84:

⁸⁵ Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում. քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, 1987, էջ 262:

նիելյանը սահմանագիծը սույն հոդվածի շրջանակներում մեզ հետաքրքրող Երևանի տարածաշրջանում հյուսիսից հարավ անցկացնում է Հրազդան գետի վերին հոսանք-Գեղամա լեռների լանջեր-Ազատ գետ գծով⁸⁶: Գրեթե նույն սահմանագիծն է նշում նաև Բ. Հարությունյանը⁸⁷: Այս ամենի հիմամբ Ազատ և ոչ Հրազդան գետն է պարսկա-բյուզանդական սահմանագիծ համարել Վ. Իսկանյանը⁸⁸:

Հետազոտողները Հրազդան գետի՝ որպես պարսկա-բյուզանդական սահմանագիծ հիշատակությունից ելնելով փորձել են գտնել այն հատվածը, որտեղ այն իրոք սահմանագիծ էր երկու գերտերությունների միջև, քանի որ ավելի հարավ, ինչպես տեսանք, այն անցնում էր Ազատ գետով: Հաշվի առնելով պատմիչների հաղորդումները և հետազոտողների՝ վերևում բերված տեսակետները, Մեբեոսի՝ «գտունն Տանուտերական մինչև ցգետն Հուրագդան, և զգաւառն Կոտէից մինչև ցաւանն Գառնի» արտահայտությունից կարելի է ենթադրել, որ պարսկա-բյուզանդական սահմանագիծը Հրազդանի հունով պետք է անցնէր վերջինիս վերին հոսանքի ավազանում⁸⁹, այնուհետև ձգվէր Գեղամա լեռների գծով՝ մինչև Գառնի, որից դեպի արևմուտք շարժվէր Ազատ գետով՝ Երևանը թողնելով Բյուզանդիայի կազմում: Մի հայ-քաղկե-

⁸⁶ Տե՛ս Դանիելյան Է., Արևելյան Հայաստանի վարչատարածքային բաժանումը (591-629), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1986, N 8, էջ 56:

⁸⁷ Տե՛ս «Հայաստանը Բյուզանդական կայսրության ու Սասանյան Պարսկաստանի թուլացման շրջանում և արաբական արշավանքների նախօրյակին» // «Հայաստանի պատմության ատլաս», Ա մաս, Երևան, 2005, էջ 54-55:

⁸⁸ Տե՛ս Իսկանյան Վ., Մարզպանական Հայաստանը VI դարում // «Հայ ժողովրդի պատմություն», ՀՄՍՀ ԳԱ հրատ., հատոր II, Երևան, 1984, էջ 264-265:

⁸⁹ Տե՛ս Դանիելյան Է., Արևելյան Հայաստանի վարչատարածքային բաժանումը, էջ 56:

դոնական սկզբնաղբյուրի հավաստմամբ՝ Խոսրով թագավորն «ամբողջ Հայաստանը մինչև Դվին տվեց Մավրիկիոս կայսեր»⁹⁰:

Պարսկա-բյուզանդական սահմանագծին հայտնված Երևանի առումով հնարավոր է կատարել որոշակի պատմաաշխարհագրական ճշգրտումներ: Բյուզանդիայի Մավրիկիոս կայսեր (582-602) կողմից Երևանի տարածքում՝ Ավան քաղաքացյուղում, մոտ 600 թ. հաստատվեց կայսրության հովանավորությունը վայելող՝ հայոց կաթողիկոսին հակառակաթոռ կաթողիկոսի նստավայրը: Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ «...ըստ հրամանի կայսերն Մավրկայ զՅոհան ուն ի գաւառէ Կոգայ, ի Բագարան գեղջէ կացուցանեն կաթողիկոս յունական կողմանն՝ բնակեցուցանելով զնա ի քաղաքագիւղն Ավան, ուր եւ շինեացն իսկ ինքնին Յոհան [Հովհաննես Բագարանցի (600-616)] զպայծառակերտ քաւարանն սուրբ եւ շուրջանակի նորա յարդարեաց կալուածս կայանի իւրոյ»⁹¹: Հաջորդ իսկ տողում պատմիչը խոսում է այն մասին, որ կաթողիկոս Աբրահամը (607-616) նստում էր Դվինում, «վասն զի գետն Ազատ զսահման բաժնիցն երկոցունց (երկու կաթողիկոսների-Ա.Ե.) ընդ մէջ հասանէր»⁹²: Նշվածից պարզ է, որ Ազատ գետը, ոչ միայն երկու տերությունների միջև սահմանագիծն էր այդ տարածաշրջանում, այլ նաև երկու կաթողիկոսների տիրույթների սահմանագիծը: Այս առումով հույժ կարևորվում է Երևան քաղաքացյուղի պարագան⁹³, որն ուներ ռազմավարական առումով կարևոր դիրք և ամրակուռ բերդ⁹⁴ ու գտնվում էր Բյուզանդիայի հովանավորությունը վայելող կաթողիկոսի տիրույթների մերձավոր հարևանությամբ: Վերջին հիշատակությունից բխեցնելով կարելի է պնդել, որ Երևանը նորահաստատ հակառակաթոռ կաթողիկոսության տիրույթ էր:

⁹⁰ Տե՛ս Բարթիկյան Հ., «Narratio de rebus Armeniae». հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, «Բանբեր Մատենադարանի», 1962, N 6, էջ 466:

⁹¹ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 401:

⁹² Նույն տեղում:

⁹³ Տե՛ս Ղաֆաղարյան Կ., Երևան քաղաքի պատմության մի քանի հարցերի մասին // «Պատմաբանասիրական հանդես», 1969, N 1, էջ 12:

⁹⁴ Տե՛ս Հակոբյան Թ., նշվ. հոդվ., էջ 18

Հաշվի առնելով «Երևանի կովի» նախօրեին ստեղծված իրավիճակը, կարելի է պնդել, որ 655 թ. արաբների՝ Մեծամոր գետից մինչև Դվին և Դվինից մինչև Գառնի կատարած նվաճումները չէին կարող շրջանցել ժամանակին բյուզանդացիների համար կարևոր հենարան հանդիսացած Երևանը, որ թեև ուղղակիորեն չի հիշատակված, սակայն անկասկած գտնվել է դեպքերի զարգացման կիզակետում: Ու քանի որ Երևանի շրջակայքով ներկայացված է արաբական գորքի ոչ թե մեկ, այլ առնվազն երեք տեղաշարժ՝ Արտաշատից Մեծամոր, Մեծամորից Դվին և Առոցքից դեպի Ազատ գետի հովիտ, կարելի է բխեցնել, որ այդ տեղանքի նվաճումը արաբներին հաջողվել է մեծ դժվարությամբ:

Քանի որ ի վերջո ամբողջ տարածաշրջանը գրավվել էր արաբների կողմից, ամենայն հավանականությամբ, նրանք Երևանի բերդը գրավել կարողացել են միայն Առոցքից դեպի հարավ արշավելիս: Խնդիրն այն է, որ արշավանքի այդ փուլում թերևս միայն Երևանն էր, որ մնացել էր աննվաճ, քանի որ արդեն գրավվել էին տարածաշրջանի հիմնական ամրությունները՝ թե՛ Դվինը և թե՛ Արտաշատը: Արաբների վերադարձը և նոր ասպատակությունները մեզ հետաքրքրող պատմաաշխարհագրական միջավայրում կարող էին ունենալ միայն մեկ պատճառ. նրանց թիկունքում պաշարված էր մնացել մի կարևոր ռազմավարական հենակետ: Եվ այդ հենակետը Երևանն էր: Երևանի պաշտպանները կռիվ են մղել արաբների դեմ, ուստի, հավանաբար, հենց այդ իրադարձությունն էլ պատմիչները հիշատակում են որպես «Երևանի կռիվ»: Այս տեսակետից «Երևանի կռիվ»-ը պետք է կարևորություն ստանար հայ պատմիչների կողմից, ուստի պատահական չէ, որ երկու ստուգապատում պատմիչ հիշատակում են այն՝ հղելով այլ հեղինակների, որոնք, ամենայն հավանականությամբ, մանրամասնորեն նկարագրել են այդ իրադարձությունները: Բայց այդ տեղեկությունները չեն պահպանվել:

Ինչ վերաբերում է Սամվել Անեցու կողմից այդ կովի թվագրմանը հայոց ՃԷ (107) թվականով, ապա դրա սրբագրումը ՃԴ-ի (104՝ համապատասխան 655/656 թ.) ամեն ինչ կարգավորում է:

Ամփոփում

VII դ. Երևանը, քաղաքի վերածվելու ճանապարհին, որպես ամուր բերդ ունեցող քաղաքագյուղ, զարգանում էր մեծ տարանցիկ մայրուղու վրա: Մյուս կողմից, մեծ էր նրա ռազմավարական նշանակությունը դարի կեսերին տարածաշրջանում գերակայության ձգտող արաբների համար: Այդ ամենի հետ կապված՝ մեծացել էր Երևանի կարևորությունը Հայաստանի քաղաքական կյանքում ու օտար նվաճողների դեմ պայքարում: 650-ական թթ. դրությամբ Երևանում տեղի է ունեցել մի կարևոր կռիվ կամ ճակատամարտ, որի մասին հիշատակում են Հովհաննես Դրասխանակերտցին և Սամվել Անեցին՝ հղում կատարելով Ասողիկին և Շապուհին, որոնք մանրամասնորեն պատմել են այդ մասին: Սակայն Ասողիկի աշխատությունում այդ մասին տեղեկություն չի պահպանվել, իսկ Շապուհի գործը կորած է, որի պատճառով հետազոտողները միայն ենթադրություններ են կատարել «Երևանի կռիվ» ժամանակի և բովանդակության մասին: Ոմանք «Երևանի կռիվը» նույնացրել են 650 թ. արաբների կողմից Երևանի բերդի անհաջող պաշարմանը, իսկ ոմանք այդ երկու իրադարձությունները առանձնացրել իրարից: Սկզբնաղբյուրների տեղեկությունների նոր քննությունը հնարավորություն է տալիս հստակեցնելու, որ «Երևանի կռիվը» տեղի է ունեցել արաբների 655 թ. արշավանքի ընթացքում, երբ Երևանի տարածաշրջանում արաբական զորքերը տարբեր ուղղություններով մի քանի զորաշարժ են կատարել՝ նվաճելով տեղի բոլոր բնակավայրերն ու ամրոցները: Դատելով սկզբնաղբյուրների տեղեկություններից՝ Երևանն ի վերջո գրավվել է արաբական զորքի կողմից, սակայն երկարատև կռիվներից հետո, որը տարբերվել է տարածաշրջանի մյուս հատվածների նվաճման տրամաբանությունից իր բնույթով և տևողությամբ, ուստի պատմիչների կողմից առանձնացվել է ու կոչվել «Երևանի կռիվ»:

Arman Yeghiazaryan

**YEREVAN DURING THE ARAB INVASIONS IN THE 50S OF VII
CENTURY**

In the 7th century, Yerevan, becoming an urban settlement, developed as a fortress city on a large transit highway. On the other hand, it was of great strategic importance to the Arabs who aspired to dominance in the region in the middle of the century. In connection with all this, the influence of Yerevan in the political life of Armenia and in the struggle against foreign invaders increased. As of the 750s, a fierce battle or fight took place in Yerevan, which is mentioned by Hovhannes Draskhanakertsi and Samvel Anetsi, referring to Asogik and Shapuhi, who told about it in detail. However, no information was preserved in the work of Asoghik, and the history of Shapukh has disappeared; so the researchers made only assumptions about the content of the time of the "Battle of Yerevan". Some identify the "Battle of Yerevan" with the failed siege of the Yerevan fortress by the Arabs in 650, others separate these two events. The study of new sources makes it possible to clarify that the "Battle of Yerevan" took place during the Arab invasion in 655, when the Arab troops in the Yerevan region carried out several operations in different directions, capturing all the local settlements and fortresses. Judging by the sources, Yerevan was eventually captured by the Arab army, but after a long struggle, which differed from the logic of the conquest of other parts of the region in its character and extent, therefore it was singled out by historians and called the "Battle of Yerevan".

Արման Եղիազարյան

ԵՐԵՎԱՆԸ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ. ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔ ՀԱՆԴԵՍ ԳԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Երևանի հիշատակությունները IX-XI դարերում

Երևանի VIII դ. պատմության մասին սկզբնաղբյուրներում հիշատակություններ չեն պահպանվել: Խնդիրն այն է, որ այդ ժամանակ Հայաստանում հաստատվել էր արաբական տիրապետությունը, և պատմիչների ուշադրության կենտրոնում երկրում տիրող ծանրագույն իրավիճակն էր, երկրի ասպատակությունն ու ժողովրդի հարստահարություններն ու հալածանքը: Այդ իսկ պատճառով ոչ միայն Երևանի, այլ նաև Հայաստանի բազմաթիվ քաղաքների վերաբերյալ VIII դ. տեղեկություններ չեն պահպանվել:

IX դ. վերջի և X դ. սկզբի Հովհաննես Դրասխանակերտցին (հայոց կաթողիկոս՝ 898-925 թթ.) VII դ. երկրորդ կեսին վերաբերող մի հիշատակության մեջ Երևանը կոչում է քաղաքացյուղ: Սկզբնաղբյուրներում օգտագործվում է նաև այդ եզրույթի «ցուղաքաղաք» տարբերակը⁹⁵, որ միևնույնն է: Խոսելով հայոց Անաստաս կաթողիկոսի (661-667) աթոռակալության և Գրիգոր Մամիկոնյանի իշխանության շրջանի (662-685) իրադարձությունների մասին՝ Հովհաննես Դրասխանակերտցին գրում է, որ «Յայնմ ժամանակի ասեն լինել զկթին, որ ի քաղաքագիւղն Երեւանի, զոր եւ բաւական քեզ ուսուցանեն զայնր պատերազմի զհանգամանս՝ որ

⁹⁵ Տե՛ս՝ «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց» (այսուհետև՝ Հովհաննես Դրասխանակերտցի), «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, «Պատմագրութիւն», Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 567, Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրութիւն Ադամից մինչև 1776 թ. (այսուհետև՝ Սամվէլ Անեցի և շարունակողներ), աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի. Երևան, 2014, էջ 182:

նախ քան զմեզ զնա պատմագրեցին»⁹⁶: Այդ իրադարձության մասին պատմող մյուս միջնադարյան հեղինակը՝ Սամվել Անեցին, չի նշում, թե ինչ բնակավայր էր Երևանը⁹⁷:

Երևանը IX դարից սկսած՝ պայմանավորված Բագրատունիների վերելքով, շարունակում էր կարևոր դեր խաղալ Հայաստանի կյանքում: Գեղարքունյաց ծովի կղզու Ս. Առաքելոց եկեղեցու 874 թ. արձանագրությամբ Սյունյաց տիկին Մարիամը հայտնում է, որ նորակառույց եկեղեցուն նվիրաբերել է ի թիվս այլոց նաև «այգի ի Գառնի եւ յԵրևան»⁹⁸: Միննույն արձանագրության տեքստը մեջ է բերում նաև Ստեփաննոս Օրբելյանը, բայց այստեղ խոսքը ոչ թե այգու, այլ այգիների մասին է. «այգիս ի Գառնի և յԵրևան»⁹⁹: Պատմիչը, որ տեղյակ էր արձանագրության բովանդակությանը, դժվար թե իրականությանը հակասող հիշատակություն թողներ, ուստի կարելի է համոզված ասել, որ Երևանից եկեղեցուն նվիրաբերվել է ոչ թե մեկ այգի, այլ այգիներ, ինչը վկայում է նրա՝ այգեգործությամբ հարուստ բնակավայր լինելու մասին:

Հույժ կարևոր է նաև Մաքենիս վանքին Սյունյաց Գրիգոր Սուփան իշխանի նվիրաբերությունների մասին 901 թ. տեղեկությունը: Ըստ Ստեփաննոս Օրբելյանի՝ իշխանը «գարդարէ զնա անխնայ զանձիւք և փարթամացուցանէ բազում ընչիւք. նա և գեղօք և ագարակօք և այգեստանօք ի Գառնի և յԵրևան և յայլ տեղիս»: Այնուհետև նա մեջ է բերում նաև վանքի պատին արված արձանագրության տեքստը, որով իշխանը հայտնում է, որ, ի թիվս այլոց, վանքին «...ետու և 5 կուղպակս ի յԱնի և 5 այգի յԵրևան և 500 առու այգի ի գիւղաքաղաքն Գառնի, և 2 այգի յԵղե-

⁹⁶ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 414:

⁹⁷ Տե՛ս Սամվել Անեցի և շարունակողներ, էջ 152:

⁹⁸ Մելիքսեթ-Բեկ Լ., Երևանի հիշատակությունը Սևանի 874 թ. արձանագրության մեջ // ՄՍՌՄ ԳԱ հայկական ֆիլիալի Տեղեկագիր, 1940, N 4-5, էջ 117-118:

⁹⁹ «Պատմութիւն նահանգին Միսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Միւնեաց». Թիֆլիս, 1910, էջ 174:

գիս»¹⁰⁰: Հետաքրքրական է այն, որ պատմիչն ի տարբերություն իր իսկ կողմից մեջբերված արձանագրության, հիշատակում է վանքին Գառնիում, Երևանում և այլ վայրերում նվիրաբերված գյուղերի, ագարակների և այգեստանների մասին: Հավանաբար, նրան հայտնի էր, որ բացի այգիներից՝ Երևանում ու Գառնիում վանքին են նվիրաբերվել նաև գյուղեր ու ագարակներ, թեև արձանագրության մեջ նվիրաբերված գյուղերի ու ագարակների մասին խոսք չկա:

Երևանը հիշատակված է նաև Աշոտ Գ Ողորմած արքայի (953-978) դստեր՝ Հռիփսիմեի՝ Ս. Նախավկայի վանքին տրված 981 թ. կալվածական ընծայագրում: Վանքին նվիրաբերվում են կալվածքներ, ի թիվս այլոց, նաև «հանդեպ Երևանու»¹⁰¹: Այս ընծայագրում հիշատակված է նաև «Երևանի ճանապարհը»¹⁰²: Ակնհայտ է, որ Երևանի՝ X դարի վերջին տնտեսապես բարգավաճ քաղաքացյուղ լինելու պատճառով էլ ճանապարհը կոչվում էր նրա անունով:

Երևանի կարևորագույն հիշատակություններից մեկը Բագրատունիների շրջանում վերաբերում է Գագիկ Ա-ի գահակալության (990-1018) շրջանին: Ըստ Սամվել Անեցու՝ «...ասեն եկե(ա)լ ի Հայս Վա[սի]լ կայսրն [և ուն]ել ընդ ինքե[ա]յն զխաչն փրկչական եւ զպատկե[րն] տիրական գտորբ Ամենափրկիչն եւ պարգեւ[եաց] արքային Գա[գկայ] շահանշահի եւ թագ[աւորն] պարգեւե(ա)ց Գեորգայ իշխ[ան]ին///զարեգակն/// մ[եծ մ]ենարանն եւ խաչն մեծահրաշ եւ բազում ակամբ յաւրիսնե(ա)լ եւ [ո]ր ի գլուխս դրոշային [որ] կայս/// յԵրեւան գեղա[ք]աղաքն, որ ասեն

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 179, «Վիմական տարեգիր», ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց: Կազմեաց Կ. Կոստանեանց, Ս.-Պետերբուրգ, 1913, էջ 5:

¹⁰¹ «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր (976, 981, 1432, 1564, 1614 և 1839 թ.թ.)», պրակ I, առաջաբանով, ծանոթագրություններով և բառարանով: Կազմեց՝ Հար. Աբրահամյան, Երևան, 1941, էջ 11:

¹⁰² Նույն տեղում:

երկ[ու]// եւ ի սուրբ նշան եւ է անունն //այ Տէրունական սուրբ նշանն»¹⁰³:

Այս տեքստից հետուն գնացող եզրակացություններ կատարելը դժվար է, քանի որ այն խիստ վնասված է, առավել ևս, որ Ստեփաննոս Օրբելյանից հայտնի է, որ Գագիկ Ա-ն Բյուզանդիայի կայսր Վասիլ Բ-ից (976-1025) ստացված փրկչական խաչի մասունքը, որի վրա պահպանվել էր Հիսուս Քրիստոսի արյան հետքը, նվիրել էր Սյունիքի Հովհաննես եպիսկոպոսին¹⁰⁴: Կարելի է ենթադրել, որ Երևան գյուղաքաղաքում էին պահվում քրիստոնեության կարևոր երկու սրբությունները՝ փրկչական խաչի մասունքն ու Հիսուս Քրիստոսի պատկերը, որ կոչվում էր Ամենափրկիչ¹⁰⁵: Դա ցույց է տալիս, որ XI դարի սկզբին Երևանը, որ դարձյալ հիշատակված է որպես գյուղաքաղաք կամ քաղաքագյուղ, կարևորություն էր ձեռք բերել Հայոց թագավորության ոչ միայն քաղաքական, այլև հոգևոր կյանքում:

Դատելով Մխիթար Այրիվանեցու մի տեղեկությունից՝ XI դարում Երևանում գործունեություն է իրականացրել այնպիսի մի նշանավոր իշխան, ինչպիսին էր Բյուզանդիայից մագիստրոսի կոչում ստացած Գրիգոր Ապիրատը: Նա XI դ. սկզբին «շինեաց զԿեչառուս և եհան զառուն Երեւանայ»¹⁰⁶: «զԿեչառուսի» ներքո պետք է հասկանալ Կեչառիսի Ս. Գրիգոր եկեղեցին¹⁰⁷:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում բյուզանդական աղբյուրում հիշատակվում է նաև Երևանի ամրոցը՝ Օիծեռնակաբերդը, որը, դատելով հնագիտական պեղումների արդյունքից՝ իր կարևորությունը չի կորցրել ողջ Բագրատունիների դարաշրջանում և հետագայում՝ մինչև XVII դ.¹⁰⁸: 1046-1047 թթ. բյուզանդա-

¹⁰³ Սամվել Անեցի և շարունակողներ, էջ 182:

¹⁰⁴ Տե՛ս Ստեփաննոս Օրբելյան, էջ 304:

¹⁰⁵ Տե՛ս Սամվել Անեցի և շարունակողներ, էջ 388, ծանոթագրություն 217:

¹⁰⁶ «Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն ժամանակագրական», ի լոյս ընծայեաց Ք. Պ., Ս. Պետերբուրգ, 1867, էջ 73:

¹⁰⁷ Տե՛ս Մաթևոսյան Կ., Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր մագիստրոս, Երևան, 2015, էջ 7, 34:

¹⁰⁸ Տե՛ս Բարայան Ֆ., Ժամկոչյան Ա., Ուրվագծեր հին Երևանի պատմության և հնագիտության, Երևան, 2015, էջ 6:

ցիները նվաճում էին տարածաշրջանի բերդերը, այդ թվում՝ փորձ կատարելով գրավել Խելիդոնիոնը կամ թարգմանաբար՝ Ծիծեռնակաբերդը¹⁰⁹, «որը գահավեժ լեռան վրա է կառուցված և գտնվում է Դվինից ոչ հեռու»: Ըստ Հովհաննես Սկիլիցեսի՝ բյուզանդացիներն «...այդ բերդը խրամատներով ու ցանկապատներով օղակի մեջ առնելով, ջանում էին [երկարատև] պաշարմամբ տիրանալ. պաշարյալները պարենի պակաս էին զգում, անակնկալ հարձակման պատճառով նրանք չէին հասցրել իրենց պարենով ապահովել»: Թեև պատմիչը փորձում է այնպես ներկայացնել, որ բյուզանդական բանակը «համարյա գրավել էր բերդը», սակայն, ի վերջո, թիկունքում ապստամբության բռնկման պատճառով, պաշարումը դադարեցվեց և, «Խելիդոնիոնն ահա այսպես խույս տվեց գրավումից»¹¹⁰:

Հաշվի առնելով ասվածը՝ կարելի է ենթադրել, որ նույն Ծիծեռնակաբերդն է, որ 650 թ. արաբները գրավել չկարողացան¹¹¹:

Երևանում գտնված Բագրատունիների ժամանակաշրջանին վերաբերող դրամները ցույց են տալիս, որ այն նաև հանդիսացել է կարևոր հանգույց առևտրական ճանապարհների վրա: Ըստ որում՝ VII դ. երկրորդ կեսին, երբ Հայաստանում դեռ վերջնականապես չէր հաստատվել արաբական տիրապետությունը,

¹⁰⁹ Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 10, «Բյուզանդական աղբյուրներ», Գ, Հովհաննես Սկիլիցես, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1979, էջ 356, ծանոթագրություն 533, John Skylitzes, A Synopsis of Byzantine History 811-1057, Translated by John Wortley, with Introductions by J.-C. Cheynet and B. Flusin and Notes by J.-C. Cheynet, Cambridge, 2010, p. 413, n. 80, Honigmann E., Die Ostgrenze des byzantinischen Reiches: von 363 bis 1071 nach griechischen, arabischen, syrischen und armenischen Quellen, Bruxelles, 1935, s. 176, Minorsky V., Studies in Caucasian History, London, 1953, p. 53-54, Grousset R., Histoire de l'Arménie des origines à 1071, Paris, 1973, p. 584, Юзбашян К., Скилица о захвате Анийского царства в 1045 г., "Византийский временник", том 40, 1979, с. 88.

¹¹⁰ Հովհաննես Սկիլիցես, էջ 149-150:

¹¹¹ Տե՛ս Սեբեոս, էջ 220, Մանանյան Հ., Երկեր, հատոր Բ, Երևան, 1978, էջ 528-536, Եղիազարյան Ա., Երևանի հիշատակությունը VII դարի առաջին կեսին // «Բանբեր Երևանի համալսարանի», «Հայագիտություն», 2018, N 1, էջ 3-13:

Երևանում շրջանառվում էին բյուզանդական, իսկ VIII դ. սկզբից՝ նաև արաբական դրամներ, որոնք գերակշռող էին: IX դարի վերջերից, երբ հիմնադրվեց Բագրատունիների թագավորությունը, Երևանում դարձյալ սկսում են, ի թիվս այլոց, շրջանառվել բյուզանդական դրամներ, որոնց քանակությունը հատկապես ավելանում է X դարից¹¹²: Դրա պատճառն այն էր, որ 893 թ. հայոց Սմբատ Ա Բագրատունի թագավորը (891-914) դաշինք կնքեց Բյուզանդիայի հետ¹¹³, ինչի շնորհիվ վերականգնվեցին երկար ժամանակ դադարած առևտրական կապերը Փոքր Ասիայի տարածքով, ընդհանուր առմամբ, Արևելքի ու Արևմուտքի և, մասնավորապես, Հայաստանի ու Բյուզանդիայի միջև¹¹⁴:

Նշված ուղղակի և անուղղակի տեղեկությունները հաշվի առնելով՝ կարելի է փաստել, որ Երևանը Բագրատունիների վերելքի շրջանում Հայաստանի նշանակալից բնակավայրերից էր: Այն անշեղորեն բռնել էր մեծ քաղաքի վերածվելու ճանապարհը, ու պատահական չէ, որ VII դարի դեպքերի մասին պատմող Հովհաննես Դրասխանակերտցին, հաշվի առնելով ինչպես օգտագործած աղբյուրների տեղեկությունները, այնպես էլ, անկասկած, իր դարաշրջանի (IX դարի վերջ և X դարի սկիզբ) իրողությունները, այն կոչում է քաղաքացյուղ: Որպես կանոն, դատելով «քաղաքացյուղ» եզրույթից, հայկական պատմագրության մեջ այդպես են կոչվել քաղաքի վերածվող բնակավայրերը, որտեղ, չնայած քաղաքային մշակույթի, տնտեսության և կենսակերպի ձևավորմանը, դեռևս զգալի տեղ ուներ գյուղատնտեսությունը: Այդպես էր նաև իրավիճակը միջնադարյան Եվրոպայում¹¹⁵: Բ. Առաքել-

¹¹² Տե՛ս Մուշեղյան Խ., Դրամագիտական տվյալներ Երևանի պատմության վերաբերյալ // «Պատմաբանասիրական հանդես», 1968, N 3, էջ 30-31:

¹¹³ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 455-456:

¹¹⁴ Տե՛ս Եղիազարյան Ա., Մետաքսի ճանապարհը և հայոց թագավորությունը IX դարի վերջին և X դարի սկզբին (ճանապարհային երթուղիների քննություն) // «Բանբեր Երևանի համալսարանի», «Հայագիտություն», 137.1, 2012, էջ 3:

¹¹⁵ Տե՛ս Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., հ. I, Երևան, 1958, էջ 25-32, “Town and Country in the Middle Ages: Contrasts, Contacts and Interconnections, 1100-1500”. Edited by K. Giles and Ch.

յանը նաև հստակեցնում է, որ գյուղաքաղաքները «գավառական փոքրիկ և զուտ տեղական նշանակություն ունեցող կենտրոններ էին: Կային և խոշոր քաղաքների մերձակայքում գտնվող գյուղաքաղաքներ, որտեղ արհեստներն ու առևտուրը նշանակալից զարգացում չունեցան, բայց որոնք ոչ միայն սպասարկում էին սովյալ խոշոր քաղաքը մթերքներով և հումքով, այլև ունեին իրենց արհեստանոցներն ու շուկան»¹¹⁶:

Երևանի՝ քաղաքի վերածվելու ժամանակի խնդիրը պատմագրության մեջ

Երևանի՝ Բագրատունիների շրջանի պատմությունը և զարգացման փուլերը հետաքրքրել են բազմաթիվ հետազոտողների, որոնք, ուսումնասիրելով հիմնահարցը, հանգել են տարաբնույթ եզրակացությունների:

Ղ. Ալիշանը, խոսելով Հովհաննես Դրասխանակերտցու հիշատակած կռվի մասին, ուղղակի արձանագրում է, որ Երևանը VII դ. կեսերին եղել է քաղաքագյուղ¹¹⁷:

Ե. Շահազիզը Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկության հիմամբ կարծում է, որ «...յոթներորդ դարու սկզբից մինչև ԺԵ դարու կեսը Յերեվանը յեղել է մի փոքրիկ գյուղաքաղաք»¹¹⁸:

Լ. Մելիքսեթ-Բեկը կարծում է, որ IX դ. վերջին Երևանը «այգեպատ» բնակավայր էր¹¹⁹:

Ս. Բարխուդարյանը համարում է, որ Հովհաննես Դրասխանակերտցին պարզապես կրկնել է Մեբեոսի տեղեկությունն արաբների կողմից Երևանի 650 թ. կռվի մասին: Նա կարծում է, որ Երևանը նախքան IX դարը Երևանը չի եղել նշանավոր կենտ-

Dyer, Leeds, 2005, pp. 7-22, 111-197, 229-250, 275-292, “Город в средневековой цивилизации Западной Европы”, в 4-х томах, том I, М., 1999, сс. 9-41, 150-160, 169-187, 251-271, том II, сс. 8-35, 279-293:

¹¹⁶ Առաքելյան Բ., նշվ. աշխ., էջ 84:

¹¹⁷ Տե՛ս «Այրարատ բնաշխարհի Հայաստանեայց», տեղագրեաց Հ. Ղեւոնդ Վ. Ս. Ալիշան, Վենետիկ – Ս. Ղազար, 1890, էջ 300:

¹¹⁸ Շահազիզ Յե., Հին Յերևանը, Յե., 1931, էջ 71:

¹¹⁹ Տե՛ս Մելիքսեթ-Բեկ Լ., նշվ. աշխ., էջ 117:

րոն և քաղաքատիպ վայր, քանի որ IX դ. հեղինակ Բալագուրին, որը իր աշխատության՝ Հայաստանի նվաճման հատվածում հիշատակում է երկրի քիչ թե շատ կարևոր բնակավայրերը, Երևանը չի հիշատակում: Բացի այդ, 901 թ. Մաքենիս վանքին կատարած նվիրատվությունների արձանագրության մեջ Գառնին հիշատակված է որպես գյուղաքաղաք, իսկ Երևանը՝ ոչ, ինչը, ըստ նրա՝ նշանակում է, որ Երևանը գյուղաքաղաք չի եղել: Ավելին, ըստ նրա՝ հատկանշական է այն, որ Երևանից նվիրաբերվել են այգիներ, քանի որ Երևանը գերազանցապես այգեգործական վայր էր¹²⁰: Ուսումնասիրողը հավելում է, որ միայն Հովհաննես Դրասխանակերտցին է, որ հիշատակում է Երևանը որպես քաղաքագյուղ¹²¹, փաստորեն, համարելով, որ Երևանը քաղաքագյուղ է դարձել X դարում, իսկ քաղաքի է վերածվել XIV դ.¹²²:

Տեսակետը, որ Երևանի մասին հիշատակությունը Հովհաննես Դրասխանակերտցին վերցրել է Սեբեոսից, կրկնում է նաև կաթողիկոս-պատմիչի աշխատության անգլերեն թարգմանությունն իրականացրած և ծանոթագրած Կ. Մակսուդյանը, սակայն ոչինչ չի ասում Երևանի՝ քաղաքի վերածվելու գործընթացի մասին¹²³:

Ըստ Կ. Ղաֆադարյանի՝ V-VII դդ. Երևանը աղբյուրներում հաճախ չի հիշատակվում: Այն գյուղաքաղաք չէր, բայց մեծ բնակավայր էր և զգալի դեր է խաղացել երկրի քաղաքական ու ռազ-

¹²⁰ Տե՛ս Բարխուդարյան Ս., Մի քանի դիտողություններ Երևանի Կաթողիկե եկեղեցու արձանագրությունների վերաբերյալ // ՀՄՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների, 1947, N 5, էջ 70:

¹²¹ Տե՛ս նույն տեղում, էջ 70:

¹²² Տե՛ս նույն տեղում, էջ 71:

¹²³ Տե՛ս Yovhannes Draxanakertci. History of Armenia. Translation and Commentary by Rev. Fr. Krikor Vardapet Maksoudian. Atlanta, Georgia, 1987, p. 45:

մական անցուդարձի մեջ¹²⁴: Պատահական չէ, որ V դ. այնտեղ գոյություն ունէր եռանավ Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին¹²⁵:

Թ. Հակոբյանը սխալ է համարում որոշ ուսումնասիրողների այն տեսակետը, թե Հովհաննես Դրասխանակերտցին Երևանը քաղաքացյուղ է կոչել՝ ելնելով իր ժամանակաշրջանի իրողություններից, իսկ VII դ. Երևանը քաղաքացյուղ չէր: Իրականում, ըստ Թ. Հակոբյանի՝ Հովհաննես Դրասխանակերտցին արաբական արշավանքների շրջանի կոնիվները ներկայացրել է ոչ թե իր ժամանակաշրջանի իրողությունները նկատի ունենալով, այլ օգտագործած աղբյուրների հիման վրա, ուստի Երևանը քաղաքացյուղ է եղել դեռևս VII դ. զարգանալով Դվին-Պարտավ ճանապարհի այն հատվածի վրա, որն անցնում էր Երևան-Սևան-Գավառ-Մարտունի-Մոթթի լեռնանցք-Պարտավ ուղեգծով¹²⁶: Ըստ հեղինակի դիպուկ դիտարկման՝ որպես կանոն, հայկական պատմագրության մեջ քաղաքացյուղ են կոչվել այն քաղաքային բնակավայրերը, որտեղ մեծ տեղ էր հատկացված գյուղատնտեսական ճյուղերին և մասամբ՝ արհեստներին ու առևտրին¹²⁷: Ուսումնասիրողը նկատել է նաև այն իրողությունը, որ Երևանը, որպես քաղաքացյուղ, 901 թ. արձանագրության մեջ հիշատակված է ոչ թե գյուղերի (Վարսեր, Ցամաքաբերդ, Գոմաձոր, Բերդք, Ուռեաց տափ, Բողաշեն, Դեղձանագետ, Կեթիկ, Անմեռ), այլ Անի քաղաքի և Գառնի ու Եղեգիս քաղաքացյուղերի մեջ¹²⁸:

Հաշվի առնելով եղած տվյալները (Երևանում հիշատակվող խանութները, Երևանին առնչվող՝ հարուստների գործարքները, քաղաքում և նրա շրջակայքում հայտնաբերված մոնղոլա-

¹²⁴ Տե՛ս Ղաֆադարյան Կ., Երևան քաղաքի պատմության մի քանի հարցերի մասին // «Պատմաբանասիրական հանդես», 1969, N 1, էջ 12-14:

¹²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 12, նույնի՝ Երևանի միջնադարյան հուշարձանները // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1969, N 1, էջ 77:

¹²⁶ Տե՛ս Հակոբյան Թ., Երևանը VII-IX դարերում // «Պատմաբանասիրական հանդես», 1968, N 3, էջ 22-24:

¹²⁷ Տե՛ս Հակոբյան Թ., Երևանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 1500 թ., Երևան, 1969, էջ 283:

¹²⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 201:

կան շրջանի տարբեր երկրների մեծ թվով դրամները¹²⁹ և այլն), Թ. Հակոբյանը ենթադրում է, թե Երևանը քաղաք է դարձել XIII-XIV դարերում¹³⁰:

Ա. Միմոնյանն ու Թ. Հակոբյանը իրենց համատեղ՝ «Երևան 2750» աշխատության մեջ, խոսելով այն մասին, որ աղբյուրային նյութից դատելով՝ Երևանը IX դարում արդեն գյուղաքաղաք էր, հավելում են. «Հավանաբար, նա գյուղաքաղաք է համարվել նաև VII դարում»¹³¹:

Միջնադարյան Հայաստանի քաղաքների ուսումնասիրությանը զբաղված Բ. Առաքելյանը կարծում էր, որ Երևանը IX-X դդ. Երևանը կարևոր ու հայտնի բնակավայր էր՝ հայտնի իր այգիներով¹³²: Այն քաղաք է դարձել XII դարից սկսած¹³³: Ըստ նրա՝ XII-XIII դարերում Հայաստանում առաջացել է չորս քաղաք, որոնցից առավել աչքի էր ընկնում Երևանը¹³⁴:

Միջնադարյան վիմագիր արձանագրություններում Երևանի հիշատակություններին անդրադարձած Ա. Հարությունյանը նշում է, որ վիմագրերում Երևանը հիշատակվում է IX դ. սկսած՝ մինչև XIII-XIV դդ. ներկայացվելով որպես այգեվետ բնակավայր: Հեղինակը, սակայն, համոզված է, որ Երևանը որպես քաղաք ձևավորվել է առնվազն XI-XII դդ.¹³⁵:

Ու. Բ. Ֆիշերը և Կ. Է. Բոսվորթը, խոսելով XI դ. իրողությունների մասին, Երևանը Դվինի և Անիի հետ միասին ներկայաց-

¹²⁹ Տե՛ս Մուշեղյան Խ., նշվ. աշխ., էջ 31:

¹³⁰ Տե՛ս Հակոբյան Թ., Երևանի պատմությունը, էջ 209:

¹³¹ Հակոբյան Թ., Միմոնյան Ա., Երևան 2750, Երևան, 1968, էջ 31:

¹³² Տե՛ս Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., հ. II, Երևան, 1964, էջ 86:

¹³³ Տե՛ս նույն տեղում, էջ 87:

¹³⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 86:

¹³⁵ Տե՛ս Հարությունյան Ա., Միջնադարյան Երևանը վիմական արձանագրություններում // «Վեմ համահայկական հանդես», 2020, N 3, էջ 247-248:

նում են այն քաղաքների թվում, որոնք գտնվել են պատերազմների թատերաբեմում¹³⁶:

Փաստորեն, ուսումնասիրողների շրջանում միասնական տեսակետ չկա Երևանի՝ քաղաքի վերածվելու և, մասնավորապես, Բագրատունիների դարաշրջանում կարգավիճակի վերաբերյալ:

Երևանի՝ քաղաքացյուղից քաղաքի անցումը Բագրատունիների դարաշրջանում

Վերևում ներկայացվածը փաստում է, որ հայագիտական միտքը Երևանի՝ որպես քաղաք հանդես գալու ժամանակաշրջանի առումով երկփեղկված է. ուսումնասիրողների մի մասը կարծում է, որ այն քաղաք է դարձել խնդրո առարկա ժամանակաշրջանում, իսկ մյուս մասը՝ ավելի ուշ: Խնդիրն այն է, որ Հովհաննես Դրասխանակերտցին Երևանը ներկայացնում է որպես քաղաքացյուղ, իսկ որպես քաղաք այն հիշատակվում է XIII դարից սկսած: Վարդան վարդապետի XIII դարի «Աշխարհացոյց»-ում Երևանը հիշատակված է որպես քաղաք: Այնտեղ կարդում ենք. «Կոտայք Երեւան քաղաքն է իւր վիճակովն...»¹³⁷: Փաստորեն, Երևանն այդ շրջանում արդեն ոչ միայն քաղաք էր, այլ վերոհիշյալ տեքստի տրամաբանությամբ՝ նաև Կոտայք գավառի կենտրոնը:

Երևանի, որպես քաղաք մնացյալ հիշատակությունները վերաբերում են նշված և ավելի ուշ շրջաններին: 1336 թ. մի ձեռագրի հիշատակարանում գրված է. «Ի քաղաքէն այն պատուական, որ իր անունն է Երևան»¹³⁸: Ակնհայտ է, որ «պատուական»

¹³⁶ Տե՛ս Fisher W. B., Bosworth C. E., *Araxes River* // “Encyclopaedia Iranica”, Volume II, Fascicle 3. Edited by E. Yarshater, London, Boston and Henley, 1987, p. 268-271:

¹³⁷ «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», քննական հրատարակություն Հայկ Պերպերեանի, Բարիզ, 1960, էջ 31:

¹³⁸ «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ.Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 287, 288, 329:

բառի ներքո հասկացվում էր թե՛ քաղաքի մեծությունը և թե՛ կարևորությունը:

Հայտնի է, որ զարգացած միջնադարում երկրի քաղաքական կենտրոն եղած որոշ ավաններ և քաղաքացյուղեր այդպես էլ քաղաքի չվերածվեցին: Դրանցից հատկապես նշելի են Բագարանը¹³⁹ և Երազգավորսը¹⁴⁰: Վերջիններիս աճը և կարևորությունը հատկապես ընդգծվել է այն պատճառով, որ հանդիսացել են արքայանիստ քաղաքացյուղեր, և սակայն արքունի նստոցի տեղափոխությունը կասեցրել է դրանց զարգացումը: Խնդիրն այն է, որ այդ քաղաքացյուղերը Հայաստանի կարևոր առևտրական կենտրոնների շարքին երբեք էլ չեն դասվել, այլ միայն եղել են արքայանիստ կենտրոն¹⁴¹:

Երևանն այս առումով շահեկանորեն տարբերվում էր նրանցից: Գտնվելով առևտրական մայրուղիների խաչմերուկում՝ նրա զարգացումն ու քաղաքի վերածվելու գործընթացը կախում չունեցավ երկրի քաղաքական կյանքում ունեցած կարևորությունից: Ուստի պատահական չէ, որ այստեղ արդեն XI դ. գործունեություն են սկսում իրականացնել նշանավոր իշխաններ, որոնցից էր Գրիգոր Ապիրատը, որ 1031 թ. զարկ էր տվել Երևանի գյուղատնտեսությանը՝ առու կառուցելով¹⁴²: Կ. Մաթևոսյանը Մխիթար Այրիվանեցու տեղեկությունից եզրակացրել է, որ Գրիգոր Ապիրատ իշխանը Երևանում ջրանցք է կառուցել¹⁴³, իսկ Թ. Հակոբյանը ենթադրել է, որ Երևանը Գրիգոր Ապիրատի տիրույթն էր¹⁴⁴: Անկախ ամեն ինչից, անհայտ է մնում Երևանի կարգավիճակը այդ շրջանում: Ինչպես տեսանք, Գագիկ Ա-ի թագավորության շրջանում այն հիշատակված է որպես գյուղաքաղաք, սակայն դա մատնանշում է, որ մեծ քաղաքի վերածվելու ուղին բռնած Երևանում արդեն առկա են քաղաք համարվելու համար անհրաժեշտ

¹³⁹ Տե՛ս նաև Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 478:

¹⁴⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 436, 471, 544:

¹⁴¹ Տե՛ս Առաքելյան Բ., նշվ. աշխ., հ. I, էջ 85, 124:

¹⁴² Տե՛ս Մխիթար Այրիվանեցի, էջ 58:

¹⁴³ Տե՛ս Մաթևոսյան Կ., նշվ. աշխ., էջ 15-16, 34:

¹⁴⁴ Տե՛ս Հակոբյան Թ., Երևանի պատմությունը, էջ 212:

բոլոր պայմանները: Հավանական է թվում, որ Երևանի՝ քաղաքացրտուղից անցումը քաղաքի պետք է տեղի ունենար հենց Բագրատունիների դարաշրջանի ավարտին, երբ ստեղծված էին բոլոր պայմանները դրա համար: Այդ են վկայում վերջին շրջանի հնագիտական պեղումները, որոնց արդյունքները հնարավորություն են տալիս Երևանի, որպես քաղաք հանդես գալը թվագրել XI-XII դարերով¹⁴⁵՝ այսինքն՝ այդ գործընթացը հասցնելով Բագրատունիների դարաշրջան:

Այլ բան է, որ Երևանի՝ այս շրջանի սակավ հիշատակություններում չկա նրա՝ որպես քաղաք որևէ ուղղակի հիշատակություն, սակայն այդ երևույթը չի վերաբերում միայն Երևանին: Աղբյուրների տեղեկությունները որպես կանոն կենտրոնացել են երկրի քաղաքական կյանքի համար կարևոր իրադարձությունների շուրջ, իսկ Երևանը դուրս է մնացել այդ շրջանակից: Սակայն նշվածը բոլորովին էլ չի նշանակում, որ քաղաքը դուրս էր նաև երկրի տնտեսական զարգացումներից, քանի որ, գտնվելով հարավից հյուսիս և արևմուտք ընթացող և երկրի համար կենսական կարևորություն ունեցող մայրուղիների վրա, այն ամստրից քաղում էր մեծ օգուտներ:

Ի դեպ, այս համատեքստում հարկ է նշել, որ Ս. Բարխուդարյանի տեսակետը, թե Երևանը Բագրատունիների դարաշրջանում քաղաքացրտուղ չի եղել, քանի որ այգեգործական բնակավայր էր, այնքան էլ հիմնավոր չէ: Խնդիրն այն է, որ նույնիսկ XIII դ., երբ Երևանն արդեն քաղաք էր, դարձյալ այնտեղ այգիներ կային, որոնք նվիրաբերվում էին: Նման տեղեկություններ են պահպանվել Հառիճավանքի Ս. Աստվածածին եկեղեցու՝ 1201 թ. արձանագրության մեջ¹⁴⁶ և Անիի Տիգրան Հոնենցի եկեղեցու պատին փորագրված՝ 1215 թ. արձանագրության մեջ¹⁴⁷: Ուստի կարող ենք նշել, որ Երևանում այգիների հաճախակի հիշատակությունը

¹⁴⁵ Տե՛ս Բարխայան Ֆ., Ժամկոչյան Ա., նշվ. աշխ., էջ 9:

¹⁴⁶ Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ X, Շիրակի մարզ, կազմեց Ս.Գ. Բարխուդարյան, Երևան, 2017, էջ 45, 53:

¹⁴⁷ Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966, էջ 63:

չի կարող հիմք դառնալ նրա՝ զուտ այգեգործայան բնակավայր լինելու մասին տեսակետի համար: Նույնիսկ շատ ավելի ուշ՝ XVIII դ. սկզբին, ըստ Աբրահամ Երևանցու՝ Երևանն աչքի էր ընկնում այգեգործական ընդարձակ գոտիներով: Ըստ պատմիչի՝ «քաղաքի մեջն բովադակ պարտեզ եւ բուրաստան այ, յայգեստան այ»¹⁴⁸ և «...շուրջ քաղաքան էին այգիք եւ ծառատունկք ուռեաց բազում խիտք, զորս ի վաղ ժամանակաց տնկեալք էին լինիլ ի պահպանութիւն, ի պատսպարութիւն քաղաքին»¹⁴⁹, այսինքն՝ պտղատու այգիները և ուռիները շրջապատում էին Երևանը և տնկված էին հին ժամանակներում, ըստ որում՝ այնքան խիտ, որ հեղինակն ավելացնում է, թե դրանք «լինիլ ի պահպանութիւն, ի պատսպարութիւն քաղաքին»¹⁵⁰: Այսինքն՝ Երևանը, որի՝ մեծ և նշանակալի քաղաք լինելը XVIII դ. սկզբին կասկածից վեր է, այդ ժամանակ դարձյալ լի էր այգիներով: Ավելին, XIX դ. վերջին ևս Երևանում բնակիչների հիմնական զբաղմունքը մնում էր այգեգործությունը: Երևանի վերաբերյալ 1889 թ. և 1899 թ. տպագրված հայրենագիտական ձեռնարկներում ասված է. «Մեր քաղաքի բնակիչները գլխաւորապէս պարապում են այգեգործութեամբ և պարտիզպանութեամբ, որովհետև Երևանը իւր կլիմայով ամբողջ Կայսրութեան (Ցարական կայսրություն – Ա. Ե.) մեջ առաջին յարմար տեղին է այգեգործութեան համար»¹⁵¹:

Ի վերջո, փաստ է, որ Հովհաննէս Դրասխանակերտցին Երևանը հիշատակում է որպէս քաղաքացուղ, այսինքն՝ փաստում, որ առնվազն իր օրոք այն արդէն ձեռք էր բերել միջնադարյան քաղաքին բնորոշ հատկանիշները: Ասողիկը Հայաստանում քաղաքի ձևավորման առումով բերում է ազարակից մինչև քաղաք անցման բանաձևը. «...ազարակաց աւանացեալ եւ աւանաց

¹⁴⁸ Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի, յառաջաբան, բնագիր, խմբագիր օրինակ եւ ծանոթագրութիւններ պատրաստեց Հ. Մահակ Ճեմճեմեան, Վենետիկ – Ս. Ղազար, 1977, էջ 29:

¹⁴⁹ Նույն տեղում, էջ 102:

¹⁵⁰ Նույն տեղում:

¹⁵¹ «Տեղագրութիւն [հայրենագիտութիւն] Երևանի». աշխատասիրեց Ա. Աղամեանց, Երևան, 1889, էջ 30, նույնի՝ 2-րդ հրատ., Երևան, 1899, էջ 34:

քաղաքացեալ բազմամարդութեամբ եւ ընչեղութեամբ, մինչեւ հովուաց եւ անդերդաց մետաքսեայս զգենուլ պատմուճան»¹⁵², ասել է՝ ձևավորվող քաղաքներում մեծ հարստություններ են կուտակվում, և նույնիսկ հովիվները մետաքսե պատմուճաններ են հագնում: Փաստորեն, Բագրատունիների շրջանում քաղաքը ձևավորվում էր ավանների զարգացման և ընդարձակման արդյունքում, այն աչքի էր ընկնում մեծ բնակչությամբ և հարստությամբ: Ակնհայտ է, որ քաղաքացյուղը, որը բնակավայրի՝ ավանից առաջանցիկ զարգացման հաջորդ աստիճանն է, արդեն իսկ ունի քաղաքին բնորոշ բոլոր հատկանիշները, այնտեղ ծաղկում են արհեստներն ու առևտուրը և աստիճանաբար չքանում են գյուղին բնորոշ երևույթները:

Այն, որ Երևանն արդեն ձեռք էր բերել քաղաքին բնորոշ դիմագիծ, երևում է նաև նրանից, թե ինչպիսի ընդարձակ տարածք էր այն զբաղեցնում: Հիմնվելով ճարտարապետական հին հուշարձանների առկայության վրա՝ կարելի է մեծ հավանականությամբ ենթադրել, որ քաղաքը Բագրատունիների դարաշրջանում գրեթե նույնությամբ համընկնում էր ուշ միջնադարում քաղաքի ընդգրկած տարածքին: Այն ներառում էր Կոնդը և մայրաքաղաքի ներկայիս կենտրոնական հատվածները՝ Ս. Ջորավոր եկեղեցի (եկեղեցու տարածքում էր գտնվում Ս. Անանիայի մատուռը՝ կառուցված Երևանի սահմանին հին դարերում¹⁵³) - Օպերայի և բալետի պետական թատրոն (այստեղ էր գտնվում Գեթսեմանի մատուռը՝ կառուցված XII-XIII դարերում¹⁵⁴) - Աբովյան ու Սայաթ-Նովա փողոցների խաչմերուկ - (այստեղ է գտնվում Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցին՝ կառուցված նախքան XIII դարը¹⁵⁵,

¹⁵² Ստեփանոս Տարանեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, «Մատենագիրք հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, գիրք Բ, Երևան, 2011, էջ 742:

¹⁵³ Տե՛ս՝ «Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցոյ», Վաղարշապատ, 1896, էջ 225, 294-295:

¹⁵⁴ Տե՛ս՝ Աֆադարյան Կ., Երևանի միջնադարյան հուշարձանները, էջ 45:

¹⁵⁵ Տե՛ս՝ նույն տեղում, էջ 24, 26:

ինչպես նաև այստեղ է եղել V դ. կառուցված եկեղեցի¹⁵⁶) - Մուսկվա կինոթատրոն (այստեղ էր գտնվում Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին՝ կառուցված V-VI դդ.¹⁵⁷) գծի¹⁵⁸ և Հրազդան գետի միջև¹⁵⁹:

Երևանը հայ Բագրատունիների արքունի տիրույթ

Հնագիտական պեղումները ցույց են տվել, որ Երևանի այն բերդը, որ կառուցված էր Հրազդան գետի ափին և գրավվել է ռուսական զորքի կողմից 1827 թ., հիմնվել է XVI դ. վերջին՝ «բոլորովին նոր տեղում, որտեղ նախապես ոչինչ կառուցված չի եղել»¹⁶⁰: Հետևաբար, անհրաժեշտ է պարզել, թե Բագրատունիների դարաշրջանում որտեղ էր գտնվում Երևանի բերդը: Ինչպես նշվեց, Հովհաննես Սկիլիցեսը հիշատակում է անառիկ Օիծեոնակաբերդը, որն էլ, անկասկած, Երևանի հիմնական ամրությունն էր:

Հույժ կարևորվում է նաև պարզելը, թե Բագրատունիների թագավորության անկման շրջափուլում ում էր պատկանում Օիծեոնակաբերդը, հետևաբար նաև՝ Երևանը: Դա հնարավոր է Հովհաննես Սկիլիցեսի վերոբերյալ՝ Խելիդոնիոն-Օիծեոնակաբերդի հետ առնչվող իրադարձությունների նկարագրության տվյալներով: Ըստ պատմիչի՝ մինչև Անիի գրավումը բյուզանդացիների կողմից Անի թագավորության մի քանի բերդ նրանց թույլտվությամբ ռազմակալել էր Դվինի Շադդադյան տիրակալ Աբու ալ-Ասվարը: Անիի Բագրատունի վերջին գահակալ Գագիկ Բ-ն, փաստորեն, հարձակման ենթարկվելով բյուզանդացիների և շադդադյանների զորքերի կողմից, հուսահատվեց և Անին հանձնեց կայսերը: Դրանից հետո բյուզանդացիներն Աբու ալ-Ասվարից հետ պահանջեցին նրա գրաված բերդերը: Նա հրաժարվեց, և

¹⁵⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 24, ծանոթագրություն 1:

¹⁵⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 32, Հակոբյան Թ., Երևանի պատմությունը, էջ 204-205:

¹⁵⁸ Տե՛ս Ղաֆադարյան Կ., Երևանի միջնադարյան հուշարձանները, էջ 16:

¹⁵⁹ Տե՛ս Բարայան Ֆ., Ժամկոչյան Ա., նշվ. աշխ., էջ 6:

¹⁶⁰ Ղաֆադարյան Կ., Երևանի միջնադարյան հուշարձանները, էջ 96-97:

ռազմական գործողություններ սկսվեցին: Դվինի պարիսպների մոտակայքում հայ-բյուզանդական բանակը պարտություն կրեց ու նահանջեց¹⁶¹, որից հետո բյուզանդական զորքը՝ նոր հրամանատարի գլխավորությամբ, որոշեց նախ գրավել շաղղաղյանների տիրացած բերդերը՝ Սուրմարին, Ամբերդը, ինչպես նաև Սուրբ Գրիգորը: Վերջինիս տեղորոշումը հստակ չէ: Փորձ է կատարվել այն նույնացնելու Խոր Վիրապին կամ Փարպիին¹⁶² կամ Ամբերդի մոտակա Սուրբ Գրիգոր գյուղին¹⁶³: Հ. Բարթիկյանն այն տեղորոշում է Աշոցքում¹⁶⁴: Բյուզանդական բանակը պաշարեց ու գրավեց Սուրմարին, Ամբերդը, Սուրբ Գրիգորը, իսկ Աբու ալ-Ասվարը օգնության շտապելիս պարտություն կրեց¹⁶⁵: Այնուհետև բյուզանդացի հեղինակը նշում է, որ «Նրանք (բյուզանդացիները – Ա. Ե.) եկան նաև Խելիդոնիոն կոչվող բերդը»¹⁶⁶, որից հետո տեղի ունեցավ վերոհիշյալ անհաջող պաշարումը: Այն ավարտին չհասցվեց Բյուզանդիայում բռնկված ապստամբության պատճառով, ուստի բյուզանդացի հրամանատարը Աբու ալ-Ասվարի հետ հաշտություն կնքեց, թողեց պաշարումն ու հեռացավ կայսերն օգնության¹⁶⁷: Ա. Տեր-Ղևոնդյանը, հիմնվելով Հովհաննես Սկիլիցեսի տեղեկությունների վրա, կարծում է, որ Ծիծեռնակաբերդ-Խելիդոնիոնը բյուզանդացիների թույլտվությամբ նախապես գրավվել էր Աբու ալ-Ասվարի կողմից, իսկ 1047 թ. դիմացել բյուզանդական բանակի պաշարմանը: 1048 թ. Հայաստան են ներխուժել սելջուկները, որով բյուզանդական հաջորդ արշավանքը

¹⁶¹ Տե՛ս «Պատմություն Արիստակիսի Լաստիվերտոյ», աշխատասիրությամբ՝ Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 63:

¹⁶² Տե՛ս Minorsky V., նշվ. աշխ., էջ 53, Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունիների Հայաստանում, Երևան, 1965, էջ 212:

¹⁶³ Տե՛ս Юзбашян К., Скилица о захвате Анийского царства в 1045 г. // «Византийский временник», том 40, 1979, с. 88:

¹⁶⁴ Տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ 356, ծանոթագրություն 532:

¹⁶⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 147-148:

¹⁶⁶ Նույն տեղում, էջ 149:

¹⁶⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 149-150:

կասեցվել է¹⁶⁸: Փաստորեն, ըստ ուսումնասիրողի՝ Ծիծեռնակաբերդը գտնվել է Դվինի քուրդ տիրակալի ենթակայության ներքո, որն այն գրավել էր, փաստորեն, Գագիկ Բ թագավորից: Ծիծեռնակաբերդը գտնվում էր Դվինից ոչ այնքան հեռու՝ նշված բերդերի հետ միննույն աշխարհագրական միջավայրում, ինչը կարող է հավելյալ հիմնավորում լինել ուսումնասիրողի կարծիքի համար: Սակայն իրականում Հովհաննես Սլիլիցեսի տեղեկությունն այնքան էլ միանշանակ չէ: Նա, որպես Դվինի ամիրային ենթակա, հիշատակում է միայն Սուրմարին, Ամբերդը և Սուրբ Գրիգորը, որոնց Աբու ալ-Ասվարը փորձեց օգնության հասնել բյուզանդական բանակի կողմից պաշարման ժամանակ, իսկ Խելիդոնիոն-Ծիծեռնակաբերդի պաշարումը ներկայացնում է այդ բերդերի գրավումից հետո միայն: Պատմիչը որևէ կերպ չի հիշատակում Խելիդոնիոն-Ծիծեռնակաբերդի պատկանելը Դվինի ամիրային, ավելին, վերջինս չի փորձում, ինչպես վերոհիշյալ երեք բերդերի պարագայում էր, օգնության հասնել Երևանի պաշարված բերդին: Իսկ այն, որ Խելիդոնիոն-Ծիծեռնակաբերդի պաշարումը թողնելով՝ բյուզանդական զորավարը հաշտություն է կնքում Աբու ալ-Ասվարի հետ, որևէ կերպ չի հիմնավորում այդ բերդի՝ քուրդ ամիրային ենթակա լինելը, այլ միայն վկայում է այն բանի օգտին, որ հեռանալիս բյուզանդացիները փորձել են ապահովել իրենց թիկունքը: Ուստի՝ Ծիծեռնակաբերդի քուրդ ամիրային պատկանելու տեսակետը հարկ է համարել հավելյալ հիմնավորումների կարոտ: Նույնիսկ, եթե այն ճշմարիտ է, կարելի է հստակորեն արձանագրել, որ Երևանը Անի թագավորների արքունի տիրույթ էր¹⁶⁹, որի պատճառով էլ Անիին տիրանալուց հետո բյուզանդացիները փորձ են կատարել գրավել այն և մերձակա անառիկ Ծիծեռնակաբերդը, սակայն բերդի պաշարումը հաջողություն չի բերել:

¹⁶⁸ Տե՛ս Տեր-Ղևոնդյան Ա., նշվ. աշխ., էջ 211-213:

¹⁶⁹ Տե՛ս Եղիազարյան Ա., Հայ Բագրատունիների տերությունը (պատմա-աշխարհագրական ուսումնասիրություն), Երևան, 2011, էջ 81-82, նաև՝ էջ 81-ին կից քարտեզը:

Ամփոփում

Ի մի բերելով հետազոտության արդյունքները՝ կարելի է նշել, որ Երևանը, դեռևս VII դարում լինելով քաղաքացյուղ, Բագրատունիների դարաշրջանում ձեռք էր բերել ավատատիրական քաղաքին բնորոշ հատկանիշներ և աղբյուրներում դարձյալ հիշատակվում է որպես քաղաքացյուղ, այսինքն՝ քաղաքի վերածված, բայց դեռևս գյուղին բնորոշ հասարակական-տնտեսական հարաբերություններ պահպանող բնակավայր: Փաստորեն, Երևանն աստիճանաբար վերածվում էր մեծ քաղաքի և կարևորություն էր ձեռք բերում Հայաստանի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում, ինչի պատճառով ավելի ու ավելի հաճախ է հիշատակվում սկզբնաղբյուրներում: Խնդրո առարկա դարաշրջանում Երևանում հայտնի էր Ծիծեռնակաբերդը, որտեղ բյուզանդական բանակը անհաջողության է մատնվել 1047 թ.: Երևանի տարածքը, որը Բագրատունիների դարաշրջանում մտնում էր արքունի տիրույթների մեջ, ընդարձակ էր՝ ընդգրկելով մի կողմից Հրազդան գետի, իսկ մյուս կողմից՝ Կոնդի, Կաթողիկե և Ս. Պողոս-Պետրոս եկեղեցիների միջև ընկած տարածքները:

Arman Yeghiazaryan

YEREVAN IN THE AGE OF BAGRATIDS

The purpose of the article is to study the history of Yerevan in the era of the Bagratids (IX-XI centuries). The task is to explore the time and circumstances of the process of the formation of Yerevan as a feudal city. To effectively solve the problem, all the material from the primary sources on the history of Yerevan, relating to the period under review, and the conflicting opinions expressed by researchers on the topic were collected and researched. As a result, the main events and their content of that important period of the medieval history of Yerevan were presented in detail. The study was carried out with a historical-critical approach, within the framework of which an attempt was made to find out the reliability of the information from sources on the history of Yerevan in the 9th-11th centuries, to restore historical realities. With the help of the historical-genetic method, the process of development of Yerevan as a city is presented and highlighted, as well as the fact that in the era of the Bagratids Yerevan was a royal possession. It has been found out that the study of the history of Bagratid era Yerevan is of great importance, on the one hand, in terms of full and comprehensive coverage of its development, and on the other hand, in terms of clarifying the time of Yerevan's formation as a city. It is substantiated that Yerevan, having formed as an urban settlement by the middle of the 7th century, in the Bagratid era, being a royal possession and situated on the highways of international importance, developed significantly, acquiring all the features of a feudal city.

Արման Եղիազարյան

ԵՐԵՎԱՆԸ XIII-XVI ԴԱՐԵՐՈՒՄ. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Երևանը Չաքարյանների իշխանապետության շրջանում

Սելջուկյան արշավանքները էապես կասեցրին Հայաստանի զարգացումն ընդհանրապես և քաղաքների զարգացումը՝ մասնավորապես: Սակայն արդեն XII դ. վերջին և XIII դ. իրավիճակը փոխվեց: Չաքարյան իշխանների գլխավորությամբ հայվրացական զորքին հաջողվեց ազատագրել Հայաստանի զգալի տարածքներ, որոնց մեջ էր նաև Երևանը:

Քաղաքի դերը Չաքարյանների շրջանում կարևորված էր, որի ապացույցն է այն, որ այստեղ տիրույթներ էր ձեռք բերել անձամբ Չաքարե իշխանը: Արդեն նշվել է, որ Վարդան վարդապետի «Աշխարհացոյց»-ից հայտնի է, որ այս ժամանակաշրջանում Երևանը Կոտայք գավառի կենտրոնն էր: Երևանում իր ունեցած այգիներից երկուսը Չաքարեն 1201 թ. նվիրաբերել է Հառիճի և Հաղարծինի վանքերին¹⁷⁰:

Ղ. Ալիշանը գտնում էր, որ Չաքարյանները տիրում էին Կոտայք գավառին¹⁷¹: Այդ իրողությունն արտացոլված է Ստեփաննոս Օրբելյանի աշխատության մեջ, որտեղ ասված է, որ Իվանե աթաբեկն Օրբելյաններին ի թիվս այլոց, նվիրաբերել է գյուղեր նաև Կոտայքում¹⁷²:

Երևանն այս շրջանում, եթե նույնիսկ Կոտայքի հետ միասին մտնում էր Չաքարյանների տիրույթների մեջ, ապա ուներ

¹⁷⁰ Տե՛ս «Վիմական տարեգիր. ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց Հայոց», կազմյաց Կ. Կոստանեանց, ՄՊԲ, 1913, էջ 43, 141:

¹⁷¹ Տե՛ս «Այրարատ. բնաշխարհ Հայաստանեայց», տեղագրեաց Հ. Ղևոնդ Վ. Մ. Ալիշան, Վենետիկ, 1890, էջ 284:

¹⁷² Տե՛ս «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 360, 397:

նան տեղական ավատատերեր, որոնցից հիշատակված են Վարդ ըմբելը, Սարգիսը և Դոլը:

Վարդ ըմբելի անունը պահպանվել է Կեչառիսի Ս. Գրիգոր եկեղեցու 1204 թ. արձանագրության մեջ, որտեղ ասված է. «Ես Վարդ ըմբել, որ նորոգեցի ի յԵրեւան զՄեղիտոնոյ էգոյն՝ չարեքն...»¹⁷³: Եկեղեցու մեկ այլ արձանագրության մեջ Վարդը հիշատակված է որպէս «Վարդ Երեւանո». «Կամաւն ԱՅ ես ապատրոն Վարդ Երեւանո ետու զիմ հայրենի այգին...»¹⁷⁴:

Երկու արձանագրությունների համադրությունը հնարավորություն է տալիս նույնացնելու դրանց հերոսին: Թ. Հակոբյանը նույնացնում է «ըմբել» և «պատրոն» տիտղոսները և Վարդին համարում է Երևանի տերը XII դ. վերջին և XIII դ. սկզբին¹⁷⁵: Բայց արձանագրության տեքստը նման ենթադրության համար հիմքեր չի տալիս: Այն, որ Վարդը կրել է [ա]պատրոն տիտղոսը, չի նշանակում, որ նա եղել է ողջ Երևանի [ա]պատրոնը, այլապէս գրված կլինէր ոչ թէ «ապատրոն Վարդ Երեւանայ», այլ «Վարդ ապատրոն Երեւանայ» կամ «Վարդ Երեւանայ ապատրոն»: Ավելին, մինևնույն եկեղեցու երկու արձանագրություններում մի դեպքում «ըմբել», իսկ մյուս դեպքում՝ «ապատրոն» տիտղոսների առկայությունը հիմք է տալիս պնդելու մինևնույն անձի երկու տարբեր տիտղոսների մասին, որոնք գուցե ժամանակագրորեն հաջորդել են միմյանց: Ի դեպ, մեկ այլ Երևանցի պատրոնի՝ Սարգիսի¹⁷⁶ հիշատակությունը որպէս Վարդի ժամանակակից¹⁷⁷ ժխտում է «պատրոն» տիտղոսով հիշատակված անձին Երևանի տեր ընկալելու տեսակետը: Թեև դժվար է բացատրություն գտնել «ըմբել»-

¹⁷³ Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 262:

¹⁷⁴ «Վիճակական տարեգիր», էջ 231:

¹⁷⁵ Տե՛ս Հակոբյան Թ., Երևանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 1500 թ., Ե., 1969, էջ 215:

¹⁷⁶ Տե՛ս Մտեփաննոս վ. Մխիթարեանց, Ստորագրութիւն հռչակավոր մեծի ուխտին Այրի վանուց սրբոյ Գեղարդայ, Վաղարշապատ, 1873, էջ 28-29:

¹⁷⁷ Տե՛ս Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 215:

ին¹⁷⁸, բայց այն «պատրոն»-ին նույնացնելու միջոցով ներկայացնելն այնքան էլ հիմնավոր չէ: Ավելին, կարելի է կարծել, որ քաղաքը ղեկավարվել է ավագների (պատրոններ, տանուտերեր, պարոններ) կողմից:

Հուլիս կարևոր է այն, որ այս շրջանում հիշատակվում է նաև Երևանի տանուտերերից Դուր: Գեղարդի Ս. Աստվածածին եկեղեցու արձանագրությունը բարբառում է. «Ես Դուս և Երեվանոս տանուտեարքս և պարոնայքս ի ժամ մահուան Դուլիս գիր յղարկեցաք և զհայրն կոչեցաք և նա իւր քահանայիւք և եպիսկոպոսովքն հաղորդեցոյց և ի գերեզմանահանգոյց տուաք զինկեալք իւր ընծայիւքն ի Այրի վանս. Ա աւր ժամ Դուլնի Ա Վարդինա Պատրիին»¹⁷⁹:

Այս արձանագրությունը կարևոր տեղեկություններ է պարունակում XIII դ. սկզբի Երևանի մասին: Նախ պարզվում է, որ Երևանը միանձնյա չէր ղեկավարվում որևէ պատրոնի կողմից: Հետաքրքրական է, որ «պատրոն»-ի ընկալումը որպես «գլխավոր» կամ «ավագ» կարող է լույս սփռել Երևանում տիրող իրավիճակի վրա: «Երեվանոս տանուտեարքս և պարոնայքս» արտահայտությունը ցույց է տալիս, որ քաղաքում այդժամ տերուտնօրեն էին հենց նրանք՝ հավանաբար ձևավորելով ավագանի կամ ավագների խորհուրդ¹⁸⁰: Հիշատակված է նաև Վարդ «Պատրին», որ նույնանուն է Վարդ ապատրոնին: Ուստի որևէ առանձին անձի Երևանի տեր համարելը հիմնազուրկ է:

Հետաքրքրական է, որ Երևանում ավագների ինստիտուտը գործում էր նաև XVII դարում: Շահ Աբասի կողմից գաղթեցված երևանցիները Սպահանում շարունակում էին ղեկավարվել ավագի կողմից: Ըստ Առաքել Դավրիժեցու՝ երևանցիների ավագի դերում հանդես են եկել տարբեր խավերի ներկայացուցիչներ՝

¹⁷⁸ Բացատրությունը խնդրահարույց է: Ե. Լալայանն այն կարդում էր որպես «Վարդըմբել»: Տե՛ս Լալայեան Ե., Նոր-Բայազետի գաւառ. նշանաւոր վանքեր. Կեչառիս, «Ազգագրական հանդէս», կիսամեայ պատկերագրոյ, տասընչորսերորդ տարի, գիրք XXII, 1912, N 1, էջ 103:

¹⁷⁹ Ստեփաննոս վ. Մխիթարեանց, նշվ. աշխ., էջ 50:

¹⁸⁰ Տե՛ս Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 220:

քահանան (Ադա տերտեր)¹⁸¹, վաճառականը (խոջա Հակոբ-ջան)¹⁸², ինչից կարելի է եզրակացնել, որ ավագանին կամ ավագների խորհուրդ, որում ընդգրկված էին, փաստորեն, աշխարհիկ ու հոգևոր խավերի ներկայացուցիչներ, իր կազմից ընտրում էր ավագի, որին էլ, դատելով պատմիչի տեղեկություններից, տրվում էին ի թիվս այլոց նաև ներկայացուցչական գործառույթներ:

Հատկանշական է, որ Թ. Հակոբյանը Երևանի տեր է համարում նաև ոմն Հուսիկի, որ իր կնոջ հետ նվիրաբերություն է կատարել Հովհաննավանքին: Նա կոչված է «տեր Յուսիկ Երևանայ»¹⁸³: «Տեր» բառը Թ. Հակոբյանին հիմք է տվել կարծելու, որ նա Երևանի տերերից մեկն էր XIII դ. վերջին և XIV դ. սկզբին: Նա թեականորեն հնարավոր է համարում այն, որ Հուսիկը եղել է ոչ թե հոգևոր առաջնորդ, այլ Երևանի պատրոններից մեկը¹⁸⁴: Քանի որ նախորդ արձանագրություններում խոսվում էր Երևանի տանուտերերի մասին, ապա Թ. Հակոբյանի տեսակետը կարելի է հիմնավորել՝ Հուսիկին Երևանի տանուտերերից մեկը համարելով: Այն, որ նա հոգևոր գործիչ չէր, ցույց է տալիս վանքին նրա՝ «հալալ գանձագին հայրենի այգին»¹⁸⁵ նվիրաբերելու փաստը:

Երևանում այս շրջանում տիրույթներ ուներ նաև Անիի մեծահարուստներից նշանավոր Տիգրան Հոնենցը: Անիի Ս. Գրիգոր վանքի շինարարությունից հետո, ըստ 1215 թ. արձանագրության, նա վանքին է նվիրել մի այգի Երևանում¹⁸⁶:

Խնդրո առարկա ժամանակաշրջանը Երևանի պատմության մեջ նշանավորվեց նոր եկեղեցիների ի հայտ գալով: Այդ ժա-

¹⁸¹ Տե՛ս «Պատմություն Առաքել վարդապետի Դավրիժեցույ», Վաղարշապատ, 1896, էջ 186:

¹⁸² Տե՛ս նույն տեղում, էջ 451:

¹⁸³ «Վիմական տարեգիր», էջ 246:

¹⁸⁴ Տե՛ս Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 217-218:

¹⁸⁵ «Վիմական տարեգիր», էջ 246:

¹⁸⁶ Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 1, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1965, էջ 62-63:

մանակ կառուցվեցին Ս. Կաթողիկե¹⁸⁷, Ս. Անանիայի¹⁸⁸ եկեղեցիները, Գեթսեմանի մատուռը¹⁸⁹ և այլն:

Երևանը մոնղոլների և Լենկ Թեմուրի արշավանքների շրջանում

XIII դ. Երևանը Հայաստանի ընդարձակ շրջանների հետ միասին ենթարկվեց այս անգամ արդեն մոնղոլական ասպատակություններին: Չնայած արշավանքի աղետալի հետևանքներին, քաղաքային կյանքը Երևանում շարունակվեց: Այստեղ գործունեություն էին ծավալում հայազգի մեծահարուստներ: Ամենայն հավանականությամբ, 1220-1230-ական թթ. Դվինի կործանումից հետո այնտեղից Երևան են տեղափոխվել վաճառականներ ու արհեստավորներ¹⁹⁰:

Երևանի մոնղոլական շրջանի տերերից հիշատակված է հայազգի Սահմադիին: Նրա մասին պահպանվել են բազմաթիվ տեղեկություններ: 1261 թ. վերաբերող արձանագրության համաձայն նա դարձել էր Անիի ավագներից մեկը¹⁹¹: Իսկ դրանից երեք տարի անց՝ 1264 թ. գնել է Երևան քաղաքը և այն դարձրել իր կալվածքը: Երևանի Ս. Կաթողիկե եկեղեցուն մերձակա Ս. Աստվածածին եկեղեցու արձանագրության համաձայն. «Ի Թ ՉԺԳ (1264): ԱՅ ողորմութ(եամ)բն ու ելղանին¹⁹² ուժովն ես՝ Սահմատինս,

¹⁸⁷ Տե՛ս և Ղաֆադարյան Կ., Երևան. միջնադարյան հուշարձանները և վիճակն արձանագրությունները, Ե., 1975, էջ 24:

¹⁸⁸ Տե՛ս և Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 272-273: Այս մատուռի մասին 1410 թ. մի հիշատակարանում գրված է. «սուրբ տաճարիս Անանիայ առաքելոյ»: Տե՛ս և «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն առաջին, (1401-1450 թթ.), կազմեց Լ.Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 106:

¹⁸⁹ Տե՛ս և Ղաֆադարյան Կ., նշվ. աշխ., էջ 45:

¹⁹⁰ Տե՛ս և Մուշեղյան Խ., Դրամագիտական տվյալներ Երևանի պատմության վերաբերյալ, «Պատմաբանասիրական հանդես», 1968, N 3, էջ 31:

¹⁹¹ Տե՛ս և «Վիճակական տարեգիր», էջ 106:

¹⁹² Իլղան կամ իլխան (ցեղի խան): Ըստ Վարդան վարդապետի՝ «Էլղան»: Տե՛ս և «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 149: Մոնղոլական Հուլավու գորավարի կողմից 1256 թ. հիմնադրած՝ նաև Հայաստանն ընդգրկող իշխանապետության (իլխանության) տիրակալը՝ նույն ինքը Հուլավուն (մահ. 1265 թ.):

Պարոն Աւետե(ա)ց որդիս, զԵրեւան գնեցի հողով եւ ջրով եւ իրաւունք զայս արար. հայրենիք, որ գնած էլանի ու զիր առած...»¹⁹³: Հայտնի է, որ ոմն հայազգի պարոն Սահմադին (որդի Սարավանի) 1261 թ. մոնղոլներից ստացել էր նրանց տերության՝ Հայաստանն ընդգրկող Գյուրջիստան վարչական շրջանի (վիլայեթի) քաղաքացիական կառավարումը¹⁹⁴: Ակնհայտ է, որ թե՛ Սահմադինն և թե՛ Սարավան անունները հայազգի անձանց իսկական անունները չեն, այլ հավանաբար նրանք անվանակոչվել են ի նշան հավատարմության օտար տիրողների: Ուստի, եթե ընդունենք, որ խոսքը միննույն Սահմադինի մասին է, որի հոր հայկական անունն Ավետիք էր, ապա հնարավոր կլինի կատարել մի էական բացահայտում: Գյուրջիստանում առաջնային պաշտոններից մեկը զբաղեցնող Սահմադինը ձեռք է բերել Երևանը «իլդանի ուժով» հողով ու ջրով, իսկ որ ամենակարևորն է, այն դարձնելով սեփական նստավայրը¹⁹⁵: Պատմագիտության մեջ ընդունված է կարծել, որ Սահմադինը Երևանին տիրացել է միայն իր դրամաքսակի (իմա՝ հարստության) ուժով¹⁹⁶, սակայն Սահմադինն այդ իրողությունը վերագրում է իլդանի ուժին, ասել կուզի՝ նա քաղաքը ստացել է հենց մոնղոլ տիրակալից¹⁹⁷, հավանորեն, հենց նստավայր դարձնելու նպատակով: Այս իրողությունը Երևանի զարգացման համար բացում էր մեծ հեռանկարներ: Պետք է հիշել սակայն, որ չնայած նա տիրացավ Երևանին, այդուհանդերձ, քաղաքի մյուս ավատատերերը պահպանեցին իրենց հողատիրական իրավունքները¹⁹⁸:

¹⁹³ Ղաֆադարյան Կ., նշվ. աշխ., էջ 137:

¹⁹⁴ Տե՛ս Ծահնագարյան Ա., Զաքարյան Հայաստանն Իլխանության առաջին շրջանում // «Պատմաբանասիրական հանդես», 2010, N 3, էջ 137:

¹⁹⁵ Երա մամառանցը Մրենն էր: Տե՛ս նաև Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 228-229:

¹⁹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 229:

¹⁹⁷ Այս իրողությունից բխեցվել է, որ Երևանն այդ ժամանակ պետական կալվածք էր: Տե՛ս նույն տեղում, էջ 230:

¹⁹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 230-231, Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Ե., 1957, էջ 210: Կարծիք է հայտնվել, որ XIII-XIV դդ. Երևանը գտնվել է Սյունիքի Օրբելյանների տիրույթներում: Տե՛ս Բաբայան Ֆ., Ժամկոչյան Ա., Ուրվագներ հին Երևանի

1284 թ. մի թերի արձանագրությունից կարելի է բխեցնել, որ Երևանի եկեղեցիներին նվիրաբերություն է կատարել Խաղբակյան կամ Պռոշյան Պռոշ իշխանը, փաստորեն, իր մահվան տարում¹⁹⁹: Հետագայում ևս տարբեր իշխաններ ու մեծահարուստներ նման նվիրաբերություններ են կատարել Երևանի եկեղեցիներին:

1301 թ. Գեշմարդ անունով անձն արձանագրության միջոցով տեղեկացնում է, որ «...միաբանեցա Երեւանո ժամատեղացս եւ տվի ...Բ (2) կուղպակն ներքնատներովն ու խղիրովն, եւ այլ բազում արդիւնք»²⁰⁰: Կ. Ղաֆադարյանը իրավացիորեն բխեցրել է, որ XIV դ. Երևանն ունեցել է քաղաքին հատուկ վաճառատներ (կուղպակ) և արհեստանոցներ, ինչպես նաև պահեստային նկուղներ և օժանդակ այլ շենքեր²⁰¹:

1318 թ. թվագրված արձանագրության համաձայն՝ Գ[ե]որգը և նրա կին Դովլաթը հաղորդում են, թե «միաբանեցաք էրեւանո ժամատեղացս եւ տվաք ի Նորագաւիթ զմեր հողն որ ի Դիւական» (Դիվականը Նորագավիթի հանդամասերից մեկն էր - Ա. Ե.)²⁰²: Այստեղ հետաքրքիր է երկու հանգամանք: Նախ՝ 1301 թ. արձանագրության համեմատությունից ի հայտ է գալիս Երևանի եկեղեցիներին (ժամատեղիներ) կատարվող նվիրաբերությունների հետաքրքրական ձևակերպում՝ «միաբանեցա Երեւանո ժա-

պատմության և հնագիտության, Ե., 2015, էջ 10: Այդ տեսակետը հիմնված է Ստեփաննոս Օրբելյանի՝ 1261 թ. վերաբերվող մի հիշատակության վրա, համաձայն որի՝ Լիպարիտի որդի իշխանաց իշխան Սմբատը եկեղեցուն է նվիրում կալվածքներ իր «հալալ հայրենեաց» բաժնից, ի մասնավորի, «...զԱզատ գիւղն իւր ամեն սահմանովն, շրջակայ լերամբ եւ դաշտով՝ սկսեալ ի բարձր դիտաւոր սարէն որ Քուռակախաղաց կոչի, մինչ ի յԵրեւանն...»: Տե՛ս Ստեփաննոս Օրբելյան, էջ 360-361: Սակայն «մինչ ի յԵրեւանն» արտահայտությունը ցույց է տալիս, որ Սյունյաց իշխանների տիրույթները հասնում էին մինչև Երևան և ոչ թե այն, որ Երևանն այդ տիրույթների սահմաններում էր:

¹⁹⁹ Տե՛ս և Ղաֆադարյան Կ., նշվ. աշխ., էջ 143:

²⁰⁰ Նույն տեղում, էջ 138:

²⁰¹ Տե՛ս նույն տեղում, էջ 139, ծան. 3:

²⁰² Նույն տեղում, էջ 140:

մատեղաց», երբ մեծահարուստները «միաբանվում» էին եկեղեցուն և նվիրաբերության դիմաց այնտեղ նրանց անուններով պատարագ էր մատուցվում, իսկ մյուս կողմից՝ ներկայիս Երևանի Նորագավիթ թաղամասի հիշատակությունը ցույց է տալիս, որ այդ շրջանում քաղաքն ընդգրկում էր նաև այդ տարածքը: Կեչառիսի վանքի՝ 1213 թ. արձանագրությունից հայտնի է, որ Վաչուտյան իշխաններից մեկը միաբանվել է վանքին և նրան տվել «ի գանձագին գեղն Շենգավիթ»²⁰³: Ամենայն հավանականությամբ, խոսքը ներկայիս Երևանի Շենգավիթի մասին է, որի տարածքում էր արդեն Նորագավիթը: Ակնհայտ է, որ Երևանի այդ հնագույն հատվածը զարգացած միջնադարում մաս էր կազմում Երևան քաղաքի:

XIV դ. Երևանի կարևորության մասին պատկերացում կազմելու համար հույժ հետաքրքրական է այն իրողությունը, որ եթե նախկինում քաղաքում գործածական էին այլ վայրերում հատված դրամները, ապա այժմ ոսկյա և արծաթե դրամներ են հատվում հենց Երևանում: Ոսկյա առաջին դրամը Երևանում հատվել է 1333 թ., իսկ արծաթե դրամները՝ սկսած 1344 թվականից²⁰⁴: Երևանի սեփական դրամահատարանով օժտված լինելը ցույց է տալիս նրա՝ երկրի քաղաքական և հատկապես առևտրատնտեսական կյանքում ունեցած կարևորությունը: Հետաքրքրական է նաև այն, որ Երևանում հատվել են դրամներ ոչ միայն օտար տիրոջների լեզվով, այլև հայերեն «Հանուն հօր և որդույ և հօգույն Սրբոյ, Միակ» մակագրությամբ դրամներ²⁰⁵:

Երևանի դերի կարևորությունը հիմնված էր այն իրողության վրա, որ այն գտնվում էր բանուկ առևտրական ճանապարհների վրա, որոնցից ամենակարևորը Թավրիզից Ջուղայի վրայով եկող ու Երևանով Կարս ու Կարին ընթացող մայրուղին էր²⁰⁶:

²⁰³ Լալայեան Ե., նշվ. աշխ., էջ 103:

²⁰⁴ Տե՛ս Մուշեղյան Խ., նշվ. աշխ., էջ 32, Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 248-249:

²⁰⁵ Տե՛ս Բաբայան Ֆ., Ժամկոչյան Ա., նշվ. աշխ., էջ 10:

²⁰⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 11:

XIV դ. կեսերին մոնղոլական իշխանության քայքայման պայմաններում Հայաստանը դարձավ մանր ամիրների ու խաների միջև պայքարի թատերաբեմ, իսկ 1380-ական թվականներին այնտեղ ներխուժեց միջնադարի խոշորագույն նվաճողներից մեկի՝ Լենկ Թեմուրի զորքը 1387 թ. արշավանքի ժամանակ: Քաղաքի գրավման մասին տեղեկություններ է հաղորդում Գրիգոր վարդապետ Խլաթեցին: Ի թիվս այլ քաղաքների գրավման նկարագրության՝ նա պատմում է, որ «Եւ յԵրեւան մեծ աւանին արս հինգհարեր կոտորեցին»²⁰⁷:

Երևանից առաջ Լենկ Թեմուրի զորքը գրավել էր Բջնիի բերդը և այնտեղից բազմաթիվ մարդկանց գերել, իսկ ահա Կապույտ բերդում և Երևանում կոտորել համապատասխանաբար՝ 400 և 500 տղամարդ²⁰⁸: Ակնհայտ է, որ պատճառներից մեկը և, թերևս, գլխավորն այն էր, որ Բջնին հանձնվել էր առանց կռվի, իսկ Կապույտ բերդն ու Երևանը պաշտպանվել էին: Իսկ մահմեդական իրավունքը դեռ հնուց սահմանում էր, որ ուժով նվաճվածները համարվում են ավար, իսկ կամովին հնազանդվածներն իրենց ունեցվածքը կարող էին պահպանել հարկ վճարելու պայմանով²⁰⁹:

Հետաքրքրական է Երևանի ներկայացումը որպես «մեծ ավան»: Ակնհայտ է, որ կա՛մ ըստ հեղինակի մեծ ավանը նույնական է քաղաքի հետ և կա՛մ Երևանը մոնղոլական տերության քայքայման պայմաններում աստիճանաբար կորցրել էր քաղաքին բնորոշ հատկանիշները: Առավել հավանական է, որ հեղինակի տեսակետից մեծ ավանը քաղաքի նշանակություն ուներ: Պատահական չէ, որ 1405 թ. հիշատակարանում Երևանը սկզբում կոչված է «գյուղաքաղաք»²¹⁰, իսկ այնուհետև՝ «մայրա-

²⁰⁷ «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն առաջին, էջ 276:

²⁰⁸ Տե՛ս նույն տեղում:

²⁰⁹ Տե՛ս Տեր-Ղևոնդյան Ա., VIII-IX դդ. մահմեդական իրավունքը՝ վաղ միջնադարյան Հայաստանի ուսումնասիրման աղբյուր // «Պատմաբանասիրական հանդես», 1976, N 2, էջ 75-88:

²¹⁰ Տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն առաջին, էջ 50:

քաղաք»²¹¹: 1441 թ. դրությամբ Երևանը որպես գյուղաքաղաք է հիշատակում Թովմա Մեծոփեցին²¹²: 1465 թ. մի հիշատակարանում Երևանը կոչված է «քաղաք»²¹³, իսկ մեկ այլ՝ 1476 թ. հիշատակարանում «գյուղաքաղաք»²¹⁴: Թ. Հակոբյանն իրավամբ կարծում է, որ քաղաքը, որտեղ մեծ տեղ էր հատկացված գյուղատնտեսական ճյուղերին, տարբեր հեղինակների կողմից տարբեր կերպ կարող էր ընկալվել²¹⁵:

Երևանը Արևելյան Հայաստանի վարչաքաղաքական կենտրոնի կարգավիճակում

XV դարի սկզբին Լենկ Թեմուրի տերությունը քայքայվեց: Հայաստանին այս անգամ արդեն տիրեցին թուրքմենական կարա-կոյունլու ցեղերը: Ահա՛, հենց վերջիններիս տիրապետության շրջանում է, որ Երևանը մեծ կարևորություն ձեռք բերեց երկրի կյանքում: Կարա-կոյունլուների տիրապետության շրջանում Երևան կենտրոնով կազմավորվեց մի ընդարձակ վարչական շրջան, որն ընդգրկում էր Այրարատի (ըստ պատմիչների՝ Արարատյան երկրի) մեծ մասը: Հավանորեն, վերջինս հանձնված էր սասաղլու (ցեղապետ Ամիր-Սասաղի անունով) ցեղի իշխանությանը: Հենց այդ ցեղի անունից էլ երկրամասը երբեմն կոչվում էր Չուխուր-Սասաղ (Սասաղի փոս)²¹⁶: Երևանի մոտակայքում՝ Արգա-

²¹¹ Նույն տեղում, էջ 51:

²¹² Տե՛ս «Թովմա Մեծոփեցու յիշատակարանը», հրատարակեց իւր յառաջարանով Կ. Կոստանեանց, Թիֆլիզ, 1892, էջ 64-65:

²¹³ Սխալմամբ գրված է «Վան», բայց քանի որ հիշատակարանը գրվել է Նորագավթում, պետք է կարդալ Երևան: Տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն երրորդ, (1481-1500 թթ.), կազմեց Լ.Ս. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 443:

²¹⁴ Տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն երկրորդ, (1451-1480 թթ.), կազմեց Լ.Ս. Խաչիկյան, Երևան, 1958, էջ 397-398:

²¹⁵ Տե՛ս Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 283:

²¹⁶ Տե՛ս Փափազյան Հ., Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԵ դ.) // «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1960, N 7-8, էջ 23: «Չուխուր-Սասաղ» վիլայեթի անվանումն առաջին անգամ հանդիպում է 1428

վանդում է գտնվում սասադյու ցեղի պետ Ամիր-Սաադի դամբարանը (կառուցված 1413 թ. նրա որդի Փիր Հուսեյնի կողմից²¹⁷), որն էլ տիրում էր Երևանին և Արարատյան երկրին²¹⁸: Ամիր-Սաադի դամբարանի կողքին եղել են նաև այլ դամբարաններ, որոնք ցույց են տալիս, որ այդտեղ գտնվել է նրա և հաջորդների տոհմական գերեզմանոցը: Նման տոհմական գերեզմանոցի առկայությունը ցույց է տալիս, որ հենց Ամիր-Սաադի կամ նրա որդու օրոք էլ Երևանը դարձել է Արարատյան երկրի վարչական կենտրոնը²¹⁹: Ուրանի որ առկա է նաև վերոհիշյալ Երևանի 1405 թ. հիշատակությունը որպես մայրաքաղաք, ապա կարելի է կարծել, որ Արարատյան երկրի կենտրոնի Երևանը վերածվել է Լենկ Թեմուրի արշավանքներից անմիջապես հետո:

Կարևոր է նշել, որ Երևանի շրջակայքն ընդգրկող գավառը XV դարի 30-ական թթ. դրությամբ կոչվում էր Երևանի գավառ: 1432 թ. Էջմիածնի Մայր Տաճարի համար գնված յոթ գյուղերի կալվածագրում հիշատակված է «Երևանա գավառ»-ը, որի մեջ էր մտնում Կարբիի գավառակը²²⁰: Այստեղ հնարավոր է երկու եզրակացություն: Կա մ այդ անունով է կոչվել ողջ Արարատյան երկիրը, կա մ Արարատյան երկրի այն հատվածը, որ տարածվում էր Երևանի շուրջը, ժամանակակիցները կոչում էին կենտրոնի անունից: Առավել հավանական է թվում առաջին պնդումը, քանի որ հիշատակությունը՝ «...Կարբուայ գաւառակի Երևանա[յ] գաւառի ի նահանգին Հադիբբեջանու» (թարգմանաբար՝ «Ատրպա-

թ. մի վավերագրում, որ վերաբերում է Վաղարշապատին: Տե՛ս նույն տեղում:

²¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 23:

²¹⁸ Տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն երկրորդ, էջ LIX, «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. IV, Երևան, 1972, էջ 57:

²¹⁹ Տե՛ս Փափազյան Հ., Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԵ դ.), էջ 24:

²²⁰ Տե՛ս «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր (976, 981, 1432, 1564, 1614 և 1655-1839 թթ.)», պրակ I, առաջաբանով, ծանոթագրություններով և բառարանով, կազմեց՝ Հար. Աբրահամյան, Ե., 1941, էջ 13:

տական նահանգի Երևանի գավառի Կարբիի գավառակում»), խոսում է այն բանի օգտին, որ Երևանի գավառը մտցված էր կարա-կոյունլուների պետության Ատրպատական վարչական միավորի մեջ:

Արդեն XV դարի 30-ական թվականներին Արարատյան երկրի կառավարիչ է նշանակվում Ամիր-Ռուստամը՝ Մյունյաց իշխան Բեշկեն Օրբեյանի որդին²²¹:

1441 թ. Հայ առաքելական եկեղեցու կաթողիկոսական աթոռը Կիլիկիայից տեղափոխվեց Վաղարշապատ: Այդ առիթով նույն թվականին Թովմա Մեծոփեցու և Հովհաննես Հերմոնեցու նախաձեռնությամբ մեծ ժողով է գումարվում Էջմիածինում: Կարևոր է այն, որ նախաձեռնողները վայելում էին կարա-կոյունլուների հովանավորությունը: Արարատյան երկրի այդ շրջանի կառավարիչ Յաղուբ-բեկը կարա-կոյունլուների տիրակալ Ջհանշահի (1437-1467) հրամանով սկզբում իր նստավայր Երևանում հավաքեց ժողովականներին, իսկ այնուհետև պատիվներով ճանապարհեց Վաղարշապատ²²²:

Արարատյան երկրում Երևանի, որպես կենտրոն հանդիսանալը մեծապես բարձրացրել էր քաղաքի նշանակությունը, որն առանց այդ էլ կարևորված էր դեռ մոնղոլական շրջանից, երբ իլխանի հովանավորությամբ քաղաքին տեղ էր դարձել Սահմադինը:

Վերևում տեսանք, որ 1465 թ. հիշատակարանում Երևանը հիշատակված է որպես քաղաք, իսկ 1476 թ. հիշատակարանում՝ որպես գյուղաքաղաք: Ամենայն հավանականությամբ Երևանի «կարգավիճակ»-ի փոփոխությունը կապված է Հայաստանում աղ-կոյունլուների իշխանության տարածման հետ 1460-ական թվականների երկրորդ կեսին (1468 թվականից): Եվ էթե կարա-կոյունլուների տիրապետության ժամանակաշրջանում Երևանը Արարատյան երկրի վարչական կենտրոնն էր, այսինքն՝ քաղաք

²²¹ Տե՛ս Փափազյան Հ., Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից // «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1955, N 8, էջ 86-88:

²²² Տե՛ս Թովմա Մեծոփեցի, էջ 68:

բուր առումներով, ապա աղ-կոյունիւնների իշխանության հաստատմամբ կորցրեց իր նշանակությունը, ասպատակվեց ու կոռուպտվեց: Այն նաև կորցրեց իր նշանակությունը որպես վարչական կենտրոն²²³, քանի որ այդ դերն անցավ Նախճավանին²²⁴:

Հայաստանին աղ-կոյունիւնների տիրապետության օրոք բաժին հասած դժբախտությունները նկարագրված են տարբեր հեղինակների մոտ, ըստ որոնց՝ երկրի գյուղերն ու քաղաքները վերածվում էին անապատի²²⁵:

Ի վերջո, XV դարի վերջին Հայաստանը դարձավ տարածաշրջանային պատերազմների և աղ-կոյունիւնների երկպառակտչական կոիվների թատերաբեմ, որի հետևանքով քաղաքային կյանքը երկրում գրեթե կանգ առավ²²⁶: Երևանում ևս իրավիճակն անկումային էր:

Երևանը XVI դ. տարածաշրջանային պատերազմների թիրախում

XVI դարի սկզբին տարածաշրջանում գերակայության համար պայքար է սկսվում երկու գերտերությունների՝ Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև: Սեֆյան պետության հիմնադիր Շահ Իսմայիլ Ա-ն (1502-1524) գահակալության առաջին տարիներին ջախջախիչ պարտության է մատնում աղ-կոյունիւն գեղերին և տիրում ողջ Պարսկաստանին, Միջագետքին, Ատրպատականին, Վրաստանին ու Հայաստանին: Նրա ստեղծած տերությունը հյուսիս-արևմուտքում սահմանակցում էր մինչև Եփրատ գետը տարածվող Օսմանյան կայսրության հետ: Նրանց միջև սկսվեցին երկար տասնամյակներ ձգձգվող արյունալի պատերազմներ: Այդ ընթացքում Երևանը, որ Արա-

²²³ Տե՛ս Փափազյան Հ., Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԵ դ.), էջ 25:

²²⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 37:

²²⁵ Տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն երկրորդ, էջ 394:

²²⁶ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», ՀՄՄՀ ԳԱ հրատ., հ. IV, էջ 48-55:

րատյան երկրի կենտրոնն էր ու հույժ կարևոր ռազմավարական դիրք ուներ, մի քանի անգամ ձեռքից ձեռք անցավ²²⁷:

Սեֆյան տերության բանակները Երևանին տիրեցին 1502 թ. Շարուրի դաշտում աղ-կոյունլուներին պարտության մատնելուց հետո: Երևանի առաջին խանը հիշատակվում է որպես Ռևան-խան (Բևան-խան), որից հետևեցրել են, որ նա այդպես է կոչվել Երևանի անունից²²⁸, թեև իրականում Ռևան խան կնշանակե պարզապես «Երևանի խան»²²⁹:

Հետաքրքրական է, որ ըստ Էվլիյա Չելեբիի Երևանը կառուցվել է 1412 թ. Իրանի շահ Իսմայիլի հրամանով՝ վեզիր Ռևան Կուլի խանի կողմից, որն էլ այն կոչել է իր անունով²³⁰: Ակնհայտ է, որ այդ պատմությունը հավաստի չէ, քանի որ 1502-1524 թթ. իշխած շահ Իսմայիլ Ա-ն մեկ դար առաջ բերդ կառուցելու հրաման արձակել չէր կարող, իսկ հնուց անտի գոյություն ունեցող Երևանի անվանումը ոմն խանի անունից բխեցնելը Էվլիյա Չելեբիի՝ սխալմամբ կատարած եզրահանգումն է միայն, երբ անուն ստացողը վերածվել է անուն տվողի:

1512-1514 թթ. թուրք-պարսկական ռազմական գործողություններն առժամանակ դադարեցին 1515 թ. զինադադարով, որով Արևմտյան Հայաստանը հայտնվեց Օսմանյան կայսրության հսկողության ներքո, իսկ Արարատյան երկիրը՝ Երևանով հանդերձ, մնաց Սեֆյան Իրանի տիրապետության տակ: Արարատյան երկրից օսմանյան տիրապետության ներքո անցան Ախուրյան գետից և Հայկական պար լեռնաշղթային արևմուտք ու հարավ ընկած շրջանները: Հավանորեն, Երևանը շարունակում էր մնալ սատարող ցեղի իշխանության ներքո²³¹, քանի որ այդ ժամա-

²²⁷ Տե՛ս Շահազիզ Յե., Հին Յերևանը, Յե., 1931, էջ 86:

²²⁸ Տե՛ս Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 300:

²²⁹ Տե՛ս Փափազյան Հ., Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺՁ դ.) // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1973, N 6, էջ 25:

²³⁰ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», Դ, «Թուրքական աղբյուրներ», Գ, Էվլիյա Չելեբի, Երևան, 1967, էջ 81:

²³¹ Տե՛ս Փափազյան Հ., Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺՁ դ.), էջ 25:

նակ նրանք ընդարձակ տիրույթներ ունեին ողջ Արարատյան երկրում²³²:

1515 թ. հետո Շահ Իսմայիլը Արարատյան երկրի բեկլարբեկությունը (բառացի՝ իշխանաց իշխան. խոսքը խանի պաշտոնի մասին է) հանձնեց ռումլու ցեղին, որի տիրակալներից Դիվսուլթանը Երևանում մզկիթ կառուցեց²³³: 1517 թ. Դիվսուլթանը ասպատակեց Վրաստանն ու վերադարձավ Երևան, որը թերևս նրա նստոցն էր²³⁴:

1534 թ. սուլթան Սուլեյման Ա-ի օրոք (1520-1566) օսմանյան գործը գրավում է Երևանը²³⁵:

Մի քանի տարի անց սեֆյաններին հաջողվեց վերդարձնել կորսված Երևանը: Ժամանակագիրներից մեկը պատմում է, որ «Շահ Թահմազ ...թվին ՋՂ (1541) գնաց էառ Երևան, Գանջալ, Շամախի, գնաց և ի Վրաց տուն և բազում աւերութիւն արար»²³⁶:

1549 թ. դեպի Երևան արշավեց Էրզրումի Իսքանդար փաշան: Նա գրավեց քաղաքը, կողոպտեց, հրդեհեց և հեռացավ: Ռումլու ցեղի առաջնորդ Հուսեյն-ջանը խուսափեց նրա հետ ընդհարումից²³⁷: Դրա պատճառով Սեֆյան շահ Թահմազ Ա-ն (1524-1576) Արարատյան երկրի բեկլարբեկությունը հանձնեց Շահդուլի սուլթան Ուսթաջլուիին²³⁸: Վերջինս 1558 թ. Երևանում ապաստան տրամադրեց օսմանյան սուլթան Սելիմ Բ-ի (1566-1574)՝ գա-

²³² Տե՛ս «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», 2, «Կավվածագրեր», պրակ Ա, կազմեց Հ.Գ. Փափազյան, Երևան, 1968, վավ. 21, 23, 25, 27:

²³³ Տե՛ս «The Travels of Sir John Chardin into Persia and East Indies», the First Volume, Containing the Author's Voyage from Paris to Ispahan, London, 1686, p. 246.

²³⁴ Տե՛ս Փափազյան Հ., Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԶ դ.), էջ 26:

²³⁵ Տե՛ս Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955, էջ 61:

²³⁶ «Մանր ժամանակագրություններ» XIII-XVIII դդ., հ. II, կազմեց՝ Վ.Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 427:

²³⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 28:

²³⁸ Տե՛ս նույն տեղում:

հակալական պայքարում պարտություն կրած եղբայր Բայազիդին²³⁹:

1551 թ. Թահմազ շահի գորքի հարձակմանն ի պատասխան 1554 թ. սուլթան Մուլեյման Ա-ի գորքը հարձակվեց Մեֆյան պետության վրա: Ի թիվս այլ քաղաքների՝ գրավվեց Երևանը: Ըստ մի ժամանակագրի՝ այդ ժամանակ օսմանյան գորքերը «...զԵրևան և զՆախչուան զամենայն գերի բերին»²⁴⁰: Թուրքական պատմագիր Փեչևի-Իբրահիմը պատմում է, որ 1554 թ. օսմանյան «բանակը շարժվեց դեպի ...Երևան քաղաքը, որն Աջեմների (պարսիկների) հոգին է: ...իջևանեցին [Երևանում]: ...Շահի, նրա որդու և մի շարք անվանի խաների և սուլթանների հոյակապ և գեղեցկագարդ պալատները, պարտեզներն ու այգիները, մասնավորապես «Մուլթանական բաղ» անունով հայտնի դրախտանման այգին, բոլորը կրակի տվին, այրեցին և հողին հավասարեցրեցին...»²⁴¹:

1555 թ. մայիսի 29-ի Ամասիայի հաշտության պայմանագրով Արևելյան Հայաստանի մեծ մասը՝ Երևանով, մնաց սեֆյանների տիրապետության ներքո:

Շահդուլի սուլթան Ուսթաջլուից հետո բեկլարբեկ դարձավ նրա որդի Մուհամմադ խան Թոխմախ Ուսթաջլուին: Վերջինս Երևանում վերականգնեց դեռևս ուրարտական շրջանից գոյություն ունեցող արհեստական լիճը, որ մինչև վերջերս նրա անունով կոչվում էր «Թոխմախ-խան գյուղ»²⁴²:

1578 թ. օսմանյան գորքը՝ Լալա Մուստաֆա փաշայի գլխավորությամբ ներխուժեց Վրաստան և այնտեղից անցավ Արևելյան Այսրկովկաս: Փաշայի հրամանով Էրզրումի Հուսեյն փաշան 1579 թ. աշնանը 40 հզ. բանակով արշավեց դեպի Երևան: Թեև օս-

²³⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 29:

²⁴⁰ «Մանր ժամանակագրություններ» XIII-XVIII դդ., հ. I, կազմեց՝ Վ.Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 157:

²⁴¹ «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», Ա, կազմեց՝ Ա.Խ. Սաֆրաստյան, Երևան, 1961, էջ 33:

²⁴² Տե՛ս Փափազյան Հ., Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԶ դ.), էջ 30:

մանյան զորքը կարողացավ ներխուժել քաղաք, բայց Մուհամմադ խանի կատաղի դիմադրության պատճառով այն թողեց ու հեռացավ Էրզրում²⁴³: Մակայն գրավման մեկ օրն էլ բավական էր, որ օսմանյան զորքը քաղաքում անասելի բարբարոսություններ կատարեր: Ժամանակագրություններից մեկում այս առթիվ կարդում ենք. «զԵրևան քաղաք գերեցին ԺԸ (18) գեղով, և ցրեցին զկին և զողայ յամենայն աշխարհ»²⁴⁴: Այս մասին մանրամասնորեն գրում է Հովհաննես գրիչը.

«Վա յ տանք երկրին Արարատեան,
Մայրաքաղաքն ի Երևան,
Եւ գեղանուն ամենեքեան,
Ձեռն այլազգեաց գերի անկան:...

Նախ եւ առաջ յորժամ եկին՝
Ի Նորագեղ փաշայքն իջին.
Լաշկարն՝ անկարծ բոլորեցին,
Շատ ոք անմեղ ըսպանեցին:
Երեվանայ քաղաքէն տարար
Շատ սարկաւազ սաղմոսաձայն.
Ոմանք պաշտէն ըզշարական,
Եւ քահանայք գաւետարան.
Մաղմոսաց ձայնըն վերացաւ,
Եկեղեցեաց լոյսըն հանգեաւ.
Ժամ և պաշտոն խափանեցաւ,
Գիւղս եւ քաղաք աւեր դարձաւ»²⁴⁵:

Զաքարիա սարկավագի տեղեկության համաձայն՝ թուրքերը քաղաքից և շրջակա գյուղերից գերի են տարել 60 հզ. մարդ (հայ և մահմեդական)²⁴⁶: Ըստ Դավիթ Բաղիշեցու՝ Երևանից գերվել է 30 հզ. մարդ²⁴⁷: Ամենայն հավանականությամբ, թվերի այս

²⁴³ Տե՛ս նույն տեղում, էջ 31:

²⁴⁴ «Մանր ժամանակագրություններ» XIII-XVIII դդ., հ. I, էջ 172:

²⁴⁵ Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 300-301:

²⁴⁶ Տե՛ս «Զաքարեայ սարկավագի պատմագրութիւն» հ. Ա, Վաղարշապատ, 1870, էջ 13:

²⁴⁷ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ» XIII-XVIII դդ., հ. II, էջ 355:

տարբերությունը վերագրելի է այն իրողությանը, որ առաջին դեպքում հիշատակված է Երևանից և 18 գյուղերից, իսկ երկրորդը՝ միայն քաղաքից գերեվարվածների թվաքանակը: Ըստ թուրքական աղբյուրի՝ միայն Երևան քաղաքից գերեվարվել է 20 հազարից ավելի կին ու երեխա²⁴⁸, որից կարելի է բխեցնել, որ գերեվարվածների ընդհանուր թիվը կազմել է շուրջ 30 հզ. մարդ:

Այս պայմաններում, Երևանի բնակիչների մի մասը գաղթում էր քաղաքից ավելի անվտանգ վայրեր: Միսիանի Դարաբաս գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու խաչքարի՝ 1581 թ. մի արձանագրություն բարբառում է, որ Ղազար Էրեվանցին իր կողակցի համար կանգնեցրել է խաչքար²⁴⁹: Կարելի է ենթադրել, որ նա Մյունխբում է հայտնվել հենց 1579 թ. աղետալի դեպքերից հետո:

Ամփոփում

Երևանի XIII-XVI դդ. պատմության ուսումնասիրությունը հետաքրքրական է քաղաքի զարգացման եւ Արեւելյան Հայաստանի վարչաքաղաքական կենտրոնի կարգավիճակի ձեռքբերման գործընթացի տեսանկյունից: Սկզբնաղբյուրներից ստացված վկայությունները որոշակի եզրակացությունների հիմք են տալիս քաղաքի ներքին կյանքի մասին XII դ. և XIII դ. սկզբին Զաքարյան իշխանների օրոք: Միաժամանակ քաղաքը զարգանում է, կառուցվում են մի քանի եկեղեցիներ:

XIII դ. քաղաքը գրավել են մոնղոլները, որից հետո՝ Թամերլանի զորքերը: Այս ընթացքում քաղաքային կյանքը զգալի անկում է ապրել:

XV դարից քաղաքը հարակից շրջանի հետ մտել է կարակոյունլուների պետության մեջ, իսկ XV դ. առաջին կեսին դարձել երկրի վարչաքաղաքական կենտրոն: Սակայն դարի երկրորդ կեսին քաղաքն իր կարգավիճակը որպես վարչաքաղաքական

²⁴⁸ Տե՛ս «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», Ա, էջ 47:

²⁴⁹ Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ II, Գորիսի, Միսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց՝ Ս.Գ. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 112:

կենտրոն կորցրեց այն բանից հետո, երբ 1468 թ. աղ-կոյունլու ցեղերը տիրեցին քաղաքին:

XVI դ. Երևանը պարբերաբար գրավել են Սեֆյան և Օսմանյան զորքերը: Երկու տերությունների միջև երկարատև պատերազմները բերեցին քաղաքը անկմանը: Նրա բնակչության զգալի մասը տարվել է գերության, շատերը լքել են քաղաքը՝ ավելի ապահով վայրեր փնտրելու համար:

Arman Yeghiazaryan

**YEREVAN IN THE XIII-XVI CENTURIES: THE CITY AS THE
ADMINISTRATIVE AND POLITICAL CENTER OF THE ARARAT
COUNTRY**

The history of Yerevan in the XIII-XVI centuries is very interesting from the point of view of the development of the city and the process of acquiring the status of the administrative and political center of Eastern Armenia. Evidence from primary sources provides the basis for certain conclusions about the internal life of the city during the reign of the Zakarian princes in the XII and early XIII centuries. At the same time, the city developed and several churches were built.

In the XIII century, the city was captured by the Mongols, after which the city was taken by the troops of Tamerlane. During this period there was a significant decline in urban life.

From the XV century, the city, together with the surrounding region, was included in the Kara-Koyunlu state, and in the first half of the XV century made Yerevan the center of the region. But in the second half of the century, the city's status as an administrative and political center was lost after the Ak-Koyunlu tribes took possession of the city in 1468.

In the XVI century, Yerevan was alternately occupied by Safavid and Ottoman troops. Long wars between the two powers led the city to decline. A significant part of the city's population was carried away into captivity, many left the city in search of safer places.

Արման Եղիազարյան

ԵՐԵՎԱՆԻ 1724 ԹՎԱԿԱՆԻ ԻՆՔՆԱԿԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՂԻԲԵՋԱՆԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մուտք

Հայոց պատմության նշանակալի իրադարձություններից է օսմանյան թուրքերից Երևանի 1724 թ. հերոսական ինքնապաշտպանությունը: Ամիսներ շարունակ Երևանի բնակիչները համատեղ կռիվներով կասեցնում էին բազմահազարանոց թուրքական բանակի անընդհատ հարձակումները՝ նրան պատճառելով հսկայական կորուստներ: Սակայն Երևանի հայության ինքնապաշտպանությանն առնչվող աղբյուրագիտական տեղեկությունները միմյանցից էապես տարբերվում են, ինչը հնարավորություն է տվել պատմաբաններին հանգելու հաճախ իրարամերժ եզրակացությունների: Ներկայումս, երբ Երևանի պատմության ուսումնասիրությունը բացի զուտ պատմական իրողությունների լուսաբանումից ստացել է նաև քաղաքական հնչեղություն, հրատապ է Երևանի 1724 թ. ինքնապաշտպանության ամբողջական և խորքային ուսումնասիրությունը:

Երևանի 1724 թ. ինքնապաշտպանության մասին աղբյուրագիտական տեղեկությունները

1720-ական թվականների սկզբին աֆղանների ներխուժման պատճառով Իրանական պետությունը հայտնվել էր կործանման եզրին: Օգտվելով ախոյան երկրի ծանր վիճակից՝ օսմանյան թուրքերը վերստին օրակարգ են բերում Երևանին տիրելու իրենց վաղեմի ծրագիրը: Օսմանյան բանակն անցնում է հարձակման: 1724 թ. սկզբին Երևանի պարսիկ խան Միհր-Ալին Եղվարդում փորձում է կասեցնել արշավող օսմանյան բանակի առաջխաղացումը, բայց պարտություն կրելով նահանջում է

Երևան, որտեղ ապաստանել էին շրջակա բնակավայրերի բնակիչները: Ապրիլին սկսվում է Երևանի հայերի շուրջ երկամսյա ինքնապաշտպանությունը:

Այս հերոսամարտն ամենայն մանրամասնությամբ նկարագրված է Աբրահամ Երևանցու «Պատմութիւն թագաւորի պարսից» երկում, որի բնագիրն ընդգրկող՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության Ս. Ղազարի թիվ 2717 ձեռագրում նշվում է, որ մարտի 6-ին օսմանյան բանակը Ախուրյան գետի (Արփա-չայ) ափից շարժվեց և հասավ Եղվարդ: Այստեղ նրանց դեմ դուրս եկավ Երևանի Միիր-Ալի խանի 12 հազարանոց բանակը, որը պարտվեց և գրեթե լիովին ոչնչացվեց: Օսմանյան բանակը Եղվարդից տեղաշարժվեց և պաշարեց Կարբի գյուղը: Գյուղացիները շուրջ 40 օր պաշտպանվեցին, մինչև որ տեղ հասած փաշան առաջարկեց նրանց հանձնվել: Կարբեցիները 10 օր խնդրեցին որոշում կայացնելու համար, այդ ընթացքում Երևանի խանից օգնություն խնդրեցին, բայց չստացան, ուստի որոշեցին հանձնվել²⁵⁰: Այնուհետև Աբրահամ Երևանցին տեղեկացնում է, որ օսմանյան զորքը շարժվել է Երևանի վրա: «Եղևվարդայ վեր կացավ մինչ ի Երեւվան, գ [=3] ավուրն հասավ Երեւանայ մօտն»²⁵¹: Այդ ընթացքում Երևանի բոլոր կողմերի գյուղերի բնակիչները եկել, ապաստանել էին քաղաքում: Օսմանյան զորքը Երևանին մոտեցավ արևմուտքից: «Երեւանայ խանն, որ կասեն Միիրայլի խան, հրայման ետ, քաղաքի թուրքն եկավ քրիստոնի մէջն մտավ, կռիվ արին օսմանցուն հետ՝ մինչ ի կ [=60] օրն»²⁵²: Մի քանի օր տևած կռիվներից հետո օսմանյան զորքը թուլանում է և օգնության կանչում այլ զորքերի: Բայագետից ուղարկվում են 35 հազար զինվորներ, բայց դրանից հետո ևս Երևանը մնում է անառիկ: Մուլթանը կրկին 10 հազարանոց զորաբանակ է ուղարկում, որը բանակում է Նորա-

²⁵⁰ Տե՛ս Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի, յառաջաբան, բնագիր, խմբագիր օրինակ եւ ծանոթագրութիւններ պատրաստեց Հ. Սահակ Ճեմճեմեան Մխիթարեան Ուխտէն, Վենետիկ – Ս. Ղազար, 1977, էջ 23-25:

²⁵¹ Նույն տեղում, էջ 25:

²⁵² Նույն տեղում:

գավիթի կողմում: Օգնություն ստանալուց երեք օր անց օսման-
 յան բանակը հզոր հարձակում է ձեռնարկում և անցնելով գետը՝
 քաղաք մտնում Ձորագյուղի կողմից՝ կոտորելով երկու հազար
 հայերի: Աբրահամ Երևանցին տեղեկացնում է, որ այդ ժամանակ
 «...տաչիզըն (պարսից զինվորները – Ա. Ե.) փախավ մտավ բերդի
 մեջն, քրիստոնայ մնաց ի քաղաքի մեջն»²⁵³: Պարզվում է, որ խանն
 իր հետ բերդ էր տարել մի քանի հայ մեծամեծերի՝ իրենց ընտա-
 նիքներով²⁵⁴: Գիշերը Երևանի ինքնապաշտպանության հրամա-
 նատարները՝ «Հունդի բեկենց Յօհանն, Քէչի բեկենց Պողոսըն,
 Միրզայջանենց Թավի, Կառճիկ Օվանեսն», հավաքվում են
 խորհրդակցության: Նրանք հասկանում էին, որ եթե իրենք օգ-
 նություն չստանան, հաջորդ օրը օսմանյան բանակը ամբողջությա-
 յամբ կգրավի քաղաքը: Նրանք որոշում են դիմել Կոնդի բռշանե-
 րին: Բռշաների մեծավորները խոստանում են 200 զինվոր ուղար-
 կել: Իրոք, շուտով նրանք ներկայացան 234 զինվորներով²⁵⁵: Օգ-
 տվելով այն բանից, որ հաջորդ օրը թշնամին գրոհ չձեռնարկեց,
 որոշվեց արագորեն զորահավաք կատարել Երևանում ապաս-
 տանած՝ Փարաքար, Գոգումբեթ, Կավակերտ, Առինջ, Ավան, Գա-
 վան, Ջագ, Նորագյուղ և մյուս գյուղերի ժողովրդի շրջանում: Եր-
 ևանից և գյուղերի բնակիչներից հավաքվեց ավելի քան ինը հա-
 զար զինվոր, որոնք կենտրոնացվեցին Ձորագյուղում: Հավաքված
 զորքը բաժանվեց խմբերի՝ պաշտպանելու Ձորագյուղ բերող ճա-
 նապարհները և կարևոր տեղամասերը: Կոնդի զինվորներին
 հանձնարարվեց ջրաղացի և Դաբախանի ճանապարհների պահ-
 պանությունը, Ձորագյուղի երեք հազար զինվորներին՝ Ծակքար
 տեղամասը, Երևանի Ջուհայրենց թաղի 955 զինվորներին՝ Դար-
 բինոցի ճանապարհը: Հին Երևանի չորս հազար զինվորներին, ո-
 րոնց գլխավորում էին փահլևան (գոտեմարտիկ) Նիկողոսը (Նի-
 կողայոս), Մարիամի որդի (Մարիամյան) Անդոնը (Անտոնիոս),
 Խաթունի որդի (Խաթունյան) Բութիքը և տեր Մովսեսը, հատկաց-
 վեց առանձին պաշտպանական տեղամաս: Ինքնապաշտպա-

²⁵³ Նույն տեղում, էջ 26:

²⁵⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 29:

²⁵⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 26:

նության զինվորների ընդհանուր թիվը 9423 էր, իսկ խաղաղ բնակչությունը՝ 28 հազար²⁵⁶: Ըստ այդմ՝ հավաքված զինվորներից շուրջ 5000-ը հավաքագրվել էին Երևանի բուն հայ ազգաբնակչությունից, իսկ այլք՝ փախստականներից և Կոնդի բռնաներից²⁵⁷:

Ինքնապաշտպանական ուժերի՝ Ձորագյուղում կենտրոնանալն ուներ իր պատճառը: Ըստ Աբրահամ Երևանցու՝ օսմանյան բանակը շրջապատել էր քաղաքը բոլոր կողմերից, սակայն «ոչ կարէր մտանել քաղաքն զ [=4] կողմէն, զերայ քաղաքի մէջն բովայդակ պարտէզ եւ բուրաստան այ, յայգեստան այ, երկու դուն ուներ, օսմանցի ոչ կարէր մտանել ի քաղաքն. զերայ, Ձորայգեղու կողմն ոչ կայ բուրաստան պարդէս, բաց է, ոչ կայ ծառ, ոչ կայ յագեստան, հանայպագ օսմանցին տեղէմ երիշ կանէր, հանայպագ թօփերն կրակելով ի վերայ քաղաքի»²⁵⁸: Փաստորեն, քաղաքի շուրջը գտնվող ծառաստանները արգելափակում էին օսմանյան բանակի ճանապարհը՝ ստիպելով նրան քաղաքի վրա գրոհել միայն Ձորագյուղի կողմից:

Շուտով օսմանյան բանակին օգնության եկավ երեք հազարանոց եգիպտական զորքը, որը սկզբում տեղակայվեց Նորագյուղի կողմում, իսկ այնուհետև գրոհեց Ձորագյուղի ուղղությամբ, որի ճակատը փլուզվեց: Հայ զինվորները սկսեցին նահան-

²⁵⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 28:

²⁵⁷ Ձորագյուղից հավաքագրված երեք հազար զինվորներին Մ. Կարապետյանը վերագրել է Ձորագյուղի տեղացիներին (տե՛ս Կարապետյան Մ., Բնակչության էթնիկ կազմը և էթնիկ պրոցեսները Երևանում 1724-1800 թվականներին // «Պատմաբանասիրական հանդես», 1987, N 3, էջ 95), սակայն հազիվ թե նման կարծիք կարելի է կազմել Աբրահամ Երևանցու «Ձորայգեղայ հզորքն (իմա՝ զորք – Ա. Ե.), որ է ԳՌ [3. 000] պատվայկան գեղից մարդիք» տեղեկությունից (Աբրահամ Երևանցի, էջ 28): Վերջինս իրականում վկայում է այն բանի մասին, որ զինվորները հավաքագրվել էին Երևանի շրջակա գյուղերից քաղաքում ապաստանածներից («պատվայկան գեղից մարդիք»): Պետք է հիշել, որ Մ. Կարապետյանը քաղաքի մշտական բնակչության թիվը հավասարեցնում է 20 հազարի (տե՛ս Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 95), մինչդեռ այդքան բնակչից իր իսկ հաշվումներով՝ 8189 զինվոր հավաքագրելը անհնար էր (տե՛ս նույն տեղում):

²⁵⁸ Աբրահամ Երևանցի, էջ 29:

ջել, և Ձորագյուղի կեսն ընկավ թշնամու ձեռքը: Ինքնապաշտպանությանը միացան 234 բռշա զինվորները: Հայերը բարձունքում էին, թուրքերը ձորում: Այդ օրը հայկական ուժերը մեծ հաղթանակ տարան՝ տալով 1300 զոհ: Պարտված և գետի մյուս կողմը նահանջած Օսմանյան բանակի սպանված զինվորների թիվը վեց հազար էր²⁵⁹:

Օսմանյան բանակը հաջորդ անգամ, մինչև օգնություն ստանալը, գրոհեց Կոնդի վրա: Հայկական ուժերը արագորեն տեղափոխվեցին նոր ճակատ և քշեցին թշնամուն՝ տալով 440 զոհ (400 հայ և 40 բռշա)²⁶⁰: Օսմանյան բանակը մինչև նոր օգնական ուժերի գալը երկար ժամանակ գրոհներ չէր կազմակերպում, իսկ 15 օր անց, երբ եկան նոր զորքեր՝ երկու փաշաների զլխավորությամբ²⁶¹, Երևանն արդեն պաշարվեց հինգ փաշաների զորքերով: Նոր զորքերի գալու հաջորդ օրը, որ ուրբաթ էր, կռիվը վերսկսեց: Հայկական զորքը հավաքվել էր Ձորագյուղում, իսկ թուրքերը գրոհում էին տարբեր կողմերից: Կռիվը տևեց առավոտից մինչև երեկո, Երևանի պաշտպանները կռվեցին մինչև վերջին զինվորը: Օսմանյան բանակը Երևանի պաշտպաններին կարողացավ հաղթել միայն թվաքանակով՝ նրանց դեմ կենտրոնացնելով ահռելի ուժեր: Աբրահամ Երևանցին արձանագրում է. «ԹՎին ՌՃՀԳ [1724] ումն, ունիսի է [=7] ումն, օսմանցին առավ քաղաքն, նստավ: Մնաց բերդն»²⁶²:

Անցնելով պաշարված բերդի հանձնմանը՝ Աբրահամ Երևանցին գրում է, որ «բերդի թուրքն (պարսից զինվորները – Ա. Ե.) ոչ կարե դուս լինել ի բերդէն, մանավանդ՝ թե որ թուրքն բերթիցն դուրս գտանի, օսմանցին շուտով կու սպանէ»²⁶³: Բերդի հանձնման և պարսից կայազորի կյանքի ապահովության համար միջնորդ եղավ Հայոց կաթողիկոս Աստվածատուր Ա Համադանցին (715-725): Հարդյունս կաթողիկոսի միջնորդության՝ «Հրայ-

²⁵⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 29-30:

²⁶⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 30:

²⁶¹ Տե՛ս նույն տեղում:

²⁶² Նույն տեղում, էջ 31:

²⁶³ Նույն տեղում, էջ 33:

ման ետ փաշէն, ինչ որ թուրք կայ բերդին մէջն բովանդակ՝ դուս լինեն: Բովանդակ դուս արավ, էլ ոչ մնաց թուրք ի մէջ բերդին»²⁶⁴: Այնուհետև Աբրահամ Երևանցին արձանագրում է բերդի հանձնման ամսաթիվը. «Թվին ՌՃՀԳ [1724] ումն, օգոստոսի ի [20] մին, եղավ վերջ, հանդարտեցավ օսմանցին, միչ ի նուեմբերն»²⁶⁵:

Երևանի գրավումից հետո քաղաքում տեղի ունեցածի մասին Աբրահամ Երևանցին պատմում է. «Աստուած ազատէ, Տէր փրկէ, այնչաբ յարուն թաբեց որ Զանկու ջուրն կամբայծառեց, յարունայ հոտն ի մէջ քաղաքէն կը բուրէ, ողորմելի քրրիստոնէքն բովանդակ զտուրն քաշեցին, ոչ մնաց քրիստոնայ. անմեղ արդարներըն գերի վարեցին, կուս աղչիքունքն ջրում խեղդելցավ, այսչաբ գերի գնաց ի ձեռն օսմանցու: Գերիքն լեցվեց օսմանցու չատիրներն, մնացել անտէր եւ անճաճանչ ողորմելի արդարքո: Եղավ պղծութիւն, անօրէնութիւն, վասն քրիստոնի մեղացն, որ մեղքն բազմացավ քրրիստոնի»²⁶⁶:

Աբրահամ Երևանցու՝ «Պատմութիւն թագայորի պարսից» ձեռագրի համեմատությամբ, Ս. Ղազարի թիվ 2681 ձեռագրում, որը կոչվում է «Պատմութիւն պատերազմացն» և Աբրահամ Երևանցու երկի խմբագրած տարբերակն է, նշմարելի են հետևյալ տարբերությունները.

ա. Կարբի գյուղի ինքնապաշտպանության տևողությունը նշված չէ²⁶⁷,

բ. հստակեցված է, որ Երևանի վրա Եղվարդից արշավող զորքն Աբդուլլա փաշայի բանակն էր, որն օգնության էր հասել Կարբին պաշարող օսմանյան զորքին²⁶⁸,

գ. նշվում է հայերի կողքին Միհր-Ալի խանի հրամանով մարտնչող պարսիկների և ոչ թե թուրքերի մասին²⁶⁹,

²⁶⁴ Նույն տեղում, էջ 35:

²⁶⁵ Նույն տեղում:

²⁶⁶ Նույն տեղում, էջ 31:

²⁶⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 96-99:

²⁶⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 99:

²⁶⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 100:

դ. պարսիկների՝ բերդում ապաստանելուց հետո, միայն հայերն էին, որ օսմանյան բանակի դեմ մարտնչում էին «յանապարիսպ քաղաքի»²⁷⁰,

ե. հայերի հրամանատարներն էին՝ Հովհաննես Հունդիբեկյանը, Պողոս Քիջիբեկյանը, Հովհաննես Կառօիկը և Դավիթ Միրզանյանը²⁷¹,

զ. քաղաքի և այնտեղ ապաստանած հայ զինվորների թիվը 9443 էր²⁷²,

է. գորքի բաշխումը իրականացվել է քաղաք մտնող ճանապարհները պահպանելու նպատակով²⁷³,

ը. քաղաքի շուրջ եղած ծառաստանների մասին առկա է ավելի հստակ տեղեկություն. «...շուրջ քաղաքան էին այգիք եւ ծառատունկք ուռեաց բազում խիտք, գորս ի վաղ ժամանակաց տնկեալք էին...»²⁷⁴, այսինքն՝ պտղատու այգիները և ուռիները շրջապատում էին Երևանը և տնկված էին հին ժամանակներում, ըստ որում՝ այնքան խիտ, որ հեղինակն ավելացնում է, թե դրանք «լինիլ ի պահպանութիւն, ի պատսպարութիւն քաղաքին»²⁷⁵,

թ. Երևանի խանի կողմից բերդ տարված հայ մեծամեծերի թիվը նշված է հստակ՝ 12 անձ իրենց ընտանիքներով²⁷⁶,

ժ. քաղաքի պաշտպանությանը մասնակցող բոշաների թիվը նշված է 300²⁷⁷,

ժա. Երևանի բերդից օսմանյան փաշայի կողմից ազատ արձակվածները հիշատակված են որպես ոչ թե թուրք, այլ պարսիկ²⁷⁸:

Երևան քաղաքի գրավումը խիստ համառոտ ներկայացնում է Ղուկաս Մեքաստացին. «Արդ սոքա (օսմանյան թուրքերը

²⁷⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 101:

²⁷¹ Տե՛ս նույն տեղում:

²⁷² Տե՛ս նույն տեղում, էջ 102:

²⁷³ Տե՛ս նույն տեղում:

²⁷⁴ Տե՛ս նույն տեղում:

²⁷⁵ Տե՛ս նույն տեղում:

²⁷⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 103:

²⁷⁷ Տե՛ս նույն տեղում:

²⁷⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 110:

– Ա. Ե.) իբրեւ այսպէս զօրացան ի կողմանս յայնոսիկ, եւ առեալ զմայրաքաղաքն Երեւան՝ ի սուր սուսերի մաշեցին զամենայն բնակիչսն»²⁷⁹:

Հայկական անանուն հիշատակարաններից մեկում նշվում է. «ԹՎիւն ՌՃՀԳ (1724) առին Երևան սեպտեմբեր ամսոյն»²⁸⁰:

Հովակիմ գրիչը տեղեկացնում է, որ պարսիկները Երևանի բերդը պաշտպանել են «ամիսս երիս աւելի և կամ պակաս»²⁸¹:

Մարտիրոս դի Առաքելը Երևան կռիվների և բերդի հանձնման մասին գրում է. «...զօրքն Օսմանցոց էլին ի վերայ Երևանայ և պատերազմեցան յոյժ սաստիկ, ապա կամաւ ետուն զբերդն»²⁸²:

Հայ ազատագրական շարժման գործիչ Իվան Կարապետը 1724 թ. մարտի 10-ին գրված մի նամակում նշում է, որ ըստ չճշտված լուրերի՝ թուրքերը գրավել են Երևանը²⁸³:

1724 թ. աշնան սկզբին Ներսէս վանականը Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանին (1702-1728) տեղեկացնում է, որ ոմանք խոսում են թուրքերի կողմից Երևանի գրավման մասին, իսկ այլը՝ հերքում են այդ²⁸⁴:

Հայոց կաթողիկոս Աստվածատուր Ա Համադանցին Եսայի Հասան-Ջալալյանին 1724 թ. սեպտեմբերի 4-ին գրում է, որ օսմանյան զորքերը տիրել են պարսկական տերության տարբեր

²⁷⁹ Ղուկաս Սեբաստացի, Դաւիթ Բէկ կամ Պատմութիւն Ղափանցոց, բնագիրը՝ Հ. Սամուէլ Արամեանի, Երևան, 1992, էջ 102:

²⁸⁰ Հակոբյան Վ., Ժամանակագրական մի փաստի ճշգրտման շուրջը // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1974, N 5, էջ 81: Հեղինակը վկայակոչել է Մատենադարանի N 3602 ձեռագիրը:

²⁸¹ Հակոբյան Վ., նշվ. աշխ., էջ 79-80: Այստեղ հեղինակը վկայակոչել է Մատենադարանի N 2121 ձեռագրի 367բ էջը:

²⁸² «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 433:

²⁸³ Տե՛ս «Армяно-русские отношения в первой трети XVIII века», сборник документов, т. II, часть II, под ред. А. Г. Иоаннисяна, Ереван, 1967, с. 84-85:

²⁸⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 198-199:

շրջանների՝ մինչև Երևան: Ընդ որում՝ հատուկ նշում է. «Դուք մի մտածեք, որ այդ վայրերը գրավված չեն, իրապես գրավված են»²⁸⁵:

Նկարագրելով Երևանի գրավումը՝ թուրք հեղինակ Չելեբի-Չաղեն պատմում է, որ օսմանյան բանակը շարժվել է Ախուրյան գետի (բնագրում՝ Արփա-Չայիր) ափի բանակավայրից դեպի Երևան հունիսի 13-ին: Երևանի բերդի պաշարման սկզբում ներխուժելով բերդի պարիսպներին արտաքուստ կից «վարոշ» (արվարձան) օսմանյան զորքը կոտորեց 10 հազար պարսիկ զինվորների: «Բացի այդ, ժողովրդից 10 հազարից ավելի ընտանիք և երեխաների գերի վերցրին»²⁸⁶: Նրանք նաև քանդեցին քաղաքի՝ բերդին հարևան տները և բերդի շուրջն ամայի տարածք ստեղծեցին՝ պաշարելով այն²⁸⁷: Երևանը պաշարող օսմանյան բանակը պարբերաբար օգնական ուժեր էր ստանում, որոնցից հատկապես հիշատակելի է եգիպտացիների երեք հազարանոց զորագունդը²⁸⁸: Երկարատև պաշարումից հետո՝ սեպտեմբերի 23-ին, Միիր-Ալի խանը Երևանի բերդը հանձնեց թշնամուն²⁸⁹:

«Ռեվանի (Երևանի – *Ս. Ե.*) գրավման մասին գրքում», որ գրվել է դեպքերի ժամանակակցի կողմից, ներկայացված է Երևանի բերդի պաշարման այլ թվագրում՝ 1724 թ. հուլիսի 6-ից հոկտեմբերի 7-ը²⁹⁰:

Ըստ Կոստանդնուպոլսի ռուսական դիվանագիտական ներկայացուցիչ Ի. Նեպյունի 1724 թ. սեպտեմբերի 1-ի տեղեկագրի՝ Իրանում գործող զորքերի փաշան գրել է Բարձր դռանը, որ ցանկանում է միանալ Երևանը պաշարած զորքին, քանի որ այն

²⁸⁵ Эзов Г., Сношения Петра Великого с армянским народом, документы, СПб., 1898, с. 378.

²⁸⁶ «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», թարգմ. թուրքերեն բնագրերից, ներածությունով, ծանոթագրություններով, տերմինաբանական բառարանով և հավելվածով, հ. Ա, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, Երևան, 1961, էջ 143:

²⁸⁷ Տե՛ս նույն տեղում:

²⁸⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 146:

²⁸⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 149-150:

²⁹⁰ Տե՛ս «1720-1724 Osmanlı-İran münaşebetleri ve Silahşör Kemâñî Mustafa Ağâ'nın Revân fetih-nañmesi», by M. Münir Aktepe, İstanbul, 1970, s. 45-70:

միայնակ ի վիճակի չէ գրավելու հայերի, պարսիկների և մի խումբ վրացիների համատեղ ուժերով պաշտպանվող քաղաքը, որի կեսը շրջափակված է գառիթափ լեռներով, իսկ մյուս կեսը՝ ջրով²⁹¹: Ըստ Ի. Նեպյունի 1724 թ. սեպտեմբերի 25-ի տեղեկագրի՝ Երևանի շուրջը հավաքվել է 30 հազարանոց կանոնավոր թուրքական բանակ, նույնքան էլ անկանոն զորամիավորումներ, որոնց միացել է Եգիպտոսից ուղարկված երեք հազարանոց զորաջոկատը: Թուրքերն ամեն օր մարդ են ուղարկում քաղաք՝ առաջարկելով հանձնվել, սակայն քաղաքացիները հրաժարվում են՝ նախընտրելով մեռնել կռվում, քան հանձնվել: Երևան քաղաքի կռվողների թիվը 5 հինգ հազար է: Ըստ դիվանագիտական ներկայացուցչի՝ մեկ այլ փաշա արշավում է դեպի Թավրիզ, բայց թուրքերը հույս չունեն, թե նա կկարողանա գրավել այն, քանզի գրավված վայրերում կայազորներ է թողել, իսկ մի մեծ զորախումբ էլ՝ Երևան է ուղարկել²⁹²: Իսկ հոկտեմբերի 10-ի զեկուցագրում Ի. Նեպյունը գրում է, որ Երևանի բերդի կայազորը հանձնվել է թշնամուն 60-օրյա կռիվներից հետո՝ 1724 թ. սեպտեմբերի 22-ին²⁹³:

Չ. Հանվելը հաղորդում է, որ օսմանյան բանակն անցել է Արաքսը 1724 թ. հունիսի կեսին և հասել Երևան հունիսի վերջին²⁹⁴: Բերդը հանձնվել է հոկտեմբերի սկզբին²⁹⁵:

Մ. Լ. Շելը հայտնում է, որ Երևանի պաշարումը տևել է 90 օր²⁹⁶, փաստորեն, հունիսից մինչև սեպտեմբեր:

²⁹¹ Տե՛ս Մարտիրոսյան Վ., Անդրկովկասի ժողովուրդների համագործակցությունը և Երևանի 1724 թվականի պաշտպանությունը // «Պատմա-բանասիրական հանդես», 1965, N 2, էջ 189-190:

²⁹² Տե՛ս «Армяно-русские отношения в первой трети XVIII века», сборник документов, т. II, часть II, с. 220:

²⁹³ Տե՛ս Մարտիրոսյան Վ., նշվ. աշխ., էջ 190:

²⁹⁴ Տե՛ս “The Revolutions of Persia by Jonas Hanway”, the Third Edition, vol. II, London, 1762, p. 211:

²⁹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 212-213:

²⁹⁶ Տե՛ս Shay M. L., The Ottoman Empire from 1720 to 1734 as Revealed in Despatches of the Venetian Baili, Urbana, 1944, p. 120:

Ըստ Թ. Կրուշինսկու՝ օսմանյան բանակը, որն արշավել է Երևանի ուղղությամբ, այն գրավել է առաջին իսկ գրոհից, իսկ 30 հազար հայեր, որոնք չեն կարողացել ապաստանել քաղաքում, կոտորվել են: Բերդը դիմադրել է երկու ամիս և հանձնվել հայոց պատրիարքի միջնորդությամբ²⁹⁷:

Երևանի 1724 թ. կռիվների հարցը պատմագիտության մեջ

Երևանի պաշտպանության և գրավման վերաբերյալ հայագիտության մեջ արտահայտվել են բազմաթիվ և հակասական տեսակետներ:

Ղ. Ալիշանը և, նրանից օգտվելով, Ե. Շահազիզը, առանց ժամանակագրական հստակեցումների, պարզապես վերապատմում են Աբրահամ Երևանցու տեղեկությունները Երևանի ինքնապաշտպանության մասին²⁹⁸:

Լեոն, հիմնվելով Աբրահամ Երևանցու տեղեկությունների վրա, օսմանյան բանակի կողմից Երևանի գրավումը թվագրում է 1724 թ. հունիսի 7-ին²⁹⁹:

Ա. Հովհաննիսյանը Երևանի 1724 թ. կռիվներին վերաբերող փաստաթղթերում առկա «պարսիկներ» էթնանունը առաջարկում է կարդալ «Անդրկովկասի շիաներ» կամ «ադրբեջանցիներ»³⁰⁰, որից հետո պնդում է, թե քաղաքի հայերը կազմում էին բնակչության չորրորդ մասը, իսկ մեծամասնությունը՝ ադրբեջանցիներ էին³⁰¹: Նրա կարծիքն իր ուսումնասիրության մեջ օգ-

²⁹⁷ “The History of the Late Revolutions of Persia”, taken from the Memoirs of Father Krusinski, Procurator of the Jesuits at Ispahan, the second edition, vol. II, London, 1733, p. 178.

²⁹⁸ Տե՛ս «Այրարատ բնաշխարհի Հայաստանեայց», տեղագրեաց Հ. Ղեոնդ Վ. Մ. Ալիշան, Վենետիկ – Ս. Ղազար, 1890, էջ 305, Շահազիզ Յե., Հին Յերեվանը, Յե., 1931, էջ 105-108:

²⁹⁹ Տե՛ս Լեո, Երկեր, հատոր Գ, գիրք Բ, Երևան, 1973, էջ 157:

³⁰⁰ Տե՛ս «Армяно-русские отношения в первой трети XVIII века», сборник документов, т. II, часть I, под ред. А. Г. Иоаннисяна, Ереван, 1964, с. LXXV, LXXVII:

³⁰¹ Տե՛ս նույն տեղում, էջ LXXVII:

տագործում է ադրբեջանական հեղինակ Ս. Մամեդովը՝ ընդգծելով, որ քաղաքի բնակչության գերակշիռ մասը կազմել են թաթարները, այն է՝ ադրբեջանցիները³⁰²: Մ. Կարապետյանը ապացուցել է, որ Ա. Հովհաննիսյանի օգտագործած սկզբնաղբյուրի՝ Մամի-Կլերակի աշխատության տվյալը XVIII դ. սկզբի Երևանի հայերի քանակի մասին³⁰³ վերցված է ճիշդ Մոնիեի տեղեկությունից, ըստ որի՝ Երևանի բերդում այդ ժամանակ ապրում էր 4 հազար մարդ, որից հազարը՝ հայեր³⁰⁴: Այդ տեղեկությունը վերաբերում է ոչ թե քաղաքին, այլ բերդին, ուստի նշված ուսումնասիրողների՝ դրա վրա հիմնված տեսակետը Երևան քաղաքում հայերի և այսպես կոչված ադրբեջանցիների թվաքանակների հարաբերակցության մասին հիմնազուրկ է³⁰⁵: Ա. Հովհաննիսյանը համոզված է, որ հայերը, պարսիկները և ադրբեջանցիները Երևանում միասնական ճակատով կռվել են թուրքական զորքի դեմ³⁰⁶: Նա գրում է, որ թուրքերի հարձակումը Երևանի վրա սկսվել է հունիսին և շարունակվել երեք ամիս³⁰⁷: Աբրահամ Երևանցու տեղեկություններն Ա. Հովհաննիսյանը ժամանակագրորեն տեղավորում է հունիս-սեպտեմբեր ամիսներին: Ուսումնասիրողը, հենվելով մի թուրք հեղինակի կարծիքի վրա, Երևանի բերդի հանձնումը թվագրում է 1724 թ. սեպտեմբերի 28-ով³⁰⁸:

Հետագայում Ա. Հովհաննիսյանը «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակության չորրորդ հատորի

³⁰² Տե՛ս Мамедов С., Исторические связи азербайджанского и армянского народов во второй половине XVII – первой трети XVIII в., Баку, 1977, с. 83:

³⁰³ Տե՛ս ‘u “Histoire De Perse”, Depuis Le Commencement De Ce Siecle, tome II, Paris, 1750, p. 154.

³⁰⁴ Տե՛ս ‘u “Nouveaux Memoires des Missions De La Compagnie De Jesus Dans Le Levant”, tome III, Paris, 1723, p. 37.

³⁰⁵ Տե՛ս Կարապետյան Ս., Երևանի բնակչության էթնիկական կազմի և թվաքանակի փոփոխությունները 1600-1724 թթ. // «Պատմաբանասիրական հանդես», 1986, N 2, էջ 108:

³⁰⁶ Տե՛ս «Армяно-русские отношения в первой трети XVIII века», т. II, часть I, с. LXXVII:

³⁰⁷ Տե՛ս նույն տեղում, էջ LXXVIII:

³⁰⁸ Տե՛ս նույն տեղում, էջ LXXIX:

համապատասխան հատվածում նշում է, որ Երևանի պաշտպանությունը սկսվել է 1724 թ. հունիս 7-ին և տևել երեք ամիս՝ մինչև սեպտեմբերի 26-ը: Բերդում կատաղի կռիվներ էին մղում հատկապես հայերը³⁰⁹: Այն, որ Երևանի բերդի գրավումը թվագրված է սեպտեմբերի 26-ին, ամենայն հավանականությամբ, վրիպակ է, և պետք է լիներ սեպտեմբերի 28-ը: Խնդիրն այն է, որ նման վրիպակներ հեղինակի տեքստում երբեմն հանդիպում են: Օրինակ՝ Կոստանդնուպոլսի 1724 թ. ռուս-թուրքական պայմանագրի ամսաթիվը հունիսի 12-ի փոխարեն նշված է հուլիսի 12³¹⁰:

Ա. Միրզոյանը կարծում է, որ Եղվարդում պարտվելով՝ Երևանի խանը ամրացել է Երևանի բերդում՝ անպաշտպան թողնելով ամբողջ նահանգը և Երևան քաղաքը, որը երկու ամիս շարունակ պաշտպանում էին հայ բնակիչներն ու շրջակա գյուղերի հայ փախստականները: Օսմանյան զորքը Երևանը գրավում է հունիսի 7-ին, որից հետո խանը օսմանյան բանակին է հանձնում նաև բերդը³¹¹:

Վ. Մարտիրոսյանը նոր սկզբնաղբյուրների ներգրավմամբ, որոնցից հատկապես կարևորվում են Կոստանդնուպոլսի ռուսական դիվանագիտական ներկայացուցիչ Ի. Նեպյունի զեկուցագրերը՝ ուղղված ցարական արքունիքին, որտեղ նա պատմում է Երևանի բերդի պաշտպանության և անկման մասին, փորձում է հիմնավորել այն, որ Աբրահամ Երևանցու տեղեկությունը, թե Երևանը գրավվել է հունիսի 7-ին, ճիշտ չէ, իսկ իրականում Երևանը գրավվել է 1724 թ. սեպտեմբերի 22-ին³¹²: Վ. Մարտիրոսյանը հավելում է, թե իբր Երևանի 1724 թ. ինքնապաշտպանությամբ

³⁰⁹ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, Երևան, 1972, էջ 157:

³¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 156:

³¹¹ Տե՛ս Ա. Միրզոյան Ա., Երևանի 1724 թ. հերոսական պաշտպանությունը թուրքական զավթիչներից // ՀՄՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների, 1953, N 3, էջ 93-96:

³¹² Տե՛ս Մարտիրոսյան Վ., նշվ. աշխ., էջ 190-191: Տե՛ս նաև նույնի՝ Հայ և վրաց ժողովուրդների համագործակցությունը ազատագրական պայքարում (XVIII դարի 20-ական թվականներ), Երևան, 1971, էջ 149:

յան ժամանակ «կողք-կողքի համատեղ պայքարել են հայերը, աղբրեջանցիները և վրացիները»³¹³:

Ս. Պողոսյանը Երևանի 1724 թ. ինքնապաշտպանությունը ներկայացնում է ըստ Աբրահամ Երևանցու ժամանակագրական և բովանդակային տվյալների՝ կռիվների 60 օրը թվագրելով ապրիլի 7-ից հունիսի 7-ը³¹⁴:

Ա. Միմոնյանն ընդհանուր առմամբ ընդունում է Աբրահամ Երևանցու ներկայացրած ժամանակագրության իսկությունը՝ այն տարբերությամբ, որ Երևանի պաշտպանությունը, ըստ նրա տևել է «ավելի քան երկու ամիս»՝ ավարտվելով հունիսի 7-ին³¹⁵:

Թ. Հակոբյանը, որ հատորաշար է նվիրել Երևանի պատմությանը, Երևանի 1724 թ. ինքնապաշտպանության լուսաբանման առումով լիովին վստահում է Աբրահամ Երևանցու (հետագոտողի խոսքով՝ «ականատես և ամենաարժանահավատ պատմիչ») տեղեկություններին: Ըստ նրա՝ քաղաքի հայության ինքնապաշտպանությունը սկսվել է 1724 թ. ապրիլի 7-ին և ավարտվել հունիսի 7-ի երեկոյան: Ըստ որում՝ Երևանի բերդում ապաստանած Երևանի խանը որևէ կերպ չէր աջակցում քաղաքի հայությանը, իսկ երբ նաև օրհասական էր բերդի վիճակը, խանը Հայոց կաթողիկոս Աստվածատուր Ա Համադանցու միջնորդությամբ բանակցում է օսմանյան բանակի հրամանատարության հետ՝ ի վերջո հանձնվելով³¹⁶:

Ըստ Զ. Արզումանյանի՝ Երևանը Այսրկովկասը գրավել ցանկացող օսմանյան պետության համար ուներ ռազմավարական խոշոր նշանակություն, քանի որ այն երկրամասի վարչա-

³¹³ Մարտիրոսյան Վ., Անդրկովկասի ժողովուրդների համատեղ ազատագրական պայքարի պատմությունից // ՀՄՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների, 1965, N 7, էջ 22: Տե՛ս նաև նույնի՝ Անդրկովկասի ժողովուրդների համագործակցությունը և Երևանի 1724 թվականի պաշտպանությունը, էջ 191:

³¹⁴ Տե՛ս Պողոսյան Ս., Հայ ժողովրդի պատմություն, հ. II (IX-XIX դդ.), Երևան, 1965, էջ 285-288:

³¹⁵ Տե՛ս Միմոնյան Ա., Երևան (1920-1967), Երևան, 1968, էջ 45-47:

³¹⁶ Տե՛ս Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1500-1800 թթ.), Երևան, 1971, էջ 77-90:

կան կենտրոններից մեկն էր և նրա անկումը բացասաբար կանդրադառնար մյուս դիմադրական օջախների վրա: Հեղինակը կարծում է, որ նախքան Երևանի բերդի պաշարումը թուրքական բանակը հանդիպել է Եղվարդ և Կարբի գյուղերի հայ բնակչության դիմադրությանը, և այն էլ այն պարագայում, երբ պարսկական բանակը ջախջախվել էր ու փակվել Երևանի բերդում: Թուրքական 60 հազարանոց բանակը 1724 թ. ամռան սկզբին պաշարեց Երևանի բերդը: Բերդում ամրացած շրջակա հայկական գյուղերի բնակիչները և պարսկական կայազորը երեք ամիս դիմադրեցին: Ի վերջո, Ջ. Արզումանյանը կարծիք է հայտնում, թե օսմանյան բանակը գրավել է Երևանը 1724 թ. սեպտեմբերի 22-ին³¹⁷:

Մ. Կարապետյանը, հենվելով Աբրահամ Երևանցու «քաղաքի թուրքն եկավ քրիստոնի մեջն մտավ, կռիվ արին օսմանցուն հետ՝ մինչ ի Կ(60)օրն»³¹⁸ հիշատակության վրա, գտնում է, որ Երևանի հայերը, ստանալով քաղաքի մահմեդականների աջակցությունը, շուրջ երկու ամիս պաշտպանվել են: Իսկ «թուրք», ինչպես նաև «տաճիգ» տերմինները, ըստ նրա՝ պատմիչն օգտագործել է դավանանքային նշանակությամբ՝ նկատի ունենալով մահմեդականներին³¹⁹: Ուսումնասիրողը կարծում է, որ օսմանյան բանակը սկզբում գրավել է քաղաքը, իսկ հետո, մի քանի ամիս անց՝ սեպտեմբերի 22-ին, բերդը³²⁰:

Հաշվի առնելով օսմանյան բանակի՝ Երևանի գրավմանն առնչվող գիտական գրականության մեջ առկա տարաձայնությունները՝ Վ. Հակոբյանը հարկ է համարել թեզերի ու հակաթեզերի այդ «բանավեճում» հանդես գալ յուրահատուկ սինթեզի դիրքերից: Նա Երևանի գրավման վերաբերյալ առկա տեսակետները համադրում ու եզրակացնում է, որ սկզբնաղբյուրների տեղե-

³¹⁷ Տե՛ս Արզումանյան Ջ., Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարի պատմությունից // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1973, N 11, էջ 31-33:

³¹⁸ Տե՛ս Աբրահամ Երևանցի, էջ 25:

³¹⁹ Տե՛ս Կարապետյան Մ., Բնակչության էթնիկ կազմը և էթնիկ պրոցեսները Երևանում, էջ 96:

³²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 96-97:

կությունները վերաբերում են երկու իրողության՝ Երևան քաղաքի և Երևանի բերդի գրավմանը, որոնցից առաջինը տեղի է ունեցել հունիսի 7-ին, իսկ երկրորդը՝ սեպտեմբերի 22-ին³²¹:

Հրապարակի վրա եղած սկզբնաղբյուրների և հետագոտությունների ամփոփմամբ Երևանի գրավման ժամանակագրությունը ճշտելու փորձ է կատարել Ա. Այվազյանը: Նա ի սկզբանե նշում է, որ Աբրահամ Երևանցու երկի ժամանակագրական տեղեկությունները հավաստի համարվել չեն կարող: Խնդիրն այն է, որ ըստ հեղինակի՝ մարտի 6-ից սկսած, երբ օսմանյան բանակը Արարատյան երկրում սկսեց իր առաջխաղացումը, մինչև Երևանի պաշտպանության մեկնարկը տեղի են ունեցել հետևյալ իրողությունները. մարտի 6-ից մի քանի օր անց Եղվարդի ճակատամարտում օսմանյան բանակը հաղթում է Երևանի խանի զորքին, ապա գալիս Կարբի, որի ինքնապաշտպանությունը տևում է 40 օր: Այնուհետև կարբեցիներին զենքը վայր դնելու համար օսմանյան զորքի հրամանատարը 10 օր է տալիս, դրանից երեք օր անց օսմանյան բանակը հասնում է Երևան, որից հետո անցնում է յոթ օր նախքան Երևանի պաշարումը սկսելը: Փաստորեն մարտի 6-ից մինչև Երևանի պաշարումը անցել է 40+10+3+7 օր, այն է՝ երկու ամիս, որից հետո սկսված՝ Երևանի պաշարումը ևս, ըստ Աբրահամ Երևանցու՝ տևել է երկու ամիս: Ա. Այվազյանը իր այս հաշվարկից ելնելով՝ նշում է, որ նման ժամանակագրությամբ Երևանի պաշարումը մայիսի 5-ից շուտ սկսվել չէր կարող, իսկ այդ պարագայում քաղաքի պաշարումը հունիսի 7-ին ավարտվել չէր կարող³²²:

Փոխարենը Ա. Այվազյանը հավաստի է համարում իբրև թե օսմանյան պաշտոնական փաստաթղթերից օգտված թուրք հեղինակ Չելեբի-Ջադեի ժամանակագրական տվյալները՝ կատարելով նաև հիջրայի ամսաթվերի վերծանումը, ըստ որոնց՝ Ախուրյան գետի ափից օսմանյան բանակը հունիսի 13-ին շարժվել է դեպի Երևան, որի մատույցներում բանակել հունիսի 24-ին

³²¹ Տե՛ս Հակոբյան Վ., նշվ. աշխ., էջ 78-81:

³²² Տե՛ս Այվազյան Ա., Երևանի 1724 թ. պաշտպանության ժամանակագրության մասին // «Ուսումնաբանասիրական հանդես», 1991, N 1, էջ 94-95:

սկսելով քաղաքի պաշարումը: Հունիսի 26-ին օսմանյան բանակը գրավել է Երևանի՝ բերդից դուրս գտնվող հատվածը՝ վարոշը: Երևանի բերդը հանձնվել է սեպտեմբերի 23-ին³²³:

Ա. Այվազյանը հիշատակում է նաև անգլիացի վաճառական ու ճանապարհորդ Ջ. Հանվեյի տվյալներն այն մասին, թե օսմանյան բանակը Արաքսն անցել է հունիսի կեսերին և «Հայաստանի մայրաքաղաք Երևան» հասել հունիսի վերջին³²⁴: Ջ. Հանվեյը, սակայն, գրում է, որ Երևանի բերդը հանձնվել է հոկտեմբերի սկզբին³²⁵, որը ըստ Ա. Այվազյանի՝ հին ու նոր տոմարների տարբերության հետևանք է, քանի որ եվրոպացի հեղինակները արդեն օգտագործում էին նոր կամ գրիգորյան տոմարը: Ըստ ուսումնասիրողի՝ անհարժեշտ է հետհաշվարկ կատարել 11 օրով, քանի որ հենց այդքան էր կազմում հին ու նոր տոմարների տարբերությունը 1700-ական թթ.: Ստացվում է, որ Երևանը պաշտպանվել է երեք ամիս: Ըստ նրա՝ Երևանի 90-օրյա պաշարման մասին հիշատակում է նաև Կոստանդնուպոլսում Վենետիկի դեսպանը³²⁶:

Ա. Այվազյանը, այսպիսովը համարում է, որ Չելեբի-Չաղեի ժամանակագրական տեղեկությունները Երևանի պաշարման վերաբերյալ ստույգ են, թեև նկատում է, որ ըստ թուրք հեղինակի տվյալների՝ Երևանի բերդից դուրս գտնվող հատվածի՝ վարոշի գրավումը տեղի է ունեցել պաշարման երրորդ օրը, իսկ հայերի՝ ինքնապաշտպանությանը մասնակցության մասին ընդհանրապես տեղեկություններ չկան³²⁷: Պաշարման տևողության առումով Ա. Այվազյանը մեջբերում է Թ. Կրուշինսկու տեղեկությունը, թե Երևանը գրավվել է առաջին իսկ գրոհից, իսկ բերդը դիմադրել երկու ամիս: Նա կարծում է, որ Չելեբի-Չաղեի տեղեկությունը վարոշը գրավելու մասին վերաբերում է ոչ թե ամբողջ քաղաքի, այլ նրա որոշ թաղամասերի գրավմանը, քանզի Աբրահամ

³²³ Տե՛ս Թուրքական աղբյուրները, հ. Ա, էջ 142-150:

³²⁴ Տե՛ս “The Revolutions of Persia by Jonas Hanway”, p. 211:

³²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 213.

³²⁶ Տե՛ս Այվազյան Ա., նշվ. աշխ., էջ 96:

³²⁷ Տե՛ս նույն տեղում:

Երևանցին ևս նկարագրում է Ձորագյուղի և Կոնդի շրջանում ընթացող մարտերը, որտեղ կենտրոնացել էին Երևանի մյուս թաղերի և շրջակա գյուղերի բնակիչները: Ըստ էության, թուրք հեղինակը, նկարագրելով Երևանի պաշարումը, անդրադառնում է միայն Երևանի բերդի, իսկ Աբրահամ Երևանցին՝ միայն քաղաքի պաշարմանը՝ ստեղծելով տպավորություն, թե բերդում ամրացած պարսիկները չէին աջակցում հայերին³²⁸: Իրականում, ըստ Ա. Այվազյանի՝ հայերն ու պարսիկները համատեղ են պաշտպանել մայրաքաղաքը:

Համադրելով Աբրահամ Երևանցու և Չելեբի-Չադեի տեղեկությունները, Ա. Այվազյանը փորձում է ճշգրտել Երևանի պաշարման ժամանակագրությունը: Նա որպես հիմք է ընդունում «Եզիպտական զինվորների» մասնակցությունը Երևանի պաշարմանը: Նրա հաշվարկներով նրանք ժամանել են օգոստոսի 13-ին և մասնակցել Երևանի մատույցներում տեղի ունեցած հնգօրյա ճակատամարտին՝ 1724 թ. օգոստոսի 14-18-ը: Մահմեդականները, որ մինչ այդ Երևանի խանի հրամանով հայերի հետ մասնակցում էին քաղաքի պաշտպանությանը, բերդում են պատսպարվել ու հայերին մենակ թողել օգոստոսի 14-ին: Ի վերջո, հեղինակը կատարում է հետևյալ ամփոփումը. օսմանյան բանակը Երևանը պաշարել է 1724 թ. հունիսի 24-ին, Ձորագյուղը ընկել է սեպտեմբերի 8-ին՝ Էրզրումի Սարի Մուստաֆա փաշայի զորքի ժամանելու հաջորդ օրը, իսկ բերդը՝ սեպտեմբերի 23-ին³²⁹: Փաստորեն, Ա. Այվազյանը, մերժելով Աբրահամ Երևանցու ժամանակագրական տեղեկությունները, փաստում է, որ վարոշի ինքնապաշտպանությունը տեղի է ունեցել հունիսի 24-26-ին, երբ օսմանյան զորքերը գրավել էին որոշ թաղամասեր, այնուհետև քաղաքի մյուս թաղամասերի հայերի պաշտպանությունը քաղաքի մահմեդականների հետ միասին տեղադրում է հունիսի 26-օգոստոսի 14-ին, որից հետո վերջիններս լքել են հայերին՝ ամրանալով բեր-

³²⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 97:

³²⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 100:

դում: Մեպտեմբերի 16-ին կռիվները դադարում են և սկսվում են բերդը հանձնելու բանակցությունները³³⁰:

Ա. Այվազյանի ուսումնասիրության արդյունքների մասին նշելի է, որ ժամանակագրական առումով նա լիովին անտեսում է Աբրահամ Երևանցու տվյալները՝ դրանք համարելով ոչ հավաստի: Մինչդեռ իրականում Աբրահամ Երևանցու ժամանակագրության մեջ առկա են այնպիսի տվյալներ, որոնք ճշգրիտ են: Մասնավորապես, անդրադառնալով 1724 թ. հունիսի 7-ին օսմանյան բանակի վճռական գրոհին, նա նշում է, որ այն տեղի է ունեցել ուրբաթ օրը, ինչը ճշգրիտ է: Նմանապես քաղաքի պաշտպանության մասին հեղինակի մանրամասն տեղեկությունները հաճախ շարաթվա օրերի, մարտիկների քանակի և այլնի վերաբերյալ նշումներով, որևէ հնարավորություն չեն ընձեռում կասկածի ենթարկելու նրա ներկայացրած ժամանակագրական տեղեկությունները, քանի որ իրավիճակի վերաբերյալ նման խորքային տեղեկությունների տիրապետող հեղինակը անհնար է, որ չտիրապետեր դեպքերի ժամանակագրությանը: Ա. Այվազյանը, փաստորեն, ելնում է այն մեկնակետից, որ ժամանակագրական տվյալների հավաստիության առումով առավել ընդունելի են Չելեբի-Չադեի, այլ ոչ թե Աբրահամ Երևանցու տեղեկությունները: Ուսումնասիրողի մոտեցումը, փաստորեն, նաև հայ և թուրք հեղինակների տեղեկությունների պարտադիր համադրումն է՝ համակցման տարբերակով. նա փորձում է Երևանի հայերի ինքնապաշտպանությանն առնչվող Աբրահամ Երևանցու հիշատակությունները ամեն կերպ միահյուսել Երևանի բերդի պաշարման՝ Չելեբի-Չադեի տեղեկությունների հետ: Ուստի չնայած երկու հեղինակների աշխատություններում նման տեղեկություններ չկան, այդուհանդերձ ըստ Ա. Այվազյանի՝ զուգահեռաբար կռիվներ էին ընթանում Ձորագյուղի և Կոնդի հատվածներում և Երևանի բերդի շուրջ:

Տեսակետների նման բազմազանության պայմաններում, երբ «բանավեճը» կարծես այն բանի օգտին է, որ 1724 թ. Երևանում տեղի ունեցած կռիվներում պետք է առանձնացնել քաղաքի հա-

³³⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 97-100:

յերի ինքնապաշտպանությունը բերդի դիմադրությունից, զարմանալի է, որ 2010 թ. հրատարակված՝ «Հայոց պատմության» նոր ակադեմիական հրատարակության Գ հատորի Ա գրքի համապատասխան հատվածի հեղինակ Վ. Դիլոյանը հենվում է միմիայն Վ. Մարտիրոսյանի և Ա. Այվազյանի վերոբերյալ տեսակետների վրա՝ դրանք ենթարկելով ժամանակային վերաձևումների: Վ. Դիլոյանը ներկայացնում է հետևյալը. Երևանի խանը փակվում է բերդում, իսկ քաղաքի՝ հունիսի 7-ին սկսված պաշտպանությունը կազմակերպում են հայերը: Քաղաքի պաշտպանությունը տևում է երեքուկես ամիս: Կոստանդնուպոլսի ռուսական դիվանագիտական ներկայացուցիչ Ի. Նեպլունի ներկայացրած իրողությունները կապվում են հայերի ինքնապաշտպանության հետ: Օգոստոսի 18-ին տեղի է ունենում ինքնապաշտպանության ամենակատաղի մարտերից մեկը, երբ հարձակման ենթարկված Ձորագյուղի պաշտպանական ուժերը նահանջում են, սակայն Կոնդի բռնաներից ստանալով օգնություն՝ ետ են շարտում թշնամուն, որը վեց հազար զոհ է տալիս: 1300 զոհ են տալիս հայ մարտիկները: 1724 թ. օգոստոսի 22/23-ին հայոց կաթողիկոս Աստվածատուր Ա Համադանցու միջնորդությամբ Երևանի խանը հանձնում է բերդը³³¹:

Օսմանյան թուրքերի կողմից Երևանի գրավմանն անդրադաձել են նաև ադրբեջանցի հեղինակները: Վերջիններս հակված են Երևանի 1724 թ. կռվում լիովին անտեսելու քաղաքի հայերի ինքնապաշտպանության իրողությունը և ներկայացնելու միայն բերդի հետ կապված զարգացումները: Ն. Գյոզալովան, բոլորովին չանդրադառնալով հայկական սկզբնաղբյուրներին և ներկայացնելով սահմանափակ թվով եվրոպական սկզբնաղբյուրների տեղեկություններ, կարծիք է հայտնում, որ կռիվը կենտրոնաց-

³³¹ Տե՛ս «Հայոց պատմություն», հ. III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես-1918 թ.), գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես-XIX դարի վերջ), Երևան, 2010, էջ 40-42:

ված է եղել հիմնականում Երևանի բերդի շուրջ, որը սկսվել է 1724 թ. հունիսին և ավարտվել սեպտեմբերի 28-ին³³²:

Երևանի խանության պատմության վերաբերյալ կռեկտիվ մենագրության մեջ աղբյուրաբանական հեղինակները 1724 թ. Երևանի ինքնապաշտպանությունը ներկայացնում են որպես աղբյուրաբանների կողմից հայրենի հողի պաշտպանության կռիվ, քանի որ, ըստ նրանց «Իրևանի (Երևան – Ա. Ե.) պաշտպանության ժամանակ քաղաքի բնակչությունն ամբողջությամբ կազմում էին աղբյուրացիները»³³³: Մենագրությունն ավելի շատ քարոզչական-հակահայկական բնույթ ունի, որտեղ առաջ են քաշված հայերին վարկաբեկող և նրանց անհայրենիք ներկայացնել փորձող աղբյուրաբանական տեսակետները, որոնք, պարզ է՝ գիտական արժեք չունեն: Մասնավորապես, նշվում է, թե «Չուխուրսաղի (Արարատյան երկիր – Ա. Ե.) և Իրևանի բերդի ճակատագիրը հայերին բոլորովին չէր հետաքրքրում: Չունենալով մշտական հայրենիք, բայց վերաբնակվելով Ուշքիլիսեում (Էջմիածին – Ա. Ե.) և շրջակա տարածքներում՝ նրանք կազմված էին հիմնականում գրիգորյանական միսիոներներից: Այս վայրերում իրենց ամրապնդման նպատակով հայերը պատրաստ էին դավադրության դիմել երկիր ներխուժած յուրաքանչյուր արտաքին ուժի հետ: Այդ պատճառով էլ ո՛չ կաթողիկոսը, ո՛չ հայ միսիոներները չեն մասնակցել Երևանի պաշտպանությանը»³³⁴: Փորձ է կատարվում նաև ներկայացնելու, թե իբր օսմանյան թուրքերը հովանավորում էին հայերին³³⁵: Ակնհայտ է, որ աղբյուրաբան հեղինակների ներկայացրած տեսակետները պատմական իրականության հետ որևէ կապ չունեն, ինչն ի հայտ է գալիս ոչ միայն հայկական և օտար սկզբնաղբյուրների տեղեկություններին ծանոթանալիս, այլև վե-

³³² Ст' u Гезалова Н., Вопросы истории Азербайджана XVIII в. (на основе сведений англоязычных источников историографии), Баку – Москва, 2010, с. 57-60:

³³³ Махмудов Я. и др., Иреванское ханство: российское завоевание и переселение армян на земли Северного Азербайджана, Баку, 2010, с. 45.

³³⁴ Նույն տեղում:

³³⁵ Նույն տեղում:

րոնշյալ երկու ադրբեջանական մենագրություններում ներկայացված՝ Երևանի կռիվների նկարագրություններից, որոնք միմյանցից ամբողջությամբ տարբերվում են: Պատճառն այն է, որ առաջին հեղինակը փորձել է խնդիրը ներկայացնել եվրոպական սկզբնաղբյուրների և պատմագրության հիման վրա, ուստի ստացվել է երկրորդ մենագրության՝ հակահայկականությամբ տոգորված հեղինակների գրածից լիովին տարբերվող տեքստ. խոսք չկա այսպես կոչված ադրբեջանցիների կողմից Երևանը պաշտպանելու և Երևանի բնակչության այսպես կոչված ադրբեջանական լինելու մասին:

Հետազոտողների կարծիքների ներկայացումից պարզ է, որ Երևանի 1724 թ. կռիվների վերաբերյալ չկա միասնական և հստակ տեսակետ, ուստի անհրաժեշտ է սկզբնաղբյուրային նոր քննություն՝ հայոց պատմության այդ կարևոր դրվագի խորքային լուսաբանման և պատկերի ամբողջական բացահայտման նպատակով:

Երևան քաղաքի պատմական աշխարհագրությունը XVIII դ. սկզբին

Երևանի 1724 թ. կռիվների վերաբերյալ ամբողջական և ճշգրիտ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է ճշգրտել քաղաքի տարբեր հատվածների տեղադրությունը, իրականացնել սկզբնաղբյուրների քննական վերլուծություն, որի հիման վրա հնարավոր կլինի պարզաբանել քաղաքի ինքնապաշտպանության թե՛ բովանդակությունը և թե՛ ժամանակագրությունը:

Երևանի բերդը, վարոշը (արվարձան) և քաղաքը: Խնդրո առարկա ժամանակաշրջանում իրադարձությունների կենտրոնում Երևանի այն բերդն էր, որը 1827 թ. գրավեցին ռուսական զորքերը: Այն ուներ զույգ պարիսպ: Ըստ օսմանցի հեղինակ Չելեբի-Չադեի՝ Երևանը «մեկը մյուսից 35 քայլաչափ տարածությամբ երկու ամրակուռ և հաստատուն պարիսպներով էր շրջապատված»³³⁶: Ըստ ֆրանսիացի ճանապարհորդ Ժ. Շարդենի՝

³³⁶ Թուրքական աղբյուրները, հ. Ա, էջ 143:

բերդն ուներ երեք շարք պարիսպներ³³⁷: Դատելով թուրք հեղինակի այն տեղեկությունից, թե Երևանի բերդի «պաշարումը անպայմանորեն կապված էր վարոշի գրավման հետ»³³⁸, ինչպես նաև այն նշումից, որ օսմանյան զինվորների կողմից «վարոշի պարիսպների մոտ գտնվող և նրանց կից տները ամբողջովին հողին հավասարվեցին, և շուրջանակի պարիսպների շրջակայքը ազատ հրապարակի վերածվեց»³³⁹, կարելի է հստակեցնել, որ Երևանի բերդի երկու պարիսպներից արտաքինի հարևանությամբ տարածվում էր թուրք հեղինակների կողմից հիշատակվող վարոշը, որը Ա. Սաֆրաստյանի պարզաբանմամբ՝ հունգարերեն բառ է և ընկալելի է որպես քաղաքի ծայրամաս, արվարձան կամ շրջակայք³⁴⁰: Վարոշի առումով խիստ էական տեղեկություններ է պարունակում Էվլիյա Չելեբիի՝ Երևանի նկարագրությունը 1640-ական թվականներին. «Բերդը գտնվում է Ջանգի գետի եզերքին, ձգված է հարավից դեպի հյուսիս և շատ նեղ է: ...Ունի երեք հաստատուն երկաթե դարպաս: Թավրիզի դարպասը բացվում է դեպի հարավ, Մեյդանի դուռը՝ դեպի հյուսիս: Վերջինս կոչվում է նաև Յայլայի դարպաս...: Յայլայի դռնից դուրս գտնվող մեծ վարոշը կոչվում է Էսքի շեհիր (հին քաղաք – *Մ. Ե.*)»³⁴¹: Ակնհայտ է, որ Էվլիան Չելեբին ևս վարոշ է կոչում հենց բերդի շրջակա արվարձանը: Ըստ որում՝ օսմանյան բանակը վարոշը գրավում է հայկական թաղերի ռազմակալումից հետո՝ արդեն հունիսի երկրորդ կեսին, քանի որ «վարոշի երկու կողմի քարքարոտ լինելը և դիմացից խիստ ուժեղ թափով հոսող Ջանգի գետը, վարոշի նվաճումն ու գրավումը դժվարացնում էին»³⁴²: Մյուս կողմից, այն իրողությունը, որ վարոշը գտնվում էր բերդի պարսպի հարևա-

³³⁷ Տե՛ս “The Travels of Sir John Chardin into Persia and East Indies”, the First Volume, Containing the Author’s Voyage from Paris to Ispahan, London, 1686, p. 245:

³³⁸ Թուրքական աղբյուրները, հ. Ա, էջ 143:

³³⁹ Նույն տեղում:

³⁴⁰ Տե՛ս նույն տեղում, ծանոթագրություն:

³⁴¹ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», Դ, «Թուրքական աղբյուրներ», Գ, Էվլիյա Չելեբի, Երևան, 1967, էջ 84-85:

³⁴² Թուրքական աղբյուրները, հ. Ա, էջ 143:

նությանը, ևս հաստատում է, որ այն քաղաքի հետ առնչություն չուներ, և չպետք է այն շփոթել քաղաքի հետ, ինչպես արել է Ա. Այվազյանը: Ժ. Շարդենի տեղեկություններից հայտնի է, որ քաղաքը գտնվում էր բերդից թնդանոթային կրակոցի հեռավորության վրա³⁴³: Ճիշտ է՝ Ժ. Շարդենի տեղեկությունները վերաբերում են 1670-ական թթ. սկզբներին, որից հետո՝ 1679 թ., տեղի է ունեցել Երևանի երկրաշարժը, սակայն քաղաքի հատակագծում երկրաշարժից հետո առանձնապես զգալի փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Վերոհիշյալ տեղեկությունները հնարավորություն են տալիս ճշգրտելու Երևանի բերդի և վարոշի աշխարհագրական դիրքերը: Հրագրան գետի ձախ գառիվայր ափին՝ դեպի արևելք, գտնվում էր գույգ պարիսպներ ունեցող բերդը, իսկ նրա հյուսիսային դարպասից դուրս, արտաքին պարսպի հարևանությամբ, տարածվում էր վարոշը: Վերջինս, դատելով այն իրողությունից, որ Երևանի քաղաքային հատվածի ինքնապաշտպանության ժամանակ ամբողջ հայությունը, լքված պարսիկների կողմից, համախմբվել էր Ձորագյուղի և Կոնդի հատվածում, բնակեցված էր մուսուլմաններով: Վարոշից այն կողմ՝ դեպի հյուսիս, տարածվում էր Երևան քաղաքը, որն ըստ արդեն նշված հիշատակությունների՝ բնակեցված էր շուրջ 30 հազար զուտ հայկական ազգաբնակչությամբ: Փաստորեն, վարոշը հենց բերդի արվարձանն էր և ոչ թե քաղաքի ծայրամասը: XVIII դ. սկզբի դրությամբ Երևանի բերդի հարևանությամբ արդեն ձևավորվել էր սեփական փոքրիկ արվարձանը, որտեղ բնակվում էին մուսուլմաններ, իսկ Երևանի հայ ազգաբնակչությունը տեղակայված էր բուն Երևանում՝ ըստ թաղամասերի:

Հետաքրքրական է, որ խնդրո առարկա դեպքերի նկարագրության ժամանակ չեն հիշատակվում Երևանի մյուս բերդերը: Մասնավորապես Օիծեռնակաբերդը, որտեղ մարդկային կենսագործունեությունն անընդհատ շարունակվել է Ք. ա. XVII-XVI դա-

³⁴³ Sté u Chardin J., նշվ. աշխ., էջ 246:

րերից մինչև XVII դարը³⁴⁴, փաստորեն, XVIII դարի սկզբին արդեն լքված էր: Ըստ բյուզանդական սկզբնաղբյուրի՝ Ծիծեռնակաբերդը (Խելիդոնիոն), «որը գահավեժ լեռան վրա է կառուցված», բյուզանդական բանակը պաշարել է Անիի թագավորության կործանման տարում՝ 1045 թ., սակայն գրավել չի կարողացել³⁴⁵: Հետագայում, փաստորեն, Ծիծեռնակաբերդը կորցրեց իր նշանակությունը՝ տեղը զիջելով Սեֆյան Իրանի տիրապետության շրջանում կառուցված³⁴⁶ և աստիճանաբար ամրապնդված բերդին³⁴⁷:

Ձորագյուղ: Հին Երևանի կարևոր հատվածներից մեկը Ձորագյուղն էր, որը գտնվում էր Կոնդի հարևանությամբ՝ Հրազդան գետի ձախ ափին, ներկայիս Հաղթանակի կամրջից դեպի վեր՝ ընդգրկելով նաև Ս. Մարգիս եկեղեցու տարածքը: Չաքարիա սարկավազն ու Միմեոն Երևանցին այն կոչում են նաև Խնկելո ձոր կամ Խնկաձոր³⁴⁸:

Միմեոն Երևանցին Ձորագյուղի անապատի գտնվելու տեղանքի մասին գրում է. «Ի գեղոս յայս Ձորագեղո, որ կոչի Խնկաձոր, ունի սուրբ Աթոռս գմեծ պարսպապատ տուն մի իւր սարօքն, յորում գոն երկու Եկեղեցիք...: Այս երկոքեանս ևս՝ որք գոն ի մեջ միոյ մեծի պարսպի, և են շէն և ընդ իշխանութեամբ սրբոյ Աթոռ-

³⁴⁴ Տե՛ս Բաբայան Ֆ., Ժամկոչյան Ա., Ուրվագծեր հին Երևանի պատմության և հնագիտության, Երևան, 2015, էջ 6:

³⁴⁵ Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 10, «Բյուզանդական աղբյուրներ», Գ, Հովհաննես Սկիլիցես, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1979, էջ 149-150:

³⁴⁶ Տե՛ս Լաֆադարյան Կ., Երևան. միջնադարյան հուշարձանները և վիճակն արձանագրությունները, Երևան, 1975, էջ 96-97:

³⁴⁷ Ըստ հնագետ Հայկ Ավետիսյանի տվյալների՝ 1980-ական թթ. կեսերին այստեղ հայտնաբերվել է X-XIII դարերին պատկանող ջնարակված խեցեղեն:

³⁴⁸ Տե՛ս «Չաքարեայ սարկաւազի պատմագրութիւն», հ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 32, 51, «Ջամբո. գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէիցն, համաժողովեցեալ և տարագրեցեալ ի Միմեոնի ցաւահար և վշտակոծ կաթուղիկոսէ Երևանցոյ», Վաղարշապատ, 1873, էջ 204:

ռոյս, կոչին միով անուամբ Ձորագեղու անապատ, որ է հանդէպ բերթին Երևանու ի հիւսիսակոյսն, ի բարձրահայեաց գագաթանն մեծախոր ձորոյն, ու անցանի գետն Հրաստան»³⁴⁹:

Ի դէպ, Ի. Նեպլունի վերոհիշյալ նկարագրութիւնը, թէ Երևան քաղաքի կէտը շրջափակված է զառիթափ լեռներով, իսկ մյուս կէտը՝ գետով, ամենայն հավանականությամբ, վերաբերվում է քաղաքին և ոչ թէ բերդին, քանի որ նկարագրության մեջ ոչինչ նշված չէ բերդի առկայության մասին:

Փաստորեն, Երևան քաղաքը տարածվում էր բերդից և նրա վարոշից դեպի հյուսիս և հյուսիս-արևելք՝ ընդգրկելով մի քանի թաղամասեր և, մասնավորապէս, Ձորագյուղը, Կոնդն ու Հին Երևանը:

Քաղաքը հյուսիսում ավարտվում էր Կոնդ թաղամասի հյուսիսարևմտյան ծայրամասում գտնվող Երևանի հնագույն գերազմանոցով, որը զարգացած միջնադարի հայտնի պատմագիր և տոմարագետ Հովհաննէս Կոզեռնի անունից, որ թաղված էր այնտեղ, հայտնի էր «Կոզեռնի գերեզմանոց» անունով³⁵⁰:

XVIII դ. սկզբին Երևանի դիրքը և տեղանքը, որոնք ստիպում էին օսմանյան բանակին քաղաքի վրա գրոհել արևմտյան կողմից դեպի Ձորագյուղ, պատկերացնելու համար կարևոր է հիշել, որ բացի Հրազդան գետին հարող հատվածից, մյուս բոլոր կողմերում քաղաքը շրջապատված էր խիտ ծառաստաններով: Աբրահամ Երևանցին, ինչպէս տեսանք, գրում է, որ հին ժամանակներից ի վեր քաղաքի շուրջը տնկվել էին խիտ ծառաստաններ, ըստ որում՝ այնքան խիտ, որ պահպանում և պատսպարում էին քաղաքը:

Երևան քաղաքի և բերդի պաշտպանության ժամանակագրութիւնը

Ի սկզբանէ անհրաժեշտ է նշել, որ եթէ վստահում ենք Աբրահամ Երևանցու տեղեկութիւններին, իսկ դրանց չվստահելու

³⁴⁹ Միմենն Երևանցի, էջ 204:

³⁵⁰ Տե՛ս Ղաֆաղարյան Կ., նշվ. աշխ., էջ 47:

հաստատուն հիմքեր իրականում չկան, ապա ճիշտ են այն հեղինակները, որոնք կարծում են, որ Երևանի հայության և բերդի պարսկական կայազորի (նաև բերդի հայերի³⁵¹) վարած ինքնապաշտպանական կռիվները պետք է միմյանցից տարբերակել: Օսմանյան բանակը սկզբում՝ ապրիլից մինչև հունիսի 7-ը կռվում էր Երևան քաղաքի հայության դեմ՝ անպարիսպ քաղաքը գրավելու նպատակով, իսկ այնուհետև՝ արդեն վարոշի գրավումից հետո, պաշարում է բերդը՝ հունիսից մինչև սեպտեմբերի 22-ը:

Արբահամ Երևանցու ներկայացրած ժամանակագրության հավաստիության առումով անհրաժեշտ է նշել մի կարևոր իրողություն, որը զարմանալիորեն դուրս է մնացել հետազոտողների ուշադրությունից: Հայտնի է, որ Կոստանդնուպոլսի 1724 թ. հունիսի 12-ի ռուս-թուրքական պայմանագրով նախատեսված միջպետական սահմանագիծն Այսրկովկասում օսմանյան տիրապետության ներքո էր թողնում մասնավորապես Թիֆլիսը, Երևանը, Նախիջևանը, Գանձակը, Պարտավը և Արցախը³⁵²: Ընդ որում՝ օսմանյան կողմը ճանաչում էր ռուսական նվաճումները Այսրկովկասում և Կասպից ծովի հարավում, իսկ ռուսական կողմը՝ օսմանյան նվաճումները Այսրկովկասում: Նվաճումների այդ փոխադարձ ճանաչողությունն ակնհայտ է դառնում Բ. Նեպյունսի՝ 1724 թ. մայիսի 24-ի զեկուցագրից: Ներկայացնելով ռուս-թուրքական պայմանագրի նախագիծը՝ նա գրում է, որ պարսկական տերության հողերը նվաճելու համար սուլթանը մեծաթիվ զորքեր

³⁵¹ Այն, որ XVII դ. երկրորդ կեսին և XVIII դ. սկզբին Երևանի բերդում հայեր կային, հայտնի է հայկական և օտար սկզբնաղբյուրներից: Տե՛ս Զաքարիա սարկավագ, հ. Բ, էջ 89-90: Երևանի բերդի մուսուլմանները ասում էին, որ «մեք ահա դրացի ենք քրիստոնէից, և խառն ի խուռն կամք ընդ նոսա»: Ճիզվիտ Սոնինեն հաղորդում է, որ XVIII դ. սկզբին Երևանի բերդի չորս հազար բնակիչներից հազարը հայեր էին: Տե՛ս Nouveaux mémoires des missions de la campagne de Jésus dans le Levant, t. III, Paris, 1723, p. 37:

³⁵² Պայմանագրի ամբողջական տեքստը տե՛ս «Полное собрание законов Российской империи с 1649 года», т. VII, 1723-1727, СПб., 1830, N 4531, с. 503-508: Տե՛ս նաև «Армяно-русские отношения в первой трети XVIII века», сборник документов, т. II, часть II, с. 177-181:

է ուղարկել երեք ուղղությամբ³⁵³՝ արձանագրելով, որ, փաստորեն, օսմանյան գորքն արդեն ներխուժել էր պարսկական տերություն 1724 թ. մայիսի դրությամբ: Պարզվում է նաև, որ ռուս-թուրքական պայմանագրի շուրջ համաձայնությունը վերջնական տեքստով արդեն առկա էր 1724 թ. մայիսին, և թուրքական բանակն անցել էր իրեն հասանելիք տարածքների գրավմանը: Պայմանագրի դրույթների շուրջ նախնական համաձայնությունը կայացել էր դեռևս 1724 թ. մարտի 28-ի դրությամբ³⁵⁴, ուստի պատահական չէ, որ հենց մարտ ամսին օսմանյան բանակն Արաքս գետի ափից շարժվելով՝ սկսեց Արարատյան երկրի և Երևան քաղաքի գրավումը: Փաստորեն, նախքան պայմանագրի կնքումը կողմերը, ամենայն հավանականությամբ, փոխհամաձայնեցված ձևով ձգտում էին զբաղեցնել իրենց անցնող տարածքները: Ի դեպ, սա հանգուցային տեղեկություն է Երևանի ինքնապաշտպանության սկիզբը հստակեցնելու համար և, փաստորեն, հիմնավորում է Աբրահամ Երևանցու ժամանակագրական տվյալների արժանահավատությունը:

Իվան Կարապետի և Աստվածատուր Ա Համադանցի կաթողիկոսի՝ վերևում բերված գրությունները ևս հիմնավորում են այն, որ Երևան քաղաքը գրավվել է բերդի անկումից ամիսներ առաջ:

Երևանի կռիվների ժամանակագրության և բովանդակության ճշգրտման տեսակետից մյուս կարևոր իրողությունն այն է, որ Աբրահամ Երևանցու նման Չելեբի-Չաղեն ևս պատմում է, որ Երևանի ուղղությամբ օսմանյան բանակը շարժվել է Ախուրյան գետի ափից (բնագրում՝ Արփա-Չայիր): Ճիշտ է, թուրք հեղինակը այն թվագրում է հունիսի 13-ով, սակայն տեղեկության մեջ բացակայում են Եղվարդի ու Կարբիի դեպքերը և Երևանի պաշտպանությանը հայերի մասնակցության դրվագները: Բացի այդ, ըստ նրա՝ օսմանյան բանակը անմիջապես հասնում է Երևան ու անհապաղ ձեռնամուխ լինում բերդի պաշարմանը: Հավանական

³⁵³ Տե՛ս «Армяно-русские отношения в первой трети XVIII века», сборник документов, т. II, часть II, с. 181:

³⁵⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 158-172:

է կարծել, որ թուրք հեղինակի տեղեկություններում միաձուլված են դրանցից երկուսը՝ Ախուրյան գետի ափի բնակավայրից տեղաշարժը վաղ գարնանը և ամռան սկզբին Երևանի բերդի պաշարումը: Ի դեպ, Չելեբի-Չաղեն, ինչպես տեսանք, ներկայացնում է այն իրողությունը, որ Երևանի բերդի գրավումը անհնար կլիներ, եթե նախապես չգրավվեր նրա արտաքին պարսպի հարևանությամբ՝ Հրազդան գետի ափին գտնվող անառիկ վարոշը: Վերջինս գրավվել է հունիսի երկրորդ կեսին միայն: Վարոշի դիրքի հստակեցումից հետո, երբ դիտարկում ենք Չելեբի-Չաղեի նկարագրությունը, պարզվում է, որ Երևան քաղաքի հայության պաշտպանության մասին որևէ խոսք չկա: Թուրք հեղինակն ակնհայտորեն նկարագրում է միմիայն Երևանի բերդի պաշարման ու գրավման հետ կապված իրողությունները: Անշուշտ, ապրիլի 7-ից մինչև հունիսի 7-ը անպարհաս Երևան քաղաքի դեմ պատերազմելիս օսմանյան զորքը բոլորովին չէր գրոհել բերդի ու վարոշի վրա, թերևս, բավարարվելով հայերի դեմ կռիվների ընթացքում դրանց մեկուսացմամբ կամ պաշարմամբ, քանի որ միայն ամռանը, երբ հայերի դիմադրությունը հաղթահարվել էր և քաղաքն ընկել, օսմանյան բանակը ձեռնամուխ եղավ բերդի մերձակա տները վերացնելուն և պարսպի շուրջը բաց տարածք ստեղծելուն, ամենայն հավանականությամբ, արդյունավետ պաշարում իրականացնելու նպատակով: Ըստ որում՝ Թ. Կրուշինսկու այն տեղեկությունը, թե Երևանը գրավվել է առաջին իսկ գրոհից, իսկ 30 հազար հայեր կոտորվել են, իսկ բերդը դիմադրել է երկու ամիս, կարելի մեկնաբանել հետևյալ կերպ. այդ տեղեկության մեջ խտացված կերպով ներկայացված են տեղի ունեցած իրադարձությունները Երևանի շուրջ: Երևանի գրավման ժամանակ իրոք կոտորվել ու գերեվարվել էր շուրջ 30 հազար հայ, հայերի ինքնապաշտպանության անկումից հետո, հունիսի երկրորդ կեսին գրավվել է բերդի վարոշը կամ շրջակայքը³⁵⁵ այդ ուղղությամբ ձեռնարկած գրեթե առաջին իսկ գրոհով, որից հետո բերդը պաշտպանվել է շուրջ երկու ամիս:

³⁵⁵ Ա. Այվազյանը ևս նման կարծիք է արտահայտում: Տե՛ս Այվազյան Ա., նշվ. աշխ., էջ 96:

Հավելենք նաև, որ Աբրահամ Երևանցին և Չելեբի-Չաղեն հիշատակում են եգիպտացի երեք հազար օգնական զինվորների ժամանումը Երևան: Նրանց գալը հիշատակում է նաև Ի. Նեպլունը: Թուրք հեղինակը նշում է նրանց ժամանման ամսաթիվը՝ օգոստոսի 13-ը, իսկ ըստ Աբրահամ Երևանցու՝ նրանք եկել են մայիսին՝ հունիս 7-ից շուրջ 20 օր առաջ: Իսկ ռուս դիվանագիտական ներկայացուցիչը որևէ ժամանակագրական տվյալ չի հայտնում: Ա. Այվազյանի վերոհիշյալ տեսակետի հիմնավորման համար հայ և թուրք հեղինակների միանման տեղեկությունները և նրանցից երկրորդի նշած ամսաթիվը գլխավոր կովաններից են: Սակայն պետք է նշել, որ եթե Աբրահամ Երևանցին հաղորդում է լոկ նրանց գալու մասին, ապա Չելեբի-Չաղեն նրանց գալուն նախորդող դեպքերի մասին հավելյալ մանրամասներ է ներկայացնում: Ըստ նրա՝ Երևանը պաշարած զորքերին օգնության ուղարկված եգիպտացիների զորքը նախատեսված էր Թավրիզ ուղարկվելու համար, սակայն օսմանյան զորքի հրամանատարը որոշում է նրանց ուղարկել Երևան, և նրանք ժամանում են այնտեղ օգոստոսի 13-ին: Ըստ որում՝ Աբրահամ Երևանցու և Չելեբի-Չաղեի տեղեկությունները եգիպտացի զինվորների՝ ռազմական գործողություններում ընդգրկվելու վերաբերյալ այնուհետև լիովին տարբեր են: Ըստ Աբրահամ Երևանցու՝ նրանք անմիջապես ներխուժել են Չորագյուղ, բայց ջախջախվել կատաղի ճակատամարտում, իսկ ըստ Չելեբի-Չաղեի՝ նրանք կովել են խրամատներում՝ փոխարինելով հյուծված զինվորներին: Ըստ թուրք հեղինակի՝ ժամանելուց 22 օր անց նրանցից 300-ը գաղտնի գրոհով բարձրանում են Երևանի բերդի վրա, բայց զոհեր տալով ետ նահանջում³⁵⁶, իսկ Երևանի բերդը գրավվում է նրանց գալուց ավելի քան մեկուկես ամիս անց³⁵⁷: Մինչդեռ, ըստ Աբրահամ Երևանցու՝ քաղաքի գրավումը տեղի է ունեցել նրանց գալուց շուրջ 20 օր անց: Փաստորեն, բացի եգիպտացի զինվորների՝ Երևանի մատույցներ ժամանելուց և քանակից, պատմիչների տեղեկությունները բոլորովին միմյանց չեն համապատասխանում: Ամենայն

³⁵⁶ Տե՛ս Թուրքական աղբյուրները, հ. Ա, էջ 146-148:

³⁵⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 150-151:

հավանականությամբ, եգիպտացիների երեք հազարանոց զորախումբը մասնակցել է թե՛ Երևան քաղաքի (մայիսից հունիս) և թե՛ բերդի (օգոստոսից սեպտեմբեր) պաշարմանը: Քաղաքի գրավումից հետո այն ցանկացել են տեղափոխել Թավրիզ, սակայն հետո՝ օգոստոսի 13-ին, վերադարձրել են Երևան՝ բերդի գրավմանը մասնակցելու, քանի որ աչքի էր ընկել հայերի դիմադրությունը հաղթահարելիս: Ի. Նեպյունի վերոհիշյալ տեղեկությունները որոշակիորեն հիմնավորում են այս տեսակետը: Խոսելով այն մասին, որ Երևան էր ուղարկվել եգիպտական երեք հազարանոց զորախումբը, նա այնուհետև գրում է, որ Թավրիզ արշավող փաշայի զորքն այնքան էր թուլացել գրավված վայրերում կայազորներ թողելու և Երևան զորախումբ ուղարկելու պատճառով, որ հույս չկար, թե այն կկարողանար գրավել Թավրիզը: Կարելի է կարծել, որ Թավրիզ արշավող փաշան Երևան էր ուղարկել նախապես իր բանակին կցված եգիպտացիների զորախումբը, ինչից մեծապես թուլացել էր: Ինչ վերաբերում է եգիպտական զորախմբի թվաքանակին, ապա երեք հազար թվի հիշատակումը երեք տարբեր հեղինակների կողմից ոչ թե պարզ համընկնում է, այլ զորախմբի անձնակազմի թվաքանակն է, որը, անկասկած, համալրվում էր կռիվներում կորուստներ ունենալուց հետո:

Երևանի հայության ինքնապաշտպանության տևողությանն առնչվող հաջորդ կարևոր խնդիրն այն է, որ սխալ է հաշվարկվել դրա տևողությունը: Մասնավորապես, Ս. Պողոսյանը, Թ. Հակոբյանը և Ա. Միմոնյանը, ինչպես տեսանք, կարծում են, որ պաշտպանությունը սկսվել է ապրիլի 7-ին և ավարտվել հունիսի 7-ին, այն է՝ տևել է երկու ամիս: Հաշվարկի հիմքում Աբրահամ Երևանցու տեղեկությունն է այն մասին, որ Երևանի հայերի ինքնապաշտպանական կռիվները տևել են 60 օր: Սակայն հաշվարկը ցույց է տալիս, որ հունիսի 7-ին ավարտված 60-օրյա ինքնապաշտպանությունը պետք է սկսվեր ապրիլի 9-ին: Ի դեպ, Երևանի 60-օրյա պաշտպանության մասին գրում է նաև Ի. Նեպյունը: Ռուս հեղինակի տեղեկությունը կարող էր վերաբերվել նաև Երևանի հայերի ինքնապաշտպանությանը. խնդիրն այն է, որ, ինչպես կհամոզվենք, հեղինակի հաղորդումներում հյուսկեն

ձևով ներկայացված են իրողություններ Երևան քաղաքի և բերդի կռիվներից:

Ինչ վերաբերում է Ա. Այվազյանի կատարած հաշվարկին մարտի 6-ից սկսած, ապա այն այնքան միանշանակ չէ, քանի որ նա այդ օրվանից իր հաշվարկած 60 օրերում հերթականության սկզբունքով ընդգրկել է Կարբիի կռիվների 40 օրը և փաշայի՝ կարբեցիներին ներկայացրած վերջնագրի 10 օրը: Մինչդեռ հաշվարկը հարկ էր կատարել զուգահեռության սկզբունքով՝ Կարբիի կռիվները և Երևանի վրա արշավանքն ու քաղաքի ինքնապաշտպանությունը դիտարկելով որպես զուգահեռաբար ընթացող իրադարձություններ: Դրանով իսկ Աբրահամ Երևանցու ժամանակագրական տեղեկությունները դառնում են հավաստի: Խնդիրն այն է, որ եթե Աբրահամ Երևանցու՝ «Պատմութիւն թագայորի պարսից» ձեռագրում Կարբիի բնակիչների դեմ կովող օսմանյան հրամանատարներին 40 օր անց օգնության եկած փաշայի անունը բացակայում է և, բացի այդ, Կարբիի դեպքերի նկարագրությունից հետո նշվում է այն մասին, թե Երևանի ուղղությամբ օսմանյան զորքի արշավանքը սկսվում է Եղվարդից, որը հուշում է, որ օսմանյան բանակի մի մասը այնտեղ պարսկական բանակը ջախջախելուց հետո գնացել էր Կարբիի ուղղությամբ, իսկ մյուս մասը՝ Եղվարդում զորամասեր թողնելով՝ դեպի Երևան: Ամենայն հավանականությամբ, հենց այդ վերջին զորամասերն են օգնության գնացել Կարբիի դեմ կովող օսմանցիներին: Մինչդեռ «Պատմութիւն պատերազմացն» ձեռագրում, որը Աբրահամ Երևանցու երկի խմբագրված տարբերակն է, հստակ նշված է, որ Երևանի վրա Եղվարդից արշավող զորքն Աբդուլլա փաշայի բանակն էր, որ օգնության էր հասել Կարբին պաշարող օսմանյան զորքին: Աբրահամ Երևանցու տեքստում նշված հավելումները ստեղծում են այն տպավորությունը, որ Կարբիի դեմ կովող օսմանցիներին օգնության հասած փաշան այնուհետև Եղվարդից արշավել է Երևանի ուղղությամբ: Իսկ քանի որ նա օգնության էր հասել մարտի սկզբներից Կարբիի դեմ արդեն 40 օր մարտնչող օսմանցիներին և 10 օր ժամանակ տվել կարբեցիներին հանձնվելու համար, որից հետո միայն արշավել դեպի Երևան, ստացվում

է, որ, իրոք, ինչպէս կարծում է Ա. Այվազյանը, օսմանյան բանակը պետք է Երևան հասներ մայիսի սկզբին: Մինչդեռ, եթէ հավատարիմ ենք մնում Արբահամ Երևանցու բնագրին, ապա կապը Կարբիում կովող օսմանցիներին օգնության գնացած փաշայի և Եղվարդից Երևան արշաված զորքերի միջև բացակայում է, ուստի մեծ է հավանականությունը, որ Կարբիի դէպքերը և Երևանի ուղղությամբ օսմանյան բանակի գրոհը տեղի են ունեցել զուգահեռաբար: Իսկ քանի որ Արբահամ Երևանցին հիշատակում է Կարբի եկած «մեծ փաշային»³⁵⁸, ապա կարելի է կարծել, որ նկատի ունի Եղվարդի և Կարբիի ուղղությամբ գործող օսմանյան բանակի հրամանատարին:

Ի վերջո, անդրադառնալով Երևանի հայերի ինքնապաշտպանության բուն ժամանակագրությանը, որը, փաստորեն, սկսվել էր ապրիլի 9-ին, ապա անհրաժեշտ է նշել, որ Արբահամ Երևանցու վերոհիշյալ հաղորդումներով հնարավոր է հստակ ներկայացնել միայն մայիսի կեսերից մինչև հունիսի 7-ը ընկած ժամանակագրությունը: Վերջինս հստակեցվում է հունիսի 7-ից կատարված հետհաշվարկի միջոցով, քանի որ հունիսի 7-ի վճռական գրոհից առաջ 15 օր, սպասելով նոր օգնական ուժերի տեղ հասնելուն, թշնամին բավարարվել էր միայն քաղաքի պաշարմամբ՝ նոր գրոհներ չձեռնարկելով: Կարելի է եզրահանգել, որ մայիսի 23-ից սկսած Երևանի մատույցներում ակտիվ ռազմական գործողություններ չեն եղել: Դրանից-մեկ օր առաջ՝ մայիսի 22-ին, տեղի էր ունեցել թուրքերի գրոհը Կոնդի ուղղությամբ, երբ հայերը, արագորեն տեղափոխելով ուժերը Ձորագյուղից, պարտության էին մատնել թշնամուն: Դրանից մեկ կամ երկու օր առաջ՝ մայիսի 20-ին կամ 21-ին, տեղի է ունեցել Երևանի հայերի ինքնապաշտպանության մեծագույն ճակատամարտը՝ Ձորագյուղի կռիվը, որտեղ հայերը 1300 զոհ էին տվել՝ ոչնչացնելով թշնամու վեց հազար զինվորի: Պարտված թշնամին քշվել էր Հրազդան գետի մյուս ափը: Ըստ որում, դատելով Արբահամ Երևանցու հստակ ժամանակագրական տեղեկություններից՝ կարելի է ներկայացնել դէպքերի ընթացքը սկսած մայիսի 13-ից

³⁵⁸ Տե՛ս Արբահամ Երևանցի, էջ 24:

(հետհաշվարկը՝ մայիսի 20-ից). այդ օրը թշնամուն օգնության են եկել մեծաթիվ գորքեր: Երեք օր անց՝ մայիսի 16-ին, թուրքերն անցնում են Հրազդան գետը և մտնում Ձորագյուղ ամրանալով այնտեղ և սպանելով երկու հազար քրիստոնյայի: Խանի զինվորները, որոնք մինչ այդ կռվում էին հայերի կողքին, լքում են նրանց և ապաստանում բերդում: Այն, որ խանի պարսիկ զինվորները կռվում էին հայերի հետ միասին, հիշատակված է նաև Ի. Նեպյունի տեղեկագրերում: Իսկ այն, որ հայերի ու պարսիկների համատեղ կռիվը հենց քաղաքում է տեղի ունեցել և ոչ թե բերդում, հստակորեն արձանագրված է Ի. Նեպյունի տեղեկագրում, ըստ որի՝ քաղաքն անառիկ էր՝ շրջապատված գառիթափ լեռներով ու գետով, իսկ բերդի մասին խոսք չկա: Հետաքրքրական է, որ նրա հիշատակությունը քաղաքի հինգ հազար պաշտպանների մասին գրեթե լիովին համապատասխանում է Երևան քաղաքից հավաքագրված հայ զինվորների թվին: Փաստորեն, մեկ ամսից ավելի պարսից զինվորները կռվել են հայերի կողքին: Խնդիրն այն է, որ հայերի կողքին մարտնչելով՝ խանի զորքը դրանով հետաձգում էր գրոհը Երևանի բերդի ուղղությամբ, սակայն ակնհայտ է, որ մայիսի 16-ի կռվի ժամանակ նրանց թվացել է, թե Ձորագյուղի ինքնապաշտպանությունն այլևս անհույս է, և հեռացել են ու ապաստանել բերդում: Այդ պահից սկսած, փաստորեն, հայերի ինքնապաշտպանությունը դատապարտվել է: Հաջորդ օրը՝ մայիսի 17-ին, օսմանյան բանակը գրոհ չձեռնարկեց, որը հնարավորություն տվեց հայերին գորահավաք անցկացնելու: Այնուհետև, թուրքերին օգնության ուղարկվեցին եգիպտացի երեք հազար զինվոր, որոնք տեղակայվեցին Նորագյուղի մոտակայքում և մայիսի 20-ին գրոհեցին Ձորագյուղի վրա: Հայ պաշտպանները սկզբում նահանջեցին՝ կորցնելով Ձորագյուղի կեսը, բայց օգնության եկած բռնաների հետ միասին ամրապնդեցին իրենց շարքերը և, ինչպես տեսանք, վճռական կռվում ջախջախեցին թշնամուն՝ նրան ետ շարտելով գետի մյուս կողմը: Ինչ վերաբերում է ապրիլի 9-ից մինչև մայիսի 13-ը ընկած ժամանակաշրջանին, ապա ըստ Աբրահամ Երևանցու տեղեկությունների՝ թշնամին, չնայած մեծաքանակ կորուստներին, որևէ առաջխաղացում

չի ունեցել, որի պատճառով հուսահատվել և անընդհատ օգնություն է խնդրել:

Հունիսի 7-ի կռիվը հայոց պատմության ամենահերոսական դրվագներից է: Ավելի քան 60 հազարանոց օսմանյան բանակի դեմ հայ զինվորները կռվեցին մինչև երեկո, և թշնամին կարողացավ քաղաքը գրավել միայն այն ժամանակ, երբ մարտադաշտում ընկել էր վերջին հայ զինվորը: Դրանից հետո սկսվեցին թուրքերի բարբարոսություններն անպաշտպան բնակչության նկատմամբ:

Անհրաժեշտ է նշել, որ, դատելով վերոասացյալից, Ի. Նեպյունի տեղեկագրերում արտացոլված են ինչպես Երևան քաղաքի հայության ինքնապաշտպանությունը (առաջին երկու տեղեկագրերը), այնպես էլ բերդի գրավումը՝ թվագրված 1724 թ. սեպտեմբերի 22-ով:

Անդրադառնալով այն պնդմանը, թե Աբրահամ Երևանցու երկում Երևանի բերդի գրավման թվականը սխալ է, հարկ է նշել, որ դա այնքան էլ ճիշտ չէ: Ավելին, հեղինակի տեղեկությունն այն մասին, թե հունիսի 7-ին՝ քաղաքի անկումից հետո, Երևանի բերդը շարունակեց պաշտպանությունը մինչև օգոստոսի 21-ը³⁵⁹, որևէ ուսումնասիրող քննության չի առել: Միայն Ա. Այվազյանն է, որ այդ վկայությանն անդրադարձել է, այն էլ՝ ցույց տալու համար Աբրահամ Երևանցու ժամանակագրական տեղեկությունների՝ հավաստի չլինելը³⁶⁰: Մինչդեռ, եթե ընդունենք, որ Երևանի բերդի հանձնման ամսաթիվը՝ օգոստոսի 21-ը, ձեռագրական վրիպակ է, որն իրականում սեպտեմբերի 21-ն է, ապա ամեն ինչ կընկնի իր տեղը, քանի որ կստացվի, որ Աբրահամ Երևանցին ևս հիշատակում է բերդի անկման ամսաթիվը ճշգրիտ ձևով: Եթե առաջարկված ճշգրտումը հավանական է, ուրեմն կարելի է համարել, որ գուցե իրականում բերդը հանձնվել է հենց սեպտեմբերի 21-ին և ոչ թե 22-ին, ինչպես նշում է Ի. Նեպյունը: Ի դեպ, Կոստանդնուպոլսում գտնվող ռուսական դիվանագիտական ներկայացուցչի սխալվելու հավանականությունն ավելի մեծ է, քան ականատես

³⁵⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 35:

³⁶⁰ Տե՛ս Այվազյան Ա., նշվ. աշխ., էջ 93:

Աբրահամ Երևանցունը: Կարելի է փաստել, որ ուսումնասիրողները լիովին անտեսել են Աբրահամ Երևանցու երկուս առկա և նրա ներկայացրած ժամանակագրությունը հիմնավորող տեղեկությունը:

Երևանի պաշտպանությանը այսպես կոչված ադրբեջանցիների մասնակցության վարկածը

Երևանի ինքնապաշտպանությանը այսպես կոչված ադրբեջանցիների³⁶¹ մասնակցության վարկածն առաջ են քաշել և պաշտպանել Ա. Հովհաննիսյանը, որի տեսակետին արդեն անդրադարձ եղավ, Վ. Մարտիրոսյանը և Ջ. Արզումանյանը: Մասնավորապես, Վ. Մարտիրոսյանը շեշտադրում է Չելեբի-Ջադեի տեղեկություններն այն մասին, որ գերեվարված պարսից զինվորները պատմել են, թե Երևանի ժողովուրդը (պետք է լինի Երևանի խանը) օգնություն է խնդրել Գանձակի մուսուլմաններից, Տավուշում ժամանակավորապես բնակություն հաստատած թյուրք-թաթարական քոչվոր ցեղախմբի առաջնորդ Շեմս-էլ-Դինլիից (Վ. Մարտիրոսյանը նրան համարում է «առաջնորդը ադրբեջանական այն քոչվոր ցեղախմբի, որ բնակվում էր այժմյան Շամշադինի շրջանում»³⁶²), որոնք պատրաստվել են օգնության հասնել: Օգնության է պատրաստվել նաև Կախեթի թագավոր Կոստանդին Բ-ն (Մուհամմեդ Կուլի խանը)՝ լեզգի ու վրացի զինվորներով³⁶³: Սակայն հարկ է փաստել հետևյալը. քանի որ Չելեբի-Ջադեի տեղեկությունները վերաբերում են Երևանի բերդի պաշարմանը, որտեղ ամրացել էր Երևանի խանը՝ պարսից կայագորով,

³⁶¹ «Այսպես կոչված ադրբեջանցիներ» արտահայտությունը շեշտադրվում է այն պատճառով, որ XVIII դարում Այսրկովկասի քոչվոր թյուրք-թաթարները «ադրբեջանցի», իսկ Այսրկովկասի արևելյան հատվածն էլ Ադրբեջան դեռևս չէին կոչվում:

³⁶² Տե՛ս Մարտիրոսյան Վ., Անդրկովկասի ժողովուրդների համագործակցությունը և Երևանի 1724 թվականի պաշտպանությունը, էջ 188, ծանոթ. 8:

³⁶³ Տե՛ս նույն տեղում: Տե՛ս նաև Թուրքական աղբյուրները, հ. Ա, էջ 141-142:

ուրեմն համագործակցությունը, եթե այդպիսին կար, ոչ թե հայերի, վրացիների և այսպես կոչված աղբբեջանցիների մեջ էր, այլ Երևանի խանի, վրացիների և քոչվոր մուսուլմանների: Ի. Նեպյունը ևս ակնարկում է այն մասին, որ հայերից ու պարսիկներից բացի, օսմանցիների դեմ Երևանում մարտնչել են նաև վրացիներ³⁶⁴: Ճիշտ է, Վ. Մարտիրոսյանը փորձում է ներկայացնել այսպես կոչված աղբբեջանցիների մասնակցությունը Երևանի բերդի պաշտպանության կռիվներին Երևանի խանի կողմում, սակայն իրականում նա որևէ հստակ փաստ չի կարողացել բերել³⁶⁵:

Վ. Մարտիրոսյանի օրինակով Ջ. Արզումանյանը ևս խոսում է հայերի և այսպես կոչված աղբբեջանցիների համագործակցության և նույնիսկ դաշինքի մասին³⁶⁶:

Ի միջի այլոց հավելենք, որ Աղբբեջանում հրատարակված վերոհիշյալ կոլեկտիվ մենագրության հեղինակները Երևանի ինքնապաշտպանությունն օսմանյան բանակից վերագրել են բացառապես այսպես կոչված աղբբեջանցիներին: Ինչպես տեսանք, նման տեղեկություն չկա և ոչ մի սկզբնաղբյուրում:

Ճիշտ է, Վ. Մարտիրոսյանն իր տեսակետի հիմնավորման համար Աբրահամ Երևանցու երկը չի հիշատակում, սակայն պետք է նշել, որ Աբրահամ Երևանցին երբեմն խոսում է Երևանի բերդի «թուրքերի» մասին, որոնք օգնել են հայերին և մարտնչել ընդդեմ օսմանյան զորքերի: Օրինակ՝ «Երեւանայ խանն, որ կասեն Միհրայլի խան, հրայման ետ, քաղաքի թուրքն եկավ քրիստոնի մեջն մտավ, կռիվ արին օսմանցուն հետ՝ մինչ ի կ [=60] օրն»³⁶⁷: Ինչպես տեսանք, ըստ Մ. Կարապետյանի՝ խոսքը Երևանի մուսուլմանների մասին է: Մյուս անգամ, երբ բերդից Հայոց կաթողիկոս Աստվածատուր Ա Համադանցու մոտ ցանկանում են մարդ ուղարկել, հեղինակը գրում է, թե «Բերդի թուրքն ոչ կարէ դուս լինել ի բերդէն, մանավաղ՝ թէ որ թուրքն բերթիցն դուրս

³⁶⁴ Տե՛ս Մարտիրոսյան Վ., Անդրկովկասի ժողովուրդների համագործակցությունը և Երևանի 1724 թվականի պաշտպանությունը, էջ 189-190:

³⁶⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 189-191:

³⁶⁶ Տե՛ս Արզումանյան Ջ., նշվ. աշխ., էջ 30-32:

³⁶⁷ Աբրահամ Երևանցի, էջ 25:

գտանի, օսմանցին շուտով կու ըսպանէ, վախում են մարդ դրկել կաթիղիկոսին»³⁶⁸: Տպավորություն է, որ ինչ-որ թուրքեր խանի հրամանով հայերի կողքին մարտնչել են օսմանյան բանակի դեմ, իսկ հետո Հայոց կաթողիկոսի մոտ գնալիս երկնչել օսմանյան զինվորներից, որոնք նրանց կսպանեին: Այնուհետև, երբ բերդը հանձնվում է, օսմանյան փաշան հրամայում է. «ինչ որ թուրք կայ բերդին մէջն բովանդակ՝ դուս լինին»³⁶⁹: Պարզ է, որ խոսքը ոչ թե հենց թուրքերի մասին է, այլ պարսից զինվորների և բերդում բնակվող պարսիկների: Վերջիններիս մասին հիշատակում է Ժ. Շարդենը՝ խնդրո առարկա դեպքերից շուրջ 50 տարվա վաղեմությամբ նկարագրության մեջ. ըստ նրա՝ բերդում բնակվում էին միայն բնիկ պարսիկներ³⁷⁰: Նույնը 1700 թ. դրությամբ տեղեկացնում է գերմանացի ճանապարհորդ Գ. Շիլինգերը³⁷¹: Աբրահամ Երևանցին, առհասարակ, հետևողական չէ մահմեդականների մասին իր հիշատակություններում: Հայության ինքնապաշտպանության ծանրագույն պահերից մեկը նկարագրելիս, անդրադառնալով հայերին խանի հրամանով օգնության եկած «թուրքերին», նա գրում է, թե «...տաչիզըն փախավ մտավ բերդի մէջն, քրիստոնայ մնաց ի քաղաքի մէջն»³⁷²: Նրա երկի խմբագրված տարբերակում նկատվել է հեղինակի «թյուրիմացությունը» և կատարվել է շտկում՝ «թուրքերի» փոխարեն գրելով «պարսիկներ»³⁷³:

Ամփոփում

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ճիշտ են այն հետազոտողները, որոնք առաջարկում են Երևան քաղաքի հայության ինքնապաշտպանությունն առանձնացնել Երևանի բերդի

³⁶⁸ Նույն տեղում, էջ 33:

³⁶⁹ Նույն տեղում, էջ 35:

³⁷⁰ Տե՛ս Chardin J., նշվ. աշխ., էջ 245:

³⁷¹ Տե՛ս Schillinger F. C., *Persianische und Ost-Indianische Reis, Nürnberg, 1707*, S. 118:

³⁷² Աբրահամ Երևանցի, էջ 26:

³⁷³ Տե՛ս նույն տեղում, էջ 100-101, 109-110:

պաշտպանությունից, որը սկսվել է հայերի ինքնապաշտպանության ավարտից հետո և շարունակվել մինչև սեպտեմբերի 22-ը: Երևանի հայության ինքնապաշտպանությունը սկսվել է ապրիլի 9-ին և ավարտվել հունիսի 7-ին՝ տևելով 60 օր: Մայիսի 20-ին տեղի է ունեցել Երևանի հայության ինքնապաշտպանության ամենախոշոր՝ Ձորագյուղի ճակատամարտը, որտեղ հայերը, 1300 զոհ տալով, ջախջախել են օսմանյան բանակն ու ստիպել նահանջել՝ պատճառելով վեց հազար զինվորի կորուստ: Երևանի հայության ինքնապաշտպանական ջոկատների դեմ կենտրոնացնելով ավելի քան 60 հազարանոց բանակ՝ օսմանյան թուրքերը հունիսի 7-ի առավոտյան ներխուժել են քաղաք: Հայկական ինքնապաշտպանական խմբերը կռվել են մինչև վերջ՝ փորձելով փրկել ժողովրդին: Քաղաքը թալանելուց և բնակչությանը կոտորելուց կամ գերեվարելուց հետո օսմանյան բանակը հարձակվել է Երևանի բերդի փոքրիկ արվարձանի՝ վարոշի վրա, գրավել ու ոչնչացրել այն, որից հետո երեք ամիսների ընթացքում բերդը պաշարված է եղել: Այն հանձնվել է Հայոց Աստածատուր Ա Համադանցի կաթողիկոսի (1715-1725) միջնորդությամբ 1724 թ. սեպտեմբերի 21-ին:

Հարկ է նաև շեշտադրել, որ Երևանի ինքնապաշտպանությանը այսպես կոչված ադրբեջանցիների մասնակցության, առավել ևս նրանց՝ հայերի ու վրացիների հետ համագործակցության վարկածը շինծու է և հիմնավորումներից զուրկ: Քոչվոր թուրք-թաթարական ցեղախմբերի հետ Երևանի խանի հարաբերությունները հնարավորություն չեն ընձեռում փաստելու հայերի և այսպես կոչված ադրբեջանցիների համագործակցությունը:

Arman Yeghiazaryan

THE SELF-DEFENSE OF YEREVAN IN 1724

The heroic self-defense of the Armenians of Yerevan in 1724 is one of the most memorable events in the history of Armenia. The study shows that researchers are right to propose separating the self-defense of the Armenians of the city of Yerevan from the defense of the Yerevan fortress, which began after the end of the self-defense of the Armenians of the city and lasted until September 22. The self-defense of the Armenians in Yerevan lasted 60 days, starting on April 9 and ending on June 7. On May 20, on the outskirts of Yerevan, in Dzoragyugh, the largest self-defense battle of the Armenians of Yerevan took place, where the Armenians, at the cost of the lives of 1,300 soldiers, defeated the Ottoman army and forced it to retreat, causing loss of 6,000 soldiers. Having concentrated an army of more than 60,000 people against the self-defense forces of the Armenians of Yerevan, the Ottoman Turks invaded the city on the morning of June 7. Armenian self-defense units fought to the end, trying to save people. Having plundered the city, killed and captured the population, the Ottoman army attacked the small suburb of the Yerevan fortress, captured and destroyed it, after which the Yerevan fortress was under siege for three months. The Yerevan fortress surrendered to the Turks through the mediation of the Armenian Catholicos Astvatsatur Hamadantsi (1715-1725) on September 21, 1724.

Բաժին երկրորդ

ԵՐԵՎԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐԻ ԵՎ ՆՈՐ
ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Արման Եղիազարյան

ԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿՆ ՈՒ ԿԱԶՄԸ 1590-
1724 ԹԹ.

Երևանի բնակչության թվի և կազմի ուսումնասիրության կարևորությունը

XVI-XVIII դդ. Երևանի բնակչության ազգային կազմի և թվաքանակի ուսումնասիրությունը կարևորվում է մի կողմից քաղաքի պատմության խորքային ուսումնասիրության տեսանկյունից, իսկ մյուս կողմից՝ այն պատճառով, որ այն հաճախ հայտնվում է մեր ռիսերիմ հարևանների կողմից շրջանառվող պատմագիտության հետ կապ չունեցող «բանավեճերի» կիզակետում: Չարմանալիորեն, չնայած Երևանի բնակչության մասին հայ և օտար հեղինակների (պատմիչներ, ճանապարհորդներ և այլն) բազմաթիվ հստակ տեղեկություններին, հատկապես XVI-XVIII դարերում քաղաքի բնակչության թվաքանակի և ազգային կազմի վերաբերյալ ի հայտ են եկել մի շարք հետազոտություններ, որոնք նպատակ են հետապնդում խեղաթյուրել ճշմարտությունը և խնդիրը ներկայացնել կողմնակալ դիրքերից: Մասնավորապես, փորձ է կատարվել «ապացուցելու», թե իբր XVI-XVIII դարերում Երևանի բնակչության գերակշիռ մասը եղել են այսպես կոչված աղբբեջանցիները, իսկ հայերը փոքրամասնություն են կազմել:

Ներկայումս, երբ Երևանի պատմության խեղաթյուրումը հասել է մեծ ծավալների, կարևորվում է հայոց հինավուրց մայրաքաղաքի պատմության և, հատկապես, ազգաբնակչության թվի ու կազմի վերաբերյալ նոր ուսումնասիրությունների իրականացումը: Պատմական ճշմարտությունը գիտական և ընթերցող հանրությանը ներկայացնելը, այդպիսով, զուտ գիտականից բացի, ունի նաև քաղաքական կարևոր նշանակություն:

Երևանի բնակչությունը XVI դ. վերջին

Խնդրի լուսաբանման առումով կարևոր է XVI դարի վերջի իրադարձությունների քննությունը: 1578 թ. օսմանյան զորքը Լալա Մուստաֆա փաշայի գլխավորությամբ ներխուժեց Վրաստան և այնտեղից անցավ Արևելյան Այսրկովկաս: Փաշայի հրամանով Էրզրումի Հուսեյն փաշան 1579 թ. աշնանը 40 հազար բանակով արշավեց դեպի Երևան: Թեև օսմանյան զորքը կարողացավ ներխուժել քաղաք, բայց պարսից Մուհամմադ խանի կատաղի դիմադրության պատճառով այն դադարեցրեց ու հեռացավ Էրզրում³⁷⁴: Մակայն գրավման մեկ օրն էլ բավական էր, որ օսմանյան զորքը քաղաքում անասելի բարբարոսություններ կատարեր: Ժամանակագրություններից մեկում այս առթիվ կարդում ենք. «զԵրևան քաղաք գերեցին ԺԸ (18) գեղով, և ցուեցին զկին և զտղայ յամենայն աշխարհ»³⁷⁵:

Զաքարիա սարկավագի տեղեկության համաձայն՝ թուրքերը քաղաքից և շրջակա գյուղերից գերի են տարել 60 հազար մարդ³⁷⁶: Ըստ Դավիթ Բաղիշեցու՝ Երևանից գերվել է 30 հազար մարդ³⁷⁷: Ամենայն հավանականությամբ, թվերի այս տարբերությունը վերագրելի է այն իրողությանը, որ առաջին դեպքում հիշատակված է Երևանից և 18 գյուղերից, իսկ երկրորդը՝ միայն քաղաքից գերեվարվածների թվաքանակը: Ըստ թուրքական աղբյուրի՝ միայն Երևան քաղաքից գերեվարվել է 20 հազարից ավելի կին ու երեխա³⁷⁸, որից կարելի է բխեցնել, որ գերեվարվածների

³⁷⁴ Տե՛ս Փափազյան Հ., Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԶ դ.) // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1973, N 6, էջ 31:

³⁷⁵ «Մանր ժամանակագրություններ» XIII-XVIII դդ., հ. I, կազմեց՝ Վ.Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 172:

³⁷⁶ Տե՛ս «Զաքարեայ սարկավագի պատմագրութիւն» հ. Ա, Վաղարշապատ, 1870, էջ 13:

³⁷⁷ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ» XIII-XVIII դդ., հ. II, կազմեց՝ Վ.Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 355:

³⁷⁸ Տե՛ս Peçevi İbrahim Efendi, Peçevi Tarihi, c. II. Hazırlayan Prof. Dr. Bekir Sıtkı Baykal, Ankara, 1982, s. 53.

ընդհանուր թիվը կազմել է շուրջ 30 հազար մարդ: Նշվածից կարելի է բխեցնել, որ Երևան քաղաքի բնակչությունն այդ շրջանում կազմում էր շուրջ 30 հազար մարդ:

1590 թ. Սեֆյան Իրանի նկատմամբ հաղթանակի հասնելուց հետո օսմանյան իշխանությունը ի թիվս այլ գրավված բնակավայրերի ու շրջանների՝ նաև Երևանում իրականացրեց աշխարհագիր՝ կարգավորելու հարկերը: Կազմվեցին հարկացուցակներ, որոնք մասնավորապես XVI դ. վերջի Երևանի պատմական ժողովրդագրության կարևոր սկզբնաղբյուրներ են: Բռնագաղթի հետևանքները զգալի են հարկացուցակի քանակական տվյալներում: Չնայած դրան, հայերը, թեև քանակապես խիստ նվազած, շարունակում էին լինել Երևանի բնակչության բացարձակ մեծամասնությունը:

Ըստ դրանց թուրքերն ապրում էին ամրոցում, իսկ հայերը՝ քաղաքի թաղամասերում: Երևանի ամրոցում 1590 թ. դրությամբ կային 29 մուսուլման հարկատուներ՝ իրենց ընտանիքներով, ընդհանուր առմամբ՝ 145 մարդ³⁷⁹: Քաղաքի քրիստոնյաները, որոնք դատելով անուններից, հայեր էին, բնակվում էին քաղաքի վեց թաղամասերում՝ Մարտիրոսի, Միրզայի, Քուչուք Քայքըլի, Իսալուի, Բյորեքչի Օհանի, Դերեքյոյի (Ձորագյուղ)³⁸⁰: Ըստ թաղամասերի՝ քրիստոնյա հարկատուները բաշխված էին հետևյալ ձևով. Մարտիրոսի թաղամաս՝ 88 հարկատուներ՝ իրենց ընտանիքներով (444 մարդ) և մեկ ամուրի հարկատու, այսինքն՝ 445 մարդ, Միրզայի թաղամաս՝ 46 հարկատուներ՝ իրենց ընտանիքներով (238 մարդ) և երկու ամուրի հարկատու, այսինքն՝ 240 մարդ, Քուչուք Քայքըլի թաղամաս՝ 94 հարկատուներ իրենց ընտանիքներով (470 մարդ), Իսալուի թաղամաս՝ 51 հարկատուներ՝ իրենց ընտանիքներով (225 մարդ), Բյորեքչի Օհանի թաղամաս՝ 54 հարկատուներ՝ իրենց ընտանիքներով (270 մարդ), Դերեքյոյ թաղամաս՝ 41 հարկատուներ՝ իրենց ընտանիքներով (205 մարդ), ընդամենը՝ 374 հարկատուներ՝ իրենց ընտանիքներով (բոլոր ընտանիքների անդամների թիվը՝ 1852) և երեք ամուրի հարկատու,

³⁷⁹ “Başbakanlık Osmanlı Arşivi”, Tapu Tahrir Defteri, 633, s. 24.

³⁸⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 24-28:

ընդհանուր առմամբ՝ 1855 քրիստոնյա, որոնք բացառապես հայեր էին³⁸¹: Պարզ է, որ քաղաքի հայության թվի այդ կտրուկ անկումը նախապատերազմյան իրավիճակի հետ համեմատած այն էր, որ նրա հիմնական հատվածը բռնագաղթեցվել էր: Սակայն նույնիսկ այդ վիճակում հայերը քաղաքում բացարձակ մեծամասնություն էին: Ընդհանուր առմամբ, թուրքերը քաղաքում կազմում էին ընդամենը յոթ տոկոս³⁸²:

Երևանի բնակչության թվակազմը XVII դ.

Կորցրած տարածքները վերադարձնելու նպատակով Սեֆյան Իրանի Շահ Աբաս Ա-ն (1587-1629) 1603 թ. պատերազմ սկսեց օսմանյան բանակների դեմ:

1604 թ. հունիսին 8-ամյա պաշարումից հետո Երևանի բերդը գրավվեց պարսկական բանակի կողմից: Բացի թշնամու կայազորից (5-6 հազար զինվոր³⁸³)՝ շահն ազատ արձակեց նաև Երևանի 300-400 տուն մահմեդականներին³⁸⁴: Այնուհետև, ըստ թուրքական աղբյուրի՝ սեֆյանների զորքը Երևանի բերդը «ավերեց, այրեց ու հողին հավասարեցրեց»³⁸⁵:

Արարատյան երկրի ղեկավարումը (բեկլարբեկությունը) շահը հանձնեց կոիվներում աչքի ընկած Ամիր Գունա խանին: Բայց խանն իր պաշտոնը վարելու ժամանակ այդպես էլ չունե-

³⁸¹ Տե՛ս նույն տեղում, էջ 28-35: Երևանի բնակչության վերաբերյալ տե՛ս Միրզաբեկյան Գ., Երևանի նահիեն 1590 թ. օսմանյան հարկացուցակներում, «Երևան 5» գիտական հոդվածների ժողովածու, 2018, էջ 59-66:

³⁸² Babacan Hasan, 1590 Tarihinde Revân'ın Sosyal ve Ekonomik Yapısı, Süleyman Demirel Üniversitesi Fen-Edebiyat Fakültesi Sosyal Bilimler Dergisi, sy. 1, Isparta, 1995, s. 44-51.

³⁸³ Տե՛ս «Annals of the Turkish Empire», from 1591 to 1659 of the Christian Era by Naima. Translated from the Turkish by Ch. Fraser, vol. I, London, 1832, p. 264, «Джихан-Нюма» и «Фезлеке» Кятиба Челеби как источник по истории Армении (XVII в.), предисловие, перевод и комментарии А. А. Папазяна, Ереван, 1973, с. 147.

³⁸⁴ Տե՛ս Peçevi İbrahim Efendi, Peçevi Tarihi, c. II, էջ 245-246:

³⁸⁵ Նույն տեղում, էջ 246:

ցավ: Նրա գործը ասպատակելով հասել էր Կարս ու Զարիշատ, երբ լուր հասավ, որ օսմանյան հսկա բանակը Ջղալ-օղլի Սինան փաշայի գլխավորությամբ պատրաստվում է Մշո դաշտից արշավել դեպի Երևան, որից հետո սկսվեց սեֆյանների գործի նահանջը: Այդ պայմաններում խանը կատարեց շահի հրամանը՝ իրականացնելով իրեն հանձնված շրջանների հայ ազգաբնակչության տեղահանությունը³⁸⁶: Ըստ Առաքել Դավրիժեցու՝ նա պետք է տեղահաներ հայերին «յատուկ քաղաքին Երևանայ և երկրին Արարատու և նորին մերձակայ մասնավոր գաւառացն»³⁸⁷: Նույնը ներկայացված է XVIII դ. սկզբի մի կաթոլիկ միսիոների տեղեկություններում³⁸⁸:

Շուտով 1606 թ. սեֆյաններին հաջողվեց վճռական ճակատամարտում պարտության մատնել օսմանյան բանակին, որից հետո՝ 1607 թ. նրանք տիրեցին Հայաստանի ու Վրաստանի ընդարձակ շրջանների: Ձեռք բերված ավարն ամբողջությամբ տեղափոխվեց Երևանի բերդ: Շահի հրամանով բերդը կրկին վերանորոգվեց³⁸⁹:

Ամիր Գունա խանը այնուհետև 1607-1610 թթ. զբաղվեց Երևանը և հարակից շրջանները վերականգնելու և վերաբնակեցնելու աշխատանքներով: Ըստ թուրք հեղինակի՝ «Ամիր Գունա խանը գնաց բնակություն հաստատելու այդ ավերակ ու անմարդաբնակ վայրում, որտեղ շինության ու կենդանության հետք անգամ չէր մնացել: Իր հպատակներից և ենթակա մարդկանցից նրանց, որոնց նկատմամբ նա առավել վստահություն ուներ, տեղավորեց բերդի ներսում, իսկ մյուսներին բնակեցրեց բերդից

³⁸⁶ Տե՛ս «Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցոյ», Վաղարշապատ, 1896, էջ 40: Arak'el of Tabriz, Book of History, Introduction and Annotated Translation from Critical Text by George A. Bournoutian, Mazda Publishers, Costa Mesa, California, 2010, p. 58-59.

³⁸⁷ Նույն տեղում: Ibid, p. 58.

³⁸⁸ Տե՛ս 'u "Voyages d'un Missionnaire de la Compagnie de Jesus [Jacques Villotte], en Turquie, en Perse, en Armenie, en Arabie, & en Barbarie", Paris 1730, p. 578.

³⁸⁹ Տե՛ս Փափազյան Հ., Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դար), էջ 31:

դուրս [քաղաքում] և ավերակ գյուղատեղերում»³⁹⁰: Բացի նրա հավատարիմ հպատակներից, որ տեղափոխվում էին Ատրպատականից և այլ վայրերից ու բնակեցվում բերդում, նա այստեղ էր բերում ու հատկապես բերդից դուրս գտնվող բնակավայրերում տեղավորում նաև մեծաթիվ հայերի ասպատակված Բարձր Հայքից, մասամբ նաև՝ Տարոնից և Վասպուրականից: Ըստ Չաքարիա սարկավագի՝ Ամիր Գունա խանը «Բ անգամ գնաց ի գաւառ Կարնու, աւերեաց և գերեաց գերկիրն, և եհաս մինչ ի դուռն բերդին. և զգերիսն բերեալ յերկիրն Երևանայ բնակեցոյց: Այլ և գնաց կողմամբն Վանայ և Սշոյ. և գերեալ զնոսա՝ եբեր զգերիսն և բնակեցոյց ի նահանգն որ ի մէջ Երևանու [և Էջմիածնայ] ի դաշտն»³⁹¹: Փաստորեն, Երևանում և Արարատյան երկրում վերաբնակեցվել են հիմնականում Բարձր Հայքի բռնագաղթեցված հայեր, իսկ Վասպուրականից ու Տարոնից բռնագաղթեցվածների տեղավորել են Երևանի և Էջմիածնի միջև ընկած բնակավայրերում, այդ թվում՝ Փարաքար գյուղում:

Ուշագրավ է, որ 1608 թ. Երևանը հիմնականում հաղթահարել էր պատերազմների հետևանքները և վերականգնել իր նախկին վիճակը: Ըստ Իսպանիայի թագավորի պատվիրակ Անտոնիո դե Գուվեայի 1608 թ. հիշատակության՝ «Երևանը հանդիսանում է ամբողջ Մեծ Հայքի կարևորագույն քաղաքն ու մայրաքաղաքը, ամբողջովին բնակեցված է հայերով, հողը մշակելի է ու բերրի և հարուստ ամեն տեսակի մթերքներով»³⁹²: Այստեղ բացի բարեկեցիկ վիճակի ներկայացումից, հույժ կարևոր է այն, որ Երևանն այդ շրջանում բնակեցված էր հայերով, այսինքն՝ ժողովրդագրական առումով ևս քաղաքում զգալիորեն հաղթահարվել էին մեծ բռնագաղթի հետևանքները: Մակայն բնակչությունը Երևանում էապես նոսրացել էր, որն էլ արձանագրել է իտալացի

³⁹⁰ Նույն տեղում, էջ 32:

³⁹¹ Չաքարիա սարկավագ, հ. Ա, էջ 46

³⁹² "Relation des Grandes Guerres et Victoires Obtenues par le Roy de Perse Cha Abbas Contre les Empeleurs de Turquie Mahomet et Achmet Son Fils. Par le P. Fr. Anthoine de Gouvea". Traduit de L'original Portugais. A Rouen, 1646, p. 225.

ճանապարհորդ Պ. Դելլա Վալլեն (1586-1652)՝ 1624-1628 թթ. Սեֆյան Իրանի աշխարհագրությունը ներկայացնելիս: Նա գրում է, որ խանի նստավայր Երևանը (ըստ հեղինակի՝ Իրովան) «ավելի քիչ բնակչություն ունի, քան նախկինում»³⁹³:

Ակնհայտ է, որ Երևանն այդ ժամանակ իրենից ներկայացնում էր ամուր բերդաքաղաք: Բերդում հիմնականում բնակություն էին հաստատել խանի հավատարիմ հպատակները, իսկ քաղաքում և շրջակայքում Արևմտյան Հայաստանից բռնագաղթեցված հայերը: Բայց պետք է նշել, որ բերդում բնակեցվածների թիվն այնքան էլ մեծ չէր: Երբ 1635 թ. օսմանյան բանակը գրավեց Երևանը, քաղաքից հեռացավ 5-6 հազար զինվորից բաղկացած կայազորը³⁹⁴:

Ըստ Ջաքարիա սարկավագի՝ Ամիր Գունա խանը զարկ է տվել քաղաքի վերակառուցմանը և բնակչության ավելացմանը³⁹⁵, որ հետևանքով շուտով Երևանը կրկին հանդես է եկել որպես բազմամարդ քաղաք: XVII դարի առաջին կեսին Երևանում տիրող իրավիճակի և բնակչության վերաբերյալ խիստ կարևոր են ճանապարհորդների հաղորդած տեղեկությունները: Ֆրանսիացի ճանապարհորդ Ժ.Բ. Տավերնիեն, որ 1630-ական թթ. և այնուհետև եղել է Երևանում³⁹⁶, ուշագրավ տեղեկություններ է հաղորդում բերդի և արվարձանների մասին: Ըստ նրա՝ բերդում ապրում էր խանն իր սպաներով ու զինվորներով, իսկ «Երևանի թաղը, որը [բերդի] հյուսիս-արևմուտքում մի արվարձան է, ուր քսան անգամ ավելի ժողովուրդ կա, քան քաղաքում (իմա՝ բերդում): Սա բոլոր վաճառականների և արհեստավորների, ինչպես նաև բոլոր հայերի ապրելատեղին է»³⁹⁷: Նրա կողմից կազմված

³⁹³ St 'u Brentjes S., Schüller V., Pietro Della Valle's Latin Geography of Safavid Iran (1624-1628): Introduction // "Journal for Early Modern History", 10, Leiden, 2006, p. 192.

³⁹⁴ Տե՛ս «Джихан-Нюма» и «Фезлеке» Кятиба Челеби, էջ 147:

³⁹⁵ Տե՛ս Ջաքարիա սարկավագ, հ. Ա, էջ 45:

³⁹⁶ Տե՛ս «Այրարատ. բնաշխարհ Հայաստանեայց», տեղագրեաց Հ. Ղևնդ Վ. Ս. Ալիշան, Վենետիկ, 1890, էջ 303:

³⁹⁷ "Les Six Voyages de Jean Baptiste Tavernier, écuyer baron d'Aubonne, qu'il a fait en Turquie, en Perse, et aux Indes", Paris, t. 1, 1679, p. 38. Թարգ-

Երևանի առաջին գծապատկերում դարձյալ շեշտված է, որ «արվարձանը բնակեցված է քրիստոնյա հայերով»³⁹⁸: Մեկ այլ առիթով հեղինակը դարձյալ գրում է. «Երևանը բնակեցված է բացառապես հայերով»³⁹⁹:

Խիստ էական հավելումներ է պարունակում Էվլիյա Չելեբիի կողմից Երևանի նկարագրությունը 1640-ական թթ. դրությամբ. «Բերդը գտնվում է Ջանգի գետի եզերքին, ձգված է հարավից դեպի հյուսիս և շատ նեղ է: ...Ունի երեք հաստատուն երկաթե դարպաս: Թավրիզի դարպասը բացվում է դեպի հարավ, Մեյդանի դուռը՝ դեպի հյուսիս: Վերջինս կոչվում է նաև Յայլայի դարպաս ...: Քաղաքում կան մոտ 2060 հողածածկ տներ: Ամենալավ շինությունը խանի դղյակն է...: Այս դղյակի մոտ, ձախ կողմից փողերանոցն է (գարբխանե), որտեղ աբասի և բեսի է կտրվում: Յայլայի դռնից դուրս գտնվող մեծ վարոշը կոչվում է Էսքի շեհիր (Հին քաղաք)»⁴⁰⁰:

Մ. Կարապետյանը, դատելով այն իրողությունից, որ ըստ Է. Չելեբիի՝ 1640-ական թթ. Երևանում կար 2060 հողածածկ տուն, բխեցրել է, որ դրանք պատկանում էին հայերին, իսկ վերջիններին թվաքանակը 17-20 հազար էր կազմում, քանի որ 2060 տներում ապրելու էր միջինը 5-6 անձից բաղկացած շուրջ 3500 ընտանիք⁴⁰¹:

Սակայն այդ տեղեկության մեկնաբանությունը կառուցվել է դրա թյուրըմբռնման վրա, քանի որ 2060 տների գտնվելու վայրը սխալմամբ ընկալվել է բերդից դուրս գտնվող բուն քաղաքը կամ արվարձանը: Իրականում է. Չելեբին այդ տները ներկայացնում

մանությունը Մ. Կարապետյանի: Տե՛ս Կարապետյան Մ., Երևանի բնակչության էթնիկական կազմի և թվաքանակի փոփոխությունները 1600-1724 թթ. // «Ուսումնարանասիրական հանդես», 1986, N 2, էջ 100-101:

³⁹⁸ Տե՛ս «Les Six Voyages de Jean Baptiste Tavernier», էջ 41:

³⁹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 623:

⁴⁰⁰ «Europe, Asia, and Africa, in the Seventeenth Century, by Evliya Efendi». Translated from the Turkish by the Ritter Joseph Von Hammer, vol. II, London, 1850, p. 153. Էվլիյա Չելեբիի ուղեգրության անգլերեն թարգմանության մեջ սխալմամբ նշված է 1060 տան մասին:

⁴⁰¹ Տե՛ս Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 102-103:

է ոչ թէ արվարձանում (վարոշ), այլ քաղաքում, որտեղ, ի դեպ, գտնվում էին նաև խանի պալատն ու դրամահատարանը: Այսինքն՝ քաղաք ասելով նա նկատի ունի բերդը: Այնուհետև հեղինակը նոր միայն խոսում է հին քաղաքի մասին, ցավոք, չհայտնելով տեղեկություններ ո՛չ տների քանակի և ո՛չ էլ բնակչության մասին: Ուստի պետք է արձանագրել, որ այդ 2060 հողածածկ տները ոչ թէ հին քաղաքում էին կամ արվարձանում, այլ բերդում: Իսկ բերդում բնակվողների թիվն ընդհանրապես նախկինում չի քննարկվել: Եթե որպես այդպիսիք ընկալվեն բերդապահ զինվորները (շուրջ 5-6 հազար⁴⁰²), ապա Երևանի արվարձանի կամ բուն քաղաքի հայության թիվը, որ ըստ Ժ.Բ. Տավերնիեի գրեթե նույն ժամանակ 20 անգամ ավելի էր բերդում ապրողներից, պետք է կազմեր շուրջ 100 հազար մարդ, ինչն անհավանական է: Ամենայն հավանականությամբ Է. Չելեբին նկատի է ունեցել միայն բերդի խաղաղ բնակչությունը:

Ասվածի հիմամբ անհարժեշտ է գոնե մոտավոր ճշգրտել թե՛ բերդի և թե՛ բուն քաղաքի բնակչության թվերը ինդրո առարկա շրջանում: Թուրքական աղբյուրի տեղեկության համաձայն՝ 1604 թ. Երևանի բերդի գրավումից հետո այնտեղից արտաքսվել են 300-400 տուն մահմեդականներ⁴⁰³: Այս առումով հույժ կարևոր է այն, որ մինչ այդ, օսմանյան բանակը, ստանալով շահական զորքի առաջխաղացման լուրը, բերդի հարավային կողմում, որտեղ բերդից դուրս գտնվում էին «իսլամական տները», նոր պարիսպ կառուցեց, որոնք վերոհիշյալ տներն ընդգրկեցին բերդի մեջ⁴⁰⁴: Փաստորեն 1603 թ. սկսած բերդում կար շուրջ 400 տուն: Ըստ Է. Չելեբիի՝ 1640-ական թթ. բերդում տների քանակը 2060 էր, իսկ 1679 թ. երկրաշարժի նախօրյակին, Ժ. Շարդենի տեղեկության համաձայն՝ 800⁴⁰⁵: Ակնհայտ է, որ Է. Չելեբիի տեղեկությունն

⁴⁰² Տե՛ս «Annals of the Turkish Empire», էջ 264:

⁴⁰³ Տե՛ս նույն տեղում, էջ 55:

⁴⁰⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 71:

⁴⁰⁵ Տե՛ս «The Travels of Sir John Chardin into Persia and the East Indies», the First Volume, Containing the Author's Voyage from Paris to Ispahan, London, 1686, p. 245.

Էապես չափազանցված է: Քանի որ բերդում ընդգրկված մահմեդական թաղում XVII դ. սկզբին կար 300-400 ընտանիք, առավել հավանական է, որ այնտեղ նույն դարի 30-ական թթ. տների թիվը պետք է որոշակի աճեր և երկրաշարժի նախօրյակին հասներ ժ. Շարդենի նշած 800-ին: Այդ պարագայում բերդի խաղաղ բնակիչների թվաքանակը դարի սկզբին պետք է կազմեր 1500-2500 մարդ (ընտանիքում 5-6 մարդ հաշվարկով), իսկ երկրաշարժի նախօրյակին՝ 4000-6000 մարդ: Հետևաբար բուն քաղաքում (արվարձանում) XVII դ. կեսին բնակվողների թիվը կազմելու էր 30-50 հազար (20 անգամ ավելի), որ համընկնում է 1578 թ. Երևանի և շրջակա 18 գյուղերի բնակչության գերեվարության վերաբերյալ հիշատակություններում հայ և թուրք հեղինակների բերած թվերին՝ 30-60 հազար:

Անկասկած, ժ.Բ. Տավերնիեն ինքը չէր հաշվելու քաղաքի բնակչությունը, այլ վերջինիս թվաքանակի մասին, թե նրանք 20 անգամ ավելի են բերդում ապրողներից, տեղեկանալու էր բնակիչներից, որոնք էլ նրան հաղորդել են տվյալներ՝ հար և նման հայկական աղբյուրներից հայտնի թվերին: Ինչպես տեսանք, վերջիններից հետևում է, որ Երևանի հին քաղաք-արվարձանում ինդրո առարկա շրջանում բնակվում էր շուրջ 30 հազար մարդ, և ևս գրեթե նույնքան՝ հարակից 18 գյուղերում: Դա հիմնավորվում է թուրքական աղբյուրի այն տեղեկությամբ, որ օսմանյան զորքը 1578 թ. Երևանից գերեվարել է 20 հազարից ավելի միայն կին ու երեխա⁴⁰⁶:

Դատելով նշված թվից, կարելի է եզրակացնել, որ Շահ Աբասի բռնագաղթից հետո արդեն 1630-ական թթ. Երևանի բնակչությունը դարձյալ հասել էր նախկին թվաքանակին:

Խոսելով Երևանի հայության մասին՝ Առաքել Դավրիժեցին հիշում է քաղաքացիներին և վաճառականներին. «ամենայն ժողովուրդք [Երևանի]՝ քաղաքականք և վաճառականք»⁴⁰⁷, որից հետևում է, որ վաճառականները մյուս խավերից տարբերվում էին և ամենայն հավանականությամբ բոլորն էլ տեղացիներ էին

⁴⁰⁶ Տե՛ս Սեփեքի Իբրահիմ Էֆենդի, *Քեփեվի Թարիհի*, c. II, էջ 53:

⁴⁰⁷ *Arak'el of Tabriz, Book of History*, p. 235.

ու աչքի էին ընկնում քաղաքային կյանքում իրենց ունեցած կշռով:

Թեև հայերն ապրում էին Երևանի բերդից դուրս՝ բուն քաղաքում, սակայն բերդում ևս ունեին վաճառատներ⁴⁰⁸: Բուն քաղաքի կենտրոնում գտնվում էր շուկան՝ եպիսկոպոսանիստ եկեղեցու հարևանությամբ: Դիվ-սուլթանի մզկիթը գտնվում էր շուկայի կողքին, իսկ մզկիթի հարևանությամբ՝ ընկած էր քաղաքի մեծ հրապարակը: Քաղաքն ուներ շատ բաղնիքներ և քարավանատներ: Վերջիններիս հարևանությամբ կային բազմաթիվ խանութներ: Ժ. Շարդենը հիշատակում է նաև քաղաքում գտնվող սննդի վաճառատներն ու սրճարանները⁴⁰⁹:

«...Երևանում գտնվող բերդը ինքնին կարող է փոքր քաղաք համարվել: Այն օվալաձև է՝ չորս հազար քայլ շրջագծով և ընդգրկում է 800 տուն, որտեղ ապրում են բնիկ պարսիկներ: Իսկ հայերը այնտեղ միայն վաճառատներ ունեն, որտեղ նրանք աշխատում և առևտուր են անում ամբողջ օրը, իսկ երեկոյան դրանք փակելով՝ տուն են գնում: Այս ամբողջ շրջապատված է հողե կամ կավե աղյուսից երեք շարք պարիսպներով: Պարսպի երկայնքով աշտարակներ են կառուցված...: Բերդը հյուսիս-արևմուտքում ձգվում է սարսափազդու անդունդի եզրով...: Նրա կայազորը բաղկացած է առավելագույնը երկու հազար մարդուց...»⁴¹⁰:

Ժ. Շարդենի նկարագրությանը համաժամանակյա է 1650-1670-թթ. ճամփորդած, 1670-ական թթ. սկզբներին Երևանում եղած և 1676 թ. իր ուղեգրությունը շարադրած Յա. Ստրեյսի վկայությունը, թե «Երևանում մեծավ մասամբ ապրում են աղքատ հայեր»⁴¹¹:

⁴⁰⁸ Տե՛ս «The travels of Sir John Chardin into Persia and the East Indies», h. I, էջ 245:

⁴⁰⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 246-247:

⁴¹⁰ Նույն տեղում, էջ 245-246:

⁴¹¹ Struys J. J., Drie aanmerkelyke en zeer rampspoedige Reizen, Door Italien, Griekenland, Lyfland, Moscovien, Tartaryen, Meden, Persien, Oostindien, Japan, en verscheiden andere Gewesten, Haarlem, 1741, b. 229-230.

1679 թ. երկրաշարժի նախօրեին, ըստ Ոսկան վարդապետի, Երևանի բնակչությունը կազմում էր 4 հազար տուն⁴¹²: Դատելով նախկին հաշվարկներից՝ այդքան տներում բնակվելու էր ավելի քան 6 հազար ընտանիք՝ յուրաքանչյուրը 5-6 անդամով (ստորև կտեսնենք, որ տարբեր ընտանիքներում 7-10 մարդ կար): Ստացվում է, որ մինչ երկրաշարժը Երևանի բնակչությունը պետք է կազմեր 30-35 հազար մարդ:

Երևանի կամ Գառնիի անունով հայտնի երկրաշարժը սկսվեց 1679 թ. հունիսի 4-ին և պարբերաբար կրկնվեց մի քանի օր: Ըստ ժամանակագրի՝ «Եւ ի սաստկութենէ շարժին բլաւ քաղաքն Երևան հանդերձ բերդով և պարսպաւ, կործանեցան տունք և ապարանք գեղեցկաշէնք, քակեցան եկեղեցիք և վանորայք, ցամաքեցան աղբիւրք...: Իսկ մեռելոցն ոչ գոյր թիւ»⁴¹³:

Երկրաշարժի հասցրած մարդկային կորուստները մանրամասնորեն նկարագրում է Զաքարիա Ագուլեցին. «... Մինչի Ը (8), Թ (9) օրի հողի տակին մեռել ին հանում: Տուն կեր մին Ե (5), Ը (8), Թ (9) ջան մեռաւ: Այս երկրումս ԷՌՁՃ (7600) ջան մեռաւ»⁴¹⁴: Փաստորեն Երևանում զոհերի թիվը կազմում էր շուրջ 8 հազար⁴¹⁵:

Հետաքրքրական է այն, որ չնայած երկրաշարժի պատճառած մեծաքանակ զոհերին, Կոնդի գերեզմանատանը հայտնի է միայն մեկ տապանագիր, որ վկայում է հանգուցյալի՝ երկրաշարժի զոհ գնալու մասին. «Այս է տ(ա)պան Ովանէսի որդի Մկրտիչին, որ վաղճանեցաւ մեծ շարժով, յունիսի Դ (4), Թվ ՌՃԻԸ (1679)»⁴¹⁶:

⁴¹² Տե՛ս «Histoire critique de la creance et des coûtumes des nations du Levant», publiée par le sr. de Moni, Francfort, 1684, p. 220.

⁴¹³ «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 279, ծանոթ. 65:

⁴¹⁴ «Զաքարիա Ագուլեցու որագրությունը», Երևան, 1938, էջ 143:

⁴¹⁵ Տե՛ս Ստեփանյան Վ., Երկրաշարժերը Հայկական լեռնաշխարհում և նրա մերձակայքում, Երևան, 1964, էջ 80-87:

⁴¹⁶ Տե՛ս Ղաֆադարյան Կ., Երևան. միջնադարյան հուշարձանները և վիճակն արձանագրությունները, Երևան, 1975, էջ 185:

Տեղեկություններ XVIII դ. սկզբի Երևանի բնակչության մասին

Երևանի բնակչությանն առնչվող որոշակի տեղեկություններ է հաղորդում նաև Իսրայել Օրին, որ 1701 թ. իր ծրագրում ռուսական զորքերի կողմից Երևանի գրավումը համարում էր առաջնակարգ խնդիր: Օրին նշում էր, որ բերդում, որտեղ 30 դաշտային թնդանոթ կա և 200 զինվորական, շեշտակի գրոհի դեպքում այն կարելի է գրավել, մանավանդ որ վառողի ու ռազմական մյուս պահեստները հայերի ձեռքում են: Բացի այդ 300-ից ավելի հայեր, որոնք էլ աշխատում են փողերանոցում, նույնպես կօժանդակեն ռուսներին: Քաղաքն ունի երկու դարպաս, որոնցից յուրաքանչյուրում մեկական ժամապահ է կանգնած, իսկ պարիսպներին ժամապահների չկան: Քաղաքի մերձակայքում ընդարձակ այգիներ կան, որոնցով ռուսական զորքը կարող է աննկատ մտտենալ ու հայերի հետ գործակցելով, հաջողության հասնել: Ի դեպ, ըստ նրա՝ մուսուլմանների թիվը Երևանում 200 տուն էր⁴¹⁷: Ակնհայտ է, որ Ի. Օրին միտումնավոր ռուսական արքունիքին ներկայացրած ծրագրում նսեմացնում էր բերդի նշանակությունը՝ այն ներկայացնելով առանց դժվարության գրավման ենթակա ամրոց:

1700 թ. Երևան այցելած գերմանացի ճանապարհորդ Ֆ. Կ. Շիլլինգերը պատմում է, որ բերդում ապրում էին միայն պարսիկներ, իսկ արվարձանում նրանցից 10 անգամ ավելի շատ՝ հայեր⁴¹⁸: Իսկ 1701 թ. Երևանում եղած մեկ այլ ճանապարհորդ՝ Տուրնեֆորը Երևանի բերդի կայազորի թիվը հաշվում էր 2500 մարդ⁴¹⁹:

Ըստ Զաքարիա սարկավազի՝ բերդում երկրաշարժից հետո զգալի թվով հայեր էին բնակվում: Նրա վկայությամբ՝ 1675 թ. Եր-

⁴¹⁷ Տե՛ս Ս. Эзов Г., Сношения Петра Великого с армянским народом, документы, СПб., 1898, էջ 88: Այս նկարագրությունը Ի. Օրին նախապես ներկայացրել էր Պֆալցի կուրֆյուրստին 1669 թ.: Տե՛ս նույն տեղում, էջ 33-34:

⁴¹⁸ Տե՛ս Schillinger F. C., Persianische und Ost-Indianische Reis, Nürnberg, 1707, S. 118.

⁴¹⁹ Տե՛ս Tournefort M., A Voyage into the Levant, perform'd by Command of the Late French King, volume III, London, 1741, pp. 178-179.

նանի խան դարձած Մաֆիկուլիի դեմ բարձրացած ապստամբության պատճառն այն էր, որ քաղաքի մահամեղականները դժգոհ էին, որ նա արգելել էր քրիստոնյաններին անձրևից հետո տներից դուրս գալ՝ իբրև թե վատ հոտի պատճառով: Մինչդեռ մահամեղականներն ասում էին, որ «մեք ահա դրացի ենք քրիստոնեից, և խառն ի խուռն կամք ընդ նոսա»⁴²⁰:

Հուլիս կարևոր է նաև XVIII դ. սկզբին վերաբերող ճիզվիտ Մոնիեի տեղեկությունը, ըստ որի՝ Երևանի բերդում այդ ժամանակ ապրում էր 4 հազար մարդ, որից հազարը՝ հայեր⁴²¹: Ա. Հովհաննիսյանը, որը Երևանի 1724 թ. կռիվներին վերաբերող փաստաթղթերում առկա «պարսիկներ» էթնանունը առաջարկում է կարդալ «Անդրկովկասի շիաներ» կամ «ադրբեջանցիներ»⁴²², Մոնիեի տվյալներն օգտագործած Մամի-Կլերակի տեղեկության հիման վրա կարծում է, թե իբր քաղաքի հայերը այդ ժամանակ կազմում էին բնակչության չորրորդ մասը, իսկ մեծամասնությունը՝ ադրբեջանցիներ էին⁴²³: Ուսումնասիրողի կարծիքն իր ուսումնասիրության մեջ օգտագործում է ադրբեջանցի հեղինակ Ս. Մամեդովը՝ ընդգծելով, որ Երևան քաղաքի բնակչության գերակշիռ մասը կազմել են թաթարները, այն է՝ ադրբեջանցիները⁴²⁴: Ս. Կարապետյանը ապացուցել է, որ Ա. Հովհաննիսյանի օգտագործած սկզբնաղբյուրի՝ Մամի-Կլերակի տեղեկությունը XVIII դ. սկզբին Երևանի հայերի քանակի մասին⁴²⁵ վերաբերում է ոչ թե քաղաքին, այլ բերդին, ուստի նշված ուսումնասիրողների՝ դրա

⁴²⁰ «Ձաքարեայ Սարկաւազի Պատմագրութիւն», մասն Բ, Վաղարշապատ, 1870, էջ 89-90:

⁴²¹ Տե՛ս՝ «Nouveaux Memoires des Missions De La Compagnie De Jesus Dans Le Levant», tome III, Paris, 1723, p. 37.

⁴²² Տե՛ս՝ «Армяно-русские отношения в первой трети XVIII века», сборник документов, т. II, часть I, под ред. А. Г. Иоаннисяна, Ереван, 1964, с. LXXV, LXXVII:

⁴²³ Տե՛ս՝ նույն տեղում, էջ LXXVII:

⁴²⁴ Տե՛ս՝ Мамедов С., Исторические связи азербайджанского и армянского народов во второй половине XVII - первой трети XVIII в., Баку, 1977, с. 83:

⁴²⁵ Տե՛ս՝ «Histoire De Perse», Depuis Le Commencement De Ce Siecle, tome II, Paris, 1750, p. 154.

վրա հիմնված տեսակետը Երևան քաղաքում հայերի և այսպես կոչված աղբբեջանցիների թվաքանակների հարաբերակցության մասին հիմնագուրկ է⁴²⁶:

1724 թ. թուրքական արշավանքին ընդառաջ Երևանում իրականացվում է ընդհանուր գորահավաք: Քաղաքացիների և շրջակա բնակավայրերի փախստականներից կազմվում է 9423 (կամ 9443) զինվորից բաղկացած ինքնապաշտպանական զորք: Ըստ Աբրահամ Երևանցու՝ Երևանի հին թաղից հավաքված զորքը բաղկացած էր 4 հազար զինվորից, որոնց գլխավորում էին փահլևան (գոտեմարտիկ) Նիկողոսը (Նիկողայոս), Մարիամի որդի (Մարիամյան) Անդոնը (Անտոնիոս), Խաթունի որդի (Խաթունյան) Բուրիքը և տեր Մովսեսը: Երևանի Ջուհայրենց թաղից հավաքվել էր 955 զինվոր: Հետաքրքրական է, որ նույն հեղինակի վկայությամբ՝ 9423 զինվորից բացի քաղաքում մնում էր ևս 28 հազար մարդ (այր և կին), որոնք կռվի համար չունեին համապատասխան փորձ, բայց մասնակցում էին իրենց տների պաշտպանությանը⁴²⁷: Ակնհայտ է, որ այստեղ խոսքը քաղաքի բուն բնակչության (չհաշված փախստականներին, որոնք հավաքվել էին Ձորագյուղում) մասին է: Ուստի քաղաքի հայության թվաքանակն ընդհանուր առմամբ պետք է կազմեր շուրջ 35 հազար:

Փաստորեն, մարտադաշտ դուրս եկած 9423 զինվորից 5000-ը ներկայացնում էին Երևանի բուն ազգաբնակչությունը: Ակնհայտ է, որ 5 հազար զինվոր մարտի հանած քաղաքը պետք է ունենար առնվազն 30-35 հազար ազգաբնակչություն: Այսպիսով, դարձյալ հիմնավորվում է այն պնդումը, որ երկրաշարժից առաջ ու դրանից 4 տասնամյակ անց Երևանն ուներ ավելի քան 30 հազար բնակչություն՝ բաղկացած գլխավորապես հայերից: Ըստ Աբրահամ Երևանցու՝ 1724 թ. քաղաքում ապրում էր նաև 100 տուն

⁴²⁶ Տե՛ս Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 108:

⁴²⁷ Տե՛ս Աբրահամ Երեւանցի, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի, յառաջաբան, բնագիր, խմբագիր օրինակ եւ ծանոթագրութիւններ պատրաստեց Հ. Սահակ Ճեմճեմեան Մխիթարեան Ուխտէն, Վենետիկ - Ս. Ղազար, 1977, էջ 28-29:

քրիստոնյա բռշա⁴²⁸: Երևանի ինքնապաշտպանության ժամանակ նրանք մարտադաշտ էին դուրս բերել 234 (այլ տվյալներով՝ շուրջ 300⁴²⁹) զինվոր⁴³⁰, որոնցից 40-ը զոհվել էին Կոնդի վրա օսմանյան բանակի հարձակումը հետ մղելիս⁴³¹:

1724 թ. Երևանի գրավումը օսմանյան զորքի կողմից և բնակչության կոտորածն ու գերեվարումը մեծապես նվազեցրեցին քաղաքի հայության թվաքանակը: 1728 թ. օսմանյան հարկացուցակներում ներկայացված է միայն Երևանի բերդում բնակվողների քանակը: Այդ ժամանակ բերդում կային 244 քրիստոնյա (9 ամուրի) և 428 մուսուլման հարկատուներ⁴³², այսինքն՝ հայկական 235 ընտանիք և 428 մուսուլմանական ընտանիք: Ըստ թուրք հեղինակ Իբրահիմ Փեչեվիի՝ 1604 թ. Շահ Աբասը Երևանը գրավելուց հետո ազատ արձակեց բերդի 300-400 տուն մուսուլմաններին⁴³³, ինչը գրեթե համապատասխանում է 1728 թ. բերդում բնակվող մուսուլմանական ընտանիքների թվին:

Ամփոփում

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ XVI դ. վերջին օսմանյան բանակի կողմից Երևանի գրավումը ծանր ազդեցություն ունեցավ Երևանի հայ բնակչության վրա, որի մի զգալի մասը զոհ գնաց, իսկ մյուս մասն էլ գերեվարվեց: Չնայած դրան, դարի վերջի աղբյուրները ցույց են տալիս, որ թվաքանակով խիստ նոսրացած հայերը շարունակում էին լինել քաղաքի բնակչության մեծամասնությունը: XVII դ. Երևանում հայերը շարունակում էին լինել քաղաքի հիմնական բնակչությունը: Հայերի թիվի շարունակաբար աճում էր և արդեն դարի 30-40-ական թթ. հասավ 30-35 հազարի: Թեև 1679 թ. երկրաշարժից միայն Երևանում զոհվեց շուրջ ութ

⁴²⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 26, 101:

⁴²⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 103:

⁴³⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 26:

⁴³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 30:

⁴³² Տե՛ս նույն տեղում, էջ 901:

⁴³³ Տե՛ս նույն տեղում, էջ 246:

հազար հայ, սակայն այնուհետև քաղաքի հայության թիվը աստիճանաբար աճեց և 1724 թ. պաշտպանության շրջանում դարձյալ հասավ 30-35 հազարի:

Arman Yeghiazaryan

**NUMBER AND COMPOSITION OF THE POPULATION OF
YEREVAN IN XVI-XVIII CENTURIES**

Research of the number and composition of the population in Yerevan in the 16-18 centuries has great importance both from the point of view of historical science and for political reasons, since the falsification of the historical demography of Armenia in general and Yerevan in particular goes on in the neighboring country.

Study shows that during XVI-XVIII centuries, despite the various disasters, the population of Yerevan was 30-35 thousand, and consisted mostly of Armenians.

Արման Եղիազարյան

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՆՄԱՏՔԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ XVII-XVIII ԴԴ.

Մուտք. Երևանը թուրք-պարսկական պատերազմների թիրախում

Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանը աշխարհի հնագույն քաղաքներից մեկն է, որտեղ պահպանված հնագիտական նյութը հնարավորություն է տալիս քաղաքի ձևավորումը հասցնելու Ուրարտու պետության դարաշրջանը (IX-VI դդ. Ք.ա.): Սակայն հատկապես միջնադարում քաղաքն արդեն բազմաթիվ փոփոխություններ էր կրել, որի հետևանքով այնտեղ ձևավորվել էր նոր իրավիճակ: Դեռևս արաբական արշավանքների շրջանում (VII դ.) այն հիշատակվում է որպես ամուր բերդ ունեցող քաղաքացյուղ⁴³⁴: Բյուզանդական աղբյուրում X դ. առաջին կեսի դրությամբ (1047 թ.) հիշատակվում է Խելիդոնիոն ամրոցը⁴³⁵, որը Ծիծեռնակաբերդն է ներկայիս Երևանի կենտրոնում⁴³⁶: Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրի մերձակայքում: Ծիծեռնակաբերդը, դատելով հնագիտական պեղումների արդյունքից՝ իր կարևորությունը չի կորցրել Բագրատունիների դարաշրջանում (Ք.ա. IX-XI դդ.) և հետագայում՝ մինչև XVII դ.⁴³⁷:

⁴³⁴ “The Armenian History attributed to Sebeos”, Translated, with notes, by R. W. Thomson, part I. Translation and Notes, Liverpool University Press, 1999, p. 110.

⁴³⁵ John Skylitzes, A Synopsis of Byzantine History (811-1057), Translated by John Wortley, with Introductions by Jean-Claude Cheynet and Bernard Flusin and Notes by Jean-Claude Cheynet, Cambridge University Press, 2010, pp. 413-414.

⁴³⁶ Նույն տեղում, էջ 414, ծան. 80: See also Grousset René, *Historie de L'arménie des origines à 1071*, Payot, Paris, 1973, p. 584.

⁴³⁷ Բարսեյան Ֆ., Ժամկոչյան Ա., Ուրվագծեր հին Երևանի պատմության և հնագիտության, Երևան, 2015, էջ 6:

Ավելի ուշ շրջանում Երևանի տարածքն ընդարձակվել է, իսկ XV դարից սկսած՝ հանդես եկել որպես «մայրաքաղաք»: Այն այդպես է կոչվում 1405 թ. մի հիշատակարանում⁴³⁸: Սակայն, այդ ժամանակաշրջանում Երևանի տարածքի, ինչպես նաև ամրոցի մասին տեղեկություններ չկան:

XVI դ. սկզբին տարածաշրջանում գերակայության համար պայքար է սկսվում երկու տերությունների՝ Մեֆյան Իրանի և Օսմանյան կայսրության միջև: Մեֆյան պետության հիմնադիր Շահ Իսմայիլ Ա-ն (1502-1524) գահակալության առաջին տարիներին տիրում է ողջ Իրանին, Միջագետքին, Ատրպատականին, Վրաստանին ու Հայաստանին: Նրա ստեղծած տերությունը հյուսիսարևմուտքում սահմանակցում էր մինչև Եփրատ գետը տարածվող Օսմանյան պետության հետ: Նրանց միջև սկսվեցին երկար տասնամյակներ ձգվող արյունալի պատերազմներ: Այդ ընթացքում Հայաստանի մայրաքաղաք Երևանը, որ կարևոր ռազմավարական դիրք ուներ, մի քանի անգամ ձեռքից ձեռք անցավ՝ ենթարկվելով էական փոփոխությունների⁴³⁹:

Մեֆյան տերության բանակները Երևանին տիրեցին 1502 թ.՝ Շարուրի դաշտում աղ-կոյունլուներին պարտության մատնելուց հետո: Երևանի առաջին իրանցի տիրակալ խանը հիշատակվում է պարզապես որպես Ռևան-խան: Հետաքրքրական է, որ ըստ թուրք հեղինակ Էվլիյա Չելեբիի Երևանը կառուցվել է 1412 թ. Իրանի շահ Իսմայիլի հրամանով՝ իր գորապետներից Ռևան Կուլ խանի կողմից, որն էլ այն կառուցել է յոթ տարում և կոչել իր անունով՝ Ռևան կամ Երևան⁴⁴⁰: Ակնհայտ է, որ այդ պատմությունը հորինված է, քանի որ 1502-1524 թթ. իշխած շահ Իսմայիլ Ա-ն մեկ դար առաջ ամրոց կառուցելու հրաման արձակել չէր կարող,

⁴³⁸ «ՇԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն առաջին, (1401-1450 թթ.), կազմեց Լ.Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 51:

⁴³⁹ “The Cambridge History of Iran”, in seven volumes, volume 6, “The Timurid and Safavid Periods”, edited by P. Jackson and L. Lockhart, Cambridge University Press, 2006, p. 266, 267, 284.

⁴⁴⁰ “Narrative of Travels in Europe, Asia, and Africa in the Seventeenth Century”, by Evliya Efendy. Translated from the Turkish by the Ritter Joseph von Hammer, volume II, London, Oriental Translation Fund, 1850, p. 150-151.

իսկ հնուց ի վեր գոյություն ունեցող և վկայված Երևանի⁴⁴¹ անվանումը ուն խանի անունից բխեցնելը Էվլիյա Չելեբիի՝ սխալմամբ կատարած եզրահանգումն է միայն, երբ անուն ստացողը վերածվել է անուն տվողի: Իրականում Ռևան խան կնշանակե պարզապես «Երևանի խան»: Պետք է նշել, որ Շահ Իսմայիլի հրամանով Երևանի կառուցումը այսպես կոչված Ռևան խանի կողմից սկզբնաղբյուրներով չի հաստատվում⁴⁴²:

Թուրք-պարսկական պատերազմի թեժ փուլերից մեկում՝ XVI դ. վերջին, կառուցվել և հետագայում բազմաթիվ վերակառուցումների է ենթարկվել Երևանի այն ամրոցը, որի շուրջ ընթացել է թուրք-պարսկական հակամարտությունը Հարավային Կովկասի հատվածում: Դա տեղի է ունեցել 1580-ական թթ.: Երևանի ամրոցի տարածքում հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ ամրոցի կառուցման ժամանակահատվածն իրոք XVI դ. վերջն է⁴⁴³: Ինչպես տեսանք, Երևանի հնագույն ամրոցը՝ Ծիծեռնակաբերդը, գոյությունը շարունակել է մինչև XVII դ., փաստորեն, նոր ամրոցի կառուցման պայմաններում XVI դ. վերջից կորցնելով իր նշանակությունը:

Ինչպես միջնադարյան Եվրոպայում, այնպես էլ Հայաստանում, ամրոցին կից տարածվում էր քաղաքը, որը երբեմն կոչվում էր արվարձան: Հայաստանում այդ գործընթացն առկա էր դեռևս IX դ. վերջին⁴⁴⁴:

XVI-XVIII դդ. Երևանի հատակագիծը, այն է՝ ամրոցի և քաղաք-արվարձանի տեղադրությունը, շարունակում է մնալ հիմ-

⁴⁴¹ Օրինակ՝ Երևանը հիշատակում է Հայոց կաթողիկոս Հովհաննես Դրախանակերտցին (898-925): Hovhannēs Draskhanakertc‘i, History of Armenia, Translation and Commentary by Rev. Krikor H. Maksoudian, Atlanta, Georgia, 1987, p. 106.

⁴⁴² Aydoğmuşoğlu Cihat, Yüzyıl Seyyahlarına Göre Revan (Erivan) Şehri, OTAM (Ankara Üniversitesi Osmanlı Tarihi Araştırma ve Uygulama Merkezi Dergisi), 2018, s. 10.

⁴⁴³ Ղաֆադարյան Գ., Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, 1975, էջ 96-97:

⁴⁴⁴ Hovhannēs Draskhanakertc‘i, History of Armenia, p. 131.

նականում չբացահայտված, ուստի վերջինին ուղղված գիտական հետազոտությունները խիստ պահանջված են:

Երևանի ամրոցի կառուցումը և ընդարձակումը

1555 թ. մայիսի 29-ի Ամասիայի թուրք-պարսկական հաշտության պայմանագրով Արևելյան Հայաստանի մեծ մասը՝ Երևանով, մնաց Սեֆյան Իրանի տիրապետության ներքո: Սակայն արդեն 1578 թ. օսմանյան զորքը՝ Լալա Մուստաֆա փաշայի գլխավորությամբ ներխուժեց Վրաստան և այնտեղից անցավ Արևելյան Այսրկովկաս: Փաշայի հրամանով Էրզրումի Հուսեյն փաշան 1579 թ. աշնանը 40 հզ. բանակով արշավեց դեպի Երևան: Թեև օսմանյան զորքը կարողացավ ներխուժել քաղաք, բայց Մուհամմադ խանի կայազորի կատաղի դիմադրության պատճառով նահանջեց դեպի Էրզրում: Մեկ օրում օսմանյան զորքը քաղաքում մեծ ավերներ գործեց: Ի վերջո, կազմակերպվեց Երևանի և շրջակա գյուղերի բնակչության մասսայական բռնագաղթ: Ժամանակագրություններից մեկում այս առթիվ կարդում ենք. «ԳԵՐՆԱՆ քաղաք գերեցին ԺԸ (18) գեղով, և ցրեցին զկիև և զտղայ յամենայն աշխարհ»⁴⁴⁵: Ջաքարիա սարկավազի տեղեկության համաձայն՝ թուրքերը քաղաքից և շրջակա գյուղերից գերի են տարել 60 հզ. մարդ (հայ և մահմեդական)⁴⁴⁶: Ըստ Դավիթ Բաղիշեցու՝ միայն Երևան քաղաքից գերվել է 30 հազար մարդ⁴⁴⁷: Դա հաստատվում է թուրքական աղբյուրի այն տեղեկությամբ, որ Երևան քաղաքից գերվարվել է միայն 20 հազարից ավելի կին ու երեխա⁴⁴⁸: Անգլիացի ճանապարհորդ և առևտրական Ջ. Նյուբերին, ով 1581 թ. եղել է Երևանում, պատմում է, որ 1579 թ. օսման-

⁴⁴⁵ «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. I, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 172:

⁴⁴⁶ «Ջաքարեայ սարկավազի պատմագրութիւն», հ. Ա, Վաղարշապատ, 1870, էջ 13:

⁴⁴⁷ «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, կազմեց՝ Վ.Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 355:

⁴⁴⁸ Peçevi İbrahim Efendi, Peçevi Tarihi, c. II, hazırlayan Bekir Sıtkı Baykal, Ankara, 1982, s. 53.

յան բանակի կողմից Երևանի մեկօրյա ռազմակալման շրջանում քաղաքից և այլ վայրերից մեծ թվով քրիստոնյաներ գերեվարվեցին: Միայն Երզնկայի (Արսինգամ) բնակիչները գնեցին յոթ հազար գերի⁴⁴⁹:

Երևանը ևս մեկ անգամ գրավվեց օսմանյան զորքի կողմից 1578-1590 թթ. պատերազմական գործողությունների ընթացքում՝ 1583 թ.: Ըստ ժամանակագրի՝ թուրքերը «զՅերևան առին և գերեցին»⁴⁵⁰: Մուլթան Մուրադ Գ-ն (1574-1595) Երևանը և Նախճավանը գրավելու նպատակով ուղարկել էր Ֆարիադ փաշային, որին էլ պատմագրության մեջ վերագրվում է Երևանի նոր ամրոցի կառուցումը: Երևանի պարսից Թոխմախ խանը, չկարողանալով դիմադրել, հեռացավ: Ֆարիադ փաշայի հրամանով Երևանում արագորեն սկսեցին նոր ամրոցի կառուցումը՝ օգտագործելով նաև ավերված եկեղեցիների քարերը: Առաքել Դավրիժեցին տեղեկացնում է, որ 1583 թ. սուլթանի հրամանով նրա զորապետերը զորքով եկան, գրավեցին ու ավերեցին Երևանը և, բազմաթիվ եկեղեցիներ քանդելով, նրանց քարերը տեղափոխեցին ամրոցի կառուցման համար օգտագործելու: Նրանք պատրաստվում էին քանդել նաև Երկու երեսի կոչվող մեծ եկեղեցին, բայց Առաքել վարդապետը կանգնեց թուրք զինվորների առաջ և թույլ չտվեց մոտենալ ու քանդել եկեղեցին⁴⁵¹: Այնուհետև հեղինակը 1588 թ. մի տեղեկության մեջ Ֆարիադ փաշային անվանում է Երևանը «ատող և շինող» (գրավող և կառուցող)⁴⁵², որից պարզվում է, որ 1583 թ. ամրոցը կառուցվել է հենց նրա հրամանով, իսկ մեկ այլ

⁴⁴⁹ Purchas S., Hakluytus Posthumus or Purchas His Pilgrimes, Contayning a History of the World in Sea Voyages and Lande Travells by Englishmen and others, volume VIII, Glasgow, James MacLehose and Sons, Publishers to the University New York, the Macmillan Company, 1905, p. 469.

⁴⁵⁰ «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. I, էջ 159:

⁴⁵¹ Arak'el of Tabriz, Book of History, Introduction and Annotated Translation from Critical Text by George A. Bournoutian, Mazda Publishers, Costa Mesa, California, 2010, p. 488-489.

⁴⁵² Անգլերեն թարգմանության մեջ սխալ կա. թեև բնագրում գրված է «շինող/ կառուցող», թարգմանված է “rebuilt” (Ibid., p. 491).

դեպքում՝ ամփոփում, թե՛ «Թուին ՌԼԲ. (1583) յԵրևան ամրոց շինեցավ»⁴⁵³:

Հայկական մեկ այլ հիշատակարանում (1584 թ.) ասվում է. «...գնաց Ֆարհատ փաշայն ԳՃՌ (300 հզ.) հեծելազույգ ի վերայ Երևան քաղաքին, փախոյց գտերն, որ նստեալ էր անդ, Մահմետ խանն, և շինեաց անդ նորայիմն ամրոց մեծ և զարմանալի, որ բազում եկեղեցիք խաչ և տապանք քակեցին, և քարն ի ամրոց տարան, քրիստոնեից ազգս ամէն թալանուեցաւ...»⁴⁵⁴:

Սամվել Անեցու շարունակողներից մեկն էր պարզապես գրում է, որ «ՁԵրեւան առին եւ գերեցին եւ նոր ամրոց շինեցին, որ այժմ կայ հաստատուն»⁴⁵⁵:

Փաստորեն, հայկական աղբյուրները միահամուռ Երևանի ամրոցի կառուցումը վերագրում են Ֆարհադ փաշային: Այս առումով հետաքրքրական են նաև օսմանյան աղբյուրների տեղեկությունները: Թուրք պատմագիր Փեչևի-Իբրահիմը գրում է, որ օսմանյան բանակի հրամանատար Ֆարհադ փաշան 1583 թ. գրավեց Երևանը, հրամայեց այնտեղ ամրոց կառուցել՝ պարիսպների ներսում ընդգրկելով խանական պալատը: Ամրոցի կառուցումն ավարտվեց 45 օրում⁴⁵⁶: Ամրոցի կառուցումից հետո նրա երկու պարիսպները կոչվեցին «ներքին» և «արտաքին բերդեր»⁴⁵⁷:

Մեկ այլ թուրք հեղինակ Գելիբոլուլու Մուստաֆա Ալին պատմում է նույնը, բայց ավելացնելով կարևոր մանրամասներ: Կառուցվող ամրոցի ներքին հատվածը, որի ներսում էր խանի պալատը և որտեղ մզկիթ կառուցվեց, բաղկացած էր յոթ աշտարակից և 725 պատնեշից, իսկ արտաքին պարիսպը՝ 43 աշտարակից և 1726 պատնեշից: Վերոհիշյալ աշխատանքներն ավարտվեցին 45 օրում, և այնտեղ որպես կայագոր թողնվեց 5601 զինվոր:

⁴⁵³ Նույն տեղում, էջ 525:

⁴⁵⁴ «Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի», «Էջմիածին», 1950, N 11-12, էջ 87:

⁴⁵⁵ Սամուել Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրութիւն Ադամից մինչև 1776 թ., աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի. Երևան, 2014, էջ 321:

⁴⁵⁶ Peçevi İbrahim Efendi, Peçevi Tarihi, c. II, p. 79.

⁴⁵⁷ Նույն տեղում, էջ 245:

Խանական պալատը դարձավ բեյլերբեյիների (կառավարիչ, կուսակալ) նստավայրը⁴⁵⁸: Այդպիսով, Երևանը համանուն երկրամասի վարչական կենտրոնի դեր ստացավ:

Երևանում եղած Էվլիյա Չելեբին, նկարագրելով Երևանի պարիսպները, մանրամասներ է հայտնում ինչպես Ֆարհադ փաշայի, այնպես էլ մինչև 1583 թ. Երևանի խան եղած Թոխամախի կառուցած պարիսպների մասին⁴⁵⁹, իսկ սեֆյանների պատմագիր Իսքանդար Մունշին, նկարագրելով 1603-1604 թթ. Երևանի պաշարումն ու գրավումը իրանական զորքի կողմից, գրում է, որ Երևանի ամրոցը բաղկացած էր երեք պարիսպներից, որոնցից ամենահինը Ֆարհադ փաշայի կառուցածն էր⁴⁶⁰:

Փաստորեն, օսմանյան հեղինակները տեղեկացնում են, որ ապագա ամրոցի տեղում կար խանական պալատ, որի պարսպապատումով էլ սկսվել է նոր ամրոցի շինարարությունը: Սակայն Էվլիյա Չելեբիի վկայությունը փաստում է, որ այդ հատվածում առկա էր նաև պարսիկ խան Թոխամախի կառուցած պարիսպը:

Թ. Հակոբյանը, ելնելով այն իրողությունից, որ ամրոցի կառուցման աշխատանքները տևել են 45 օր, կարծում է, որ խոսքն իրականում արդեն գոյություն ունեցող ամրոցի վերակառուցման ու ամրապնդման մասին է⁴⁶¹: Հնագետ Կ. Ղաֆադարյանը համոզված է, որ քաղաքից դուրս կառուցվել է բոլորովին նոր ամրոց, որի տեղում նախկինում որևէ ամրություն չի եղել⁴⁶²: Ամենայն հավանականությամբ, այստեղ իրականացվել են մասամբ նոր պա-

⁴⁵⁸ İsmail Hami Danişmend, *İzahlı Osmanlı Tarihi Kronolojisi*, c. 3, İstanbul, 1972, s. 69.

⁴⁵⁹ “Narrative of Travels in Europe, Asia, and Africa in the Seventeenth Century” by Evliya Efendy. Translated from the Turkish by the Ritter Joseph von Hammer, volume II, London, Oriental Translation Fund, 1850, p. 153.

⁴⁶⁰ “History of Shah 'Abbas the Great (Tārīk-e 'Ālamārā-ye 'Abbāsī)” by Eskandar Beg Monshi, volume II, translated by Roger M. Savory, Westview Press, Boulder, Colorado, 1930, p. 834.

⁴⁶¹ Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1500-1800 թթ.), Երևան, 1971, էջ 21-22:

⁴⁶² Ղաֆադարյան Կ., նշվ. աշխ., էջ 96-97:

րիսպների կառուցման, իսկ մասամբ էլ հնի վերականգնման աշխատանքներ, ինչպես դա տեղի ունեցավ տարիներ անց՝ Իրանի տիրակալ Շահ Աբաս Ա-ի (1587-1629) ներխուժմանը դիմակայելու համար⁴⁶³: Իսկ Էվլիյա Չելեբիի տեղեկությունները փաստում են, որ ներքին կոչված ամրոցը Թոխմախ խանի կառուցածն էր, իսկ արտաքինը՝ Ֆարհադ փաշայի կառուցածը: Կարելի է կարծել, որ ապագա ամրոցի տարածքում գտնվող խանական պալատը ուներ որոշակի ամրություններ, որոնք էլ հիշատակում է Էվլիյա Չելեբին, սակայն հիմնական պարսպապատերի կառուցումը տեղի է ունեցել Ֆարհադ փաշայի հրամանով 1583 թ.: Պատահական չէ, որ Ջ. Նյուբերին, նկարագրելով Երևանը 1581 թ. դրությամբ, ամրոցը չի հիշատակում, այլ միայն այն, որ քրիստոնյաներով բնակեցված քաղաքից շուրջ մեկ մղոն հեռավորության վրա գտնվում էր քարե կամուրջը⁴⁶⁴: Կա տեսակետ, որ Ֆարհադ փաշայի հրամանով քաղաքի մի մասն ընդգրկող թաղամասերը պարիսպներով շրջապատելուց հետո քաղաքը փաստորեն բաժանվեց երկու մասի, ամրոցում մնացին թուրքերը, իսկ արվարձանում՝ ոչ մուսուլմանները⁴⁶⁵, այսինքն՝ հայերը:

XVI դ. վերջին Երևան քաղաքի վերաբերյալ կարևոր տեղեկություններ են պահպանվել օսմանյան հարկացուցակներում: Ըստ դրանց՝ թուրքերն ապրում էին ամրոցում, իսկ հայերը՝ քաղաքի թաղամասերում⁴⁶⁶: Քաղաքի քրիստոնյաները, որոնք, դատելով անուններից, հայեր էին, բնակվում էին քաղաքի վեց թաղամասերում՝ Մարտիրոսի, Միրզայի, Քուչուք Քայքրի, Իսալուի, Բյորեքչի Օհանի, Դերեքյոյի (Չորագյուղ)⁴⁶⁷:

Մինչև 1604 թ. Երևանը մնաց օսմանյան տիրապետության տակ:

⁴⁶³ “Ta’rīḥ-i Na’īmā: Rauḍat al-Ḥusain fi ḥulāṣat aḥbār al-ḥāfiqain”, c. I, İstanbul, 1863, ք. 353-354.

⁴⁶⁴ Purchas S., Hakluytus Posthumus or Purchas His Pilgrimes, p. 469.

⁴⁶⁵ Aydoğmuşoğlu Cihat, Yüzyıl Seyyahlarına Göre Revan (Erivan) Şehri, s. 7.

⁴⁶⁶ “Başbakanlık Osmanlı Arşivi”, Tapu Tahrir Defteri, 633, s. 24.

⁴⁶⁷ Նույն տեղում, էջ 24-28:

Կորցրած տարածքները վերադարձնելու նպատակով Սեֆյան Իրանի տիրակալ Շահ Աբաս Ա-ն 1603 թ. պատերազմ սկսեց օսմանյան բանակների դեմ: Պահը շատ հարմար էր ընտրված: Օսմանյան կայսրությունում սկսվել էր ջալալիների շարժումը, որի ավերիչ հետևանքները տարածվել էին մինչև Երևան: Օսմանյան զորքերը Թավրիզից նահանջեցին Նախճավան, իսկ այնտեղից էլ՝ Երևան, որը շուտով պաշարվեց շահի բանակի կողմից: Առաքել Դավրիժեցին վկայում է, որ Նախիջևանից փախած զինվորները «հարաւային կողմն ամրոցին Երևանայ կից ընդ նմա պատեցին պարիսպ և շինեցին միւս ևս ամրոց, և մտին ինքեանք ի ներս պատերազմական զինուք»⁴⁶⁸: Ըստ թուրք պատմագիր Նախմայի, ստանալով Իրանի Շահ Աբասի զորքի առաջխաղացման լուրը, Երևանի օսմանյան կառավարիչները հասկանում են, որ Նախիջևանից նահանջող իրենց զինվորներին Երևանի ամրոցում տեղավորել չեն կարող, որոշում են ամրոցի հարավային կողմից պարսպին կից մուսուլմանների տների հատվածում նոր պարիսպ կառուցել: Արդյունքում, նրանք ամրոցի հարավային, արևելյան և արևմտյան կողմերում նոր ու բարձր պարիսպներ են կառուցել⁴⁶⁹: Նմանապես, Իսքանդար Մունշին հաղորդում է, որ նահանջած 10 հազար զորքին Երևանի ամրոցում տեղավորելու համար նրա հարավային կողմում երեք շաբաթվա ընթացքում կառուցում են նոր պարիսպ⁴⁷⁰: Մինչ այդ, 1583 թ. կառուցվել էր երկու պարիսպ, այժմ, փաստորեն, կառուցվեցին նորերը: Պատահական չէ, որ Ժ. Շարդենը Երևանի ամրոցը նկարագրելիս վկայում է, որ «ամրոցը շրջապատված է երեք պարիսպներով»⁴⁷¹: Ըստ Իսքանդար Մունշիի՝ Երևանի ամրոցը բաղկացած էր երեք

⁴⁶⁸ Arak'el of Tabriz, p. 45.

⁴⁶⁹ "Ta'riḥ-i Na'imā: Raudat al-Ḥusain fi ḥulāṣat aḥbār al-ḥāfiqain", c. I, ʃ. 353-354.

⁴⁷⁰ "History of Shah 'Abbas the Great (Tārik-e 'Ālamārā-ye 'Abbāsi)" by Eskandar Beg Monshi, volume II, p. 833.

⁴⁷¹ "The travels of Sir John Chardin into Persia and the East Indies", the First Volume, Containing the Author's Voyage from Paris to Ispahan, London, 1686, p. 245.

բերդերից⁴⁷², հավանաբար, նկատի ունենալով ամրոցի երեք պարիսպները:

Նոր պարիսպների կառուցման հետևանքով քաղաքի մուսուլմանների աճը վկայված է արդեն 1604 թ., երբ հունիսին 8-ամսյա պաշարումից հետո Երևանի ամրոցը գրավվեց պարսկական բանակի կողմից: Բացի թշնամու կայագործից (հինգ-վեց հազար զինվոր⁴⁷³)՝ շահն ազատ արձակեց նաև Երևանի 300-400 տուն թուրքերին⁴⁷⁴: Փաստորեն, 1590 թ. համեմատ ամրոցում մուսուլմանների թիվը ավելի քան տասնապատիկ աճել էր: Գրավումից հետո, ըստ թուրքական աղբյուրի՝ սեֆյանների գործը Երևանի ամրոցը «ավերեց, այրեց ու հողին հավասարեցրեց»⁴⁷⁵: 1604 թ. դեպքերը նկարագրելիս Նախման գրում է, որ Երևանն այդ ժամանակ լավ ամրացված հզոր ամրոց էր, որի պարիսպներից վար հոսում էր գետը⁴⁷⁶:

Երևանի և շրջակա գավառների (Արարատյան երկիր) կառավարումը շահը հանձնեց կռիվներում աչքի ընկած Սմիր Գունա խանին: Նրա գործը ասպատակելով հասել էր Կարս ու Զարիշատ, երբ լուր հասավ, որ օսմանյան մի մեծ բանակ Ջղալ-օղլի Սինան փաշայի գլխավորությամբ պատրաստվում է Մշո դաշտից արշավել դեպի Երևան, որից հետո սկսվեց սեֆյանների գործի նահանջը: Այդ պայմաններում խանն իրականացրեց շահի հրամանը՝ տեղահանելու իր կառավարմանը հանձնված շրջանների (Արարատյան երկրի, այն է՝ Երևանի և շրջակա գավառների) ազգաբնակչությանը⁴⁷⁷:

⁴⁷² “History of Shah 'Abbas the Great (Tārik-e 'Ālamārā-ye 'Abbāsi)” by Eskandar Beg Monshi, volume I, translated by Roger M. Savory, Wesview Press, Boulder, Colorado, 1930, p. 540.

⁴⁷³ “Annals of the Turkish Empire”, from 1591 to 1659 of the Christian Era by Naima. Translated from the Turkish by Ch. Fraser, volume I, London, 1832, p. 264.

⁴⁷⁴ Peçevi İbrahim Efendi, Peçevi Tarihi, c. II, p. 245-246.

⁴⁷⁵ Նույն տեղում, էջ 246:

⁴⁷⁶ “Annals of the Turkish Empire”, by Naima, volume I, p. 248.

⁴⁷⁷ Arak'el of Tabriz, p. 58-59. “History of Shah 'Abbas the Great (Tārik-e 'Ālamārā-ye 'Abbāsi)” by Eskandar Beg Monshi, volume II, p. 859.

Մինան փաշայի գործը, անցնելով ամայացված տեղանքով, հյուծվել էր, ուստի հեռացավ Վան՝ ձմեռելու: Ըստ Առաքել Դավրիժեցու՝ այս շրջանում Արարատյան երկիրը լքած Շահ Աբասը Ամիր Գունա խանին գործով ուղարկել էր Նախճավան՝ հրամայելով թույլ չտալ հակառակորդին ամրանալու այդ կողմերում: Խանին հաջողվեց պարտության մատնել օսմանյան զորաբանակին և այդ շրջանը պահել շահի իշխանության ներքո⁴⁷⁸: Իսկ Արարատյան երկիրը՝ Երևանով, մնաց օսմանյան բանակների կողմից ռազմակալված վիճակում, որտեղ նրանք պատրաստվում էին պատերազմելու Ամիր Գունա խանի գործի դեմ:

1606 թ. սեֆյաններին հաջողվեց վճռական ճակատամարտում պարտության մատնել օսմանյան բանակին, որից հետո նրանք տիրեցին Հայաստանի ու Վրաստանի ընդարձակ շրջանների: Ձեռք բերված ավարն ամբողջությամբ տեղափոխվեց Երևանի ամրոց: Շահի հրամանով ամրոցը կրկին վերանորոգվեց: Ըստ Իսքանդար Մունշիի՝ շահի հրամայում է Ամիր Գունա խանին վերանորոգել Երևանը և այդ նպատակով մարդիկ է տրամադրում, սակայն օսմանյան բանակի հարձակման մասին լուրը ստանալով՝ որոշում է առժամանակ հետաձգել ամրոցի վերանորոգումը⁴⁷⁹: Այն ի վերջո վերանորոգվում է 1607 թ.⁴⁸⁰:

Ամիր Գունա խանը այնուհետև 1607-1610 թթ. զբաղվեց Երևանը և հարակից շրջանները վերականգնելու ու հավատարիմ հպատակներով մասամբ վերաբնակեցնելու աշխատանքներով: Ըստ Ջաքարիա սարկավազի՝ Ամիր Գունա խանը զարկ է տվել քաղաքի վերակառուցմանը և բնակչության ավելացմանը⁴⁸¹, որ հետևանքով շուտով Երևանը կրկին հանդես է եկել որպես բազմամարդ քաղաք: Ըստ Իսքանդար Մունշիի՝ Ամիր Գունա խանը դիտավորյալ չէր շենացնում Երևանի գավառը, քանի որ ուզում էր նախապես ամրապնդել իրանական իշխանությունը

⁴⁷⁸ Arak'el of Tabriz, p. 80.

⁴⁷⁹ "History of Shah 'Abbas the Great (Tārik-e 'Ālamārā-ye 'Abbāsi)" by Eskandar Beg Monshi, volume II, p. 879:

⁴⁸⁰ Նույն տեղում, էջ 911:

⁴⁸¹ Ջաքարիա սարկավազ, հ. Ա, էջ 45:

Ադրբեջանում (Արաքս գետից հարավ): Երևանի գավառն այդ ժամանակ պատերազմներից լիովին ավերվել էր: Խանն իր հավատարիմներով հաստատվեց Երևանի ամրոցում, իսկ զորքին տեղավորեց շրջակայքում՝ քաղաքում և ավերակ գյուղերում: Նրա հրամանով Երևանի գավառ են տեղափոխվում նաև թուրքմենական ցեղեր Ադրբեջանից⁴⁸²: Բացի նրա հավատարիմ հպատակներից, որ տեղափոխվում էին Ատրպատական-Ադրբեջանից և այլ վայրերից ու բնակեցվում ամրոցում, նա այստեղ էր բերում ու հատկապես ամրոցից դուրս գտնվող բնակավայրերում տեղավորում նաև մեծաթիվ հայերի ասպատակված Բարձր Հայքից, մասամբ նաև՝ Տարոնից և Վասպուրականից: Ըստ Ջաքարիա սարկավագի՝ Ամիր Գունա խանը «Բ անգամ գնաց ի գաւառ Կարնու, աւերեաց և գերեաց գերկիրն, և եհաս մինչ ի դուռն ամրոցին. և զգերիսն բերեալ յերկիրն Երևանայ բնակեցոյց: Այլ և գնաց կողմամբն Վանայ և Սշոյ. և գերեալ զնոսա՝ եբեր զգերիսն և բնակեցոյց ի նահանգն որ ի մէջ Երևանու [և Էջմիածնայ] ի դաշուն»⁴⁸³: Փաստորեն, Երևանում և Արարատյան երկրում վերաբնակեցվել են հիմնականում Բարձր Հայքի բռնագաղթեցված հայեր, իսկ Վասպուրականից ու Տարոնից բռնագաղթեցվածների տեղավորել են Երևանի և Էջմիածնի միջև ընկած բնակավայրերում, այդ թվում՝ Փարաքար գյուղում:

Ըստ Էվլիյա Չելեբիի՝ 1635 թ. իրանական զորքերի կողմից քաղաքի գրավումից հետո Երևանի ամրոցի արևելյան կողմում նոր պարիսպներ են կառուցվել⁴⁸⁴, իսկ ըստ Քաթիր Չելեբիի՝ ամրոցն ընդհանուր առմամբ վերակառուցվել է⁴⁸⁵:

⁴⁸² “History of Shah 'Abbas the Great (Tārik-e 'Ālamārā-ye 'Abbāsi)” by Eskandar Beg Monshi, volume II, p. 930-931.

⁴⁸³ Ջաքարիա սարկավագ, հ. Ա, էջ 46:

⁴⁸⁴ “Narrative of Travels in Europe, Asia, and Africa in the Seventeenth Century”, by Evliya Efendy, p. 153-154.

⁴⁸⁵ “Cronologia storica scritta in lingua Turca, Persiana, & Araba, da Hazi Halifé Mustafá” (Taqwīm at-Tawārikh), Etradotta nell’Idioma Italiano, Da Gio: Rinaldo Carli, In Venetta, 1697, p. 161.

Երևանը XVI դ. վերջին և XVII դ. 1679 թ. երկրաշարժը

Ինչպես ասվեց, դեռևս XV դ. սկզբի դրությամբ Երևանը հիշատակվում է որպես «մայրաքաղաք»: Երևանի ամրոցից դուրս տարածվող քաղաքի մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար սկզբնաղբյուրներում պահպանվել են բավարար տեղեկություններ:

Ի սկզբանե պետք է նշել, որ թեև 1580-ական թթ. սկզբների օսմանյան ասպատակությունները վնասեցին քաղաքային կյանքի զարգացմանը, բայց այն կանգ չառավ: Օրինակ՝ Ջ. Նյուբերին 1581 թ. դրությամբ հիշատակում է Երևանի շուկայում իրականացվող առևտրի մասին⁴⁸⁶:

Ուշագրավ է, որ 1608 թ. Երևանը հիմնականում հաղթահարել էր պատերազմների հետևանքները և վերականգնել իր նախկին վիճակը: Ըստ Իսպանիայի թագավորի պատվիրակ Անտոնիո դե Գուվեայի 1608 թ. հիշատակության՝ «Երևանը ամբողջ Մեծ Հայքի կարևորագույն քաղաքն ու մայրաքաղաքն է, ամբողջովին բնակեցված է հայերով, հողը մշակելի է ու բերրի և հարուստ ամեն տեսակի մթերքներով»⁴⁸⁷: Այստեղ բացի բարեկեցիկ վիճակի ներկայացումից, հույժ կարևոր է այն, որ Երևանն այդ շրջանում բնակեցված էր հայերով, այսինքն՝ ժողովրդագրական առումով ևս քաղաքում զգալիորեն հաղթահարվել էին մեծ բռնագաղթի հետևանքները: Սակայն բնակչությունը Երևանում էապես նոսրացել էր, որն էլ արձանագրել է իտալացի ճանապարհորդ Պ. Դելլա Վալլեն (1586-1652)՝ 1624-1628 թթ. Սեֆյան Իրանի աշխարհագրությունը ներկայացնելիս: Նա գրում է, որ խանի

⁴⁸⁶ Purchas S., Hakluytus Posthumus or Purchas His Pilgrimes, p. 469.

⁴⁸⁷ "Relation des Grandes Guerres et Victoires Obtenues par le Roy de Perse Cha Abbas Contre les Empereurs de Turquie Mahomet et Achmet Son Fils. Par le P. Fr. Anthoine de Gouvea". Traduit de L'original Portugais. A Rouen, 1646, p. 225.

նատավայր Երևանը (ըստ հեղինակի՝ Իրովան) «ավելի քիչ բնակչություն ունի, քան նախկինում»⁴⁸⁸:

1635 Երևանը սկզբում գրավվեց օսմանյան բանակի, իսկ հետո վերանվաճվեց սեֆյանների կողմից⁴⁸⁹: Ըստ թուրք հեղինակ Քաթիբ Չելեբիի՝ այդ շրջանում Երևանի ամրոցը կավաշեն էր, բայց ամրակուտ: Այն երկու դարպաս ուներ՝ հարավային՝ Թավրիզի և հյուսիսային՝ Շիրվանի: Քաղաքը շրջապատված էր այգիներով և խաղողի տնկիներով, հողն այնտեղ արգավանդ էր: Այնտեղ կար շուկա, մզկիթ և գետի տեսարանով պալատ⁴⁹⁰: Փաստորեն, հեղինակը նկարագրում է միայն Երևանի ամրոցը:

XVII դ. առաջին կեսին Երևանում տիրող իրավիճակի և բնակչության վերաբերյալ խիստ կարևոր են ճանապարհորդների հաղորդած տեղեկությունները: Ֆրանսիացի ճանապարհորդ Ժ.Բ. Տավերնիեն, որ 1630-ական թթ. և այնուհետև եղել է Երևանում, ուշագրավ տեղեկություններ է հաղորդում ամրոցի (ըստ հեղինակի՝ քաղաք) և արվարձանների մասին: Ըստ նրա՝ Երևանը գտնվում էր երկու կայսրությունների սահմանին և գրավվել ու վերագրավվել էր նրանցից յուրաքանչյուրի կողմից: Դրանց պատճառով հին քաղաքը, այսինքն՝ ամրոցը, ավերվել էր (խոսքը հավանաբար սեֆյանների բանակի կողմից Երևանի ամրոցի՝ 1604 թ. ավերման մասին է) և կառուցվել էր նորը՝ 800 քայլ այն կողմ՝ ժայռի վրա, որից ներքև հոսում էր արագընթաց գետը⁴⁹¹: Ամրոցն ուներ երկու շարք պարիսպ՝ ամրացված աշտարակներով: Ամրոցում ապրում էր խանն իր սպաներով ու զինվորներով: Ամրոցից հյուսիս-արևմուտք գտնվում էր արվարձանը, որտեղ 20 անգամ ավելի ժողովուրդ կար, քան քաղաքում (իմա՝ ամրոցում):

⁴⁸⁸ Brentjes S., Schüller V., Pietro Della Valle's Latin Geography of Safavid Iran (1624-1628): Introduction // "Journal for Early Modern History", 10, Leiden, 2006, p. 192.

⁴⁸⁹ "The Cambridge History of Iran", volume 6, p. 284-285.

⁴⁹⁰ "Gihan Numa, Geographia Orientalis", ex Turcico in Latinum versa, Matth. Norberg, pars prima, Göteborg, 1818, p. 555.

⁴⁹¹ "The Six Voyages of John Baptista Tavernier, a Noble Man of France Now Living, Through Turkey into Persia, and the East-Indies, finished in the Year 1670", made English by J.P. London, 1678, p. 13.

Արվարձանում էին ապրում բոլոր վաճառականներն ու արհեստավորները, այն հայերի բնակատեղին էր, որոնք այնտեղ չորս եկեղեցի և մեկ վանք ունեին: Ժ.Բ. Տավերնիեի առաջին այցից ոչ շատ առաջ (1630-ական թթ.) նրանք արվարձանում նաև մի հյուրանոց էին կառուցել⁴⁹²: Նրա կողմից կազմված Երևանի առաջին գծապատկերում շեշտված է, որ «արվարձանները՝ բնակեցված քրիստոնյա հայերով»⁴⁹³: Մեկ այլ առիթով հեղինակը դարձյալ գրում է. «Երևանը բնակեցված է բացառապես հայերով»⁴⁹⁴: Դա նման է 1670-ական թթ. սկզբներին Երևանում եղած և 1676 թ. իր ուղեգրությունը շարադրած Յա. Ստրույսի վկայությանը, թե «Երևանում մեծավ մասամբ ապրում են աղքատ հայեր»⁴⁹⁵:

Հուլիս կարևոր են Ժ.Բ. Տավերնիեի կողմից կազմված՝ Երևանի երկու գծապատկերները, որտեղ, ի թիվս հեղինակի վեց ճանապարհորդությունների ընթացքում ձեռք բերած տեղեկությունների, արտացոլված են նաև քաղաքի՝ 1630-ական թթ. իրողությունները⁴⁹⁶: Երևանի ամրոցի դիմաց՝ Հրազդան (Չանգու) գետի մյուս ափին գտնվող բլրի վրա, որտեղ ներկայումս տեղակայված է «Արարատ» կոնյակի գործարանը, պատկերված է պաշտպանական մի ամրություն, որը հիշատակում է նաև Ժ. Շարդենը՝ կոչելով Կեչիկալա⁴⁹⁷: Ըստ Ժ.Բ. Տավերնիեի՝ այն կառուցել է տվել Իրանի շահ Սեֆի Ա-ն (1629-1642)՝ քաղաքին հարվածելու համար: Բուն ամրոցի և արվարձանի միջև ներկայացված է անբնակ տա-

⁴⁹² “Les Six Voyages de Jean Baptiste Tavernier, écuyer baron d’Aubonne, qu’il a fait en Turquie, en Perse, et aux Indes”, p. 1, Paris, 1679, p. 38. “The Six Voyages of John Baptista Tavernier”, p. 13-14.

⁴⁹³ “Les Six Voyages de Jean Baptiste Tavernier”, p. 1, p. 40-41, “The Six Voyages of John Baptista Tavernier”, p. 15.

⁴⁹⁴ “Les Six Voyages de Jean Baptiste Tavernier”, p. 1, p. 40-41, p. 623.

⁴⁹⁵ Struys J. J., Drie aanmerkelyke en zeer rampspoedige Reizen, Door Italien, Griekenland, Lyfland, Moscovien, Tartaryen, Meden, Persien, Oostindien, Japan, en verscheiden andere Gewesten, Haarlem, 1741, b. 229-230.

⁴⁹⁶ “Les Six Voyages de Jean Baptiste Tavernier”, p. 1, p. 40-41, “The Six Voyages of John Baptista Tavernier”, p. 15.

⁴⁹⁷ “The travels of Sir John Chardin into Persia and the East Indies”, volume I, p. 246.

րածություն, որտեղ կային շուկաներ: Հստակորեն գծագրված են Չորագյուղը և Երևանի մյուս հատվածները, որտեղ բնակելի տները հիմնականում երկհարկանի կամ եռահարկ են: Արվարձանի (բուն քաղաք) կենտրոնում գծագրված է եկեղեցի, իսկ նրանից այն կողմ՝ քաղաքի ծայրամասում, վանք⁴⁹⁸: Ինչ վերաբերում է Երևանի այգիներին կամ ծառաստաններին, ապա դրանք պատկերված են Հրազդան գետի երկու ափերին, մասնավորապես Առաքել Դավրիժեցու մատնանշած հատվածում՝ ներկայիս Ս. Զորավոր եկեղեցու (Ս. Անանիայի վանքի) շրջակայքում⁴⁹⁹: Հետաքրքրական է, որ XVII դ. սկզբին Ս. Անանիայի վանքը, ըստ Առաքել Դավրիժեցու՝ «կայ յեզր քաղաքին»⁵⁰⁰: Գծապատկերում նշված է նաև, որ մեծ քարավանային ճանապարհը Երևան էր մուտք գործում քարե կամրջի վրայով արևմտյան կողմից, իսկ Երևանից երկու խոշոր մայրուղիներ շարժվում էին Թիֆլիս և Թավրիզ⁵⁰¹:

Ժ-Լ. Առնոն, անդրադառնալով Ժ. Բ. Տավերնիեի կազմած՝ Երևանի երկու գծապատկերներին, այն կարծիքն է արտահայտել, որ նրա աշխատության 1676 թ. և 1679 թ. հրատարակություններում ներկայացված պատկերների միջև թեև առկա են էական տարբերություններ, սկնհայտ է, որ հեղինակը իր մանրամասն դիտարկումների, գուցե նաև այլ հեղինակներից վերցրած տեղեկությունների հիման վրա հետագայում փորձել է հստակեցնել քաղաքի պատկերը: Ըստ որում, չնայած էական տարբերություններին, երկու գծապատկերներում կան նաև նմանություններ, ին-

⁴⁹⁸ Ժ. Բ. Տավերնիեի գծապատկերների մի ատլաս հրատարակվել է 1810 թ., որտեղ առկա է Երևանի՝ այլ տեղում չհանդիպող պատկեր: “Atlas des voyages de Tavernier”, contenant La Carte d’Asie et vingt - trois Planches, gravées par Tardieu, aîné // “Bibliothèque portative des voyages”, tome XLIX, Paris, 1810, pl. V.

⁴⁹⁹ Arak’el of Tabriz, p. 235.

⁵⁰⁰ Նույն տեղում, էջ 188:

⁵⁰¹ “Les Six Voyages de Jean Baptiste Tavernier”, p. 1, p. 40-41.

չը հուշում է, որ երկրորդ գծապատկերը կազմված է առաջինի հիման վրա⁵⁰²:

Երևանի ամրոցի՝ XVII դ. առաջին կեսի կառուցվածքի մասին էական հավելումներ է պարունակում Էվլիյա Չելեբիի կողմից Երևանի նկարագրությունը 1640-ական թթ. դրությամբ. «Ամրոցը գտնվում է Զանգի գետի եզերքին, ձգված է հարավից դեպի հյուսիս և շատ նեղ է: ...Ունի երեք երկաթե դարպաս. դեպի հարավ՝ Թավրիզի դարպասը, դեպի հյուսիս՝ Մեյդանի դարպասը՝ Յայլայի դարպաս կոչվող, ...դեպի արևմուտք՝ կամրջի դարպասը: ...Քաղաքը բաղկացած է 2060 հողածածկ տներից⁵⁰³, լավագույնը խանի պալատն է, որը շատ է զարդարվել Էմիրգունեի կողմից: Դրա մոտ է դրամահատարանը...: Յայլայի դարպասից դուրս գտնվող արվարձանը կոչվում է հին քաղաք. կամուրջի գլխին Խանի այգին է և արվարձան՝ մզկիթով և բաղնիքով»⁵⁰⁴:

Էվլիյա Չելեբիի տեղեկությունից կարելի է թյուրիմացաբար եզրակացնել, թե 2060 տների գտնվելու վայրը ամրոցից դուրս գտնվող հին քաղաքը կամ արվարձանն էր: Իրականում Էվլիյա Չելեբին այդ տները ներկայացնում է ոչ թե հին քաղաքում կամ արվարձանում, այլ քաղաքում, որտեղ, ի դեպ, գտնվում էին նաև խանի պալատն ու դրամահատարանը: Այսինքն՝ քաղաք ասելով, ի տարբերություն հին քաղաքի, նա նկատի ունի ամրոցը: Այնուհետև, հեղինակը նոր միայն խոսում է հին քաղաքի մասին, ցավոք, չհայտնելով տեղեկություններ ո՛չ տների քանակի և ո՛չ էլ բնակչության մասին: Ուստի պետք է արձանագրել, որ այդ 2060 հողածածկ տները ոչ թե հին քաղաքում էին կամ արվարձանում, այլ ամրոցում: Իսկ ամրոցում բնակվողների թիվն ընդհանրապես նախկինում չի քննարկվել: Եթե որպես այդպիսիք ընկալվեն ամ-

⁵⁰² Arnaud Jean-Luc. L'image des villes dans les Six voyages de Jean-Baptiste Tavernier. De l'auteur à l'éditeur. In: Anatolia moderna - Yeni anadolu, Tome 9, 2000. pp. 99-100.

⁵⁰³ Անգլերեն թարգմանության մեջ սխալմամբ նշված է 1060: "Narrative of Travels in Europe, Asia, and Africa in the Seventeenth Century", by Evliya Efendy, p. 153.

⁵⁰⁴ Նույն տեղում:

րոցապահ զինվորները (շուրջ հինգ-վեց հազար⁵⁰⁵), ապա Երևանի արվարձանի կամ հին քաղաքի հայության թիվը, որ ըստ Ժ.Բ. Տավերնիեի գրեթե նույն ժամանակ 20 անգամ ավելի էր ամրոցում ապրողներից, պետք է կազմեր շուրջ 100 հազար մարդ, ինչն անհավանական է: Ամենայն հավանականությամբ Էվլիյա Չելեքին նկատի է ունեցել միայն ամրոցի խաղաղ բնակչությունը: Պետք է նշել, որ ամրոցը հիմնականում բնակեցված էր մուսուլմաններով, իսկ հին քաղաքը՝ հայերով: Այդպես էր նաև 1700 թ. դրությամբ: Այդ ժամանակ Երևան այցելած գերմանացի ճանապարհորդ Ֆ. Կ. Շիլլինգերը պատմում է, որ ամրոցում ապրում էին միայն պարսիկներ, իսկ արվարձանում նրանցից 10 անգամ ավելի շատ հայեր⁵⁰⁶:

Երևանի՝ 1670-ական թթ. սկզբի (1672 թ.) իրադրության մանրամասն նկարագրությունը պահպանվել է ֆրանսիացի ճանապարհորդ Ժ. Շարդենի ուղեգրության մեջ: Հեղինակը Երևանը կոչում է «Մեծ Հայքի մայրաքաղաք»⁵⁰⁷: Երևանի նկարագրության մեջ հեղինակը լավագույնս ներկայացնում է քաղաքի պատկերը: Հեղինակը Երևանը ներկայացնում է որպես մեծ, բայց անհրապույր քաղաք⁵⁰⁸, թեև դա հակասության մեջ է մտնում իր իսկ այլ վկայությունների, ինչպես նաև այլ ճանապարհորդների տեղեկությունների հետ: Երևանի ամրոցը, որը փոքր քաղաքի էր նման, ընդգրկում էր մինչև 800 տուն: Այնտեղ ապրում էին «բնիկ պարսիկներ», իսկ հայերը միայն վաճառատներ ունեին, որտեղ նրանք աշխատում և առևտուր էին անում ցերեկը, իսկ երեկոյան հեռանում քաղաքում գտնվող իրենց տները: Ամրոցը հյուսիսարևմտյան հասվածում ձգվում էր ձորի եզերքով, բաղկացած էր եզրային աշտարակներով երեք շարք պարիսպներից և ուներ չորս դար-

⁵⁰⁵ “Annals of the Turkish Empire” by Naima, volume I, էջ 264:

⁵⁰⁶ Schillinger F. C., *Persianische und Ost-Indianische Reis*, Nürnberg, 1707, S. 118.

⁵⁰⁷ “Voyages du chevalier Chardin en Perse et autres lieux de l’Orient”, nouvelle édition, de notes, etc. par L. Langlès, tome II, Paris, 1811, p. 128.

⁵⁰⁸ “The Travels of Sir John Chardin into Persia and East Indies”, volume I, p. 245.

պաս: Խանի պալատը, որը գեղեցիկ ու մեծ շինություն էր, գտնվում էր ամրոցում՝ ձորաբերանին: Ամրոցից քիչ հեռու գտնվում էր Կետչիկալա կոչվող փոքրիկ բերդը: Ըստ Ժ. Շարդենի արժեքավոր տեղեկության՝ բուն Երևան քաղաքը գտնվում էր ամրոցից թնդանոթային կրակոցի հեռավորության վրա: Քաղաքի կենտրոնում գործում էին շուկաներ և խարխուլ շինություններ: Քաղաքում գործող գլխավոր եկեղեցիներից մեկը Եպիսկոպոսանիստ էր և կոչվում էր Իրկոու-երիզե, այսինքն՝ երկու երես⁵⁰⁹, իսկ մյուսը՝ Կաթովիկե⁵¹⁰: Ըստ հեղինակին հասած լուրերի՝ այդ եկեղեցիները կառուցվել էին Հայոց թագավորության ժամանակ, իսկ մյուսները՝ ավելի ուշ: Եպիսկոպոսանիստ եկեղեցու մոտակայքում գտնվում էր մի հին աշտարակ՝ կառուցված տաշած քարից և վիմագրերով, որոնք նման էին հայերենին: Այդ աշտարակն առանձնահատուկ ճարտարապետություն ուներ: Եպիսկոպոսանիստի հարևանությամբ գործում էր մեծ շուկան, որի կողքին կիսավեր մզկիթ կար, որը կոչվում էր Դիվ-սուլթան՝ XVI դ. սկզբի տիրակալներից մեկի անունից: Քիչ հեռու գտնվում էր քառանկյուն ընդարձակ հրապարակը՝ շրջապատված ծառերով: Քաղաքում և ամրոցում շատ բաղնիքներ ու իջևանատներ կային: Ամենագեղեցիկ իջևանատունը գտնվում էր ամրոցում՝ խանի պալատից քիչ հեռու: Իջևանատան միջանցքի երկարությամբ գործում էին կտորեղենների կրպակներ, իսկ բուն շենքում՝ մեծ խանութներ: Նրա դիմաց գտնվում էր ամրոցի շուկան՝ պարենամթերքի կրպակներով շրջապատված, իսկ կողքին՝ մզկիթը և երկու սրճարաններ: Ժ. Շարդենի վկայությամբ՝ Երևանի հողը շատ բերրի էր: Քաղաքի եզրերով հոսող երկու գետերը և Գեղարքունի (Սևանա) լիճը քաղաքի բնակիչներին ապահովում էին ձկով: Ժ. Շարդենը գրուցել էր հայերի հետ, և պատմում է, որ նրանց կարծիքով Երևանն աշխարհում ամենահին բնակավայրն էր, քանի որ այն-

⁵⁰⁹ Ամենայն հավանականությամբ, խոսքը Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու (հավանաբար, Երկուերենի) մասին է:

⁵¹⁰ Բմա՝ Կաթողիկե:

տեղ է ապրել Նոյն իր ընտանիքով: Հայերը պնդում էին նաև, որ հենց այնտեղ է գտնվել երկրային դրախտը⁵¹¹:

Ժ. Շարդենի նկարագրությունից կարճ ժամանակ անց Երևանը ենթարկվեց բնական սարսափելի աղետի և մեծ վնասներ կրեց: Երևանի կամ Գառնիի անունով հայտնի երկրաշարժը⁵¹² սկսվեց 1679 թ. հունիսի 4-ին և պարբերաբար կրկնվեց մի քանի օր: Ամենաուժգին ու ավերիչ ցնցումները առաջինը և վերջինն էին: Ըստ ժամանակագրի՝ «Եւ ի սաստկութենէ շարժիս բլաքաղաքն Երևան հանդերձ բերդով և պարսպաւ, կործանեցան տունք և ապարանք գեղեցկաշէնք, քակեցան եկեղեցիք և վանորայք, ցամաքեցան աղբիւրք...: Իսկ մեռելոցն ոչ գոյր թիւ»⁵¹³:

Ըստ Չաքարիա սարկավագի՝ ավերվեցին երեք եկեղեցիներ բուն Երևանում, ինչպես նաև Չորագյուղի եկեղեցին: Իսկ «...բերդն Երևանայ ի հիմանց տապալեցաւ»: Երկրաշարժից Երևանը սնուցող աղբյուրները խցանվեցին և ջրի խնդիր առաջացավ⁵¹⁴:

Երկրաշարժի հասցրած վնասը և մարդկային կորուստները մանրամասնորեն նկարագրում է Չաքարիա Ագուլեցին. «Երևանայ բ եկեղեցին, Երևանայ անապատն, Չորայգեղու եկեղեցին ... ամէն վեր եկաւ: ...Երևանայ բերթն, խանի տներն ... ամէն վեր եկավ: Մինչի Ը (8), Թ (9) օրի հողի տակին մեռել ին հանում: Տուն կեր մին Ե (5), Ը (8), Թ (9) ջան մեռավ: Այս երկրումս ԷՌԶՃ (7600) ջան մեռաւ»⁵¹⁵:

Սակայն շուտով, նաև հարևան խանությունների աջակցությամբ, ամբողջ վերականգնվեց «ամրագոյն քան զառաջինն»:

⁵¹¹ “The Travels of Sir John Chardin into Persia and East Indies”, volume I, p. 246-248.

⁵¹² Ambraseys N., Earthquakes in the Eastern Mediterranean and the Middle East, A Multidisciplinary Study of Seismicity up to 1900, Cambridge University Press, 2009, p. 519.

⁵¹³ «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, էջ 279, ծանոթ. 65:

⁵¹⁴ «Չաքարեայ սարկավագի պատմագրութիւն», հ. Բ, Վաղարշապատ, 1870, Չաքարիա սարկավագ, հ. Բ, էջ 104:

⁵¹⁵ «Չաքարիա Ագուլեցու որագրությունը», Երևան, 1938, էջ 143:

«Եւ զկամուրձն՝ որ ի ներքոյ ամրոցին էր ի վերայ Հուրաստան գետոյ՝ որ ասի Զանկի, գնա ևս շինեցին ամրագոյն. և գառուքն՝ որք խափանեալ էին, նորոգեցին, և բերին զջուրն ի քաղաքն Երևան»։ Երևանի Զալ խանի հրամանով արագորեն վերակառուցվեցին ավերված եկեղեցիները⁵¹⁶։ «Եւ ապա հաստատեցաւ [Զալ խանը] կարգն Երևանայ ամենայն պիտոյիւք մարմնաւորօք՝ որքան և իշխէր սա Երևանայ»⁵¹⁷։

Պետք է նշել, որ, չնայած 1679 թ. երկրաշարժի աղետալի հետևանքներին, քաղաքի կառուցվածք-հատակագիծը հիմնականում չի փոխվել, ինչը երևում է Երևանի՝ եվրոպացի ճանապարհորդների թողած մինչեւ երկրաշարժյան և հետեւ երկրաշարժյան կացության մանրակրկիտ նկարագրություններից։

Երևանը 1679 թ. երկրաշարժից հետո

Սկզբնաղբյուրների տեղեկությունները ցույց են տալիս, որ երկրաշարժից հետո Երևանի պատկերը էապես չի փոխվել։ 1701 թ. օգոստոսի 8-ին Երևան այցելած ֆրանսիացի ճանապարհորդ Ժ. Պ. Տուրնեֆորը այն հիշատակում է որպես «նշանակալի քաղաք և Պարսկական Հայաստանի մայրաքաղաք»։ Քաղաքը գտնվում էր ոչ մեծ բլրի վրա և լի էր այգիներով, իսկ տները հիմնականում մեկ հարկանի էին, կավաշեն, որոնցից յուրաքանչյուրը պարսպապատ էր։ Քաղաքի պարիսպները որոշ տեղերում ունեն կրկնակի արևի տակ չորացրած ցեխից պատնեշներ։ Քաղաքի ամենաբարձրադիր մասում գտնվող ամրոցի պարիսպները որակապես շատ ավելի լավը չէին, բայց եռաշար էին։ Այդ օվալաձև ամրոցում մուսուլմանների ավելի քան 800 տուն կար։ Հայերն այնտեղ աշխատում էին, իսկ գիշերը վերադառնում քաղաքում գտնվող իրենց տները։ Ամրոցում 2500 զինվորից բաղկացած կայազոր կար։ Ամրոցի հյուսիսային կողմը լիովին անառիկ էր, քանի որ գտնվում էր անդունդի կողմում։ Ամրոցի դարպասները պատված էին երկաթով։ Հեղինակը ենթադրում է, որ հին քաղաքը

⁵¹⁶ Զաքարիա սարկավազ, հ. Բ, էջ 105։

⁵¹⁷ Նույն տեղում։

հզոր պաշտպանություն է ունեցել, բայց հետագայում ավերվել է թուրք-պարսկական պատերազմների ընթացքում⁵¹⁸:

Քաղաքից հարավ, ամրոցից մեկ մղոն մոտ հեռավորության վրա, գտնվում էր Կետչիկալա ամրոցը՝ պաշտպանված կրկնակի պարսպով: Բուն ամրոցին կարելի էր մոտենալ եռակամար կամրջով: Այնուհետև Ժ. Պ. Տուրնեֆորը նկարագրում է Երևանի ամրոցը: Նրան հատկապես տպավորել էր խանի պալատը իր մեծությամբ և կառուցվածքով: Հրապարակը պատված էր գեղեցիկ ծառերով: Շուկան, բաղնիքներն ու քարավանատները վատ տեսք չունեին, հատկապես վերջերս ամրոցի հարևանությամբ կառուցված քարավանատունը գեղեցիկ էր: Քաղաք մտնելիս տպավորություն էր, որ հայտնվել էս տոնավաճառում կամ շուկայում, քանի որ մուտքով անցնելիս կողքերը ամենուր տարբեր ապրանքներ էին շարված: Այնուհետև, նկարագրելով հին քաղաքը, հեղինակը նշում է, որ եկեղեցիները փոքր էին և կիսով չափ ստորգետնյա: Եպիսկոպոսանիստն ու Կաթովիկ կոչվածը ըստ լուրերի կառուցվել էին հայոց վերջին թագավորների ժամանակներում: Եպիսկոպոսի նստավայրի կողքին մի հին արևելյան ոճով կառուցված աշտարակ կար, որը գեղեցիկ շինվածք ուներ: Տեղացիները չգիտեին ո՛չ դրա կառուցման նպատակը և ո՛չ էլ ժամանակը: Ինչ վերաբերում է քաղաքի մզկիթներին, ապա դրանցում որևէ առանձնահատուկ բան չկար: Քաղաքում շրջելուց հետո Ժ. Պ. Տուրնեֆորը այցելեց հայոց հայրապետին, որը օթևանել էր քաղաքից դուրս գտնվող հին վանքում⁵¹⁹, որը, հավանաբար, Ս. Անանիայի վանքն էր: Ակնհայտ է, որ Ժ. Պ. Տուրնեֆորի նկարագրությունը հիշեցնում է Ժ. Շարդենի պատմածը Երևանի մասին, ինչից պարզ է, որ երկրաշարժի հետևանքով քաղաքի կառուցվածքում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Երևան քաղաքի՝ XVIII դ. սկզբի իրավիճակի մասին կարևոր տեղեկություններ են պահպանվել Աբրահամ Երևանցու գրքում: Ըստ նրա՝ 1724 թ. օսմանյան բանակի արշավանքի ժա-

⁵¹⁸ Tournefort J.P., A Voyage into the Levant, perform'd by Command of the Late French King, volume III, London, 1741, pp. 178-179.

⁵¹⁹ Նույն տեղում, էջ 180-182:

մանակ Երևանի հին քաղաքի հայերի շրջանում իրականացվել է ընդհանուր գորահավաք ըստ թաղամասերի. Հին Երևանի թաղից չորս հազար զինվոր է հավաքվել, իսկ Ջուհայրենց թաղից՝ 955: 234 զինվոր հավաքել են Կոնդի բռշաները, շուրջ 4000 զինվոր՝ Ձորագյուղի բնակիչները և այնտեղ ապաստանած փախստականները⁵²⁰: Փաստորեն, Երևան բաղկացած էր Հին Երևան, Ջուհայրենց ու Կոնդ թաղամասերից և Ձորագյուղից: Վերջինս գտնվում էր Կոնդի հարևանությամբ՝ Հրազդան գետի ձախ ափին, ամրոցից հյուսիս: Մյուս թաղամասերը տարածվում էին Ձորագյուղից դեպի արևելք: Քաղաքը հյուսիսում ավարտվում էր Կոնդ թաղամասի հյուսիսարևմտյան ծայրամասում գտնվող Երևանի հնագույն գերազմանոցով, որը զարգացած միջնադարի հայտնի պատմագիր և տոմարագետ Հովհաննես Կոզեռնի անունից, որ թաղված էր այնտեղ, հայտնի էր «Կոզեռնի գերեզմանոց» անունով⁵²¹: Արևելյան կողմից քաղաքը շրջապատված էր խիտ այգեստաններով, որոնք պաշտպանում ու պատսպարում էին այն⁵²²:

«Ռևանի գրավման մասին գրքում», որ գրվել է 1724 թ. դեպքերի ժամանակակցի կողմից, ներկայացված է Երևան քաղաքի պատկերը: Ըստ հեղինակի՝ Երևանի ամրոցի արվարձանը երկու կողմերից զառիվայր էր, իսկ ներքևում հոսում էր Զանգի գետը⁵²³: Ըստ Չելեբի-Չադեի՝ Երևանի 1724 թ. կռիվների ընդարձակ նկարագրության՝ Երևանը «մեկը մյուսից 35 քայլաչափ տարածությամբ երկու ամրակուռ և հաստատուն պարիսպներով էր շրջապատված»⁵²⁴: Դատելով թուրք հեղինակի այն տեղեկությունից, թե Երևանի ամրոցի «պաշարումը անպայմանորեն կապված էր վարոշի (արվարձան, ծայրամաս) գրավման հետ», ինչպես նաև

⁵²⁰ Abraham of Erevan, *History of the Wars (1721-1738)*, Annotated Translation from the Original Eighteenth-Century Texts with Introductory Notes by George A. Bournoutian, Costa Mesa, California, Mazda Publishers, 1999, p. 25.

⁵²¹ Ղաֆադարյան Վ., նշվ. աշխ., էջ 47:

⁵²² Abraham of Erevan, p. 26.

⁵²³ “1720-1724 Osmanlı-İran mühâsebetleri ve Silâhsör Kemânî Mustafa Ağâ'nın Revân fetih-nâmesi”, by M. Münir Aktepe, İstanbul, 1970, s. 46-47.

⁵²⁴ “Târîh-i İsmail Âsım Efendi (Çelebizâde)” // “Târîh-i Râşid Mehmed Efendi”, c. VI, İstanbul, 1865, ş. 202-221.

այն նշումից, որ օսմանյան զինվորների կողմից «վարոշի պարիսպների մոտ գտնվող և նրանց կից տները ամբողջովին հողին հավասարվեցին, և պարիսպների շրջակայքը ազատ հրապարակի վերածվեց»⁵²⁵, կարելի է հստակեցնել, որ Երևանի ամրոցի երկու պարիսպներից արտաքինի հարևանությամբ տարածվում էր մի փոքրիկ արվարձան, որը բնակեցված էր պարսիկներով: Վերջինիս առումով խիստ էական տեղեկություններ է պարունակում Էվլիյա Չելեբիի՝ Երևանի նկարագրությունը 1640-ական թթ.: Ինչպես տեսանք, նա տեղեկացնում է, որ ամրոցի հյուսիսային դարպասից այն կողմ տարածվող արվարձան-վարոշը կոչվում էր «հին քաղաք»: Ըստ որում, ինչպես տեսանք, հեղինակը հիշատակում է նաև երկրորդ արվարձանը կամրջի մերձակայքում: Հենց դա էլ օսմանյան բանակը գրավել է հայկական թաղերի ռազմակալումից հետո, քանի որ «վարոշի երկու կողմի քարքարոտ լինելը և դիմացից խիստ ուժեղ թափով հոսող Ջանգի գետը, արվարձանի (վարոշ) նվաճումն ու գրավումը դժվարացնում էին»⁵²⁶: Ըստ Թ. Կրուշինսկու՝ օսմանյան բանակը, որն արշավել է Երևանի ուղղությամբ, գրավել է այն առաջին իսկ գրոհից⁵²⁷, մինչդեռ հայտնի է, որ բուն Երևանը և Երևանի ամրոցը պաշտպանվել են շուրջ երկու ամիս⁵²⁸: Մյուս կողմից, այն իրողությունը, որ այդ արվարձանը գտնվում էր ամրոցի պարսպի հարևանությամբ, հաստատում է, որ այն հին քաղաքի հետ առնչություն չունեի, քանի որ Ժ. Շարդենի տեղեկություններից հայտնի է, որ հին քաղաքը գտնվում էր ամրոցից թնդանոթային կրակոցի հեռավորության վրա: Ճիշտ է՝ Ժ. Շարդենի տեղեկությունները վերաբերում են 1670-ական թթ. սկզբներին, որից հետո՝ 1679 թ., տեղի է ունեցել Երևանի երկրաշարժը, սակայն քաղաքի հաստակագծում երկրա-

⁵²⁵ Նույն տեղում, էջ 202-221:

⁵²⁶ Նույն տեղում:

⁵²⁷ “The History of the Late Revolutions of Persia”, taken from the Memoirs of Father Krusinski, Procurator of the Jesuits at Ispahan, the second edition, volume II, London, 1733, p. 178.

⁵²⁸ Abraham of Erevan, p. 21-29.

շարժից հետո, ինչպես տեսանք, առանձնապես զգալի փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Վերոհիշյալ տեղեկությունները հնարավորություն են տալիս ճշգրտելու Երևանի ամրոցի և երկու արվարձանների աշխարհագրական դիրքերը: Հրազդան գետի ձախ գառիվայր օփին՝ դեպի արևելք, գտնվում էր պարիսպներ ունեցող ամրոցը, իսկ նրա հյուսիսային դարպասից դուրս, արտաքին պարսպի հարևանությամբ, տարածվում էր Էվլիյա Չելեբիի հիշատակած արվարձան: Վերջինս, դատելով այն իրողությունից, որ Երևանի հին քաղաքի ինքնապաշտպանության ժամանակ ամբողջ հայությունը համախմբվել էր այնտեղ⁵²⁹, բնակեցված էր մուսուլմաններով: Բուն Երևանը կամ հին քաղաքը տարածվում էր ամրոցից թնդանոթի կրակոցի հեռավորության վրա դեպի հյուսիս և բաղկացած էր վերոհիշյալ թաղամասերից:

Հայտնի է, որ 1724 թ., գրավելով Երևանը, օսմանյան բանակը, հայության շրջանում կոտորած կազմակերպեց⁵³⁰, որի հետևանքով քաղաքում հայերի թիվը խիստ նվազեց: 1727 թ. օսմանյան հարկացուցակներից պարզ է, որ Երևանը ուներ չորս թաղամաս՝ Էսքիշեհիր (Հին քաղաք), Թեմիր Բուլակ (թարգմանաբար՝ Երկաթ աղբյուր կամ հայերի շրջանում՝ Քարահանք), Դերեքենտ (Դերեքյոյ, այսինքն՝ Ձորագյուղ) և Դեփեբաշի (կամ Թեփեբաշի՝ Կոնդ)⁵³¹: Հետաքրքիր է, որ Հին Երևան (Հին քաղաք), Կոնդ և Ձորագյուղ թաղամասերը հիշատակված են նաև Աբրահամ Երևանցու աշխատության մեջ 1724 թ. դեպքերը նկարագրելիս, իսկ Երևանի չորրորդ թաղամասը, ըստ նրա՝ Ջուհայրենց թաղն է⁵³²: Երկու տեղեկությունների համադրությամբ հնարավոր է Թեմիր Բուլակի նույնացումը Ջուհայրենց թաղին: Ռուսական զորքի կողմից Երևանի գրավումից հետո քաղաքը ուներ Շահար (Հին քաղաք, զբաղեցնում էր քաղաքի հյուսիսարևելյան հատվածը), Թափաբաշի (զբաղեցնում էր քաղաքի արևմտյան հատվածը) և

⁵²⁹ Նույն տեղում, էջ 24-27:

⁵³⁰ Նույն տեղում, էջ 29:

⁵³¹ “Başbakanlık Osmanlı Arşivi”, Tapu Tahrir Defteri, 901, s. 24-32.

⁵³² Նույն տեղում, էջ 25:

Դեմիրբուլաղ (գրադեցնում էր քաղաքի հարավարևելյան հատվածը) թաղամասերը⁵³³: Ըստ որում՝ Ձորագյուղը (Դարա-քենդ), որն այդ ժամանակ անմարդաբնակ էր, մտնում էր Թափաբաշիի թաղամասի մեջ⁵³⁴:

Ինչ վերաբերում է 1727 թ. օսմանյան հարկացուցակներին, ապա դրանց տվյալներով՝ Երևանի ամրոցում կամ Հին քաղաքում (հավանաբար, խոսքը Երևանի բուն ամրոցի մասին չէ, այլ Հին քաղաքի կամ Հին Երևանի, քանի որ հարկացուցակներում Երևանի այդ մեծագույն թաղամասը բացակայում է) կային 153 թուրք և 176 քրիստոնյա (դատելով անուններից հայ) հարկատուներ՝ իրենց ընտանիքներով և ինը քրիստոնյա ամուրի հարկատու, բոլորը միասին՝ 329 ընտանիք կամ 1654 մարդ (ինը ամուրի հարկատուն ներառյալ): Երևանի Թեմիր Բուլակ թաղամասում բնակվում էին 130 թուրք հարկատուներ՝ իրենց ընտանիքներով (բոլորը միասին՝ 650 մարդ), Դերեքոյ թաղամասում՝ 39 թուրք և 18 քրիստոնյա հարկատուներ՝ իրենց ընտանիքներով (բոլորը միասին՝ 57 ընտանիք կամ 285 մարդ) և Դեփեբաշի թաղամասում՝ 106 թուրք և 40 քրիստոնյա հարկատուներ՝ իրենց ընտանիքներով (բոլորը միասին՝ 146 ընտանիք կամ 730 մարդ): Ամրոցում և քաղաքում, ընդհանուր առմամբ, կար 662 ընտանիք (428 թուրքական և 234 քրիստոնյա կամ հայկական, ինչպես նաև ինը ամուրի քրիստոնյա) ընդամենը 3319 մարդ⁵³⁵:

Իսկ Երևանի ամրոցում դեռևս XVIII դ. սկզբին, ըստ ճիզվիտ Մոնիեի՝ ապրում էր չորս հազար մարդ, որից երեք հազարը մուսուլմաններ, իսկ հազարը՝ հայեր⁵³⁶:

Ինչպես տեսանք, Ժ. Բ. Տավերնիեն տեղեկացնում է, որ Երևանում կային չորս եկեղեցիներ և մեկ վանք: Ամենայն հավանականությամբ, չորս եկեղեցիներն էին՝ Կաթողիկե Ս. Աստվա-

⁵³³ Шопен И., Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб., 1852, с. 464.

⁵³⁴ Նույն տեղում, էջ 464-465:

⁵³⁵ “Başbakanlık Osmanlı Arşivi”, Tapu Tahrir Defteri, 901, s. 24-32.

⁵³⁶ “Nouveaux Memoires des Missions De La Compagnie De Jesus Dans Le Levant”, tome III, Paris, 1723, p. 37.

ծածին եկեղեցին՝ կառուցված նախքան XIII դարը⁵³⁷, Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին՝ կառուցված V-VI դդ.⁵³⁸, Կոնդի Ս. Հովհաննես եկեղեցին (հին եկեղեցին ավերվել է 1679 թ. երկրաշարժից, որից հետո նրա տեղում նոր եկեղեցի է կառուցվել⁵³⁹) և Գեթսեմանի մատուռը՝ կառուցված XII-XIII դդ.⁵⁴⁰, իսկ վանքը՝ Ս. Անանիայի վանքը՝ կառուցված Երևանի սահմանին հին դարերում: Վերջինս, ինչպես վկայում են Ժ. Պ. Տուրնեֆորը և Առաքել Դավրիժեցին, գտնվում էր այգիների մեջ և կտրված էր քաղաքից⁵⁴¹:

Ամփոփում

Ի մի բերելով հետազոտության արդյունքները՝ կարելի է հստակ պատկերացում տալ Երևանի՝ XVI-XVIII դդ. կառուցվածքի և հատակագծի մասին: XVI դ. վերջին, երբ կառուցվեց Երևանի նոր ամրոցը, Ծիծեռնակաբերդը աստիճանաբար կորցրեց իր նշանակությունը: Երևանի նոր ամրոցը թուրք-պարսկական պատերազմների ժամանակ բազմաթիվ կառուցումների, ավերումների և վերակառուցումների ենթարկվեց, որից հետո դարձավ տարածաշրջանի ամենամուր և կարևոր ամրոցներից մեկը: Այնտեղ XVI դ. վերջին բնակվում էին մուսուլմաններ, իսկ հետագայում՝ նաև հայեր: Ամրոցի հարավային պարսպի արտաքին կողմում XVII դ. սկզբին բնակվում էին մուսուլմաններ, որոնց տները, ամրոցի ընդարձակման պայմաններում, ընդգրկվեցին նրա մեջ: Ամրոցից դեպի հյուսիս տարածվում էր Երևան քաղաքը, որը տարբեր սկզբնաղբյուրներում, որտեղ ամրոցը կոչված է քաղաք, հիշատակվում է որպես արվարձան կամ վարոջ: Դա բուն Երևանն էր, որի թաղամասերում բնակվում էին գլխավորապես հայեր: XVII դ. վերջին և XVIII դ. սկզբին հայտնի էին քաղաքի

⁵³⁷ Ղաֆադարյան Կ., Երևանի միջնադարյան հուշարձանները, էջ 24, 26:

⁵³⁸ Նույն տեղում, էջ 32:

⁵³⁹ Նույն տեղում, էջ 46:

⁵⁴⁰ Նույն տեղում, էջ 45:

⁵⁴¹ Tournefort J.P., A Voyage into the Levant, p. 182, Arak'el of Tabriz, pp. 188, 235.

Հին Երևան, Ջուհայրենց ու Կոնդ թաղամասերը և Ձորագյուղը:
Օսմանյան սկզբնաղբյուրների տեղեկություններից կարելի է եզ-
րակացնել, որ XVII դ. ընթացքում մեկ այլ՝ պարսկական արվար-
ձան էր ձևավորվել ամրոցի հյուսիսային պարսպի արտաքին
կողմում, որը գրավվեց և ոչնչացվեց օսմանյան զորքի կողմից
1724 թ.:

Arman Yeghiazaryan

**AREA AND STRUCTURE OF YEREVAN IN XVII-XVIII
CENTURIES**

Summing up, we can get a certain idea about the structure and plan of Yerevan from the late sixteenth to the early eighteenth century. At the end of the sixteenth century, when a new fortress was built in Yerevan, the old fortress of the city – Tsitsernakaberd gradually lost its significance. The new fortress of Yerevan underwent many buildings, destructions and reconstructions during the Turkish – Persian wars from the sixteenth to the eighteenth century, after which it became one of the strongest and most important fortresses in the region. At the end of the sixteenth century, Muslims lived there, and later also Armenians. At the beginning of the seventeenth century, the part of the Muslims of Yerevan lived on the outer side of the southern wall of the fortress, whose houses, in the conditions of the expansion of the fortress, became part of it. To the north of the fortress stretched the city of Yerevan, which in various sources, where the fortress is called a city, is referred to as a suburb or varosh. It was Yerevan itself, the regions of which were inhabited mainly by Armenians. At the end of the seventeenth century and the beginning of the eighteenth century, the districts of the city were known – Old Yerevan, Juhair, Kond and Dzoragyugh. From the information of Ottoman sources, it can be concluded that during the seventeenth century, another Muslim suburb was formed behind the northern wall of the fortress, which was captured and destroyed by the Ottoman army in 1724.

Արման Եղիազարյան
Արա Հովհաննիսյան

ԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ
ԿԱԶՄԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ XIX Դ.

**XIX դ. առաջին քառորդ. հայերը Երևանի բնակչության
մեծամասնություն**

Երևանի բնակչության տեղաշարժերը XIX դ. ընթացքում ունեցել են խիստ հետաքրքրական դրսևորումներ, որոնց վրա էլ երբեմն հենվում են աղբրեջանցի պատմակեղծարարները, երբ փորձում են Երևանը ներկայացնել որպես «աղբրեջանական քաղաք»⁵⁴²: Ավելին, Երևանի բնակչության վերաբերյալ սկզբնաղբյուրներն էլ երբեմն հաղորդում են հակասական տեղեկություններ, որոնք պատմակեղծարարության համար պարարտ հող են տրամադրում: Պատմակեղծարարները փորձում են այնպես ներկայացնել, թե իբր հայերը մինչև 1828-1829 թթ. Երևանում չեն ապրել և այստեղ են հայտնվել ռուսների կողմից իրականացված վերաբնակեցման արդյունքում, իսկ քաղաքն էլ եղել է «աղբրեջանական», քանի որ թաթարները կամ «աղբրեջանական թուրքերը» այնտեղ մեծամասնություն էին⁵⁴³:

XIX դ. սկիզբը Երևանի պատմության մեջ դժվարին ժամանակաշրջան էր, քանի որ Ցարական Ռուսաստանն ակտիվ ջանքեր էր գործադրում ռազմավարական այդ կարևոր հենակետը Իրանից գրավելու ուղղությամբ: Երևանի գրավման նպատակով պարբերաբար տեղի ունեցող ռազմական գործողությունները, որոնք ուղեկցվում էին բերդի պաշարմամբ, հանգեցրին բնակչության աստիճանական նվազմանը, որը հետևանք էր ինչպես բռնագաղթի, այնպես էլ ծանր պայմաններից դրդված արտագաղթի:

⁵⁴² Տե՛ս, օրինակ, Иреванское ханство: российское завоевание и переселение армян на земли Северного Азербайджана, Баку, 2010, с. 78-80.

⁵⁴³ Նույն տեղում:

Մյուս կողմից, թյուրքական մի քանի վաչկատուն ցեղեր, ռուսական զորքի կողմից Այսրկովկասը գրավելուց հետո, տեղափոխվել էին Երևան և հարակից շրջաններ, ինչն ազդել է բնակչության ազգային կազմի հարաբերակցության վրա⁵⁴⁴:

Հրապարակի վրա եղած տվյալները ցույց են տալիս, որ նախքան Ցարական Ռուսաստանին միացվելը հայերը մեծամասնություն էին Երևանում:

1812 թ. Երևանի բնակչությունը, ըստ բրիտանացի դիվանագետ Վ. Աուսլիի՝ 13-14 հազար էր, ըստ որում՝ մինչ այդ եղել էր չորս հազար և ավելացել խանի ջանքերի շնորհիվ, ով վերաբնակիչներ էր բերել քաղաք⁵⁴⁵: Քաղաքի բնակչության՝ մինչև չորս հազար նվազման պատճառն էլ այն էր, որ 1804 թ. սկիզբ առած ռուս-պարսկական պատերազմի ժամանակ բազմահազար հայեր բռնագաղթեցվել կամ արտագաղթել էին քաղաքից⁵⁴⁶: Ըստ Ղ. Ինճիճյանի՝ Երևանում XIX դ. սկզբին նախկինի համեմատ բնակչությունը նվազել էր մի քանի անգամ, ըստ որում՝ հիմնականում հայերի հաշվին⁵⁴⁷:

⁵⁴⁴ Սարգսյան Հ., Երևանի նահանգի բնակչությունը 50 տարում (1850-1900 թթ.), «Բանբեր Երևանի համալսարանի», N 1, Երևան, 1990, էջ 114-115:

⁵⁴⁵ Ouseley W., Travels in Various Countries of the East; More Particularly Persia, Volume 3, London, 1823, p. 440.

⁵⁴⁶ Միայն 1804 թ. երկու հազար հայեր հեռացան Երևանից և տեղափոխվեցին Թիֆլիս: Տե՛ս Шопен И., Исторический памятник состава Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, Санкт-петербург, 1852, с. 526: XIX դ. առաջին քառորդին Երևանից հայերի արտագաղթի և բռնագաղթի մասին մանրամասնորեն տե՛ս Մելքոնյան Ա., Ժողովրդագրական իրավիճակը Երևանում XIX դարի առաջին քառորդին, Երևան քաղաքի պատմության թանգարան, «Երևան 5» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2018, էջ 91-95:

⁵⁴⁷ Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի. Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ և Ամերիկոյ: Մասն առաջին. Ասիա, հատոր Ա, ի Վէնէտիկ, 1806, էջ 253: շեղինակը գրում է, որ նախկին 25 հազար տներից 1806 թ. Երևանում մնացել էին երկու հազարը, որոնցից միայն 150-ն էր հայկական: Ակնհայտ է, որ հեղինակի տվյալները հավաստի չեն, քանի որ, եթե նույնիսկ ընդունենք, որ մեկ տանը բնակվում էր միայն մեկ ընտանիք (իրականում՝ ավելի շատ)՝ 5-6 անդամով, ապա կստացվի, որ քաղաքի 25 հազար տներում

1817 թ. Երևանում եղած բրիտանացի սպա Ջ. Ջոնսոնը վկայում է, որ Երևանում հայերի թիվն ավելի մեծ էր մահմեդականների թվից⁵⁴⁸: Ըստ որում՝ միննույն 1817 թ. Երևան այցելած Ռ. Ք. Փորթերը հաղորդում է, որ քաղաքի բնակչությունը 15 հազարից ավելին չէր⁵⁴⁹: Հայերի թիվը Երևանում, փաստորեն, առնվազն ութ հազար էր: Հայտնի է, որ 1821-1822 թթ. պարսկական բանակը Երևանի խանության տարածքում բնակեցրեց Արևմտյան Հայաստանից բռնագաղթեցված հայերի⁵⁵⁰, սակայն Ջ. Ջոնսոնի վկայությունը ցույց է տալիս, որ հայերը ընդհանուր առմամբ Երևանի մահմեդականների նկատմամբ մինչ այդ էլ՝ 1817 թ. դրությամբ, շարունակում էին ունենալ քանակական գերակշռություն:

Նշվածը հաշվի առնելով Ա. Մելքոնյանը կարծում է, որ 1821-1822 թ. Երևանի խանի կողմից արևմտահայերի բռնի տեղահանման և խնդրո առարկա տարածաշրջան տեղափոխելու հետևանքով Երևանի բնակչությունը 1820-ական թթ. կեսերին դարձավ 17-18 հազար⁵⁵¹, ինչը հաստատվում է պատմաբան, ռազմական գործիչ Վ. Պոտտոյի տեղեկություններով: Վերջինս, անդրադառնալով 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմին և մասնավորապես Երևանի բերդի գրավման իրադարձություններին, նշում է, որ 1827 թ. պաշարված բերդում հավաքված քաղաքի

բնակվում էին 125-150 հազար մարդ, ինչը սխալ է: Հավանաբար, տների ճիշտ քանակը Երևանում 2500-ն էր, իսկ բնակչությունը՝ 12500-ից մինչև 15 հազար: Քաղաքում, փաստորեն, մնացել էր երկու հազար տուն՝ ընդհանուր 10-12 հազար բնակչով, որից 150 տունը կամ 750-900-ը հայեր: Կարծում ենք, որ այս վերջին տվյալը ևս իրական չէ, քանի որ դրանից առաջ և դրանից հետո հենց հայերն էին քաղաքում մեծամասնություն, և նույնիսկ ծավալուն բռնագաղթն ու արտագաղթը չէին կարող նման ազդեցություն ունենալ քաղաքի բնակչության ազգային խմբերի հարաբերակցության վրա:

⁵⁴⁸ A Journey from India to England, Through Persia, Georgia, Russia, Poland, and Prussia, in the Year 1817 by Lieut. Col. John Johnson, C. B., Illustrated with Engravings, London, 1818. p. 230.

⁵⁴⁹ Porter R. K., Travels in Georgia, Persia, Armenia, Ancient Babylonia, during the years 1817, 1818, 1819, and 1820, volume I, London, 1821, p. 197.

⁵⁵⁰ Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 95-99:

⁵⁵¹ Նույն տեղում, էջ 100:

18 հազար բնակչության մեծ մասը հայեր էին⁵⁵²: Նույնն է հայտնում նաև Երևանի ուսուցչական սեմինարիայի ուսուցիչ Կ. Շուլցինը. «Այն ժամանակ (իմա՝ 1827 թ. գարնանը-Ա. Ե., Ա. Ն.) հայերը կազմում էին քաղաքի բնակչության զգալիորեն գերակշռող տարրը»⁵⁵³: Եվ դա նույնիսկ այն բանից հետո, երբ խանը, բացառելու համար ռուսական բանակին քաղաքի հայերի կողմից հնարավոր աջակցությունը, նրանց բազմաթիվ ընտանիքների բռնի հեռացրեց քաղաքից, իսկ տեղահանությանը հակադրվողներին կոտորեց: Բռնագաղթեցվածները քաղաք վերադարձան արդեն ռուսների կողմից Երևանի բերդը գրավելուց հետո⁵⁵⁴:

Երևանի բնակչությունը 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո. հայերի թվաքանակի նվազումը

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը, ինչպես և նախորդը հանգեցրեց Երևանի բնակչության կտրուկ նվազման: Ցարական Ռուսաստանին միանալուց հետո՝ 1829-1832 թթ. հաշվումների տվյալներով, Երևանում կար 11463 բնակիչ: Պատմաբան, ազգագրագետ, Հայկական մարզի եկամուտների և արքունի ունեցվածքի վարչության նախագահ Ի. Շոպենի ներկայացրած վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ քաղաքի բնակչության հիմնական մասը կազմել են հայերն ու թաթարները, չնայած այն հանգամանքին, որ նաև նշվում է, որ Հայկական մարզի բնիկ բնակչությունը բաղկացած է եղել հայերից և քրդերից⁵⁵⁵: Սակայն Ի. Շոպենի աշխատության մեջ Երևանի բնակչության ազգային կազմի վերաբերյալ կան միմյանց հակասող երկու

⁵⁵² Потто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, том III: Персидская война 1826-1828 г., выпуск III, издание второе, С.-Петербург, 1888, с. 508. Տե՛ս նաև Покорение Эривани, Солдатская библиотека, издание В. А. Березовского, С.-Петербург, 1900, с. 6.

⁵⁵³ Шульгин К., Взятие г. Эривани (по рассказам старожилов), Сборник материалов для описания местностей и племен Кавказа, выпуск четвертый, Тифлис, 1884, отдел II, с. 35.

⁵⁵⁴ Նույն տեղում:

⁵⁵⁵ Шопен И., նշվ. աշխ., էջ 525:

J.-L. Arno, referring to two images of Yerevan made by J.-B. Tavernier, expressed the opinion that although there are significant differences between the images presented in the 1676 and 1679 editions of his work, it is obvious that the author, based on his detailed observations, may also be based on information taken from other authors, tried to clarify the image of the city. Moreover, despite significant differences, there are similarities in the two images, which indicate that the second image is based on the first.⁶⁶⁴

The description of Yerevan in the 1640s by the Ottoman author Evliya Chelebi contains significant additions to the structure of Yerevan in the first half of the seventeenth century: “[Fortress] situated on the bank of the Zenghi (Hrazdan river—A.Y), extending from the south to the north, having so little breadth. It has three iron gates; to the south, the gate of Tabriz; to the north, the gate of the Meidan called Yaila Kapûssî...; to the west, the gate of the bridge. The town consists of two thousand and sixty elegant houses covered with earth;⁶⁶⁵ the best is the palace of the Khân much embellished by Emîrgûneh. Near it is the mint. The suburb outside of Yaila Kapûssî is

⁶⁶¹ Arak'el of Tabriz, “Book of History”, 235.

⁶⁶² *Ibid.*, 188.

⁶⁶³ “Les Six Voyages de Jean Baptiste Tavernier”, p. 1, 40—41.

⁶⁶⁴ J.-L. Arnaud, *L'image des villes dans les Six voyages de Jean-Baptiste Tavernier, De l'auteur à l'éditeur*. “Anatolia moderna - Yenianadolu”, 9 (2000) 99—100.

⁶⁶⁵ The English translation incorrectly states 1060. See Evliya Efendy “Narrative of Travels in Europe, Asia, and Africa in the Seventeenth Century”, 153.

called the old town; at the head of the bridge is the khan's garden, and a suburb with mosque and bath".⁶⁶⁶

From the information of Evliya Chelebi, one can erroneously conclude that 2060 houses are located in the old city or suburb outside the fortress. In fact, Evliya Chelebi describes those houses not in the old city or in the suburb, but in the city, where, by the way, the khan's palace and the mint were also located. So, under the city, unlike the old city, he means a settlement inside the fortress. Further, the author talks about the old city, unfortunately without giving information about either the number of houses or the population. Therefore, it should be noted that those 2060 houses were not in the old city (suburb), but in the fortress. And the number of people living in the fortress has never been studied before. If the soldiers guarding the fortress (about five or six thousand⁶⁶⁷) are perceived as residents, then the number of Armenians in the suburb of Yerevan or in the old city should have been about hundred thousand people, since, according to J.-B. Tavernier, twenty times more people lived there than in fortresses. But such a number of inhabitants of the old city is unbelievable. Most likely, Evliya Chelebi had in mind only the civilian population of the fortress. It should be noted that the fortress was mainly inhabited by Muslims, and the old city — by Armenians. The same situation was in 1700. The German traveler F. C. Schillinger, who visited Yerevan at that time, says that only Persians lived in the fortress, and there were ten times more Armenians in the suburbs than them.⁶⁶⁸

A detailed description of the situation in Yerevan in the early 1670s (1672) is preserved in the travel notes of the French traveler J. Chardin, who mentioned Yerevan (Irevan) as "the capital of Greater

⁶⁶⁶ Evliya Efendy, "Narrative of Travels in Europe, Asia, and Africa in the Seventeenth Century", 153.

⁶⁶⁷ Naima, "Annals of the Turkish Empire", volume I, 264.

⁶⁶⁸ F. C. Schillinger, "Persianische und Ost-Indianische Reis" (Nürnberg, 1707), 118.

Armenia”.⁶⁶⁹ In the description of Yerevan, the author presents an illustration of the city in detail [figure 3]. According to him, Yerevan was a great city but ill-favored and dirty. Only the Yerevan fortress looked like a small city and included up to eight hundred houses. “Natural Persians” lived there, while the Armenians had only shops where they worked and traded during the day, and in the evening, they left for the city. The fortress stretched along the edge of the dreadful precipice, in the northwestern part, consisted of three rows of walls with gates.⁶⁷⁰ The khan’s palace was located in a fortress, on the brink of the precipice. Not far from the fortress was a small fort called Queutchi-cala. According to J. Chardin’s valuable information, the city of Yerevan itself was at a distance of a cannon-shot from the fortress. In the center of the city there were markets and dilapidated buildings. One of the main churches that operated in the city was the episcopal see and was called “Irkou-ye-rize or two-faces”,⁶⁷¹ and the other —“Catovike”.⁶⁷² According to the information received by the author, these churches were built during the time of the Armenian kingdom, and the rest — later. Next to the Episcopal Church stood an old tower built of hewn stone with inscriptions similar to Armenian. Next to the Episcopal See was a large market-place, in front of which stood an old and mostly decayed mosque. Not far away was a large square surrounded by trees. There were many baths and inns in the city and the fortress. The most beautiful inn was located in the fortress, not far from the khan’s palace. Shops were located along the entire length of the gallery and in the main building of the inn. In front of it was the market-place, surrounded by food shops, and next to it was a mosque and two coffee-houses. According to J. Chardin, Yerevan’s

⁶⁶⁹ “Voyages du chevalier Chardin en Perse et autres lieux de l’Orient”, nouvelle édition, de notes, etc. par L. Langlès, tome deuxième (Paris, 1811), 128.

⁶⁷⁰ “The Travels of Sir John Chardin into Persia and East Indies”, volume I, 245—46.

⁶⁷¹ Most likely, this is the church of St. Paul and Peter (“Two-faced” in Armenian sources).

⁶⁷² Cat’oghike in Armenian or Cathedral.

land was fertile. Two rivers flowing along the outskirts of the city, and Lake Kiagar-couni-sou (the lake Gegharkuni or Sevan) provided the inhabitants of the city with fish. J. Chardin talked to the Armenians and says that, in their opinion, Yerevan was the oldest settlement in the world, because Noah and his family lived there. The Armenians also claimed that the earthly paradise was located there.⁶⁷³

Shortly after the description of J. Chardin, in 1679, a terrible disaster befell Yerevan and great damage was done. The earthquake, known as the Yerevan or Garni earthquake,⁶⁷⁴ began on June 4, 1679 and was regularly repeated for several days. The most powerful and destructive shocks were the first and last. According to an Armenian chronicle, “the city and fortress were destroyed by the force of the earthquake, houses and beautiful palaces, churches and monasteries were destroyed, springs dried up. There were countless dead”.⁶⁷⁵

The restoration of the city of Yerevan after the earthquake of 1679

According to deacon Zakaria, three churches were destroyed in Yerevan itself, as well as a church in Dzoragyugh district. And “... the fortress of Yerevan was destroyed to the ground”. Due to the earthquake, sources supplying Yerevan with water were blocked.⁶⁷⁶

The Armenian author Zakaria of Agulis describes in detail the damage caused by the earthquake and the loss of life. “Two churches in Yerevan, the Yerevan monastery, the church of Dzoragyugh were destroyed. ... The fortress of Yerevan, the houses of the khan ... everything was destroyed. Within eight—nine days, the dead were taken out of the ground. There were houses where five, eight, nine

⁶⁷³ “The Travels of Sir John Chardin into Persia and East Indies”, volume I, 246—48.

⁶⁷⁴ N. Ambraseys, “Earthquakes in the Eastern Mediterranean and the Middle East”, A Multidisciplinary Study of Seismicity up to 1900 (Cambridge University Press, 2009), 519.

⁶⁷⁵ “Small Chronicles of the XIII-XVIII Centuries”, volume II, 279, n. 65.

⁶⁷⁶ “The Chronicle of Deacon Zakaria of Kanaker”, volume II, 104.

people had died. Across the country, seven thousand six hundred people died”.⁶⁷⁷

But soon, also with the support of neighboring khanates, the fortress was restored “stronger than before”. “And the bridge that was under the fortress, on the Hrazdan River, called Zanki, was rebuilt. The blocked streams were restored, and the water reached Yerevan”.⁶⁷⁸

It should be noted that, despite the catastrophic consequences of the 1679 earthquake, the structure of the city did not change, as can be seen from the detailed descriptions of Yerevan left by European travelers, which refer to the situation before and after the earthquake.

Information from sources shows that after the earthquake, the structure of Yerevan did not change significantly. J. P. Tournefort, a French traveler who visited Yerevan on August 8, 1701, mentions it as “a considerable city and the capital of Persian Armenia”. The city was located on a small hill and was full of vineyards and gardens. The houses had only a ground-floor, without stories above, each of which was surrounded by a wall. The fortress in the highest part of the city had three rows of walls. This oval fortress contained over eight hundred houses, inhabited by Muslims. The Armenians worked there and returned to their homes in the city at night. The fortress was garrisoned by two thousand five hundred soldiers. The northern side of the fortress was completely impregnable, as it was on the brink of the precipice. The gates of the fortress plated over with iron. The author suggests that the old city also had strong defenses, but was subsequently destroyed during the Turco—Persian wars.⁶⁷⁹

South of the city, about a mile from the fortress, was the fort Quetchycala. One could approach the fortress through a three-arched bridge. J. P. Tournefort then describes the fortress of Yerevan. The khan’s palace made a special impression on him with its size and structure. The area of the fortress was lined with beautiful trees. The

⁶⁷⁷ “Diary of Zakaria of Agulis”, Yerevan, 1938, 143 (Armenian edition).

⁶⁷⁸ “The Chronicle of Deacon Zakaria of Kanaker”, volume II, 105.

⁶⁷⁹ J. P. Tournefort, “A Voyage into the Levant”, perform’d by Command of the Late French King, volume III (London, 1741), 178—79.

market, bathhouses and caravanseras located in the fortress looked good; especially the newly built caravansera near the fortress was very nice. When entering the fortress, it felt like you were at a fair or market, because when you pass through the entrance, different products line up everywhere.

Then, describing the old city, the author notes that the churches were small and half underground. Bishop's palace and the Catovique (Cathedral) are rumored to have been built during the time of the last kings of Armenian. Near the Bishop's palace, there was an old tower, which had a beautiful structure. Local residents did not know either the purpose of its construction or the time. As for the city mosques, according to the author, there was nothing particular. After touring the city J. P. Tournefort visited the Armenian Patriarch, who was staying at an old monastery outside the city.⁶⁸⁰ It was probably the monastery of St. Anania. Obviously, J. P. Tournefort's description is reminiscent of J. Chardin's story about Yerevan, from which it is clear that the structure of the city did not undergo significant changes as a result of the earthquake of 1679.

Important information about the situation in the city of Yerevan at the beginning of the eighteenth century was preserved in the book of the Armenian author Abraham of Yerevan. According to him, during the invasion of the Ottoman army in 1724, a general mobilization was carried out among the Armenians of the old city of Yerevan by districts. Four thousand soldiers were gathered from the Old Yerevan district, 955 people from the district of Juhair. 234 soldiers gathered Christianboshas⁶⁸¹ of Kond, about four thousand soldiers — residents of Dzoragyugh and refugees who had taken refuge there.⁶⁸² In fact, Yerevan consisted of the districts of Old Yerevan, Juhair, Kond and Dzoragyugh (Dzoragegh). The latter was located near

⁶⁸⁰ Ibid., 180—82.

⁶⁸¹ A small ethnic group.

⁶⁸² Abraham of Erevan, "History of the Wars (1721—1738)", Annotated Translation from the Original Eighteenth-Century Texts with Introductory Notes by George A. Bournoutian (Costa Mesa, California, 1999), 25.

Kond, on the left bank of the Hrazdan River, to the north of the fortress. The remaining districts extended from Dzoragyugh to the east. The city ended in the north with the ancient cemetery of Yerevan, located on the northwestern outskirts of the Kond district.⁶⁸³ On the east side, the city was surrounded by dense gardens that protected and sheltered it.⁶⁸⁴

According to a Ottoman author, a contemporary of the events of 1724, the suburbs of the Yerevan fortress were steep on both sides, and a river flowed below.⁶⁸⁵ According to Chelebi-zade's detailed description of the battles for Yerevan in 1724, Yerevan was "surrounded by two strong walls, thirty-five steps apart from each other".⁶⁸⁶ According to the Ottoman author's information, "the siege of the Yerevan fortress was necessarily connected with the capture of varosh (suburb)", as well as the statement that the Ottoman soldiers "razed the houses near the walls of varosh and adjacent to them to the ground, and the surroundings of the walls are turned into a free area",⁶⁸⁷ it can be clarified that a small suburb is located near the outer of the two walls of the Yerevan fortress, which was inhabited by Persians. As for the suburb, Evliya Chelebi's description of Yerevan in the 1640s contains very important information about it. As mentioned above, he reports that the suburb or varosh, which located beyond the northern gates of the fortress, was called the "old city". The author also mentions a second suburb near the fortress walls and bridge. It was the suburb that the Ottoman army invaded after the capture of the Armenian districts, because "the rocky nature of both sides of varosh and the Zangi River flowing in front of it with a very strong current

⁶⁸³ K. Ghafadaryan, "Yerevan: Medieval Monuments and Stone Inscriptions", 47.

⁶⁸⁴ Abraham of Erevan, "History of the Wars (1721—1738)", 26.

⁶⁸⁵ M. Münir Aktepe, "1720—1724 Osmanlı-İran muâsebetleri ve Silahşor Kemânî Mustafa Ağâ'nın Revân fetih-nâmesi" (İstanbul, 1970), 46—47.

⁶⁸⁶ "Târîh-i İsmâil Âsım Efendi (Çelebizâde)". See "Târîh-i Râşid Mehmed Efendi", c. VI (İstanbul, 1865), 202—21 (Ottoman edition).

⁶⁸⁷ Ibid.

made it difficult to conquer and capture the suburb (varosh)".⁶⁸⁸ According to T. Krushinsky, the Ottoman army, marching in the direction of Yerevan, captured it from the first attack,⁶⁸⁹ since it is known that the old city itself and the fortress of Yerevan were defended for about two months.⁶⁹⁰ On the other hand, the fact that this suburb was located next to the fortress walls also confirms that it had no connection with the old city, which, according to J. Chardin, was within a cannon-shot from the fortress. That's right, J. Chardin's information refers to the beginning of the 1670s, after which, in 1679, the Yerevan earthquake occurred, but, as we have seen, there were no particularly significant changes in the structure of the city after the earthquake.

The information mentioned above makes it possible to clarify the geographical position of the Yerevan fortress and two suburbs. On the steep left bank of the Hrazdan River, to the east, there was a walled fortress, and behind its northern gate, adjoining the outer wall, a suburb mentioned by Evliya Chelebi. The latter, based on the fact that during the self-defense of the old city of Yerevan, all Armenians gathered there,⁶⁹¹ was populated by Muslims. The old city extended at a distance of a cannon-shot from the fortress to the north and consisted of the aforementioned districts.

It is known that in 1724, after the capture of Yerevan, the Ottoman army massacred thousands of Armenians of the city,⁶⁹² as a result of which the number of Armenians in the city greatly decreased. From the Ottoman tax lists of 1727, it can be seen that there were four districts in Yerevan: Eskishehir (Old City), Temir Bulak [Iron Spring or Karahank (Stone Mine) in Armenian], Derekent (Derekoy,

⁶⁸⁸ Ibid.

⁶⁸⁹ "The History of the Late Revolutions of Persia", taken from the Memoirs of Father Krusinski, Procurator of the Jesuits at Ispahan, the second edition, volume II (London, 1733), 178.

⁶⁹⁰ Abraham of Erevan, "History of the Wars (1721—1738)", 21—29.

⁶⁹¹ Ibid., 24—27.

⁶⁹² Ibid., 29.

Armenian Dzoragyugh) and Depebashi (or Tepe-bashi, Armenian Kond).⁶⁹³ It is interesting that the districts of Old Yerevan (Old City), Kond and Dzoragyugh are also mentioned in the work of Abraham of Yerevan describing the events of 1724, and the fourth district of Yerevan, according to him, is the district of Juhair.⁶⁹⁴ Comparing this information, Temir Bulak can be identified with the district of Juhair. After the capture of Yerevan by the Russian army in 1827, the city had the following districts: Shahar (Old City, which occupied the northeastern part of the city), Tapabashi (occupied the western part of the city) and Demirbulag (occupied the southeastern part of the city). Dzoragyugh (Dara-kend), which was then uninhabited, was part of the Tapabashi district.⁶⁹⁵

As we have seen, Tavernier reports that there were four churches and one monastery in Yerevan. Most likely, these four churches were: the Katoghike (according to J. Chardin–Catovike, that is Cathedral) or Church of St. Astvatsatsin (St. Holy Mother of God), built before the thirteenth century,⁶⁹⁶ the Church of St. Paul and Peter, built between the fifth and sixth centuries,⁶⁹⁷ the Church of St. Hovhannes in Kond (the old church was destroyed by an earthquake in 1679, after which a new church was built⁶⁹⁸) and the Gethsemane chapel, built between the twelfth and thirteenth centuries.⁶⁹⁹ As for the monastery, it was the monastery of St. Anania, built in ancient times on the border of the city of Yerevan. The monastery, as J. P.

⁶⁹³ “Başbakanlık Osmanlı Arşivi”, Tapu Tahrir Defteri, 901, 24—32 (Ottoman edition).

⁶⁹⁴ Abraham of Erevan, “History of the Wars (1721—1738)”, 25.

⁶⁹⁵ I. Chopin, Historical Monument of the State of the Armenian Region in the Era of Its Accession to the Russian Empire (St. Petersburg, 1852), 464—465 (Russian edition).

⁶⁹⁶ K. Ghafadaryan, “Yerevan: Medieval Monuments and Stone Inscriptions”, 24, 26.

⁶⁹⁷ *Ibid.*, 32.

⁶⁹⁸ *Ibid.*, 46.

⁶⁹⁹ *Ibid.*, 45.

Tournefort and Arakelof Tabriz testify, was located in gardens and was cut off from the city.⁷⁰⁰

Conclusion

The study allows to determine the process of development of the city of Yerevan during the long Turco—Persian wars from the late sixteenth to the early eighteenth century. At the end of the sixteenth century, when a new fortress was built in Yerevan, the old fortress of the city —Tsitsernakaberd gradually lost its significance. The new fortress of Yerevan underwent many buildings, destructions and reconstructions during the Turco—Persian wars from the sixteenth to the eighteenth century, after which it became one of the strongest and most important fortresses in the region. At the end of the sixteenth century, Muslims lived in Yerevan fortress, and later also Armenians. At the beginning of the seventeenth century, the part of the Muslims of Yerevan lived on the outer side of the southern wall of the fortress, whose houses, in the conditions of the expansion of the fortress, became part of it. To the north of the fortress stretched the city of Yerevan, which in various sources, where the fortress is called a city, is referred to as a suburb or varosh. It was Yerevan itself, the regions of which were inhabited mainly by Armenians. From the information of Ottoman sources, it can be concluded that during the seventeenth century, another Muslim suburb was formed behind the northern wall of the fortress, which was captured and destroyed by the Ottoman army in 1724.

⁷⁰⁰ J. P. Tournefort, "A Voyage into the Levant", 182, Arak'el of Tabriz, "Book of History", 188, 235.

Արման Եղիազարյան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԸ ԹՈՒՐԹ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԷՊԻԿԵՆՏՐՈՆՈՒԽՄ XVI ԴԱՐԻ ՎԵՐՋԻՑ ՄԻՆՉԵՎ XVIII ԴԱՐԻ ՍԿԻԶԲ. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔԱՂԱՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՄԵՋ


Երևան քաղաքը թուրք-պարսկական երկար պատերազմների ժամանակ (XVI դարի վերջ - XVIII դարի սկիզբ) ենթարկվել է նշանակալից փոփոխությունների, որոնք հետաքրքրական են ոչ միայն պատմագիտության, այլև պատմական աշխարհագրության, ժողովրդագրության և քաղաքական գիտության տեսանկյունից:

XVI դ. վերջին, երբ կառուցվեց Երևանի նոր ամրոցը, Ծիծեռնակաբերդը աստիճանաբար կորցրեց իր նշանակությունը: Երևանի նոր ամրոցը թուրք-պարսկական պատերազմների ժամանակ բազմաթիվ կառուցումների, ավերումների և վերակառուցումների ենթարկվեց, որից հետո դարձավ տարածաշրջանի ամենաամուր և կարևոր ամրոցներից մեկը: Այնտեղ XVI դ. վերջին բնակվում էին մուսուլմաններ, իսկ հետագայում՝ նաև հայեր: Ամրոցի հարավային պարսպի արտաքին կողմում XVII դ. սկզբին բնակվում էին մուսուլմաններ, որոնց տները, ամրոցի ընդարձակման պայմաններում, ընդգրկվեցին նրա մեջ: Ամրոցից դեպի հյուսիս տարածվում էր Երևան քաղաքը, որը տարբեր սկզբնաղբյուրներում, որտեղ ամրոցը կոչված է քաղաք, հիշատակվում է որպես արվարձան կամ վարոշ: Դա բուն Երևանն էր, որի թաղամասերում բնակվում էին գլխավորապես հայեր:

Օսմանյան սկզբնաղբյուրների տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ XVII դ. ընթացքում մեկ այլ՝ մուսուլմանական (հավանաբար, պարսկական) արվարձան էր ձևավորվել ամրոցի հյուսիսային պարսպի արտաքին կողմում, որը գրավվեց և ոչնչացվեց օսմանյան զորքի կողմից 1724 թ.:

Illustrations

Figure 1



The Platform of *Yerevan* and the Suburbs.

- A. The *Town and Fort.*
- B. The *Suburbs, inhabited by the Armenian Christians.*
- C. The *Church.*
- D. The *Canoe.*
- E. The *River of Singai-cij.*
- F. The *Stone-Bridge.*
- G. The *Highway for the Cossacks.*
- H. The *Fort which Shah-Spah built to hinder the City.*
- I. The *River that falls from the Mountain.*
- J. The *Highway to Tauris.*
- L. The *Weg in Sarka the chief City of Georgia, and the Way to the Mountains where the King of *Yerevan* got twice a Summer to drink.*
- M. The *Markets-places, for Sale of Goods.*

Illustration of Yerevan from the 1678 edition of J.-B. Tavernier's book

Figure 2



Illustration of Yerevan from the atlas of J.-B. Tavernier's voyages
(1810)

Figure 3




Illustration of Yerevan from the 1686 edition of J. Chardin's book

Բաժին երրորդ

ԵՐԵՎԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐԻ ԵՎ ՆՈՐ
ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԱՂԲԵՋԱՆԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Արման Եղիազարյան
Արա Հովհաննիսյան
Ալիկ Ղարիբյան
Արմինե Չիրոյան

ԱՐԴՐԵՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇԱՐԱԴՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ
(ԸՍՏ ԱՐԴՐԵՋԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ)

Մուտք

Պատմության դասագրքերը մեծ նշանակություն ունեն մատաղ սերնդի դաստիարակության գործում՝ նրանում ձևավորելով հայրենիքի, ժողովրդի ու նրա պատմության վերաբերյալ աշխարհագրական, ժամանակագրական ու բովանդակային գիտելիքներ: Պատահական չէ, որ մի շարք երկրներում պատմության դասագրքերը, քաղաքական պայմանների թելադրանքով, ձեռք են բերում նաև գաղափարաբանական գործառույթներ՝ փորձելով պատմական գիտելիքից գատ և նույնիսկ նրա փոխարեն նոր սերնդի մեջ սաղմնավորել գաղափարաքաղաքական բնույթի պատկերացումներ, որոնք հաճախ ոչ միայն խեղաթյուրում են պատմական իրողությունները, այլ նաև մյուս ժողովուրդների նկատմամբ ձևավորում թշնամական վերաբերմունք:

Հոդվածի նպատակը պատմության աղբբեջանական դպրոցական դասագրքերի քննական վերլուծության հիման վրա Աղբբեջանի պատմության շարադրման հայեցակարգի լուսաբանումն է: Խնդիր է դրվել բացահայտել «աղբբեջանցիների պատմական տարածքի», նրանց ծագման ու ձևավորման հիմնահարցերի վերաբերյալ, ինչպես նաև հարևան ժողովուրդների տարածքների նկատմամբ հավակնությունների առումով աղբբեջանցի հեղինակների հիմնական մտեցումները:

Աշխատանքը շարադրելիս կիրառվել է պատմաքննական մեթոդը: Վերջինիս շրջանակներում փորձ է արվել բացահայտելու աղբբեջանական դասագրքերում պատմական սկզբնաղբբուր-

ների տեղեկությունների հետևողական խեղաթյուրումը և դրա շարժառիթները՝ հընթացս լուսաբանելով ինչպես նշված տեղեկությունների բուն իմաստը, այնպես էլ ներկայացնելով ադրբեջանցի հեղինակների կեղծիքները ի ցույց դնող նորանոր տեղեկություններ:

Հոդվածում բացահայտվում են պատմության ադրբեջանական դասագրքերի հեղինակների կատարած բազմաթիվ նմանատիպ կեղծիքներ, ներկայացվում դրանց հետևանքով առաջացած հակասությունները, ինչպես նաև այդ դասագրքերի հստակ հակահայկական բովանդակությունը:

Ադրբեջանական «պատմական» տարածքն ըստ դայրոցական դասագրքերի

Ըստ ադրբեջանցի հեղինակների՝ Ադրբեջանը հին ժամանակներից ի վեր ունեցել է ծավալուն տարածքներ: Դրանց սահմանները հարավում հասել են մինչև Համադան, Ղազվին ու Ջենջան՝ ընդգրկելով Իրանի հյուսիսային հատվածը, հյուսիսում՝ մինչև Մեծ Կովկասի լեռնաշղթա և Դերբենտ, արևելքում նրա սահմանները ողողել են Կասպից ծովի ջրերը, արևմուտքում՝ այսպես կոչված Արևելյան Անատոլիայից մինչև Սևանա լճի ավազան՝ ներառելով Երևանը, ինչպես նաև Թիֆլիսը (պատմական Բորչալուի մահալ) և Ուրմիա լճի արևմտյան ափերը⁷⁰¹: Փաստորեն, նրանք իրենց պատմական տարածք են համարում ներկայիս Իրանի Իսլամական Հանրապետության մի զգալի հատվածը, Հայաստանի Հանրապետության գրեթե ողջ տարածքը՝ համարելով այն «Արևմտյան Ադրբեջան», Վրաստանի արևելյան շրջանները, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության հարավային մի հատված (տե՛ս նկար 1):

⁷⁰¹ Мусаева О., Гусейнова Л., Джаббаров Х., История Азербайджана, отечество, 5-й класс, методическое пособие для учителя, Баку, 2012, с., 21. Տե՛ս նաև Махмудлу Я., Агаев С., Хубьяров Б., Алишова Х., Гусейнова Л., Бахрамова С., История Азербайджана, учебник для 7-го класса общеобразовательных школ, Баку, 2014, с. 61.

Շրջանառվող ամենատարածված քարտեզներից մեկը (տե՛ս նկար 1) ներկայացված է Ադրբեջանի 10-րդ դասարանի դպրոցական դասագրքի 32-րդ էջում և վերաբերում է Ք.ա. IV-I դարերին⁷⁰²: Քարտեզի վրա նշված տարածքին տրված է Ադրբեջան անվանումը: Սակայն խնդիրն այն է, որ ո՛չ տվյալ և ո՛չ էլ որևէ այլ պատմափոփոխում չի եղել Ադրբեջան կամ այլ անվանումով և ներկայացված տարածքն ընդգրկող առանձին պետություն կամ վարչատարածքային միավոր: Ավելին՝ տվյալ ժամանակահատվածում նույնիսկ հենց իրենց՝ ներկայիս ադրբեջանցի հեղինակների «խոստովանությամբ» չի եղել ձևավորված ո՛չ ադրբեջանցի ժողովուրդ և ո՛չ էլ ադրբեջանցի ազգ⁷⁰³: Այդ ժամանակ իրենց իսկ պնդումներով դեռևս չի շրջանառվել նույնիսկ Ադրբեջան անվանումը: Հին աղբյուրներում Ադրբեջան անվան նախնական տարբերակը հնչել է որպես Ատրպատական՝ կապված դրանից հարավ գտնվող երկրամասի հետ: VII դարից սկսած արաբական աղբյուրներում այս տարածքը սկսեց կոչվել Ադրբեջան⁷⁰⁴: Այն իբրև թե վերաբերում էր ինչպես բուն Ատրպատականին (ըստ ադրբեջանցի հեղինակների՝ Հարավային Ադրբեջան), այնպես էլ ներկայիս Ադրբեջանի հանրապետության հարավային որոշ շրջանների: Բայց այստեղ ևս ադրբեջանցիների պնդումներն իրականությանը չեն համապատասխանում, քանի որ արաբ հեղինակների վկայությամբ Ադրբեջան անվանումը վերաբերել է միայն Ատրպատականին, այլ ոչ թե ներկայիս Ադրբեջանի տարածքին: Ատրպատական-Ադրբեջանը ներկայիս Այսրկովկասի

⁷⁰² Алиев Т., Агаларов П., Гулиев Н., Гасымов Э., Бабаев Ф., Гусейнов Э., Асадов К., Мамедов Р., История Азербайджана, учебник для 10-го класса общеобразовательных школ, Баку, 2017, с. 32.

⁷⁰³ Махмудлу Я., Алиев Г., Абдуллаев Г., Гусейнова Л., Джаббаров Х., История Азербайджана, учебник для 9-го класса общеобразовательных школ, с. 39.

⁷⁰⁴ Алиев В., Бабаев И., Джафаров И., Мамедова А., История Азербайджана 6 (учебник по предмету История Азербайджана для 6-го класса общеобразовательных школ), Баку, 2017, стр 62.

տարածքից բաժանվում էր Արաքս գետով⁷⁰⁵: Աղբրեջանցիների ներկայացրած սահմաններում (տե՛ս քարտեզը) Աղբրեջան անվանումով միասնական պետություն երբևէ գոյություն չի ունեցել: Այս մասին չկա որևէ տեղեկություն, ինչը արտացոլված է XIX դ. վերջի և XX դ. սկզբի հանրագիտարաններում⁷⁰⁶:

Աղբրեջանցիները նշված ձևով ներկայացնելով իրենց «պատմական» սահմանները՝ իրենց են վերագրում ողջ պատմության ընթացքում այդտեղ տեղի ունեցած գրեթե ցանկացած իրադարձություն: Պատմությունը շարադրելով նման տրամաբանությամբ՝ նրանք միաժամանակ տարածքային նկրտումներ են ցուցաբերում իրենց գրեթե բոլոր հարևանների նկատմամբ: Այստեղ բացառություն է կազմում թերևս միայն Թուրքիայի Հանրապետությունը, ում հետ վերջիններս ունեն հատուկ հարաբերություններ և որտեղ բնակվող ժողովրդի հիմնական հատվածին ամեն կերպ փորձում են նույնացնել իրենց հետ:

Այսպես կոչված աղբրեջանցի ժողովրդի ծագման և ձևավորման խնդրի ներկայացումը աղբրեջնական դպրոցական դասագրքերում

Աղբրեջանցի հեղինակները, կապված այն իրողության հետ, որ «աղբրեջանցի» հասկացությունը հին և միջին դարերում և նոր ժամանակներում երբեք չի օգտագործվել, կիրառում են մի հնարք, որով փորձում են փակել այս «բացը»: Հորինվել է մի թեզ, ըստ որի, սկսվելով հնագույն շրջանում, աղբրեջանցի ժողովրդի ձևավորումը ավարտվել է IX դ., իսկ ահա XIX դ. վերջին, կապված աղբրեջանցի ժողովրդի՝ ազգային ինքնության հստակեցման

⁷⁰⁵ Stn Jacut's Geographisches Wörterbuch aus den Handschriften zu Berlin, St. Petersburg und Paris herausgegeben von Ferdinand Wüstenfeld, Leipzig, 1924 (in sechs Bänden), էջ 183-184, Ibn Khordadbeh, Kitáb al-masâlik wa'l-mamâlik.- BGA, editio II, p. VI, Lugd. Bat., 1967, էջ 121.

⁷⁰⁶ Брокгаузъ А. (Лейпцигъ), Ефронъ А., (С.-Петербургъ), Энциклопедический словарь, под. ред. Андреевскаго, томъ 1, А-Алтай, С.-Петербургъ, 1890, с. 212, The Encyclopaedia Britannica, Eleventh Edition, Volume III, New York, 1910-1911, p. 80.

հետ, ի հայտ եկավ ադրբեջանական ազգը: Ադրբեջանական դասագրքերի հեղինակների կարծիքով ադրբեջանցի ժողովրդի կազմավորման գործընթացը սկսվել է դեռևս մեր թվարկությունից առաջ և շարունակվել աքեմենյանների օկուպացիայի ժամանակաշրջանում⁷⁰⁷: Իբրև թե Ատրպատական և Աղվանք պետությունների ձևավորումը արագացրել է «ադրբեջանական» ժողովրդի կազմավորման գործընթացը, որն ավարտվել է սասանյանների ու արաբների նվաճումների ու իսլամի տարածման ժամանակաշրջանում: Նրանց կարծիքով «ադրբեջանցի ժողովրդի» ձևավորման գործում մեծ դեր են ունեցել բազմաթիվ թյուրքական այն ցեղերը, որոնք հնագույն ժամանակներից բնակվել են այսպես կոչված ադրբեջանական երկրում, որը, ինչպես տեսանք, ըստ նրանց ընդգրկում էր ներկայիս Ադրբեջանի տարածքը և ընդհարձակ տարածքներ Հայաստանի Հանրապետությունից, Վրաստանի Հանրապետությունից, Իրանի Իսլամական Հանրապետությունից և Ռուսաստանի Դաշնությունից: Նրանց պնդմամբ այդ տարածքի բնիկ բնակչությունը հիմնականում բաղկացած է եղել թյուրքական ցեղերից⁷⁰⁸: Հին ժամանակներից բնակվելով այստեղ՝ վերջիններս Ադրբեջանը համարում էին իրենց հայրենիքը: Դրանց թվին են պատկանում օդուզները, որոնց ադրբեջանցիներն իրենց նախնի են համարում⁷⁰⁹:

Իբրև թե Ադրբեջանի լայնածավալ տարածքներում բնակվում էին գարգարներ, խուրիներ, սուեր, լուլուբներ, թյուրքեր, նախչիներ, կուտիներ և թյուրքական ծագում ունեցող այլ ցեղային միավորումներ⁷¹⁰, որոնք հանդիսանում էին Ադրբեջանի տա-

⁷⁰⁷ Махмудлу Я., Агаев С., Хубьяров Б., Алишова Х., Гусейнова Л., Бахрамова С., История Азербайджана, учебник для 7-го класса общеобразовательных школ, Баку, 2014, с. 62.

⁷⁰⁸ Նույն տեղում, էջ 61:

⁷⁰⁹ Նույն տեղում: Տե՛ս նաև Мусаева О., Гусейнова Л., Джаббаров Х., История Азербайджана, отечество, 5-й класс, методическое пособие для учителя, Баку, 2012, с. 48.

⁷¹⁰ Махмудлу Я., Агаев С., Хубьяров Б., Алишова Х., Гусейнова Л., Бахрамова С., История Азербайджана, учебник для 7-го класса общеобразовательных школ, Баку, 2014, с. 61.

րածքի հնագույն բնակիչները: Տեղացի ժողովրդի բարեկամ էթնոսները (կիմներներ, սելջուկներ, սակեր, հոներ, սաբիրներ, խազարներ, իսկիտներ) արդյունքում ևս տեղափոխվել են այստեղ⁷¹¹: Նշված ժողովուրդները կարևոր դերակատարում են ունեցել «աղբբեջանցի ժողովրդի» կազմավորման գործընթացում: Հյուսիսային Աղբբեջանում բնակվել են նաև ուտիներ, լեկեր, կասպեր և այլ ժողովրդներ⁷¹²: Շարունակելով իրենց մտավարժանքները՝ աղբբեջանցի հեղինակներն այնպես են ներկայացնում, թե պատմական տարբեր ժամանակաշրջաններում (աքեմենյանների, սասանյանների, իսլաֆայության շրջաններում և այլն) Աղբբեջան տեղափոխված ոչ թյուրքական էթնիկական միավորները ևս մտել են աղբբեջանցի ժողովրդի կազմի մեջ⁷¹³: Ու քանի որ Սասանյան Իրանի և Արաբական իսլաֆայության տիրապետության շրջանում Ատրպատականը և Աղվանքը մտել են այդ տերությունների կազմի մեջ, աղբբեջանցի հեղինակները փորձում են հիմնավորել, որ այս հանգամանքը նշված ցեղերի միավորումը դարձրեց անխուսափելի տարածքային և լեզվական ընդհանուր հիմքերի վրա: Միջնադարում թյուրքական ցեղերի հոսքը Աղբբեջան շարունակվեց, որտեղ նրանք կողք կողքի ապրում էին տեղացի թյուրքերի հետ: Դրանից բացի Աղբբեջան տեղափոխվեցին շատ պարսիկներ և արաբներ, որոնք ենթարկվեցին ձուլման և մոռացան իրենց լեզուն⁷¹⁴:

Ըստ աղբբեջանցի հեղինակների՝ Աղվանքում և Ատրպատականում ֆեոդալական հարաբերությունները զարգանում էին միաձև: Սասանյան ղեկավաները Հյուսիսային Աղբբեջանի տարածք էին տեղափոխում իրանալեզու ցեղերի, որի նպատակն էր ավելացնել այստեղ իրենց ազդեցությունը և հենարան ստեղծել,

⁷¹¹ Նույն տեղում:

⁷¹² Алиев В., Бабаев И., Джафаров И., Мамедова А., История Азербайджана 6 (учебник по предмету История Азербайджана для 6-го класса общеобразовательных школ), Баку, 2017, с. 71.

⁷¹³ Махмудлу Я., Агаев С., Хубьяров Б., Алишова Х., Гусейнова Л., Бахрамова С., История Азербайджана, учебник для 7-го класса общеобразовательных школ, Баку, 2014, с. 61.

⁷¹⁴ Նույն տեղում, էջ 62.

սակայն պարսկալեզու ցեղերը այստեղ ձուլվում էին թյուրքալեզու թյուրքական ցեղերին⁷¹⁵: Նրանք ևս իրենց մասնակցությունն էին բերում համընդանուր էթնոսի կազմավորմանը:

Փաստորեն, ադրբեջանցի հեղինակների պնդումները հիմնվում են այն կեղծ դրույթի վրա, թե իբր ներկայիս Ադրբեջանի տարածքում բնակված բնիկ և եկվոր բուր ցեղերն ու ժողովուրդները պատմության ընթացքում միաձուլվել են այդ տարածքում բնակվող թյուրքական ցեղերի հետ, որի արդյունքում ձևավորվել է այսպես կոչված ադրբեջանական ժողովուրդը: Իսլամի ընդունումը նրանք համարում են շատ կարևոր շրջադարձ իրենց ժողովրդի կյանքում: ներկայիս Ադրբեջանի տարածքում ապրող բազմաթիվ ցեղերի կողմից իսլամ ընդունելու հանգամանքը նպաստեց և արագացրեց ադրբեջանական էթնոսի ձևավորմանը, քանի որ ձևավորվեց կրոնական ընդհանրություն և մարդիկ համախմբվեցին միևնույն կրոնի շուրջ: Այն ամրապնդեց ինչպես թյուրքական, այնպես էլ մյուս ժողովուրդների միասնությունը Ադրբեջանում: Ընդունելով իսլամ և իսլամական մշակույթի տարրեր՝ նրանք իրենց կյանքը սկսեցին կառուցել դրա հիմքի վրա⁷¹⁶: Իրենց ազգային արժեքները առավել հարստացան իսլամական մշակույթով, և իսլամի ազդեցությամբ ներկայիս Ադրբեջանի տարածքում ձևավորվեց նոր մշակույթ: Համատեղ պայքարը ընդդեմ ընդհանուր թշնամիների և (Մասսանյաններ, Բյուզանդիա, քրիստոնեա պետություններ, արաբներ) դրական ազդեցություն ունեցավ ադրբեջանական ժողովրդի կազմավորման գործում⁷¹⁷:

Փորձ է կատարվում ցույց տալ, թե ադրբեջանաթյուրքական լեզվի՝ որպես հաղորդակցման լեզու ձևավորման գործընթացի

⁷¹⁵ Նույն տեղում:

⁷¹⁶ История Азербайджана (с древнейших времен до первых десятилетий XXI века), учебник для вузов, под ред. М. Абдуллаева, Баку, 2016, с. 70, Махмудлу Я., Агаев С., Хубьяров Б., Алишова Х., Гусейнова Л., Бахрамова С., История Азербайджана, учебник для 7-го класса общеобразовательных школ, Баку, 2014, с. 62.

⁷¹⁷ Նույն տեղում:

ավարտով ամրապնդվեցին խալիֆայության կազմի մեջ մտնող ժողովուրդների տնտեսական և մշակութային կապերը, և ստեղծվեցին բոլոր անհրաժեշտ պայմանները միասնական ժողովրդի ձևավորման համար: Արաբական խալիֆայության թուլացումը նպաստեց Ադրբեջանի տարածքում թյուրք-խլամական էթնոքաղաքական գործոնի ուժեղացմանը: Օղուզասելջուկյան թյուրքերը շատ արագ ձուլվեցին «հին ադրբեջանական թյուրքերի» հետ, որոնց հետ ունեին ընդհանուր արմատներ և լեզու⁷¹⁸: Ըստ ադրբեջանցիների՝ սելջուկների հոսքի արդյունքում օղուզաթյուրքական ցեղերը դարձան Հարավային Կովկասի և Ադրբեջանի հիմնական էթնիկական և քաղաքական գործոնը: XI դ. կեսերին ստեղծված Սելջուկյան տերությունը մեծ ազդեցություն ունեցավ Ադրբեջանում տեղի ունեցող պատմական գործընթացների վրա: Հարավային Կովկասի մուսուլման բնակչությունը սելջուկ թյուրքերին նայում էր որպես դաշնակցի Բյուզանդիայի և հայ-վրացական ոտնձգություններ դեմ համընդհանուր պայքարի համար⁷¹⁹:

«Ադրբեջանցի ժողովրդի» կազմավորման գործում իբրև թե կարևոր դերակատարում ունեցավ Կարա-Կոյունլու ցեղախումբը, որը մեծ դեր ունեցավ նաև Ադրբեջանի պատմության մեջ⁷²⁰: Ցեղի անվանումը, որը կառավարվում էր օղուզական Բահարլի ցեղերի կողմից կապված էր իր տոտեմի՝ «սև ոչխար» հետ: Պատմական աղբյուրներում իբրև թե նշվում է, որ գարագոյունլուները սկսել են տեղափոխվել Ադրբեջան VI դարից: Այս ցեղի կենտրոնական շրջանը, ուր նրանք ժամանել էին իրենց երկիր առաջին թյուրք-օղուզական հոսքերի ժամանակ, տեղակայված էր Վանա լճից հյուսիս⁷²¹: Աղ-կոյունլուները, լինելով օղուզական թյուրքեր, ըստ ադրբեջանցիների ապրել են ադրբեջանական հողերում՝

⁷¹⁸ История Азербайджана с древнейших времен до начало XX века, под ред. И. Алиева, Баку, 1995, с. 122.

⁷¹⁹ Махмудлу Я., Агаев С., Хубьяров Б., Алишова Х., Гусейнова Л., Бахрамова С., История Азербайджана, учебник для 7-го класса общеобразовательных школ, Баку, 2014, с. 62.

⁷²⁰ Նույն տեղում, էջ 99.

⁷²¹ Նույն տեղում, էջ 100:

Կովկասյան լեռների և Արաքս գետի միջնամասում: Նրանք ևս կարևոր դերակատարում են ունեցել աղբրեջանական ժողովրդի կազմավորման գործում⁷²²: Այս ցեղը, միջնադարում հաստատվելով Աղբրեջանի հարավում, տարածվեց մինչև Տիգրիս և Եփրատ գետերին հարող տարածքներ և «Արևելյան Անատոլիա»: Այնուհետև, նրանք հաստատվեցին Դիարբեքիրում⁷²³:

Ըստ աղբրեջանական դպրոցական դասագրքերի՝ աղբրեջանական ժողովրդի կազմավորման գործընթացն ավարտվել է VII-IX դդ.⁷²⁴, չնայած որևէ աղբյուրում նման տեղեկություն չկա:

Նշվածից ակնհայտ է, որ աղբրեջանցի հեղինակները փորձել են իրենց պատմությունը «կառուցել» ներկայումս տիրապետած տարածքների, ինչպես նաև այն երկրների ու երկրամասերի վրա, որոնք համարում են իրենցը, ուստի այդ բոլոր հողերի վրա երբևէ բնակված ցեղերն ու ժողովուրդներին կապում են ներկայիս աղբրեջանցիների հետ, հետևաբար նաև՝ յուրացնում նրանց մշակույթը, ինչի ականատես ենք մենք այսօր:

Աղբրեջանցիներն իբրև թե դարձել են հիմնական էթնիկ ուժը պատմական այն սահմաններում, որն արդեն ներկայացրել ենք և որն իրենցն են համարում: Սակայն պետք է փաստել, որ որոշ հետազոտողների կարծիքով «աղբրեջանցի ժողովրդի» կազմավորման գործընթացն ավարտվել է նշված տարածքներում օղուզների հայտնվելուց հետո: Օղուզները, որոնց աղբրեջանական հեղինակներն իրենց նախնիներն են համարում և, որոնք իբրև թե լուրջ մասնակցություն են ունեցել աղբրեջանցի ժողովրդի կազմավորման գործում, Անդրկովկաս են տեղափոխվել XI-XIII դդ.⁷²⁵: Առհասարակ թյուրքական ծագում ունեցող նստակյաց բնակչության մասին Կովկասում, Փոքր Ասիայում և Ատրպատա-

⁷²² Նույն տեղում, էջ 105:

⁷²³ Նույն տեղում, էջ 105:

⁷²⁴ Махмудлу Я., Алиев Г., Абдуллаев Г., Гусейнова Л., Джаббаров Х., История Азербайджана, учебник для 9-го класса общеобразовательных школ, с. 39.

⁷²⁵ Агаджанов Ц. Г., Очерки истории огузов и туркмен в Средней Азии IX-XIII вв., Ашхабад, 1969, с. 6.

կանում որևէ տեղեկություն նախքան սելջուկ-թուրքերի հայտնվելը չկա⁷²⁶: Գիտնականների մեծամասնության կարծիքով թուրքերի ներթափանցումը Ադրբեջան-Ատրպատական և Անդրկովկաս չէր կարող տեղի ունենալ XI դարից շուտ⁷²⁷: Մա մեզ հիմք է տալիս եզրակացնելու, որ «ադրբեջանցի ժողովուրդի» կազմավորումը չէր կարող ավարտվել VII-IX դդ.: Աղ-կոյունլու և Կարա-Կոյունլու ցեղախմբերը, որոնք ևս օղուզական ծագում ունեին և ըստ ադրբեջանցի հեղինակների նշանակալի դերակատարում էին ունեցել ադրբեջանցի ժողովրդի կազմավորման գործում, բնականաբար, նշված տարածքներում ևս հայտնվել էին XI դարից ոչ շուտ, ինչը մեկ անգամ ևս փաստում է, որ ադրբեջանական ժողովրդի կազմավորման ավարտը չէր կարող տեղի ունենալ VII-IX դդ.:

«Ադրբեջանցի ազգի» ձևավորման հարցի ներկայացումը դպրոցականներին

Այսպես կոչված ադրբեջանական ազգի ձևավորումը ըստ ադրբեջանցի հեղինակների տեղի է ունեցել XIX դ. երկրորդ կեսին նույն պատմական տարածքներում, որոնց արդեն անդրադարձել ենք⁷²⁸: XIX դ. երկրորդ կեսին կապիտալիստական հարաբերությունները կարևոր տեղ էին գրավում Հյուսիսային Ադրբեջանի (խոսքը ներկայիս Ադրբեջանի Հանրապետության մասին է) սոցիալ-տնտեսական կյանքում: Այդ հարաբերությունների արագ զարգացումը ընդլայնեց տնտեսական կապերը Հյուսիսային Ադրբեջանի առանձին շրջանների միջև: Ձևավորվեցին սոցիալական նոր խմբեր՝ բուրժուազիա և բանվորներ: Ստեղծվեցին տնտեսական կյանքի միասնության անհրաժեշտ նախադրյալներ-

⁷²⁶ Энаятолла Р., Азербайджан и Арран: Атурпатакан и Кавказская Албания (издание третье), Ереван, 2020, с. 101-102.

⁷²⁷ Նույն տեղում, էջ 104:

⁷²⁸ Махмудлу Я., Алиев Г., Абдуллаев Г., Гусейнова Л., Джаббаров Х., История Азербайджана, учебник для 9-го класса общеобразовательных школ, с. 39.

րը: Իսկ դա իր հերթին խթան հանդիսացավ հաղթահարելու փակ կենցաղը, աղրբեջանական ժողովրդի վերափոխումը ազգի⁷²⁹:

Աղրբեջանական ազգի ձևավորման գործընթացն իբրև թե ունեցել է իր առանձնահատկությունները: Խոսքն առաջին հերթին վերաբերում է այն հանգամանքին, որ այդ ժամանակահատվածում աղրբեջանցիների «պատմական հայրենիքը» բաժանված է եղել երկու մասի: Հյուսիսային Աղրբեջանի տարածքը հանդիսացել է Ռուսական կայսրության գաղութ, որի տարածքն էլ իր հերթին բաժանված է եղել տարբեր նահանգների⁷³⁰:

Աղրբեջանցիների դպրոցական դասագրքերում նշվում է, որ Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերից հետո Աղրբեջանը կորցրեց իր անկախությունը, իսկ երկիրն ու ժողովուրդը բաժանվեցին⁷³¹: Աղրբեջանցիները նշում են, որ Աղրբեջանը XIX դ. այլևս գոյություն չունեի որպես միասնական պետություն: Տպավորություն է, թե մինչև XIX դ. Աղրբեջանը միասնական անկախ պետություն էր: Դա այն պարագայում, երբ, իրենց իսկ հավաստմամբ, աղրբեջանցիները որպես ազգ ձևավորվել են միայն XIX դ. երկրորդ կեսին և բնական է, որ առանց ազգ դառնալու նրանք չէին կարող ունենալ ազգային պետություն:

Աղրբեջանական դասագրքերում նշվում է, որ Թուրքմենչայի պայմանագրի ստորագրումից հետո Արաքս գետից հարավ գտնվող աղրբեջանական հողերը մնացին Ղաջարների տիրապետության տակ: Այս ժամանակաշրջանում «Հարավային Աղրբեջանը» իբրև թե համարվում էր պետության կարևորագույն մասը և կառավարվում էր անմիջապես գահաժառանգի կողմից: Իսկ XIX դ. սկզբին Հարավային Աղրբեջանը (իմա՝ Իրանական Աղր-

⁷²⁹ Նույն տեղում:

⁷³⁰ Նույն տեղում:

⁷³¹ Махмудлу Я., Алиев Г., Гусейнова Л., Алишова Х., Джаббаров Х., Мусаева Э., Бахрамова С., История Азербайджана, учебник для 8-го класса общеобразовательных школ, с. 182, Мусаева О., Гусейнова Л., Джаббаров Х., История Азербайджана, 5-й класс, Баку, 2012, с., 109.

րեջան) վերածվեց Ղաջարական պետության 4 գավառներից մեկի⁷³²:

Ադրբեջանցի հեղինակների պնդմամբ, Ղաջարական դինաստիայի անկումից հետո իշխանության եկած Ռգա շահը (1925-1941 թթ.) «Հարավային Ադրբեջանում» վարում էր ազգային խտրականության քաղաքականություն, ինչը որոշիչ դեր էր խաղացել նաև նրա գահ բարձրանալու գործում: Նա ձգտում էր պարսիկներին վերածել իշխող ազգի և ոչնչացնել Իրանում գտնվող ադրբեջանցի թուրքերին⁷³³: Ադրբեջանցիներին արգելվել էր կրթություն ստանալ, մայրենի լեզվով գրքեր և թերթեր հրատարակել: Դպրոցներում և պետական հաստատություններում խստիվ արգելված էր թուրքերեն խոսելը: Այրվել էին թուրքերենով գրքեր և ձեռագրեր: Պարսկականացվել էին աշխարհագրական և պատմական տեղանունները, ինչպես նաև թուրքական ազգանունները⁷³⁴:

Ռուսաստանի տիրապետության տակ անցած «Հյուսիսային Ադրբեջանում» ևս, ըստ ադրբեջանցի հեղինակների՝ ազգային և կրոնական խտրականության քաղաքականություն է վարվել, ոչ մի պաշտոնական փաստաթղթում չի գործածվել «Ադրբեջան» վարչատարածքային անվանումը, պետական հիմնարկներում բոլոր գործերը վարվել են ռուսերեն⁷³⁵:

Ըստ ադրբեջանցի հեղինակների՝ Ցարական կառավարությունը պաշտոնական փաստաթղթերում ադրբեջանցի թուր-

⁷³² Агаларов П., Гулиев Н., Хатамов Р., Бабаев Ф., Гасымов Э., Гусейнов Э., Джаббаров Х., Бахрамова С., Гусейнов А., История Азербайджана, учебник для 11-го класса общеобразовательных школ, Баку, 2018, с. 58.

⁷³³ Агаларов П., Гулиев Н., Хатамов Р., Бабаев Ф., Гасымов Э., Гусейнов Э., Джаббаров Х., Бахрамова С., Гусейнов А., История Азербайджана, учебник для 11-го класса общеобразовательных школ, Баку, 2018, с., 136-137.

⁷³⁴ Նույն տեղում:

⁷³⁵ Махмудлу Я., Алиев Г., Абдуллаев Г., Гусейнова Л., Джаббаров Х., История Азербайджана, учебник для 9-го класса общеобразовательных школ, с. 40.

քերին անվանել է «մուսուլմաններ» կամ «թաթարներ»⁷³⁶: Աղրբեջանցիների իշխանական շրջանակներն այս կերպ փորձում էին մոռացության տալ իրենց պատմական անունը: Նրանք ամեն կերպ խանգարում էին աղրբեջանցի ժողովրդին գիտակցել իր ազգային պատկանելությունը: Նման քաղաքականության արդյունքն այն էր, որ աղրբեջանցիներն ամենից հաճախ իրենց ազգության մասին հարցին պատասխանում էին «ես մուսուլման եմ»⁷³⁷:

Առաջին անգամ «ազգ» հասկացությունն առաջ քաշեց Մ. Ֆ. Ախունդադեն: Մամուլում և հանրային գիտակցության մեջ սկսվեց գործածվել «աղրբեջանական ազգ» արտահայտությունը⁷³⁸: 1891 թ. նոյեմբերի 6-ին «Քեշկուլ» թերթում «աղրբեջաներեն» ստորագրված հոդվածում հարց է բարձրացվել՝ «Ի՞նչ ազգ եք դուք» և տրվել է պատասխան՝ «դուք աղրբեջանցի եք»: Այսպիսով, օրակարգում ընդգրկվել է «աղրբեջանական ազգ» արտահայտությունը: Դրանից հետո հրապարակախոս Մ. Շահթահտինսկին «Կասպիյ» թերթում վերջապես պարզաբանել է իրավիճակը՝ Հարավային Կովկասի թուրք-մահմեդական բնակչությանը անվանելով աղրբեջանցիներ, իսկ նրանց լեզուն՝ աղրբեջաներեն⁷³⁹: Մ. Ֆ. Ախունդադեն և Գ. Չարդաբին իրենց գործունեությամբ ձգտում էին ապահովել, որ աղրբեջանցիներն առաջին հերթին գիտակցեն իրենց թյուրքական, իսկ երկրորդ հերթին՝ մուսուլմանական ինքնությունը⁷⁴⁰:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ աղրբեջանցիները փորձում են հիմնավորել, թե իրենք որպես ազգ ձևավորվել են XIX դ. դարի վերջերին, երբ իբրև թե կորցրել էին իրենց միասնական պետությունը:

⁷³⁶ Махмудлу Я., Алиев Г., Абдуллаев Г., Гусейнова Л., Джаббаров Х., История Азербайджана, учебник для 9-го класса общеобразовательных школ, с. 40.

⁷³⁷ Նույն տեղում, էջ 41:

⁷³⁸ Նույն տեղում:

⁷³⁹ Նույն տեղում:

⁷⁴⁰ Նույն տեղում:

Կրոնը ներկայիս Ադրբեջանի տարածքում և «աղվանների ձուլման» հայեցակարգը ըստ ադրբեջանցի հեղինակների

Ըստ ադրբեջանցի հեղինակների՝ պատմության տարբեր ժամանակներում ներկայիս Ադրբեջանի տարածքում ապրող ժողովուրդները հետևել են տարբեր կրոնների: Նրանք եղել են հեթանոս, կրակապաշտ, քրիստոնյա, հետո ընդունել են իսլամ: Հին ժամանակներում Ադրբեջանի որոշ հատվածներում և հատկապես հարավային շրջաններում տարածված էր կրակապաշտությունը: Ըստ «ադրբեջանական աղբյուրների»՝ քրիստոնեությունը ևս տարածված է եղել ադրբեջանցիների շրջանում: Ինչ-որ ժամանակ այն եղել է ադրբեջանա-աղվանական պետություն պետական կրոնը⁷⁴¹:

Քանի որ ադրբեջանցի հեղինակները խնդիր ունեին քրիստոնյա Աղվանքի և Արցախ-Ուտիք հայաշխարհի նկատմամբ նկրտումները հիմնավորելու հարցում, նրանք այդ առումով մշակել են մի շինծու հայեցակարգ, ըստ որի՝ I-III դդ. Աղվանքի որոշ շրջաններում (ըստ ադրբեջանցի հեղինակների՝ ներառյալ Արցախը) տարածվեց քրիստոնեական կրոնը, ձևավորվեցին առաջին քրիստոնեական համայնքները: Աղվանից եկեղեցին համարվում է Կովկասի և ամբողջ աշխարհի հնագույն եկեղեցիներից մեկը: Աղվանքի Ուոնայր թագավորը ընդունեց քրիստոնեությունը որպես պետական կրոն, սակայն ըստ ադրբեջանցիների՝ այն չդարձավ բոլորի կրոնը Աղվանքում⁷⁴²: Հին աղվանները հեթանոս էին ու կռապաշտ: Աղվանքի թագավոր Վաչագան Գ-ն (V դ. վերջ) քայլեր կատարեց քրիստոնեական կրոնի ամրապնդման համար, բայց, ըստ ադրբեջանցիների՝ այս կրոնը Աղվանքում չկարողացավ խոր արմատներ գցել: Նրանց համոզմամբ Արցախում

⁷⁴¹ Мусаева О., Гусейнова Л., Джаббаров Х., История Азербайджана, 5-й класс, Баку, 2012, с., 37-38.

⁷⁴² Алиев В., Бабаев И., Джафаров И., Мамедова А., История Азербайджана 6 (учебник по предмету История Азербайджана для 6-го класса общеобразовательных школ), Баку, 2017, с. 96-97.

գտնվող Ամարաս համալիրը ունի աղվանական ծագում⁷⁴³: Արցախն ու Ուտիքը համարելով Աղվանքի մաս՝ աղբբեջանցիներն այստեղ գտնվող քրիստոնեական համալիրները ևս վերագրում էին վերջիններիս, ինչը, հետևելով աղբբեջանցիների պատմության շարադրման տրամաբանությանը, շատ օրինաչափ է:

Աղբբեջանի դպրոցական դասագրքերում շարադրված է Արցախի վերաբերյալ ամբողջությամբ շինծու հետևյալ հայեցակարգը: Հայ առաքելական եկեղեցին, օգտագործելով իրեն պաշտպանող խալիֆայության քաղաքական հովանավորությունը՝ սկսած VIII դարից, ճնշումներ է գործադրել աղվանից եկեղեցու նկատմամբ: Նախ՝ աղվաներեն գրված կրոնական և պատմական բովանդակության բոլոր փաստաթղթերը մեծ աղավաղմամբ ու կեղծմամբ թարգմանվել են հայերեն, որից հետո սկսվել է բնակչության գրիգորականացման գործընթացը, և այս կերպ՝ տեղի քրիստոնյա աղվանների աստիճանական հայացումը: Քրիստոնյա բնակչության մեծամասնությունը, որպեսզի պահպանի իր աղվանական ինքնությունը, ընդունելով իսլամական կրոնը, խառնվել է աղբբեջանական ժողովրդին⁷⁴⁴: Ղարաբաղի լեռնային հատվածում բնակվող աղվանական բնակչությունը նախընտրել է պահպանել իր կրոնական համոզմունքները և ենթարկվել է ճնշումների Հայ գրիգորյանական եկեղեցու կողմից: Ըստ աղբբեջանցի հեղինակների՝ Լեռնային Ղարաբաղի տարածքում բնակվող աղվան բնակչության հայացման գործընթացը ավարտվել է Ռուսաստանի կողմից Հարավային Կովկասը գրավելուց հետո, երբ ստեղծվել են պայմաններ տարբեր երկրներից տվյալ տարածքում հայերին վերաբնակեցնելու համար և երբ 1836 թ. վերացվել է Աղվանքի կաթողիկոսությունը, իսկ աղվանից եկեղեցիները սկսել են ենթարկվել էջմիածնին⁷⁴⁵: Այս ամենը կատարվել

⁷⁴³ Նույն տեղում, էջ 99:

⁷⁴⁴ Махмудлу Я., Алиев Г., Гусейнова Л., Алишова Х., Джаббаров Х., Мусаева Э., Бахрамова С., История Азербайджана, учебник для 8-го класса общеобразовательных школ, с. 192.

⁷⁴⁵ Նույն տեղում, էջ 193:

է Յարական Ռուսաստանի նպատակաուղղված քաղաքականության արդյունքում:

Կարող ենք արձանագրել, որ ըստ ադրբեջանցի հեղինակների մինչիսլամական շրջանում Ադրբեջանում դավանել են զրադաշտականություն, քրիստոնեություն և կռապաշտություն: Արաբական արշավանքներից հետո՝ VII-VIII դարերում, Ադրբեջանում վերացավ հեթանոսությունն ու կրակապաշտությունը: Իսլամի ընդունումն ամրապնդել է ինչպես թյուրքական, այնպես էլ մյուս ժողովուրդների միասնությունը: Ընդունելով իսլամ և իսլամական մշակույթի տարրեր՝ նրանք իրենց կյանքը սկսել են կառուցել դրա հիմքի վրա:

Ադրբեջանցի հեղինակների կողմից պատմական իրողությունների այսօրինակ խեղաթյուրմանը անդրադարձել է Բ. Հարությունյանը: Նա նախ հստակեցրել է «Աղվանից եկեղեցու» էությունը: Այդ անվանումը առաջացել է պատմական անցքերի պատճառով, երբ Հայոց եկեղեցու թեմերը Առանի մարզպանության ստեղծումից հետո 5-րդ դարում, հոգևոր-վարչական առումով ստիպված էին մտնել նոր կառույցի մեջ: Չնայած Աղվանից անվանմանը՝ այն պարզապես Հայոց եկեղեցու մի մասն էր, և եթե սովյալ կաթողիկոսությունը հատուկ անջատողական ձգտումներ էր հանդես բերում, ապա դրանք անմիջապես սաստվում էին Հայոց եկեղեցու կողմից: Գտնվելով օտար տիրապետությունների լծի տակ՝ Հայոց եկեղեցին ծանր ժամանակաշրջաններ է ապրել: Մի պահ հայ կաթողիկոսությունների թիվը հասել է 6-ի: Դրա արդյունքն են Կիլիկիայի, Ադթամարի կաթողիկոսությունների հանդես գալը, բայց սա ամենևին չի նշանակում, որ դրանք օտար տարրերի եկեղեցիներ են⁷⁴⁶:

Ինչ վերաբերում է Կուրի և Արաքսի միջագետքում գտնվող Հայոց Արևելից կողմանց աշխարհների (Արցախն ու Ուտիքը) ազգաբնակչությանը, ապա այն ի սկզբանե հայկական ու հայախոս է եղել: Ադրբեջանցիները, ներկայացնելով աղվանից պե-

⁷⁴⁶ Հարությունյան Բ., Պետական մակարդակի բարձրացված կեղծարարություն, «Վեմ» համահայկական հանդես, Բ (Ը) տարի, N 4 (32), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2010, էջ 46:

տության մեջ ընդգրկված տարածքները, խեղաթյուրում են պատմական փաստերը՝ նշելով, որ ներկայիս Արցախի տարածքը մաս էր կազմում Աղվանից պետությանը: Մրա մասին են վկայում բազմաթիվ օտար հեղինակների հաղորդումները: Նրանց հաղորդամբ, որոնց մանրամասն անդրադարձ կլինի ստորև, Մեծ Հայքի և Աղվանքի սահմանն անցել է Կուր գետով⁷⁴⁷, ուստի դրանից հարավ ընկած երկրներն ու երկրամասերը Աղվանքի մաս համարելը հակասում է պատմական իրողություններին:

Ադրբեջանցի հեղինակները նշում են նաև, որ աղվանների մի մասն իրենց աղվանական ինքնությունը պահպանելու և հայկական ազդեցությունից խուսափելու համար ընդունում էր այլ կրոն, դառնում այլադավան և խառնվում այլ ժողովրդների, ինչն անտրամաբանական է. ինչպե՞ս կարելի է պահպանել սեփական ինքնությունը՝ կրոնափոխ լինելով և խառնվելով այլ ժողովրդի:

Այսպես կոչված ադրբեջանական լեզվի ծագման և կիրառության խնդրի ներկայացումը ադրբեջանական դասագրքերում

Ըստ խնդրո առարկա դասագրքերի հեղինակների՝ Աղվանքում բնակվող 26 ցեղերից յուրաքանչյուրն ուներ իր լեզուն, բայց, այնուամենայնիվ, ընդհանուր լեզուն թյուրքերենն էր, քանի որ թյուրքական ցեղերը առաջատար ուժ էին այնտեղ⁷⁴⁸: Մաննայի թագավորների անունները ևս իբրև թե վերծանվում են որպես թյուրքական բառեր⁷⁴⁹: Օրինակ՝ «Ազա» անունը նրանք վերագրում են «աղա»-ին (թյուրքերեն՝ ավազ եղբայր): Ըստ ադրբեջանցի

⁷⁴⁷ Pliny Natural History, With an English Translation in Ten Volumes, Volume II, Libri III-VII, by H. Rackham, Cambridge, Massachusetts, Harvard University Press, London, William Heinemann LTD, 1961, p. 359. Տե՛ս նաև Claudius Ptolemy, The Geography, With 14 Illustrations and 29 maps, Translated and Edited by E. L. Stevenson, Dover Publications, Inc., New York, 1991, p. 122-123.

⁷⁴⁸ Алиев В., Бабаев И., Джафаров И., Мамедова А., История Азербайджана 6 (учебник по предмету История Азербайджана для 6-го класса общеобразовательных школ), Баку, 2017, с. 116.

⁷⁴⁹ Նույն տեղում, էջ 54:

հեղինակների՝ դա վկայում է, որ Մաննայի լեզվի հիմքում ընկած է եղել հին թուրքերենը: Նրանց կարծիքով իսլամի ընդունումը դրականորեն անդրադարձավ միասնական աղբյուրաբանական ժողովրդի կազմավորման և աղբյուրաբանության լեզվի վրա:

Հետաքրքրական է, որ աղբյուրաբանները աղբյուրաբանական գրականության ամենահին և ինքնատիպ ստեղծագործություն են համարում «Քիթաբի-Դեդե Գորգուդ» էպոսը⁷⁵⁰: Այն գրվել է արաբատա թուրքերենով: Ըստ նրանց՝ էպոսը աղբյուրաբանական լեզվի հնության վկայությունն է, որը համարվում է թուրք ժողովրդի համընդհանուր ստեղծագործությունը: Ըստ նրանց՝ էպոսը տարածվել է VII-IX դդ. ամբողջ երկրում: Միաժամանակ նշվում է, որ աղբյուրաբանական լեզու արտահայտությունը սկսվել է օգտագործվել միայն XIII դ.⁷⁵¹:

Աղբյուրաբանների հեղինակների պնդմամբ՝ XIII դ., երբ սկսեց օգտագործվել «աղբյուրաբանական լեզու» արտահայտությունը, ստեղծվեցին համապատասխան բառարաններ: Այդ բառարաններում բացատրվում էին տարբեր աղբյուրաբանական բառեր և հասկացություններ: Արդյունքում, սկսվեցին գործեր ստեղծվել իբրև թե աղբյուրաբանական քերականությամբ⁷⁵²: XVI դարից սկսած, աղբյուրաբանության լեզուն Սեֆյանների տերությունում բարձրացավ պետական մակարդակի⁷⁵³: Սեֆյանների վարած իմաստուն քաղաքականության արդյունքում պարսկերեն գրելու ավանդույթը իր տեղը զիջեց աղբյուրաբաներին: Սեֆյան պետությունը, աղբյուրաբանական լեզուն XVI դարում դարձնելով պետական լեզու, հնարավորություն ստեղծեց այն առավել զարգացնելու: Փաստորեն, ըստ աղբյուրաբանների՝ Սեֆյան Իրանն աղբյուրա-

⁷⁵⁰ Махмудлу Я., Агаев С., Хубьяров Б., Алишова Х., Гусейнова Л., Бахрамова С., История Азербайджана, учебник для 7-го класса общеобразовательных школ, Баку, 2014, с. 71-72.

⁷⁵¹ Նույն տեղում, էջ 96:

⁷⁵² Նույն տեղում:

⁷⁵³ Махмудлу Я., Алиев Г., Гусейнова Л., Алишова Х., Джаббаров Х., Мусаева Э., Бахрамова С., История Азербайджана, учебник для 8-го класса общеобразовательных школ, с. 35.

նական պետություն էր, որի պետական լեզուն էր ադրբեջաներենը:

Չնայած այն հանգամանքին, որ տվյալ ժամանակահատվածում պետության մեջ իշխանության գլուխ էին անցել թյուրքական ծագում ունեցող ցեղերը, այնուամենայնիվ պետության էությունը պարսկական էր, քանի որ պետության հիմքում ընկած էր ոչ թե ազգային բնույթը, այլ շիա դավանանքը: Բացի այդ, դրզլբաշական ցեղերի շրջանում միասնական ժողովրդի մտածելակերպ և հոգեկերտվածք գոյություն չունեի⁷⁵⁴:

Ըստ ադրբեջանցիների համոզման՝ 1918 թ. մայիսին Ադրբեջանի անկախություն ձեռք բերելուց հետո ազգային պետականաշինության ոլորտում ամենակարևոր քայլերից մեկը հանդիսացավ թուրքերենի՝ Ադրբեջանի պետական լեզու հռչակելը⁷⁵⁵: Հետաքրքրական է, որ չնայած այն հանգամանքին, որ «ադրբեջաներեն լեզու» արտահայտությունը իբրև թե սկսել է օգտագործվել XIII դարից, վերջիններս 1918 թ. ձևավորված ադրբեջանական պետության պետական լեզու են հռչակում թուրքերենը՝ հաճախ օգտագործելով նաև «ադրբեջանաթուրքական լեզու» արտահայտությունը:

1937 թ. ընդունվեց Ադրբեջանական ԽՍՀ երկրորդ սահմանադրությունը, որտեղ ադրբեջաներեն լեզվի և ժողովրդի անունը «թուրքերենից» դարձավ «ադրբեջաներեն»⁷⁵⁶: Հատկանշական է, որ Ադրբեջանի անկախ հանրապետության գոյության պայմաններում 1918-1920 թթ. Ադրբեջանի պետական լեզու էր համարվում թուրքերենը, իսկ Ադրբեջանի Խորհրդային Միության մեջ գտնվելու ընթացքում այս հանրապետության պետական լեզուն սկսեց համարվել ադրբեջաներենը⁷⁵⁷:

⁷⁵⁴ Հարությունյան Բ., Պետական մակարդակի բարձրացված կեղծարարություն, «Վեմ» համահայկական հանդես, 2010, N 4, էջ 35:

⁷⁵⁵ Махмудлу Я., Алиев Г., Абдуллаев Г., Гусейнова Л., Джаббаров Х., История Азербайджана, учебник для 9-го класса общеобразовательных школ, с. 97.

⁷⁵⁶ Նույն տեղում, էջ 130:

⁷⁵⁷ Նույն տեղում:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ ըստ աղբբեջանցիների թեն XIII դարից օգտագործվել է «աղբբեջաներեն լեզու արտահայտությունը», այնուամենայնիվ, այն մինչև 1937 թ. հիմնականում կոչվել է «թուրքերեն»: Աղբբեջանական դասագրքերում հաճախ օգտագործվող «աղբբեջանաթուրքական լեզու» արտահայտությունը ամեն կերպ աղբբեջանցիներին թուրքերի, իսկ լեզուն՝ թուրքերենի հետ նույնացնելու ցանկության հետևանք է: Այս հանգամանքը թերևս կարելի է բացատրել այն տրամաբանությամբ, որ աղբբեջանցիները ամեն կերպ ձգտում են ամրապնդել թուրքական ինքնության գիտակցումն իրենց նահրության շրջանում:

Իրական և մտացածին պետական կազմավորումները Աղբբեջանի տարածքում ըստ աղբբեջանական դպրոցական դասագրքերի

Ներկայացված քարտեզի ընդգրկած ողջ տարածքում պատմության տարբեր շրջափուլերում գոյություն ունեցած պետություններն ու պետական կազմավորումները աղբբեջանցի հեղինակները փորձում են այս կամ այն կերպ կապել ներկայիս Աղբբեջանի հետ: Նրանք սկսում են Ուրմիա լճից դեպի հարավ գոյություն ունեցած Մաննա պետությունից⁷⁵⁸ և հասնում մինչև մեր օրերը: Իբրև թե Մաննա պետության հետ կապված աղբբերները վկայում են այն մասին, որ Աղբբեջանի տարածքում ապրել են հին թուրքական ցեղեր: Ըստ նրանց, քանի որ Մաննան հետագայում հիշատակվում է որպես Մեդիայի մի մաս, իսկ Հյուսիսային Աղբբեջանի տարածքը ոչ, ուրեմն դա ապացույց է այն մասին, որ Հյուսիսային Աղբբեջանը քաղաքական անկախություն ուներ⁷⁵⁹:

⁷⁵⁸ Алиев В., Бабаев И., Джафаров И., Мамедова А., История Азербайджана 6 (учебник по предмету История Азербайджана для 6-го класса общеобразовательных школ), Баку, 2017, с. 40.

⁷⁵⁹ Նույն տեղում, էջ 56.

Աղբբեջանցիների նախանշած տարածքում ձևավորված պետություններից է Ատրպատականը (Ք.ա. IV դար), որը գտնվում էր Արաքս գետից հարավ ընկած հատվածում: Այդ պետությունը մեծ դերակատարում է ունեցել «աղբբեջանական ժողովրդի» կազմավորման, պետականության հաստատման և զարգացման գործում⁷⁶⁰: Փորձ է արվում «Աղբբեջան» անվանումը կապել Ատրպատականի թագավոր Ատրոպատի հետ: Այն կապում են նաև իբրև թե այստեղ բնակվող «ազ ցեղի» հետ՝ փորձելով հիմնավորել երկրամասի տիրակալի՝ թյուրքական ծագման հետ: Աղբբեջանցիները նաև նշում են, որ աղբբեջանցի հին հեղինակների գրվածքներից երևում է, որ Ատրպատականում բնակվել են բազմաթիվ թյուրքական ցեղեր⁷⁶¹, չնչելով սակայն, թե ովքեր են այդ հին հեղինակները, ինչից ենթադրելի է, որ ասվածը հորինվածք է և, մենք գործ ունենք պատմական փաստերի պարզունակ խեղաթյուրման հետ:

Իրականում, սակայն, «Ատրպատական» անվանումը տրվել է Մարաստանի արևմտյան հատվածին, որը որպես սատրապություն հանձնվել էր Ատրպատին, որի անունը ոչ այլ ինչ է, քայց էթե ոչ՝ «կրակի պետ» կամ «կրակի քուրմ»: Եվ էթե հետագայում առաջացավ Ատրպատականի թագավորությունը, ապա այն սոսկ Մարական պետություն էր: Իսկ մարերը սոսկ իրանական ցեղեր էին և ոչ մի կապ չունեն թյուրքական ծագման հետ և չեն կարող համարվել աղբբեջանցիների նախնիներ: Այն իրանական երկիր էր Մասանյանների օրոք, ինչպես նաև արաբական տիրապետության շրջանում⁷⁶²:

Ալեքսանդր Մակեդոնացու տերության փլուզումից հետո Ատրպատականի ստեղծմանը զուգահեռ Արաքս գետից հյուսիս ձևավորվել է Աղվանք պետությունը⁷⁶³ (Ք.ա. IV դարի վերջ - III

⁷⁶⁰ Նույն տեղում, 62:

⁷⁶¹ Նույն տեղում:

⁷⁶² Հարությունյան Բ., Պետական մակարդակի բարձրացված կեղծարարություն, էջ 35-36:

⁷⁶³ Исмаил М., История Азербайджана (краткий обзор с древнейших времен до 1920 г.), Баку 1995, с. 11.

դարի սկիզբ): Աղվաններն ապրել են Իբերիայից մինչև Կասպից ծով ընկած տարածքում: Հյուսիսում նրանց սահմանները ձգվել են մինչև Կովկասյան լեռներ, իսկ հարավում՝ Ատրպատական: Ըստ աղբրեջանցիների՝ աղվանական պետության տարածքի մեջ են մտել Աղբրեջանի հանրապետության, ներկայիս Հայաստանի (ըստ նրանց՝ Արևմտյան Աղբրեջան) տարածքները, Դադստանի հարավային շրջանները և Վրաստանի Ալազանի դաշտավայրը: Աղվանքի բնակչությունը ըստ նրանց բաղկացած էր թյուրքալեզու և կովկասալեզու ցեղերից, որտեղ աղվանները կազմում էին մեծամասնություն (տե՛ս նկար 1)⁷⁶⁴:

Պետք է նշել, սակայն, որ աղբրեջանցիները, ներկայացնելով աղվանից պետության մեջ ընդգրկված տարածքները, խեղաթյուրում են պատմական փաստերը՝ նշելով, որ ներկայիս Հայաստանի տարածքները մաս էին կազմում աղվանից պետությանը: Սրա մասին են վկայում բազմաթիվ օտար հեղինակների հաղորդումները: Հույն հեղինակ Ստրաբոնի հաղորդմամբ Հայաստանի և Աղվանքի միջև հոսում էր Կուր գետը⁷⁶⁵: Նույնպիսի հաղորդում է մեզ տալիս Պտղոմեոսը, որի համաձայն Կուր գետը Հայաստանը բաժանում էր Վիրքից և Աղվանքից⁷⁶⁶: Պլինիոսը հստակորեն հաղորդում է, որ Հայաստանի սահմանին բնակվող աղվաններն ապրում էին Կուրից հյուսիս⁷⁶⁷: Նշված հաղորդումները փաստում են այն մասին, որ աղբրեջանցիների հաղորդում-

⁷⁶⁴ Алиев В., Бабаев И., Джафаров И., Мамедова А., История Азербайджана 6 (учебник по предмету История Азербайджана для 6-го класса общеобразовательных школ), Баку, 2017, с. 71- 72.

⁷⁶⁵ Կովկասյան Ալբանիայի, Վրաստանի և Հայաստանի աշխարհագրական նկարագրության և սահմանների մասին մանրամասնորեն տե՛ս The Geography of Strabo, An English Translation, With Introduction and Notes D. W. Roller, Cambridge University Press, 2015, p. 484-486, 506-508.

⁷⁶⁶ Claudius Ptolemy, The Geography, With 14 Illustrations and 29 maps, Translated and Edited by E. L. Stevenson, Dover Publications, Inc., New York, 1991, p. 122-123.

⁷⁶⁷ Pliny Natural History, With an English Translation in Ten Volumes, Volume II, Libri III-VII, by H. Rackham, Cambridge, Massachusetts, Harvard University Press, London, William Heinemann LTD, 1961, p. 359.

ները կապված Աղվանքի աշխարհագրական սահմանների հետ չեն համապատասխանում իրականությանը:

Ադրբեջանցիները նշում են, որ VII դարի սկզբներին Հյուսիսային Ադրբեջանում՝ Աղվանքում, իշխանության եկավ Միհրանյանների տոհմը, որի ամենանշանավոր ներկայացուցիչը «Ադրբեջանի պետական գործիչ գորահրամանատար Ջևանշիրն էր⁷⁶⁸»: Պետք է նշել, սակայն, որ ինչպես Ջևանշիրը, այնպես էլ Միհրանյանները իրականում ունեին իրանական ծագում և սերում էին Սասանյաններից⁷⁶⁹: Պետք է նշել նաև, որ այդ ժամանակ նշված տարածքում իրենց իսկ ներկայացմամբ ոչ Ադրբեջան կար, ոչ էլ ձևավորված ադրբեջանցի ժողովուրդ: Ադրբեջանցիները համարում են, որ որպես ժողովուրդ ձևավորվել են VII-IX դդ.: Չնայած այս հանգամանքին նրանք Աղվանքը համարում են ադրբեջանա-աղվանական պետություն⁷⁷⁰:

Փաստացի ադրբեջանցիները Աղվանքի պատմությունը ներկայացնում են որպես Ադրբեջանի պատմություն և, այն ամենը, ինչ տեղի է ունեցել այնտեղ, վերագրում են իրենց, ինչը պատմության նենգափոխման արտառոց օրինակ է:

Ադրբեջանցի հեղինակները նշում են նաև, որ Խալիֆայության թուլացման հետևանքով այսպես կոչված Ադրբեջանում առաջացան մի շարք ֆեոդալական պետություններ՝ Շիրվանշահերի, Շադդադյանների, Ռավվադյանների, Սաջյանների, Սալարյանների: Այս պետական կազմավորումների կողքին առաջացան ավելի փոքր պետական միավորումներ՝ Շաքիի իշխանությունը, Դերբենտի և Թիֆլիսի էմիրությունները: Այս բոլոր պետական կազմավորումներում, ուր իսլամը պետական կրոն էր, ձևավորվեց ընդհանուր թյուրքական լեզու և թյուրք-իսլամական

⁷⁶⁸ Махмудлу Я., Агаев С., Хубьяров Б., Алишова Х., Гусейнова Л., Бахрамова С., История Азербайджана, учебник для 7-го класса общеобразовательных школ, Баку, 2014, с. 10.

⁷⁶⁹ Եղիազարյան Ա., Հայ Բագրատունիների տերությունը (885-908 թթ.), Երևան, 2011, էջ 183-184:

⁷⁷⁰ Мусаева О., Гусейнова Л., Джаббаров Х., История Азербайджана, 5-й класс, Баку, 2012, с., 41.

մշակույթ⁷⁷¹: Պետք է փաստել սակայն, որ նշված ֆեոդալական պետություններից օրինակ Շադդադյանները ունեին քրդական ծագում⁷⁷², իսկ Սաջյաններն ու Սալարյանները՝ իրանական ծագում, ինչն ուղղակի անլուրջ է դարձնում այս պետական կազմավորումների ադրբեջանական լինելու պնդումը:

Խոսելով Ադրբեջանի տարածքում գոյություն ունեցած պետական կազմավորումների մասին՝ ադրբեջանցի հեղինակներն առանձնահատուկ կերպով խոսում են Շիրվանշահերի պետության մասին՝ նշելով, որ այն ամենաերկարակյացն էր⁷⁷³: Նրանք նշում են, որ նրա ստեղծումը Քուռ գետից հյուսիս շատ կարևոր իրադարձություն էր: Ըստ նրանց՝ Իրաքի սելջուկյան սուլթանությունը Էլդենիզների (Էլդկուզյաններ) կառավարման ներքո անցնելուց հետո դարձավ «ադրբեջանական սուլթանություն», որից կախվածության մեջ մտավ Շիրվանշահերի պետությունը⁷⁷⁴: Շիրվանշահերի հետ բարեկամական և դաշնակցային հարաբերություններ էր պահպանում XV դարում հիմնված մյուս ադրբեջանական պետական կազմավորումը՝ աղ-կոյունլուների պետությունը⁷⁷⁵: XVI դարում այն մտավ Սեֆյանների պետության մեջ, որտեղ կենտրոնացել էին բոլոր ադրբեջանական հողերը: Այստեղ դարձյալ նույն ձեռագիրն է: «Պատմական Ադրբեջանի»

⁷⁷¹ Махмудлу Я., Агаев С., Хубьяров Б., Алишова Х., Гусейнова Л., Бахрамова С., История Азербайджана, учебник для 7-го класса общеобразовательных школ, Баку, 2014, с. 23.

⁷⁷² «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 11, «Արաբական աղբյուրներ», Բ, Իբն ալ-Սսիր, թարգմանություն ֆնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. ՏերՂևոնդյանի, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 262 «The Cambridge History of Iran» in eight volumes, Volume 4: «The Period from the Arab Invasion to the Seljuqs», edited by R.N. Frye, Cambridge, The University Press, 1975, p. 236

⁷⁷³ Мусаева О., Гусейнова Л., Джаббаров Х., История Азербайджана, 5-й класс, Баку, 2012, с., 56.

⁷⁷⁴ Махмудлу Я., Агаев С., Хубьяров Б., Алишова Х., Гусейнова Л., Бахрамова С., История Азербайджана, учебник для 7-го класса общеобразовательных школ, Баку, 2014, с. 66.

⁷⁷⁵ Мусаева О., Гусейнова Л., Джаббаров Х., История Азербайджана, 5-й класс, Баку, 2012, с., 80.

վերոհիշյալ քարտեզի ողջ տարածքում երբևէ գոյություն ունեցած ցանկացած պետական կազմավորում անհիմն կերպով ներկայացվում է որպես «ադրբեջանական»:

Ըստ ադրբեջանական դասագրքերի հեղինակների՝ Մեֆյան Շահ Իսմայիլի (1502-1524 թթ.) նպատակը ոչ ավել, ոչ պակաս, ադրբեջանական հողերի միավորումն էր⁷⁷⁶: Այդ ժամանակ Ադրբեջանում գոյություն ունեին 2 պետություններ՝ ադ-կոյունլուների և Շիրվանշահերի: Առաջին հարվածը հասցվեց Շիրվանշահերին: Այնուհետև իրանական զորքերը պարտության մատնեցին ադ-կոյունլուներին: Ադրբեջանցի հեղինակները հայտարարում են, որ այդպիսով ձևավորվեց Ադրբեջանի պատմության ամենահզոր պետություններից մեկը՝ Մեֆյան տերությունը, որը Շահ Իսմայիլի կառավարման ժամանակ դարձավ Արևելքի ամենահզոր երկիրը⁷⁷⁷: Փաստորեն Մեֆյանների պետությունը ներկայացվում է որպես «ադրբեջանական», այլ ոչ թե, ինչպես ընդունված է, իրանական:

Իշխանության գլուխ անցած թյուրքական ծագում ունեցող ցեղերի հանգամանքը դեռ չի նշանակում, որ պետության բնույթը թյուրքական է կամ «ադրբեջանական», քանի որ տվյալ պետության հիմքում ընկած էր ոչ թե ազգային բնույթը, այլ շիա դավանանքը: Միևնույն ժամանակ, պետք է փաստել, որ, ղրզըլբաշական ցեղերը չունեին միասնական ժողովրդի մտածելակերպ և հոգեկերտվածք:

Ադրբեջանցիները Նադիր շահին ևս, որն ուներ թյուրքական ծագում և աֆշարական ցեղի ներկայացուցիչ էր, համարում են իրենց հնագույն նախնիներից⁷⁷⁸: Իբրև թե Նադիրը մեծ հետք է թողել այսպես կոչված ադրբեջանական ռազմարվեստում: Միևնույն ժամանակ ադրբեջանցիները նշում են, որ Ադրբեջանը (նկատի ունեն վերոհիշյալ քարտեզում ներկայացված տարածքը) XVIII դարում գտնվում էր Նադիր շահի տիրապետության տակ,

⁷⁷⁶ Նույն տեղում, էջ 117:

⁷⁷⁷ Նույն տեղում, էջ 121, տես նաև Мусаева О., Гусейнова Л., Джаббаров Х., История Азербайджана, 5-й класс, Баку, 2012, с., 84:

⁷⁷⁸ Նույն տեղում, էջ 92:

իսկ հետո նշում, որ Նադիրի դեմ Շաքիի ապստամբությունից հետո Շաքիի խանությունը դարձավ առաջին անկախ ադրբեջանական խանությունը⁷⁷⁹: Պնդումների նման հակասականությունն իսկ փաստում է ներկայացվածի շինծու բնույթի մասին:

Հայերը և Արցախը Ադրբեջանի պատմության շարադրման հայեցակարգում

Ըստ ադրբեջանցի հեղինակների՝ Ղարաբաղի խանությունը ձևավորվել է Ջևանշիր ցեղի առաջնորդ Փանահ խանի (1748-1763) կողմից, որը Նադիր խանի զորահրամանատարներից էր: Նրանք այն դեպքում են, որ խանությունը հիմնականում բաղկացած էր թյուրքական ցեղերից (ջևանշիր, քեբիրլի, իյիրմիդյորդյար, (քսանչորսերորդ), օթուզիկիյար, (երեսուներկուերորդ), բահարլի, քուլանի)⁷⁸⁰: Բացի այդ, խանության տարածքում բնակվում էին նաև փոքրաթիվ քրիստոնյա աղվաններ: Ի միջի այլոց, նրանք Արցախի հայկական մեկիքությունները համարում են աղվանական⁷⁸¹: Ղարաբաղի Խանության տարածքում էին գտնվում Խաչենի, Վարանդայի, Դիզակի, Գյուլիստանի, Ջրաբերդի մեկիքությունները, որոնց բնակչությունը իբրև թե բաղկացած էր քրիստոնեությունն ընդունած աղվաններից⁷⁸²: Ադրբեջանցի հեղինակները փորձում են այնպես ներկայացնել, թե իբր, ըստ ադրբեջանական աղբյուրների, ինչպես նաև «Ղարաբաղնամե»-ի, այս մեկիքությունների բնակիչները Ղարաբաղի բնիկ բնակչությունը չեն եղել: Նրանք այս տարածք են տեղափոխվել Ադրբեջանի այլ տարածքներից: Այս մեկիքությունները կոչվել են Ղարաբաղի հինգ մահալների անուններով: Միայն Խաչենի մահալի բնակչությունը կազմ-

⁷⁷⁹ Նույն տեղում, էջ 91-96:

⁷⁸⁰ Алиев Т., Агаларов П., Гулиев Н., Гасымов Э., Бабаев Ф., Гусейнов Э., Асадов К., Мамедов Р., История Азербайджана, учебник для 10-го класса общеобразовательных школ, Баку, 2017, с. 171.

⁷⁸¹ Махмудлу Я., Алиев Г., Гусейнова Л., Алишова Х., Джаббаров Х., Мусаева Э., Бахрамова С., История Азербайджана, учебник для 8-го класса общеобразовательных школ, с. 105.

⁷⁸² Նույն տեղում, էջ 127:

ված էր տեղի քրիստոնյաներից՝ աղվաններից: Մնացած բոլոր մելիքները եկվորներ էին: Նրանք բոլորը ապաստանել են Ղարաբաղում և Նադիր շահին հնազանդվելու համար նշանակվել են համապատասխան տարածքներում⁷⁸³: Նրանց չհաջողվեց պետական որևէ միավորում ստեղծել Ղարաբաղում, քանի որ նրանք մահալների տիրակալներ էին, որոնք տարածաշրջանում սոցիալական աջակցություն չունեին և միշտ զբաղված էին միմյանց միջև կռիվներով⁷⁸⁴:

Այստեղ ևս ամեն ինչ շինծու կամ կեղծված է, իսկ Խաչենի մելիքությունում իբրև բնակվող աղվանների կամ մյուս մելիքությունների բնակչության՝ բնիկ չլինելու «պնդումները» քննության չեն դիմանում⁷⁸⁵: Բացի այդ էլ, պետք է սակայն նշել, որ ադրբեջանցի հեղինակները խիստ ուռճացումով շարունակաբար խոսելով Արցախի տարածք տեղափոխված քրիստոնյա բնակչության մասին՝ մոռանում են իրենց դասագրքերում խոսել Երևան, Գանձակ և Ղարաբաղ տեղափոխված տասնյակ հազարավոր թյուրքական ծագում ունեցող ցեղերի մասին, որոնք ժամանակի ընթացքում բազմացել են⁷⁸⁶: Նաև օղուզները, որոնց ադրբեջանական հեղինակներն իրենց նախնիներն են համարում և, որոնք իբրև թե լուրջ մասնակցություն են ունեցել ադրբեջանցի ժողովրդի կազմավորման գործում, հնագույն ժամանակներից այստեղ չեն բնակվել: Վերջիններս Անդրկովկաս են տեղափոխվել XI-XIII դդ.⁷⁸⁷: Փանահ խանը իր իշխանությունը ամրապնդելու համար Վրաց թագավորությունից և հարևան խանություններից մի շարք ցեղեր տեղափոխեց Ղարաբաղ, որոնցից էին կարաչորլու, փուսխան, ջինլի, դեմուրչի-հասանլի, կենգերլու, քյոթանլի և այլ ցե-

⁷⁸³ Նույն տեղում:

⁷⁸⁴ Նույն տեղում:

⁷⁸⁵ Արցախի մելիքությունների բնակչության մասին մանրամասնորեն տե՛ս Раффи, Меликства Хамсы, Перевод с армянского Л. М. Казаряна. Издательство «Наири», Ереван, 1991.

⁷⁸⁶ Бакиханов Аббас-Кули-Ага, Гюлистан-Ирам, Баку, 1926, с. 142.

⁷⁸⁷ Агаджанов Ц. Г., Очерки истории огузов и туркмен в Средней Азии IX-XIII вв., Ашхабад, 1969, с. 6.

դեր: Միայն Ղազախից Ահմեդ աղան Ղարաբաղ է տեղափոխում իր 1500 ընտանիք ցեղակիցներին⁷⁸⁸:

Փանահին հաջորդած Իբրահիմ խանի օրոք նոր թափ ստացավ թյուրքալեզու էթնիկ խմբերի ներթափանցումը լեռնային շրջաններ, իսկ Դաշտային Ղարաբաղն աստիճանաբար հայաթափվում էր, հայ բնակչության մի մասը բռնի մահմեդականացվում: Գերմանացի հետազոտող Ա. Հաքստհաուզենի բնութագրմամբ՝ այդ գեղեցիկ երկիրը, այսինքն՝ Ղարաբաղը XVIII դարից սկսած կրում է խոր անկման հետքեր: Գերի տարված հայերի փոխարեն այստեղ են բերվել ծույլ թաթարներ ու թյուրքեր, որոնք աստիճանաբար առավելություն են ստանում տեղաբնիկ հայերի նկատմամբ⁷⁸⁹:

1805 թ. Քյուրաքչայի պայմանագրով Ղարաբաղի խանությունը միացավ Ռուսաստանին: Այս պայմանագրում հայերի վերաբերյալ ոչ մի կետ չկար, որը հիմք է տալիս ադրբեջանցի հեղինակներին կարծելու, որ եթե կետ չկար պայմանագրում, ուրեմն հայեր էլ չկային տվյալ ժամանակահատվածում Ղարաբաղում⁷⁹⁰: Եվ սա նրանց «լիակատար» հիմք է տալիս պնդելու, թե Ղարաբաղը պատկանում էր Ադրբեջանին:

Ադրբեջանցի հեղինակները պնդում են, թե իբր Ռուսաստանի կողմից Ղարաբաղի խանության բռնակցումից հետո ցարական իշխանությունը, տարածաշրջանում ամրապնդվելու նպատակով, սկսեց ճնշել տեղի թուրք մահմեդական բնակչությանը և հայերին վերաբնակեցրեց այստեղ: Ռուսաստանի կողմից Հարավային Կովկասի գրավումը պայմաններ ստեղծեց այլ երկրներից հայերի զանգվածային գաղթի և այստեղ հայկական գործոնի ձևավորման ու հզորացման համար: Չնայած ռուսների վարած հայկականացման քաղաքականությանը, Ղարաբաղի խանության «օկուպացումից» հետո Ղարաբաղի նահանգի բնակ-

⁷⁸⁸ Հարությունյան Բ., Պետական մակարդակի բարձրացված կեղծարարություն, էջ 52:

⁷⁸⁹ Гекстаузен А., Закавказский край, СПб, 1857, ч.1, с. 208, 213.

⁷⁹⁰ Мусаева О., Гусейнова Л., Джаббаров Х., История Азербайджана, 5-й класс, Баку, 2012, с., 101.

չության մեծ մասն իբրև թե ադրբեջանցիներ էին, իսկ քրիստոնյա բնակչության մեծ մասը աղվաններ: Ըստ ադրբեջանցի հեղինակների՝ ռուսական օկուպացիայից հետո Ղարաբաղում հայերի զանգվածային վերաբնակեցման ժամանակ այստեղ իբրև թե հայտնվեցին առաջին հայկական բնակավայրերը⁷⁹¹: Մա ակտիվացրեց Լեռնային Ղարաբաղի քրիստոնյա աղվան բնակչության հայացման գործընթացը: Ինչպես տեսանք, ըստ ադրբեջանցի հեղինակների՝ տեղի քրիստոնյա բնակչության մեծամասնությունը նախկին աղվաններ էին, որոնք, ենթարկվելով գրիգորականացման, հետագայում, ձուլման արդյունքում, աստիճանաբար հայացվեցին⁷⁹²: Ղարաբաղի լեռնային մասի քրիստոնյա բնակչությունը, որին պարտադրված էր գրիգորյանական հավատքը, երկար ժամանակ իրեն հայ էթնոսին պատկանող չէր համարում: Աղվանների մի մասն էլ, ովքեր այն ժամանակ չընդունեցին գրիգորիականությունը, տեղափոխվեցին Վրաստան և այլ շրջաններ⁷⁹³:

Ընդհանրապես ադրբեջանցի հեղինակների նախասիրած հնարքներից մեկն էլ վերաբնակեցված հայերի միջոցով տարածաշրջանում ռուսական իշխանությունների կողմից հայկականացման քաղաքականություն իրականացնելու մասին պնդումն է: Ըստ նրանց՝ 1828 թ. Թուրքմենչայի և 1829 թ. Ադրիանապոլսի պայմանագրերից հետո Ադրբեջանի այլ շրջանների հետ միասին հայերի զանգվածային վերաբնակեցում իրականացվեց Ղարաբաղում⁷⁹⁴: Ռուսական կայսրությունը, Օսմանյան պետության և Իրանի դեմ հետագա «ագրեսիվ ծրագրեր» իրականացնելու համար, ձգտում էր հայերին զանգվածաբար տեղավորել Հարավա-

⁷⁹¹ Махмудлу Я., Алиев Г., Гусейнова Л., Алишова Х., Джаббаров Х., Мусаева Э., Бахрамова С., История Азербайджана, учебник для 8-го класса общеобразовательных школ, с. 191-193.

⁷⁹² Նույն տեղում: Տե՛ս նաև Левиатов В.Н., Очерки истории Азербайджана в XVIII веке, Баку, 1948, с. 118.

⁷⁹³ Махмудлу Я., Алиев Г., Гусейнова Л., Алишова Х., Джаббаров Х., Мусаева Э., Бахрамова С., История Азербайджана, учебник для 8-го класса общеобразовательных школ, с. 191-193.

⁷⁹⁴ Նույն տեղում:

յին Կովկասում, հատկապես պատմական «ադրբեջանական հողերում»: Ռուսական կայսրությունը Հյուսիսային Ադրբեջանում փորձում էր իր համար հենարան ստեղծել քրիստոնյա բնակչությունից: Այդ նպատակով, նվաճումից անմիջապես հետո, սկսվեց գերմանացիների, հայերի, ռուսների և այլ քրիստոնյա ժողովուրդների ներկայացուցիչների վերաբնակեցումը Հարավային Կովկասում, այդ թվում՝ Ադրբեջանում: Ռուսական կայսրությունը հայերին տեղավորել է հիմնականում նախկին Ղարաբաղի, Երևանի և Նախիջևանի խանությունների տարածքում և Բորչալուում⁷⁹⁵:

Փաստորեն մենք ականատես ենք լինում մի իրավիճակի, երբ ադրբեջանցիները ոչ մի կերպ չկարողանալով ժխտել հայերի ներկայությունը Արցախում, վերջիններիս ներկայացնում են որպես քրիստոնյա աղվաններ, որոնք այս կամ այն պատճառով հետագայում հայացել են, իսկ ավելի ուշ շրջանում նրանց ներկայությունը Արցախում և այլուր ցուցադրում են որպես ռուսական վերաբնակեցման քաղաքականության հետևանք, ինչը հակասում է պատմական իրողություններին, քանի որ խնդրո առարկա տարածքում հայերի ներկայության մասին վկայել են դեռևս հնագույն ժամանակներից: Կուր գետով անցնող Մեծ Հայքի հյուսիսարևելյան սահմանն իրենից ներկայացնում էր նաև հայ ժողովրդի էթնիկական սահմանը: Ստրաբոնը՝ պատմելով Հայոց Արտաշես Ա արքայի կողմից հայկական հողերի միավորման մասին, հաղորդում է, թե դրանց թվում էին նաև Սակասենեն (Շակաշեն) և Օրքիստենեն (Արցախ)⁷⁹⁶: Ընդ որում հեղինակը պարզորոշ նշում է, որ Հայոց արքան միավորել էր հայաբնակ և հայախոս շրջանները: Հողերի վերամիավորումից հետո ըստ Ստրաբոնի՝ Արտաշեսի թագավորության մեջ, այդ թվում՝ Արցախում և Ուտի-

⁷⁹⁵ Махмудлу Я., Алиев Г., Абдуллаев Г., Гусейнова Л., Джаббаров Х., История Азербайджана, учебник для 9-го класса общеобразовательных школ, с. 10-11.

⁷⁹⁶ The Geography of Strabo, An English Translation, With Introduction and Notes D. W. Roller, Cambridge University Press, 2015, p. 507-508.

քում, բոլորը հայերեն էին խոսում⁷⁹⁷: Մովսես Խորենացին էլ, Հայոց Վաղարշակ թագավորի մասին պատմելիս, ներկայացնում է հայոց լեզվի (ուրեմն՝ նաև հայ ժողովրդի) տարածման սահմանները, որոնք, դատելով պատմահոր հաղորդումներից, ամբողջությամբ համընկնում են Մեծ Հայքի, այդ թվում նաև՝ Արցախի և Ուտիքի սահմաններին⁷⁹⁸:

Նշված հիշատակությունները վկայում են, որ Կուրի և Երասխի միջագետքում գտնվող Հայոց Արևելից կողմանց աշխարհներն (Արցախն ու Ուտիքը) ի սկզբանե հայաբնակ ու հայախոս են եղել, ուստի ադրբեջանական դասագրքերում ներկայացվածը պատմական իրականության հետ որևէ առնչություն չունի և միայն ներքին օգտագործման (պետական պատվեր, քարոզչություն, դաստիարակություն) համար է արվում:

Ադրբեջանցիների պատմության շարադրման հայեցակարգը Հայաստանի Հանրապետության տարածքի վերաբերյալ. Երևանի պարագան

Իրանական տերության կազմում XVIII դ. ձևավորված Երևանի խանության բնակիչները, ըստ ադրբեջանցի հեղինակների՝ ադրբեջանցի թուրքերն էին՝ երկրամասի ամենահին բնակիչները: Իբրև թե դրա մասին են վկայում տեղանքների անվանումները, եվրոպացի ճանապարհորդները, նույնիսկ հայ պատմաբանները⁷⁹⁹: Հայ պատմաբանների անվան տակ ադրբեջանցիները նկատի ունեն Աշոտ Հովհաննիսյանի այն կարծիքը, որ հայերը XVIII դ. կազմում էին Երևանի բնակչության փոքրաթիվ մասը, որը ոչ մի հիմք չի տալիս փաստելու, որ տեղի մահմեդական բնակիչները այստեղի ամենահին բնակիչներն էին: Բացի այդ Մ.

⁷⁹⁷ Նույն տեղում, էջ 508:

⁷⁹⁸ Եղիազարյան Ա., Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, Երևան, 2010, էջ 135:

⁷⁹⁹ Махмудлу Я., Алиев Г., Гусейнова Л., Алишова Х., Джаббаров Х., Мусаева Э., Бахрамова С., История Азербайджана, учебник для 8-го класса общеобразовательных школ, с. 109.

Կարապետյանը ապացուցել է, որ Ա. Հովհաննիսյանի օգտագործած սկզբնաղբյուրի՝ Մամի-Կլերակի տեղեկությունը հայերի քանակի մասին վերաբերում է ոչ թե քաղաքին, այլ բերդին, ուստի ուսումնասիրողի՝ դրա վրա հիմնված տեսակետը Երևան քաղաքում հայերի և աղբրեջանցիների թվաքանակների հարաբերակցության մասին հիմնազուրկ է⁸⁰⁰: Բացի այդ, հայերի թվաքանակի նվազեցումը այս երկրամասում պայմանավորված է եղել պատմության ընթացքում տեղի ունեցած տարատեսակ իրադարձություններով: Օրինակ՝ միայն շահ Աբասի բռնագաղթի ընթացքում մի քանի հարյուր հազար հայեր ստիպված են եղան լքել Հայաստանը⁸⁰¹:

Խոսելով եվրոպացի ճանապարհորդների մասին՝ պետք է փաստել, որ վերջիններս Երևանի մուսուլման բնակչության մասին նշելուց բացի խոսել են նաև քաղաքում բնակվող մեծաքանակ հայության մասին, ինչի մասին աղբրեջանցիները լռում են: Ըստ իսպանիայի թագավորի պատվիրակ Անտոնիո դե Գուվեայի 1608 թ. հիշատակության՝ Երևանը ամբողջ Մեծ Հայքի կարևորագույն քաղաքն ու մայրաքաղաքն էր, որն ամբողջությամբ բնակեցված էր հայերով⁸⁰²:

Աղբրեջանցիները գրում են, որ Եվրոպական ճանապարհորդ Ժան Բատիստ Տավերնիեն, 1655 թ. գալով Երևան, գրել է, որ քաղաքի բերդի պարիսպներից (բերդաքաղաք) ներս ապրել են

⁸⁰⁰ Կարապետյան Ա., Երևանի բնակչության էթնիկական կազմի և թվաքանակի փոփոխությունները 1600-1724 թթ. // «Պատմաբանասիրական հանդես», 1986, N 2, էջ 108:

⁸⁰¹ Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Էջմիածին, 1896, էջ 40: Տե՛ս նաև Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա, Երևան, 1964, էջ 253; Эзов Г., Сношения Петра Великаго с армянским народом, документы, СПб., 1898, с. IV; Boumoutian G., A Concise History of the Armenian People (From Ancient Times to the Present), Fifth Edition, Completely Revised, California, 2006, p. 209-210.

⁸⁰² "Relation des Grandes Guerres et Victoires Obtenues par le Roy de Perse Cha Abbas Contre les Empereurs de Turquie Mahomet et Achmet Son Fils. Par le P. Fr. Anthoine de Gouvea". Traduit de L'original Portugais. A Rouen, 1646, p. 225.

միայն մուսուլմաններ (իբրև թե աղբբեջանցի թուրքեր)⁸⁰³, սակայն վերջիններս չեն նշում, որ նույն ճանապարհորդը, որը 1630-ական թթ. և այնուհետև եղել է Երևանում, բոլորովին այլ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում բերդի և արվարձանների մասին: Այդ տեղեկությունների համաձայն՝ բերդում ապրում էին խանը, իր սպաներն ու զինվորները, իսկ Երևանի թաղը, որը բերդի հյուսիս-արևմուտքում մի արվարձան էր, ուներ քսան անգամ ավելի ժողովուրդ քան քաղաքում (իմա բերդում): Սա բոլոր վաճառականների ու արհեստավորների, ինչպես նաև բոլոր հայերի ապրելատեղին էր: Նրա կողմից կազմված՝ Երևանի գծապատկերում դարձյալ շեշտված է, որ արվարձանը բնակեցված է քրիստոնյա հայերով: Մեկ այլ առիթով հեղինակը ևս գրել է, որ քաղաքը բնակեցված է բացառապես հայերով⁸⁰⁴:

Ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդենը, լինելով Երևանում, 1673 թ. գրել է, որ Երևանի բերդը իր տարածքով մեծ է փոքրիկ քաղաքից: Այն օվալաձև է՝ բաղկացած մոտավորապես 800 տնից: Այնտեղ բնակվում են միայն «սեֆյաններ»⁸⁰⁵: Իրականում, Ժ. Շարդենը Երևանը կոչում է «Մեծ Հայքի մայրաքաղաք»⁸⁰⁶, իսկ այնուհետև, Երևանը նկարագրելիս, խոսում բերդում բնակվող «բնիկ պարսիկների» մասին, անդրադառնում այնտեղ վաճառատներ ունեցող հայերին, ներկայացնում բուն քաղաքում

⁸⁰³ Махмудлу Я., Алиев Г., Гусейнова Л., Алишова Х., Джаббаров Х., Мусаева Э., Бахрамова С., История Азербайджана, учебник для 8-го класса общеобразовательных школ, с. 30.

⁸⁰⁴ “Les Six Voyages de Jean Baptiste Tavernier, écuyer baron d’Aubonne, qu’il a fait en Turquie, en Perse, et aux Indes”, t. 1, Paris, 1679, p. 40-41, p. 623, “The Six Voyages of John Baptista Tavernier, a Noble Man of France Now Living, Through Turkey into Persia, and the East-Indies, finished in the Year 1670”, made English by J.P, London, 1678., p. 14-15.

⁸⁰⁵ Махмудлу Я., Алиев Г., Гусейнова Л., Алишова Х., Джаббаров Х., Мусаева Э. Бахрамова С., История Азербайджана, учебник для 8-го класса общеобразовательных школ, с. 30.

⁸⁰⁶ “Voyages du chevalier Chardin en Perse et autres lieux de l’Orient”, nouvelle édition, de notes, etc. par L. Langlès, tome II, Paris, 1811, p. 128.

բնակվող հայերին, նրանց սովորությունները և ավանդությունները, ինչպես նաև հայկական եկեղեցիների մասին⁸⁰⁷:

1670-ական թվականներին Երևանում եղած և 1676 թ. իր ուղեգրությունը շարադրած Յա. Ստրեյսը նույնպես նշում է, որ Երևանում մեծ մասամբ ապրում էին աղքատ հայեր⁸⁰⁸:

Քաղաքում բնակվող հայ մեծամասնության մասին են վկայում նաև բազմաթիվ այլ հեղինակ-ճանապարհորդներ:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ Եվրոպացի ճանապարհորդների վկայություններով Երևանի բերդում ապրել են մեծավ մասամբ պարսիկներ, իսկ բերդից դուրս շատ ավելի մեծաքանակ հայեր, որոնց մասին աղբբեջանցի հեղինակները գերադասում են լռել: Ինչ վերաբերում է տեղանուններին, ապա պետք է փաստել, որ տարբեր ժամանակների այդ տեղանունները եղել են տարբեր՝ պայմանավորված երկրում իշխող վարչակարգից և վերջինիս վարած քաղաքականությամբ: Այս առումով բերենք թեկուզ մեկ օրինակ, որը ներկայացնում են հենց իրենք՝ նշելով, որ Ռգա շահը Հարավային Աղբբեջանում վարելով ազգային խտրականության քաղաքականություն՝ փոփոխում էր աշխարհագրական և պատմական տեղանունները⁸⁰⁹: Նույնը տեղի է ունեցել օրինակ՝ օսմանյան կամ պարսկական տիրապետության շրջանում: Հայաստանում քոչվոր թյուրքական տարրի հաստատման արդյունքում, բավական թիվ են կազմել թյուրքական տեղանունները: Դա պայմանավորված էր եկվոր տարրի ժամանակավոր տիրապետության փաստով: Թյուրքական տարրը մեծ մասամբ թարգմանել է հայկական տեղանունները, հարմարեցրել իր լեզվին և միայն շուրջ 10 տոկոսի չափ է, որ ինքն է ստեղծել տե-

⁸⁰⁷ “The travels of Sir John Chardin into Persia and the East Indies”, the first volume, containing the author’s voyage from Paris to Ispahan, London, 1686, p. 245-248.

⁸⁰⁸ Struys J. J., Drie aanmerkelyke en zeer rampspoedige Reizen, Door Italien, Griekenland, Lyfland, Moscovien, Tartaryen, Meden, Persien, Oostindien, Japan, en verscheiden andere Gewesten, Haarlem, 1741, b. 229-230.:

⁸⁰⁹ Агаларов П., Гулиев Н., Хатамов Р., Бабаев Ф., Гасымов Э., Гусейнов Э., Джаббаров Х., Бахрамова С., Гусейнов А., История Азербайджана, учебник для 11-го класса общеобразовательных школ, Баку, 2018, с. 58.

ղանուններ՝ քոչվորական պարզ մտածելակերպին համապատասխան⁸¹⁰:

Աղբբեջանցի հեղինակների տեսակետով՝ XVIII դ. Հայաստանի տարածքում ձևավորված Երևանի խանությունը իբրև թե այսպես կոչված Արևմտյան Աղբբեջանի տարածք էր, որը ներկայումս կոչվում է Հայաստան⁸¹¹: Նրանք նշում են, որ իրենց նախնիները բնակվում էին այդտեղ հին ժամանակներից, սակայն չեն բերում այդ ապացուցող որևէ վկայություն: Նրանք համարում են, որ հայերը այստեղ են տեղափոխվել XIX դ. Ցարական Ռուսաստանի կողմից, իսկ Երևանի բնակչությունը բաղկացած էր աղբբեջանցի թուրքերից: Առհասարակ աղբբեջանցիները պնդում են, որ XIX դ. Ցարական Ռուսաստանը հնագույն աղբբեջանական հողերը տվեց հայերին⁸¹²: Իրականում, սկզբնաղբբբյունների տեղեկությունները վկայում են հակառակը: Ռազմական պատմաբան Վասիլի Պոտտոն, իր աշխատության մեջ անդրադառնալով 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմին և Երևանի բերդի գրավման իրադարձություններին, նշում է այն մասին, որ պաշարված բերդում գտնվող 18 հազար բնակիչների մեծ մասը հայեր էին⁸¹³: Սա ևս մեկ վկայություն է այն մասին, որ հայերը բնակվել են Երևանում Ցարական Ռուսաստանի կողմից Արևելյան Հայաստանը նվաճելուց շատ առաջ և հերքում է աղբբեջանցիների առաջ քաշած այն տեսակետը, թե հայերն այստեղ են տեղափոխվել ռուսների կողմից Երևանի գրավումից հետո:

Երբեմն աղբբեջանցի հեղինակների կարծիքները խիստ հակասական են: Մի կողմից աղբբեջանցիները նշում են, որ հայերը այստեղ սկսել են ապրել Ցարական Ռուսաստանի կողմից նրանց տեղափոխելու արդյունքում, սակայն մյուս կողմից գրեթե

⁸¹⁰ Հարությունյան Բ, Պետական մակարդակի բարձրագույն կեղծարարություն, էջ 37:

⁸¹¹ Мусаева О., Гусейнова Л., Джаббаров Х., История Азербайджана, 5-й класс, Баку, 2012, с. 103.

⁸¹² Նույն տեղում:

⁸¹³ Потто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, том III: Персидская война 1826-1828 г., выпуск III, издание второе, С.-Петербург, 1888, с. 508.

ամենուր փաստում են, որ թե՛ Երևանի գրավման ժամանակ (մեջ բերելով Պասկևիչի խոսքերը), թե՛ Գանձակի գրավման ժամանակ ռուսներին օգնել են տեղացի հայերը⁸¹⁴, ինչը լրջորեն հակասում է իրենց իսկ պնդումներին:

Նրանք նշում են, որ հայերին ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածք տեղափոխել են ռուսները Ցարական Ռուսաստանի կողմից այս տարածքները նվաճելուց հետո, որն իրենք անվանում են Արևմտյան Ադրբեջան, սակայն միաժամանակ նշում են, որ XV դարի կեսերին Բահարլի դինաստիայի տիրակալ Ջհան Շահը թույլ է տվել Կիլիկիայից Հայոց կաթողիկոսության կենտրոնը տեղափոխել ադրբեջանական երկրում գտնվող Ուչքիլսե (Էջմիածին)⁸¹⁵: Ըստ նրանց, Էջմիածնում և նրա շրջակայքում տեղի ադրբեջանական ազնվականությանը պատկանող հողերը աստիճանաբար բնակեցվեցին Կիլիկիայից գաղթած հայ ընտանիքներով⁸¹⁶, և հետագա դարերում այդ գործընթացն ավելի ընդլայնվեց: Պարզ է, որ նման «պնդումներն» ապացուցող որևէ վկայություն կամ տեղեկություն ներկայացնելն անհնար է:

Փաստորեն, մենք ականատես ենք լինում մի իրավիճակի, երբ ադրբեջանցիները փորձում են ամեն կերպ մերժել հայերի ներկայության ցանկացած փաստ ՀՀ ներկայիս տարածքում, սակայն նրանց փորձերը հակասում են հայ և օտար աղբյուրների տեղեկություններին, որտեղ ընդհակառակը, պատմության բոլոր դարաշրջաններում վկայված է հայերի ներկայությունը սեփական հայրենիքի արևելյան հատվածում: Ավելորդ ենք համարում կրկին մեջբերել բոլոր այդ վկայությունները Հայաստանի և հայերի մասին այն ժամանակներում, երբ ադրբեջանցիները, իրենց

⁸¹⁴ Махмудлу Я., Алиев Г., Гусейнова Л., Алишова Х., Джаббаров Х., Мусаева Э. Бахрамова С., История Азербайджана, учебник для 8-го класса общеобразовательных школ, с. 178; Мусаева О., Гусейнова Л., Джаббаров Х., История Азербайджана, 5-й класс, Баку, 2012, с., 107.

⁸¹⁵ Махмудлу Я., Алиев Г., Гусейнова Л., Алишова Х., Джаббаров Х., Мусаева Э. Бахрамова С., История Азербайджана, учебник для 8-го класса общеобразовательных школ, с. 193.

⁸¹⁶ Նույն տեղում:

իսկ հավաստմամբ, թե՛ որպես ժողովուրդ, թե՛ որպես ազգ դեռևս ձևավորված չեն եղել⁸¹⁷:

Ադրբեջանցի հեղինակների պնդմամբ Հայաստանի խորհրդայնացումից հետո Մոսկվայի քաղաքականությունն Ադրբեջանի նկատմամբ էլ ավելի է կոշտացել: Վրաստանի հետ տարածքային և սահմանային վեճերում նույնպես Խորհրդային Ռուսաստանը հանդես է եկել Ադրբեջանի շահերին հակասող դիրքերից⁸¹⁸:

Ավելորդ ենք համարում հիշատակել Հայաստանի և Ադրբեջանի միջև եղած տարածքային խնդիրները և դրանց ոչ հայանպաստ լուծումները Հայաստանի խորհրդայնացումից հետո, քանի որ ներկայումս ադրբեջանցիները ողջ Հայաստանի Հանրապետության տարածքն են համարում Ադրբեջան: Այս պարագայում Մոսկվայի քաղաքականության կոշտացման մասին ադրբեջանցիների պնդումները պետք է համարել շինծու:

Եզրակացություն

Այսպիսով, մենք կարող ենք եզրակացնել, որ ադրբեջանցիները, ոչ մի կերպ չկարողանալով ժխտել հայերի ներկայությունը Արցախում, վերջիններիս ներկայացնում են որպես քրիստոնյա աղվաններ, որոնք այս կամ այն պատճառով հետագայում հայացել են, իսկ ավելի ուշ շրջանում նրանց ներկայությունը Արցախում և այլուր ցուցադրում են որպես ռուսական վերաբնակեցման քաղաքականության հետևանք, ինչը հակասում է պատմական իրողություններին, քանի որ խնդրո առարկա տարածքում հայերի ներկայության մասին վկայել են դեռևս հնագույն ժամանակներից: Նույն ձևով ադրբեջանցի հեղինակները փորձում են ամեն կերպ մերժել նաև հայերի ներկայության ցանկացած

⁸¹⁷ «Великая Армения», Большая российская энциклопедия, bigenc.ru/world_history/text/1904555

⁸¹⁸ Махмудлу Я., Алиев Г., Абдуллаев Г., Гусейнова Л., Джаббаров Х., История Азербайджана, учебник для 9-го класса общеобразовательных школ, с. 121.

**Arman Yeghiazaryan
Ara Hovhannisyan
Alik Gharibyan
Armine Chiroyan**

**THE CONCEPT OF THE HISTORY OF AZERBAIJAN
(ACCORDING TO SCHOOL TEXTBOOKS)**

History textbooks are of great importance in the education of the younger generation, forming geographical, chronological and substantive knowledge about the homeland, people and its history. It is no coincidence that history textbooks in a number of countries, dictated by political conditions, also acquire ideological functions, trying to instill in the new generation ideas of an ideological and political nature in addition to historical knowledge and even instead of them, which often not only distort historical realities, but also form a hostile attitude towards other peoples. The purpose of the article is to present the concept of the history of Azerbaijan on the basis of a critical analysis of Azerbaijani school history textbooks. The task was set to identify the main approaches of Azerbaijani authors to the issues of the "historical territory of Azerbaijanis", their origin and formation, as well as claims to the territory of neighboring peoples. The work uses the historical-critical method. As part of the latter, an attempt was made to identify the consistent distortion of information from historical sources in Azerbaijani textbooks, and its motives, while highlighting both the true meaning of the mentioned information and presenting new information demonstrating the falsifications of Azerbaijani authors. The article reveals a lot of such falsifications, presents the contradictions caused by them in Azerbaijani textbooks, as well as their clearly anti-Armenian content.

Ալիկ Ղարիբյան Ռուզաննա Գասպարյան

ԱՂԻԲԵԶԱՆԱԿԱՆ ԿԵՂՇԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ՇՈՒՐԶ

Հազարամյակների պատմություն ունեցող Էրեբունի-Երևանը՝ ստեղծված մ. թ. ա. 782 թվականին, հայտնվել է աղբբեջանական կեղծարարության առանցքում: Գաղտնիք չէ, որ Հայաստանի հարևան Աղբբեջանը ստեղծման առաջին իսկ օրից (1918 թ. մայիսի 28), յուրացրել և շարունակում է յուրացնել ոչ միայն իրանական (պարսկական)⁸¹⁹ այլև հայկական բնակավայրերը՝ դրանք աշխարհին ներկայացնելով իբրև «պատմական աղբբեջանական» տարածք: Ցավոք, մի շարք հայկական բնակավայրերի թվում աղբբեջանական կեղծարարության թիրախում է հայտնվել պատմական Հայաստանի մաս կազմած, բնիկ հայկական և այժմ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանը:

Ք. ա. V դ. հույն ականավոր պատմագիր Հերոդոտոսի (մ. թ. ա. 484-425)՝ աշխարհին, ինչպես նաև Հայաստանին և հայերին առնչվող՝ իր ժամանակաշրջանի տեղեկությունները եղել և մնում են հավաստի սկզբնաղբբյուր: Նա կարևոր տեղեկություններ է հաղորդում պարսից արքունիքին հայերի վճարած հարկերի մասին⁸²⁰: Ըստ նրա՝ Հայաստանը ներառված էր 13-րդ և 18-րդ սաստ-

